

ԿԱՅԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈՒ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1902-1921 թթ.
ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ
1902-1921 ԹԹ.
ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 271.72-9:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)
Կ 477

Մենագրությունը տպագրության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

*Մենագրությունը հրատարակվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական
աջակցությամբ՝ 20TTSH-043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

**Պատասխանատու խմբագիր՝
պ. գ. թ., դոցենտ Արամ Հովհաննիսյան**

**Գրախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր Արման Եղիազարյան
պ. գ. թ., դոցենտ Էդգար Հովհաննիսյան**

Լեզվաոճական խմբագիր՝ Հասմիկ Մադոյան

Հարությունյան Վահագն
Կ 477 Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը 1902-1921թթ. ազգային-քաղաքական
գործընթացների համատեքստում / Կազմ.՝ Վ. Հարությունյան.- Եր.: Հեղ.
հրատ., 2023. - 365 էջ:

Պատմակեղեցագիտական հայագիտության բնագավառին պատկանող մե-
նագրությունը նվիրված է Կիլիկիո Հայոց կաթողիկոսության 1902-1921 թթ. պատմության և
դրա հետ սերտորեն փոխադրված Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի գործու-
նեության լուսաբանմանը: Տարատեսակ սկզբնաղբյուրների, փաստերի և նյութերի ուսում-
նասիրմամբ և համակարգմամբ ներկայացվել է 20-րդ դարասկզբին Կիլիկիո կաթողիկո-
սությունում տիրող ներեկեղեցական իրավիճակը, կաթողիկոսական աթոռի համար ծավալ-
ված պայքարը, հարաբերությունները Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Կ. Պոլսի և Երուսաղեմի
պատրիարքությունների հետ, Սսի կաթողիկոսության ողբալի կացությունը 1909 թ. կիլիկյան
կոտորածների և Մեծ եղեռնի տարիներին: Գրքում միաժամանակ բացահայտվել են Կիլի-
կիո կաթողիկոսության դեգերումները 1917-1921 թթ.: Հիմնահարցը նման ժամանակագրա-
կան ընդգրկմամբ և դիտարկվող հարցերի ամբողջականությամբ առաջին անգամ է իրա-
կանացվում հայրենական պատմագրության մեջ: Այն Կիլիկիո կաթողիկոսության վերոնշյալ
ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման առաջին փորձն է:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, եկեղեցաբանների, Հայ Առաքելական
եկեղեցու, նրա նվիրապետական աթոռների, հայ հարանվանությունների պատմությանը
հետաքրքրվող ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 271.72-9:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)

ISBN 978-9939-0-4565-8

© Հարությունյան Վ. 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

ԳԼՈՒԽ I

ՊԱՅՔԱՐ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԻ ՀԱՄԱՐ: ՍԱՀԱԿ Բ (ԵՂԵԳՑԻ) ԽԱՊԱՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1902-1914 ԹԹ.)

- 1.1. Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը և իր թեմերը XX դարասկզբին..... 19
- 1.2. Պայքար Սսի կաթողիկոսական աթոռի համար (1894-1902թթ.)...48
- 1.3. Սահակ Բ Խապայանի՝ որպես Սսի Հայոց նոր կաթողիկոսի ընտրությունը և օծումը.....54
- 1.4. Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանը (1902-1909 թթ.).....65
- 1.5. Մահմեդական անհանդուրժողականության և բռնությունների դրսևորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիո Հայոց կաթողիկոսության գործունեության համատեքստում.....85
- 1.6. Կիլիկիո Հայոց կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքը 1909-1914 թթ.....115

ԳԼՈՒԽ II

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

- 2.1. Կիլիկիայի հայ բնակչության բռնաճնշումները և տարագրությունը 1914-1915 թթ.՝ Սսի Հայոց կաթողիկոսության գործունեության լույսի ներքո..... 141
- 2.2. Օսմանյան կառավարության 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» օրինագիծը..175
- 2.3. Կիլիկիո «Կաթողիկոս-պատրիարք» Սահակ Բ Խապայանի պաշտոնավարման երուսաղեմյան շրջանը.....191

ԳԼՈՒԽ III

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՈՒ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ 1917-1921 ԹԹ

3.1. Կիլիկիո Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Երուսաղեմից Դամասկոս և Հալեպ (1917 թ. նոյեմբերի 6 – 1919 թ. գարուն).....	208
3.2. Հայ ազգաբնակչության վերադարձի կազմակերպումը Կիլիկիա և Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը	226
3.3. Ազգային վերաշինության գործընթացը Կիլիկիայում և հայ եկեղեցու դերակատարումը	240
3.4. Իրադրությունը Կիլիկիայում 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին: Սահակ Բ Խապայանի ուղևորությունը Ֆրանսիա, Իտալիա և Մեծ Բրիտանիա	253
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	276
РЕЗЮМЕ	286
SUMMARY	288
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	291
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	320

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայ Առաքելական եկեղեցին հայ ժողովրդի համար միայն վարդապետություն և ծեսեր իրականացնող, կամ հոգևոր հարաբերությունները կարգավորող համակարգ չէ: Այն հայությունը համախմբող և նրա ներքին կյանքը տնօրինող հոգևոր մի ուժ է, որը պատմական ծանրագույն ժամանակաշրջաններում հանձն է առել առաջնորդելու իր առաքելությունը: Հայ եկեղեցու անբաժանելի բաղկացուցիչը հանդիսացող հայրենանվեր հայ հոգևորականությունը պատմական բոլոր ժամանակահատվածներում իր կյանքն ու հույզերը միշտ կապել է իր ժողովրդի ճակատագրի հետ՝ որպես հայ հավաքականության անբաժանելի բաղադրիչ: Նա իր գնահատելի մասնակցությունն է բերել մեր մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման շնորհակալ գործին:

Կրիլիկո Հայոց կաթողիկոսության 1902-1921 թթ. մեր կողմից ուսումնասիրման նյութ դարձած հիմնահարցն ընդգրկում է բավականին ծանր և հակասական մի ժամանակահատված: Պատճառը՝ Օսմանյան կայսրության կողմից դարասկզբին և Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի նկատմամբ իրականացված բռնությունների, կոտորածների ու տեղահանությունների քաղաքականությունն էր, ինչի հետևանքով Սսի կաթողիկոսանիստ աթոռը ևս ընկավ թափառումների երկարատև մի շրջափուլի մեջ: Դարասկզբին Կրիլիկո կաթողիկոս դարձած Սահակ Բ Խապայանը բավականին բարդ և վտանգավոր վայրկյաններից հետո կարողացավ վերջ տալ կաթողիկոսության դեգերումներին և այն հաստատել Անթիլիասում, որի արդյունքում ոչ միայն իր գոյությունը շարունակեց պահպանել Սսի կաթողիկոսական աթոռը, այլև արևմտահայության մի սովոր հատված փրկվեց կոտորածից:

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը և հրատապությունը պետք է դիտարկել գիտակաքաղաքական միասնության մեջ: Այն արդիական է հատկապես Սսի կաթողիկոսության 1902-1921 թթ. ժամանակահատվածի պատմության և Սահակ Բ Խապայան «տառապակիր կաթողիկոսի» գործունեության համակողմանի և նորովի ուսումնասիրման տեսանկյունից, որը համապատասխան և ընդգծված լուսաբանման կարիք ունի: Թեմայի կարևորությունն ու հետաքրքրությունը հայ եկեղեցու և հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ամբողջացման համար, նրա թերի մշակվածությունը և թուրքական պատմագիտության կողմից կիրիկիահայերի քաղաքական և եկեղեցական պատմության առանձին հարցերի նենգափոխումն ու խեղաթյուրումը առավել հրատապ են դարձնում թեմայի ուսումնասիրության կարևորությունը:

Հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները: Հետազոտության առարկան՝ Սսի կաթողիկոսության ընտրված ժամանակահատվածի պատմության և Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գործունեության լուսաբանումն է: Մենք մեր առջև նպատակ ենք դրել տարատեսակ սկզբնաղբյուրների համադրությամբ և զուգակցումով, պատմական ճշգրտությամբ և ըստ արժանվույն վեր հանել Կիրիկիո կաթողիկոսության և մասնավորապես՝ Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գործունեության 1902-1921 թթ. պատմությունը: Սույն հետազոտությունը նաև յուրովի հարգանքի տուրք է Սսի կաթողիկոսության բոլոր այն երջանկահիշատակ և հայրենանվեր հոգևորականներին, որոնք այս շրջանում իրենց գործուն մասնակցությունն ու օժանդակությունն են բերել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության ու միասնականության ոգին անխախտ պահելու գործին: Այդ նպատակն իրականացնելու ճանապարհին աշխատության մեջ խնդիր է դրվել:

1. Պատմաեկեղեցագիտական փաստերի և նյութերի ուսումնասիրման և համակարգման օգնությամբ ներկայացնել 20-րդ դարասկզբին Կիլիկիո կաթողիկոսությունում տիրող իրավիճակը, կաթողիկոսական աթոռի համար ծավալված պայքարը և այն հանգամանքները, որոնց պայմաններում 1902 թ. Սահակ Բ Խապայանն ընտրվեց կաթողիկոս:

2. Ի ցույց դնել Սսի կաթողիկոսության ներեկեղեցական իրավիճակը, լուսաբանել հարաբերությունները Մայր Աթոռ ս.էջմիածնի, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների հետ, ինչպես նաև ներկայացնել Սահակ Բ Խապայանի կողմից 1902-1914 թթ. իրականացված բարեփոխիչ միջոցառումները:

3. Վեր հանել Սսի կաթողիկոսության ողբալի կացությունը 1909 թ. կիլիկյան կոտորածների և Մեծ եղեռնի տարիներին:

4. Բացահայտել 1916 թ. «Կանոնագիր Հայոց կաթողիկոսության և պատրիարքության» օրինագիծը և Կիլիկիո կաթողիկոսության հետ Կ.Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունների, ինչպես նաև Աղթամարի կաթողիկոսության միացման խնդիրը:

5. Պարզաբանել օսմանյան իշխանությունների կողմից Սահակ Բ կաթողիկոսին՝ Հալեպ, Իզլիբ և Երուսաղեմ աքսորելու շարժառիթները և ապա կաթողիկոսական աթոռը Դամասկոս և Ադանա տեղափոխելու պատճառները:

6. Լուսաբանել Կիլիկիո կաթողիկոսությանը բաժին հասած արտաքին մարտահրավերները և նրա դիվանագիտական գործունեությունը Կիլիկիայի անկախացման գործընթացում՝ 1918-1921 թթ.:

7. Կարևորել և արժևորել Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գործունեության դերն ու նշանակությունը Կիլիկիո կաթողիկոսության պատմության մեջ:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները ներառում են 1902 թ.-ից՝ Սահակ Բ Խապայանի Կիլիկիո կաթողիկոս

ընտրվելուց հետո մինչև 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի թուրք-ֆրանսիական պայմանագիրն ընկած ժամանակահատվածը, երբ կիլիկիահայերը թողնելով իրենց պատմական հայրենիքը, տարագրվեցին Սիրիա և Լիբանան, իսկ կաթողիկոսությունն էլ դադարեց գործելուց բուն պատմական Կիլիկիայի տարածքում: Ժամանակագրական սահմանների նման ընտրությունը պայմանավորված է Կիլիկիո կաթողիկոսության գործունեության և մասնավորապես Սահակ Բ Խապայանի կաթողիկոսական գահակալման առաջին՝ 1902-1921 թթ. կիլիկյան շրջափուլի ուսումնասիրումն ամբողջական դարձնելու, դեպքերի փոխկապակցված շղթայի նշված ժամանակահատվածի ներքին տրամաբանությունը պահպանելու մղումով՝ փաստերը ճիշտ և լիարժեք ընկալելու անհրաժեշտությամբ:

Աշխատանքը շարադրված է նկարագրական, պատմահամեմատական, պատմաֆնական և համադրական մեթոդաբանությամբ: Առաջնորդվելով պատմականության սկզբունքով՝ փորձել ենք հետազոտվող խնդիրները դիտարկել փաստագրական նյութերի վերլուծական քննությամբ և անաչառությամբ, որը հնարավորություն է տվել իրադարձությունները ենթարկել տեսական ընդհանրացումների և պատմական իրողությունները ներկայացնել այնպես, ինչպես որ դրանք իրականում եղել են:

Գիտական նորույթը: Թեմայի ուսումնասիրումն ունի ինչպես պատմակեղեցագիտական, այնպես էլ գիտաքաղաքական կարևոր արժեք: Հայկական Կիլիկիայի նոր շրջանի քաղաքական պատմության վերաբերյալ մեզ են հասել հայերեն և օտարալեզու գիտական բազմաթիվ աշխատություններ և դեպքերի անմիջական ժամանակակիցների ու ականատեսների հուշագրություններ: Անշուշտ, բոլոր աշխատանքներն էլ՝ անկախ իրենց կանխակալ կամ անաչառ մոտեցումներից, որոշակի պատկերացում են տալիս այս շրջանի քաղաքական իրադարձությունների մասին: Սակայն Կիլիկիո կաթո-

դիկոսություն պատմության ուսումնասիրման տեսանկյունից հիմնախնդիրը կարիք է զգում հավելյալ լուսաբանման, քանի որ ցայսօր հայրենական պատմագրության մեջ չկա որևէ ամփոփ աշխատություն Կիլիկիո կաթողիկոսության 1902-1921 թթ. պատմության վերաբերյալ: Կատարված հետազոտությունը կարևոր ձեռքբերում է Հայ եկեղեցու պատմության մեջ, հատկապես երբ հաշվի ենք առնում այն իրողությունը, որ գիտական շրջանակներում Կիլիկիո կաթողիկոսության 1902-1921 թթ. գործունեության լուսաբանման վերաբերյալ եղել են միայն մասնակի անդրադարձներ: Կատարված աշխատանքը արխիվային վավերագրերի, տպագիր տարաբնույթ սկզբնաղբյուրների, հուշագրությունների, թեմային առնչվող հայ և օտար հեղինակների բազմաթիվ ուսումնասիրությունների, պարբերական մամուլի նյութերի հիման վրա ներկայացված Կիլիկիո կաթողիկոսության վերոհիշյալ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման առաջին փորձն է: Հետազոտության թեման, բարձրացված հիմնադրույթները և նոր հարցադրումների ամբողջությունը պարունակում է գիտական նորույթ, որն էլ թույլ է տալիս հիմնավորելու այն հանգամանքը, որ ներկայացված հետազոտությունը պատկանում է պատմաեկեղեցագիտական հայագիտության բնագավառին:

Թեմայի ուսումնասիրման աստիճանը: Կիլիկիո կաթողիկոսության 1902-1921 թթ. գործունեության հիմնահարցը՝ որպես առանձին մենագրություն, նախկինում գիտական հետազոտության չի ենթարկվել: Կատարված աշխատանքի լիարժեքությունն ապահովում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներով գիտական շրջանառության մեջ դրված սկզբնաղբյուրային նյութը: Թեմայի հետազոտության համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում արխիվային փաստաթղթերը, որոնք նոր լույս են սփռում հիմնախնդրի լուսաբանման ուղղությամբ: Կատարված աշխատանքի փաստական նյութի շարադրման համար որպես

սկզբնաղբյուր են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ), Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվում (այսուհետև՝ ԳԱԹ- արխիվ), Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվում (այսուհետև՝ АВРП), Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվում (այսուհետև՝ Bibliothèque Nubar de l'UGAB), Կահիրեի ազգային առաջնորդարանի արխիվում (այսուհետև՝ ԿԱԱԱ) պահվող վավերագրերն ու զեկուցագրերը, որոնց մեծ մասը շրջանառության մեջ են գրվում առաջին անգամ:

Ուսումնասիրության բազմաթիվ փաստերի վերհանման համար բացառիկ հենք է ծառայել տպագիր սկզբնաղբյուրային գրականությունը, որն իրենից ներկայացնում է ինչպես Կիլիկիո կաթողիկոսության գործունեությանը, այնպես էլ միջազգային-դիվանագիտական և արտաքին-քաղաքական հարաբերություններին ու Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված տպագիր վավերագրական բազմաթիվ նյութերի ժողովածուներ¹:

¹ Կիլիկեան կսկիծներ. վավերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915, Պէյրութ, 1927: Հրամանաւ Տ.Տ. Սահակայ Սրբազնագոյն կաթողիկոսի Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքի Ս. Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ, Երուսաղէմ, 1917: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ., կազմեց Սանդրո Բեհբուղեան, Երևան, 1997: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), հատորը կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհբուղեանը, Երևան, 2000: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհբուղեանը, Երևան, 2001: Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ (11-րդ), Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1866-1882), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմեց Սանդրո Բեհբուղեանը, Երևան, 2004: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բեհբուղեան, Երևան,

Թեմայի ուսումնասիրման համար անփոխարինելի նյութ է հանդիսացել 1902-1921 թթ. հրատարակված կրոնաեկեղեցական և քաղաքական մամուլը¹: Այն հնարավորություն է ընձեռել հասարակական-ներքաղաքական և հոգևոր մշակութային անցուղարձերը մեկտեղել ժամանակաշրջանի հոլովույթի մեջ և ապահովել փաստագրական նյութի և դրանից բխող եզրահանգումների հավաստիությունը:

2007: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԲ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989), փաստաթղթերի և նյութերի ժողովածու (նվիրվում է ծննդյան 100-ամյակին), կազմեց Սանդրո Բեհրուզեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բեհրուզեան, Երեւան, 2005: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԷ. Գեւորգեան Ճեմարան, Թանգարան, (Արարատ ամսագիր), փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի), կազմեց՝ Գոհար Ավագեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԻԲ. Մկրտիչ Ա Նրսիմեան կաթողիկոս Ամենայն Հայոց (1892-1907), մաս Բ, փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի), կազմող՝ Գոհար Ավագյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020: Օրմանեան Մ. արք., Տէր, նախկին պատրիարք Թիւրքիոյ Հայոց, Թիւրքահայ աղետը. Պատմական փաստաթուղթեր, Ա. Տեղեկագիր, Նոր ծանոթութիւններով եւ յաւելումներով հրատարակեց Հայկ Աճէմեան, Ս. Էջմիածին, 1919: Геноцид армян в Османской империи, Сборник документов и материалов под редакцией М.Г. Нерсисяна, Ереван, 1982; Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарий, том 1, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю.Г. Барсегов, Москва, 2002; Германские источники о геноциде армян. Сборник дипломатических документов и материалов под редакцией профессора С.С. Степаняна, т. 1, Ереван, 1991; Хрестоматия по истории международных отношений, М., 1963.

¹ «Արարատ», «Արեւելեան մամուլ», «Բազմավէպ», «Բանասէր», «Բիւզանդիոն», «Զարթօնք», «Կիլիկիա», «Հանդէս Ամսօրեայ», «Հասկ», «Հայ ձայն», «Հորիզոն», «Մշակ», «Սիրոն», «Վերջին լուր», «Տարազ»:

Հետազոտության բազմաթիվ հարցերի լուսաբանման առումով խիստ արժեքավոր են Հայ Առաքելական եկեղեցու և Հայ հա-րանվանությունների հոգևոր-եկեղեցական սպասավորների, միսիո-ներների, ազգային-քաղաքական, գրական-մշակութային գործիչների և ցեղասպանության վերապրողների հուշագրական վկայութ-յունները¹: Լինելով դեպքերի ոչ միայն ժամանակակիցը, այլև անմի-

¹ Աղէտի աշխարհ. իրական վէպ Ասողլու գիւղէն (Ատանա): Երկու քոյր Վարդէ եւ Շուշան եւ Քիպար Հիւսէյինի որդիք Մուհամմէտ եւ Իսմայէլ, Պուէնոս Այրէս, 1947: Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Նղեռին գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919: Յուշամատենան Մեծ Նղեռնի 1915-1965, Պէյրուի, 1965, Գիբոնս Հէլէն Դավենպորտ, Տարսոնի կարմիր գորգերը. մի կնոջ հուշերը 1909 թվականի հայկական կոտորածների մասին, Երևան, 2015: Եսայեան Զ., Աւերակներուն մէջ. (վկայագրութիւն), Ստանպոլ, 2010: Եսայեան Զ., Նամակներ, Երևան, 1977: Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշեր. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահրիէ, 1947: Թէրզեան Յ. Յ., Կիլիկիոյ աղէտը (պատկերազարդ). Ականատեսի նկարագրութիւններ, վաւերաթուղթեր, պաշտօնական տեղեկագիրներ եւ թղթակցութիւններ, վիճակագրութիւններ եւ այլն կարեւոր պատկերներով, Ա. հատոր, Կ. Պոլիս, 1912: Լոյս. Նորգիր, Կիլիկիան պատմավէպ, Ա. հ., Աղէքսանդրիա, 1938: Խոպեսերեան Վ. Լ., Օրագրութիւն ուղեւորութեան յԵրոպա Սահակ Բ կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալէպ, 1928: Կենճեան Ա., Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրուի, 1964: Ճեպճեան Ռ. Ա. Տոբո., Ինքնակենսագրութիւն. յուշեր եւ գործունէութիւններ, Հալէպ, 1999: Ճղլլան Հ., Ստվերում մնացած կյանք, Երևան, 1991: Մխիթարեան Գ., Յուշեր և վերյիշումներ (1918-1935), Անթիլիաս, Լիբանան, 1937: Նորաշխարհյան Լ. Ն., Զեյթունը 1914-1921 թթ. (Հուշեր), Երևան, 1984: Զազմագճեան Գ. Յ., Հաւատքի գօրութիւնը. Կիլիկիոյ հայկական կեանքէն, Անթիլիաս-Լիբանան, 1949: Պօղոսեան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը, հ. Բ, Փարիզ, 1947: Սաղըրեան Ս., Կիսադարեան յուշամատեն (1895-1945). ուղեւորութիւն մը Արգէտսէն Տաւրոս, Փարիզ, 1948: Սերոբեան Մ., Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս), Պէյրուի, 1932: Սիմոնյան Ե. Ա., Իմ գողգոթիս, Անթիլիաս-Լիբանան, 1960: Սվազլան Վ., Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ, Երևան, 2011: Սվազլան Վ. Գ., Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ, Երևան, 2011: Սվազլան Վ. Գ., Մուսա լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների

ջական մասնակիցը, այդ գործիչները ստվար քանակությամբ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայի հոգևոր-եկեղեցական կյանքի վերաբերյալ:

Ուսումնասիրության կայացման առումով փաստագրական անգնահատելի և անփոխարինելի տեղեկություններ են պարունակում Միսակ Քելեշյանի¹, Բյուզանդ Եղիայանի² և Բաբգեն Կյուլեսերյանի³ աշխատությունները:

Թեմայի վերաբերյալ օգտաշատ վկայություններ են պահպանվել Սսի և Անթիոխասի կաթողիկոսությունների, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների եկեղեցական գործիչներ՝ Մ. Եպս.

վկայություններ, Երևան, 2015: Վեր. Աւագեան Ա., Վկայագրություն. Հաւատքի ծառայական ճանապարհորդութեան մը Հասանալէյլիէն (Կիլիկիա) Սառնիա (Գանատա), Պէյրութ, 2010: Վեր. Աշճեան Յ. Հ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (պատմութեան համար), Նիւ Եորք, 1950: Վեր Կէօրկիզեան Ա. Ա., Անմոռանալի յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն. Ազգային դէմքերու եւ դէպքերու կապակցութեամբ, Պէյրութ, 1967: Յեղասպանութենէն վերապրող Հաճընի հպարտ զաւակ Ասատուր Զալեանի յուշերը, Լոս Անջելես, 2015: Քասունի հ. Ե., Հանդիպումներ ճանապարհին. դէմքեր, դէպքեր, վայրեր (ծանօթագրութիւններ), Պէյրութ, 2010: Օրմանեան Մ. Արքեպս., Խոհք եւ Խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղէմ, 1929:

¹ Քէլէշեան Մ., Սիւ-Մատեան. պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949:

² Ատանայի հայոց պատմութիւն պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական, խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիոխաս-Լիբանան, 1970: Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիոխաս-Լիբանան, 1975:

³ Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), Անթիոխաս-Լիբանան, 1939: Կիւլեսերեան Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիոխաս-Լիբանան, 1939: Կիւլեսերեան Բ., Հայ=Կիւրոս. Հայ գաղութը եւ ս.Մակար, Անթիոխաս-Լիբանան, 1936:

Սերոբյանի¹, Ե. եպս. Զիլինկիրյանի², Մ. արք. Օրմանյանի³ և Գ. ծ. վրդ. Պալաքյանի⁴, Մ. եպս. Աղավնունու⁵, Խ. Մխիթարյանի⁶, Տ. Սավալանյանի⁷, Ն. արք. Դանիելյանի¹, Թ. արք. Գուշակյանի², Զ. Ա.

¹ Մուշեղ եպիսկոպոս. Առաջնորդ Հայոց Ատանայի եւ միացեալ վիճակաց, Հովիւին խրատները ուղղուած Ատանայի ու ամբողջ թեմական ժողովուրդին, Կ. Պոլիս, 1908: Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910: Սերոբեան Մ. արքեպիսկոպոս, Բողոքս Քրիստոսական հանրապետութեան նախագահին, Իզմիր, 1920: Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով. վերլուծումներ հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948:

² Զիլինկիրեան Ե. եպիսկ., Արձագանք ազգ. զանազան անցուղարձերու. շարք մը լրագրական յօդուածներու եւ նամակներու, Երուսաղէմ, 1925: Զիլինկիրեան Ե., Արձագանք Բ. Վեր յուշեր անցեալէն եւ ազգ. զանազան անցուղարձերու 1900-1918, Պէյրութ, 1927: Զիլինկիրեան Ե. եպս., Նկարագրութիւնք Երուսաղէմի-Հալեպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպվաց եւ անցքերու 1914-1918 թթ, Երուսաղէմ, 1927:

³ Օրմանեան Մ. արք., նախկին պատրիարք, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կ. Պոլիս, 1912, հ.Գ, նաև մասն Գ, Բէյրութ, 1961: Օրմանեան եպիսկոպոս Մ. առաջնորդ Կարնոյ, Աթոռ Հայաստանեայց, Վաղարշապատ, էջմիածին, 1886~1931: Օրմանեան Մ. արք., Դիտողագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին զննութիւնն ու լուսաբանութիւնը, Երուսաղէմ, 1915: Օրմանեան Մ. արքեպս., Հայկական Երուսաղէմ. նկարագիր աթոռոյ սրբոյ Հակոբեանց, Երուսաղէմ, 1931: Օրմանեան Մ. արք., նախկին պատրիարք, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1911:

⁴ Պալաքեան Գ. ծ. վրդ., Հայ Գողգոթեան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեոլիէն դէպի Տէր-Ջօր, Ա հատոր, Վիեննա, 1922:

⁵ Աղանունի եպիսկոպոս Մ., Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:

⁶ Մխիթարեան Խ., Համառօտ պատմութիւն Երուսաղէմի եւ ստորագրութիւն սրբազան տեղեաց, Երուսաղէմ, 1867:

⁷ Սավալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս. Նշանեան, հ. Ա, Երուսաղէմ, տպ. ս. Յակոբեանց, 1931:

Քհն. Արզումանյանի³ Վ. Եպս. Հերկեցյանի⁴ և այլ հեղինակների աշխատություններում:

Կիրիկիո կաթողիկոսության 1902-1921 թթ. պատմության ուսումնասիրման համար վավերագրական նյութերի հայթայթման տեսանկյունից յուրատեսակ հետաքրքրություն են ներկայացրել Արևմտյան Հայաստանի և Կիրիկիայի առանձին շրջանների ու քաղաքներին նվիրված և տարբեր հայրենակցական միությունների կողմից տպագրված պատմա-հայրենագիտական ժողովածուները⁵:

Հայրենական պատմագրության մեջ Կիրիկիայի և Կիրիկիո կաթողիկոսության նոր շրջանի պատմության առաջին հետազոտողներից են Հայկազ Պողոսյանը⁶, Շ. Թորոսյանը⁷ և Ռուբեն Գասպարյանը⁸, որոնք քննության են ենթարկել ոչ միայն Կիրիկիայի սո-

¹ Դանիելեան Եպսկ. Ն. (Ստական վարդ.), Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912:

² Գուշակեան արք. Թ., Եղիշե պատրիարք Դուրեան, Երուսաղէմ, 1932:

³ Արզումանեան Զ. Ա. քհնյ., Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, 1995:

⁴ Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը, խմբագրութեամբ և առաջաբանը՝ Տ. Վարուժան Հէրկէլեանի, 1909, Լառնազա, Նիկոսիա, ապրիլ 1, 2010:

⁵ Զեյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, Մոնտեվիդեո, 1960: Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական, աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, Ա. հ., 1959: Պապայեան Ն., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Գ, Լոս-Անջելէս, տպ. «Սենթրըլ Թայփսեթինկ» ընկերութիւն, 1994 թ., Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, 1942: Սարաֆեան Գ. Ա., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 1953:

⁶ Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ., Երևան, 1969:

⁷ Թորոսյան Շ. Թ., Կիրիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987:

⁸ Գասպարյան Ռ., Հայերի ցեղասպանությունը Կիրիկիայում 1915-1916 թթ., «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1993 թ., թիվ 1 (584) հունվար-մարտ,

ցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունները, այլև Կիրիկիո կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքի առանձին հարցեր:

Դիպվածական առումով թեմայի ուսումնասիրմանն են անդրադարձել մի շարք հետազոտողներ, այդ թվում՝ Ս. Ակունին¹, Ա. Աթանասյանը², Ս. Թերզյանը³, Պիոն Հակոբյանը⁴, Ստեփան Կերտողը⁵ և ուրիշներ:

Հիմնահարցի մշակման համար կողմնորոշիչ արժեք են ներկայացրել Կիրիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի աշխատությունները⁶:

էջ 47-53: **Գասպարյան Ռ.**, Կիրիկիահայությունը ցեղասպանության նախօրեին, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1995 թ., թիվ 1 (586), էջ 83-94: **Գասպարյան Ռ.**, Կիրիկիահայությունը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1999, Հայկական կոտորածները Կիրիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, 2005: **Գասպարյան Ռ.**, Կիրիկիո կաթողիկոսական ընտրությունների հարցի շուրջ, **Գասպարյան Ռ.**, Ադանայի 1909 թ. կոտորածները, Հոգվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, 2013, էջ 27-28, 33-51, 160-176:

¹ **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1920:

² **Աթանասեան Ա.**, Կիրիկիոյ մօտաւոր անցեալէն (պատմական ակնարկ), առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937:

³ **Թերզեան Յ. Յ.**, Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909: **Թերզեան Ս.**, Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Աթենք, 1937:

⁴ **Հակոբյան Պ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003:

⁵ **Կերտող Ս.**, Հայ Առաքելական եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, էջմիածին, 2003: **Կերտող Ս.**, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, էջմիածին, 2018:

⁶ **Խապայեան Ս. Գ.**, Համառօտ աշխարհագրութիւն բնական, քաղաքական, ուսումնական, Յերուսաղէմ, 1874: **Խապայեան Ս. Վ.**, Նոր դասագիրք Տիեզերագրութեան, Յերուսաղէմ, 1884: **Խապայեան Ս. Վ.**, Բնական պատմութիւն, Յերուսաղէմ, 1888: **Խապայեան Ս. Վ.**, Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց ընկերովի իրաւանց արարողութեանց եւ սովորութեանց ի տնօրինական ս. Տեղիս, Յերուսաղէմ, 1880: **Խապայէնց վ. Ս.**, Պատմութիւն Հին Կտակարանի, Յերուսաղէմ, 1879:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացրել նաև օտար որոշ հեղինակների և հայ հեղինակների օտարալեզու աշխատություններում պահպանված առանձին վկայությունները Կիլիկիո կաթողիկոսության մեզ հետաքրքրող ժամանակահատվածի տարբեր դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ¹:

1.6. Սահակ եպիսկոպոս և Մեսրոպ վարդապետ, Բաղդատուիւն տպագիր Սոկրատի և Երուսաղեմի ձեռագրի, Վաղարշապատ, տպարան Մալր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի, 1897, 15 էջ:

¹ Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, 2015: Աքչամ Թ., Հայերի բռնի իսլամացումը. լուսկյուն, ժխտում և ուժացում, Երևան, 2016: Записки Джемаль Паши 1913-1919, Тифлис, Издание Закрайкома РКП(б), 1923, 240 с.; **С. З.**, Аданские черные дни, Баку, 1909; **Sanjian A. K.**, *The Armenian Communities in Syria under Ottoman Dominion*, Cambridge, Massachusetts, 1965; Duckett F. *Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909*, Erevan, 2009; **Rev. Joseph K. Greene D. D.**, *Leavening the Levant*, Boston, New-York, Chicago 1916; *The catholicosate of Cilicia. A brief historical survey*, Antelias, 1895; Baghdjian K. K., *La confiscation, par le gouvernement turc, des biens arme'niens-dits "abandonnés"*, Montre'al, Que'bec, 1987; **Du Véou Paul**, *La passion de la Cilicie. 1919-1922*, "Nouvelle edition revue", Paris, 1954; Brémond E., *La Cilicie en 1919-1920*, Paris, 1921; 4.128. Comte R. de Gontaut-Biron, *Comment la France s'est installée en Syrie (1918-1919)*, Paris, 1923; **M^{gr} Mouchegh [Serobian]**, *Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents*, Alexandrie, 1909; **M^{gr} Mouchegh**, «À la veille des nouveaux massacres arméniens», *La Revue*, Paris, 15 août 1910; **Michel Paillarés**, *Le Kémalisme devant les Alliés*, Paris, 1922; Picon J, *Le partage du Proche-Orient*, Paris, 1938; **Thorossian H.**, *Historie de l'Arménie et du peuple arménien*, Paris, 1957; **Redan P.**, *La Cilicie et le problème ottoman. Préface par René Pinon*, Paris, 1921; Jean-Pierre Alem, *l'Arménie*, Paris, 1962; Esat Uras, *Tarihte Ermeniler ve Ermeni meselesi*, Ankara, 1950; Arikoğlu Damar, *Hatıralarım: Milli Mücadele: Çukurova'da Fransız işgali ve kanlı savaşlar, Birinci Büyük Millet Meclisi, yurtta çeşitli isyanlar, yunanlıların denize dökülmesi, Atatürkten*

Կատարված հետազոտությունն ունի ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ գործնական-կիրառական կարևոր նշանակություն: Աշխատանքում ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները, մեկնաբանությունները, եզրահանգումները, նկատառումները կարող են օգտագործվել Հայ Առաքելական Եկեղեցու, նրա նվիրապետական աթոռների, Հայկական Սփյուռքի, Հայ հարանվանությունների և ընդհանրապես Հայաստանի նոր շրջանի պատմությամբ հետաքրքրվող ուսումնասիրողների կողմից: Ուսումնասիրությունը ամբողջությամբ, կամ մասնակիորեն կարող է օգտակար լինել ինչպես ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում հատուկ դասընթացների և առանձին առարկաների դասավանդման ժամանակ, այնպես էլ հետագա ուսումնասիրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման համար:

hatıralar, resimler vesikalar. İstanbul, 1961; **Danişmend I.H.**, *İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt TAKİM*, Cilt 4, İstanbul, 1947.

ԳԼՈՒԽ I

ՊԱՅՔԱՐ ԿԻՒԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԳԱՀԻ ՀԱՄԱՐ: ՍԱՀԱԿ Բ (ԵՂԵԳՑԻ) ԽԱՊԱՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1902-1914 ԹԹ.)

1.1. ԿԻՒԻԿԻՈ ՀԱՅՈԾ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԸ և իր թեմերը XX դարասկզբին

ա) Կիւիկիո կաթողիկոսության պատմության համառոտ ակնարկ: Պատմական Կիւիկիայի աշխարհագրական տարածքը քրիստոնեական կանոնական կանոնների համաձայն մտնում էր և առ այսօր էլ Եդեսիա ու Մարդին քաղաքների հետ միասին շարունակում է գտնվել Անտիոքի Ուղղափառ եկեղեցու պատրիարքության իրավասության սահմանների ներքո¹: Սակայն Հայոց կաթողիկոսական նստավայրերի պարբերական դեգերումների պատճառով՝ մոտ 300 տարի՝ 1149-1441 թթ. Կիւիկիան դարձավ Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական հանգրվանը, իսկ 1293-1441 թթ. Հայոց կաթողիկոսական աթոռի կենտրոն հռչակվեց Սիսը:

1441 թ. սկսած Սսի աթոռը դադարեց ընդհանրական լինելուց այն բանից հետո, երբ Գրիգոր Թ. Մուսաբեկյան (Մուսաբեկենց) կաթողիկոսը հանձն չառավ տեղափոխվել Էջմիածին, որից հետո՝ 1446 թ. այն շարունակեց իր գոյությունն իբրև կաթողիկոսություն «Տանն Կիւիկիոյ»: Այն դարձավ առանձին մի կաթողիկոսություն՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մասնավոր նվիրապետական ինքնուրույն աթոռ, որն իր հոգևոր-կրոնական

¹ См. *Чичуров И.С., Панченко К. А. и др., Антиохийская Православная Церковь (Антиохийский Патриархат), Православная энциклопедия, Москва, 2001, с. 501.*

նշանակություն, եկեղեցավարչական ընդգրկումով, տարածքային-թեմական բաժանումներով և իրավասությամբ համարվում էր երկրորդային Հայոց Հայրապետության՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նկատմամբ: Սիսը միայն անվանական՝ «ի հոգեւորս» էր համարվում ենթակա Էջմիածնի կաթողիկոսությունից և հաճախ կոչվում էր «Սսի կաթողիկոսություն», «Կաթողիկոսություն Տանն Կիլիկիոյ», «Կաթողիկոսություն Փոքր Հայոց», «Կիլիկիոյ Աթոռ», «Կիլիկիոյ Հայրապետական Աթոռ», «Կիլիկիոյ կաթողիկոսություն», «Կիլիկիայի Հայրապետարան», «Հայրապետություն Մեծին Կիլիկիոյ», «Եպիսկոպոսապետություն Տանն Կիլիկիոյ», «Անթիլիասի կաթողիկոսություն» և այլն: Սսի կաթողիկոսները հատուկ օծում էին ստանում՝ իրենց իրավունք վերապահելով եպիսկոպոսներ ձեռնադրելու և մյուսոն օրհնելու¹: Նրանք ժամանակի ընթացքում կարողացան պահպանել Հայ եկեղեցու դարավոր ավանդույթները՝ այդ առումով նպաստելով վերջինիս ինքնուրույնությանն ու անկախացմանը²: Երուսալանը նշում է, որ իրոք հինգ դարից ավելի հայոց կաթողիկոսները և մասնավորապես՝ Սսի կաթողիկոսությունը և Կ. Պոլսի հայ պատրիարքներն «իրենց վրայ մարմնացուցին կրօնականին չափ քաղաքական հանգամանք մը, որ արդէն իրերուն, կացութեան, դէպքերուն ուղղակի եւ շատ բնական հետեւութիւնն էր»³:

1441 թ.՝ Գրիգոր Թ. Մուսաբեկյանից սկսած մինչև XIX դ. վերջը՝ մինչև Մկրտիչ Քեյֆսիզյան Մարաշցին, Սիսում շարունա-

¹ Օրմանեան Մ. Եպիսկոպոս, առաջնորդ Կարնոյ, Աթոռ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1886-ՌՅԼԵ, Էջմիածին, 1972, էջ 75:

² Այս շրջանի Հայ եկեղեցու պատմության մասին ավելի հանգամանորեն տե՛ս Հովհաննիսյան Ա., Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2018, էջ 142-182:

³ Սրմաքէշխանլեան Ե. (Երուսալան), Փոքր Ասիոյ մէջէն. նորավէպեր - յօդուածներ, Իսթանպուլ, 2015, էջ 108:

կեցին հաջորդաբար աթոռակալել 44 (38?) կաթողիկոսներ, որոնցից միայն մի քանիսն են արժանի հիշատակության իրենց հանրօգուտ գործերով¹։ Դրանցից մեկը Կարապետ Կաթողիկոսն էր (1446-1478), որը խառնաշփոթ XV դ. վերակառուցեց բազմաթիվ եկեղեցիներ և ամրապնդեց իր աթոռը²։

Թեև XVI դ. սկզբին սուլթան Սուլեյման I (1520-1560) գրավեց և Օսմանյան կայսրության նահանգի վերածեց Կիլիկիան, այդուհանդերձ, XVI-XVII դդ. Կիլիկիայի տարածքը և մասնավորապես՝ Սսի կաթողիկոսարանը, ենթարկվեցին տարբեր ցեղերի և 1598 թ. սկիզբ առած ջալալիների ասպատակություններին³։ Այդ է եղել պատճառը, որ Կիլիկիո կաթողիկոսները, սկսած Հովհաննես Բ Թլկուրանցուց (1489-1525), կաթողիկոսության երկրորդ աթոռանիստ են դարձրել Հալեպը, Ադանան, իսկ երբեմն էլ մնացել են թափառական⁴։

Կրոնա-քաղաքական և տնտեսական անձուկ վիճակից ելք գտնելու հույսով Կիլիկիո աթոռակալներից ոմանք՝ Խաչատուր Բ Երաժիշտը (1560-1584), Ազարիա Ա Զուղայեցին (1584-1601) և այլք միամիտ դիմումներ են հղում եվրոպական երկրներին, Հռոմի պապերին՝ հայ եկեղեցու ծիսա-արարողական որոշ զիջումներ

¹ Կիլիկիայի մինչև XX դարասկզբի պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս **Իզմիրլեան Էպս. Մ.**, Հայրապետություն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցուց եւ Սիս ու Աղթամար, Ս. էջմիածին, 2008, էջ 147-169, 275-405։ Կաթողիկոսների ցանկը տե՛ս հավելված 2-5։

² Տե՛ս «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», Պետերբուրգ, 1896, էջ 141։

³ Տե՛ս **Զուլպյան Մ.Կ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966, էջ 144-145։

⁴ Այդ մասին տե՛ս **Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 97-108։

կատարելու խոստումով՝ փորձելով շահել նրանց հովանավորությունն ու աջակցությունը: Արդյունքում, XVII դ. Սիսը և Կ.Պոլիսը աստիճանաբար դառնում են սասկանություն կենտրոն¹:

Իր ավանդապահության և կաթողիկոսության բոլոր դրսևորումների դեմ մշտական և ժխտողական վերաբերմունքով առանձնացել է հատկապես 1734 թ. կաթողիկոսական գահին ստանձնած Աջապահյան (Աջապանյան) տոհմը (1734-1865)², որին

¹ Սասկանությունը XVII դ. Կիլիկիայում առաջացած հասարակական-քաղաքական և հոգևոր մի հոսանք էր, որը ներկայացնում էր հայ առևտրաբուրժուական մի հատվածի՝ խոջայության գաղափարախոսությունը: Սասկանները հենվելով չեղբիության վրա՝ պայքարում էին էջմիածնականության դեմ, որը հանդես էր գալիս հայ եկեղեցու միասնության, ինքնուրույնության, դավանանքի և ավանդությունների անաղարտության պաշտպանությամբ: Սասկանները փորձում էին կաթողիկոսի նվիրյալի օգնությամբ և դավանական զիջումների գնով հասնել Հայաստանի ազատագրմանը և արևմտահայ կաթողիկոսության հաստատմանը: Պաշարն էլ ավելի է սրվում XVII դ. 60-70-թվականներին արևմտահայ ազատագրական շարժումների շրջանում՝ զուգորդվելով հայ առևտրական բուրժուազիայի երկու խավերի՝ խոջայության և չեղբիության ներքին պայքարով: Սասկանության պարագլուխները՝ Սսի կաթողիկոս Խաչատուր Գ Գաղատացին և Նդիազար Ա Այնթափցին, բացասական դեր են խաղացել հայության շրջանում հասարակական բախումների և խռովությունների առաջ բերման, Կիլիկիո հայոց թեմերը էջմիածնի Հայոց կաթողիկոսությանը հակադրելու գործում: Պաշարը թուլացել է 1681 թ., երբ էջմիածնականները եկեղեցական պառակտմանը վերջ տալու նպատակով էջմիածնի Հայոց կաթողիկոս են ընտրել Նդիազար Ե Այնթափացուն (1681-1691): Տե՛ս **Անասյան Հ.Ս.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. պատմական հետազոտություն, Երևան, 1961, էջ 72-84, 241-272:

² Աջապահյանները հայ նշանավոր գերդաստան էին Կիլիկիայում, որոնց մասին տեղեկություններ են հիշատակվում XIII դարից սկսած: Նրանք հայտնի էին որպես Գրիգոր Լուսավորչի, Սեդրեստրոսի, Նիկողայոս Աթանազիազործի և Պարսամ Ճգնավորի արժանի աջերի ժառանգական պահապաններ, որոնք համարվում էին կաթողիկոսական աստիճանի խորհրդանիշները և որոնց գործությամբ տրվում էին օրհնությունները, կատարվում էին օծումները: Այստեղից էլ առաջացել է նրանց անվանումը: Աջապահյաններն ունեցել են տոհմական

հաջողվել է վերջ տալ աթոռակալական կռիվներին: Ղուկաս Ա Աջապահյան (1734-1737), Միքայել Ա Աջապահյան (1737-1758) և Կիրակոս Ա Աջապահյան (1797/1801-1822) կաթողիկոսները զբաղվել են շինարարական, թեմական, վարչական և հոգևոր-մշակութային հարցերով, իսկ Ղուկաս Ա Աջապահյանն ամբողջությամբ վերանորոգել է հին կաթողիկոսարանը, ս. Լուսավորիչ եկեղեցին և միաբանական սենյակները¹:

Հատկապես գործունյա կաթողիկոս էր Կիրակոս Ա-ը, որը 1810 թ. կաթողիկոսարանը տեղափոխեց Սսի արքունի պալատի տարածք և տեղանքի դարիվերության պատճառով այն եռանկյունաձև պարսպապատեց, հարկ-հարկ կառուցապատեց վեհարանը՝ այդ թվում կաթողիկոսի կացարանը և վերնատունը²: Նա կաթո-

ճշուղավորումներ, որոնցից առավել նշանավոր էր Սսի ճշուղը, որի ներկայացուցիչները XVIII-XIX դդ. ժառանգաբար նստել են Կիլիկիայի կաթողիկոսական գահին հետևյալ հաջորդականությամբ. Ղուկաս Ա. Աջապահյան (Աջապահ, Աջապահ, Սսեցի) (1731/33-1737), Միքայել Ա Աջապահյան (Սսեցի) (1737-1758), Գաբրիել Ա Աջապահյան (Սսեցի) (1758-1770), Եփրեմ Ա Աջապահյան (Սսեցի) (1771-1784), Եղիազար (1772 անվավեր), Թեոդորոս Ա Աջապահյան (Սսեցի, այլ ցանկերում՝ Թորոս Գ Սսեցի Աջապահյան) (1784-1796), Կիրակոս Ա Աջապահյան (Սսեցի, Մեծն, Մեծագործ) (1797-1822), Եփրեմ Բ Աջապահյան (Սսեցի, Տեր-Մանվելյան) (1823-1831/1833), Միքայել Բ Աջապահյան (Սսեցի, Ղուկասյան) (1832/33-1855), Կիրակոս Բ Աջապահյան (Սսեցի) (1855-1865/1866): Թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների հետևանքով Աջապահյանները XIX դ. վերջին դուրս մղվեցին ասպարեզից: Այժմ նրանց շառավիղներն ապրում են Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում (ԱՄՆ, Արգենտինա, Լիբանան): Տե՛ս, Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ - Ս. Ղազար, 1831-1885, էջ 219-221, նաև Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 1329-1342:

¹ Տե՛ս «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 143:

² Կաթողիկոսարանի վերանորոգումը և պարսպապատումը կասկածներ հարուցեցին Կիրակոս Ա-ի նկատմամբ և նրան ամբաստանեցին որպես

ղիկոսարանին կից տնկեց նաև մի գեղեցիկ պարտեզ, վերանորոգեց արքունական պալատին կից գործող ս. Սոփիայի եկեղեցին, որն անվանափոխվեց և վերանվանվեց ս. Գրիգոր Լուսավորչի անունով¹։ Աջապահյանների վերջին ներկայացուցիչը Կիրակոս Գ-ն էր²։

Կիլիկիո կաթողիկոսության համեմատական հանգիստ վիճակը խաթարվեց XIX դ. առաջին կեսին չափան-օղլու և ղոզան-օղլու ցեղերի ասպատակությունների պատճառով, որոնք երկիրը և կաթողիկոսությունը մատնեցին քայքայման։ Այս առիթով Մ. Աղազարյանը նկատում է. «Կիլիկեան աթոռը իր կենսունակութիւնը ո՛չ թէ այսօր, այլ շատ կանուխէն կորսնցուցած էր, երբ Սոսոյ մայրավանքը դադրած էր կրթական և եկեղեցական վառարան մը ըլլալէ, եւ երբ մանաւանդ՝ Բողոքական և Կաթողիկ կղերներու տարած յաջողութեան դէմ, ան կը մընար միշտ չէզոք և պարտեալ»³։

գեյթունցիներին համախոհ և ապստամբական տրամադրություններ սերմանող անձնավորություն։ Արդյունքում, նրան ձերբակալեցին և տարան Կ.Պոլիս, սակայն մի քանի ազդեցիկ հայերի միջոցով նա ազատ արձակվեց, իսկ 1819 թ. էլ հրաժարվեց իր աթոռից։ Սակայն դրանով ամեն ինչ չավարտվեց։ 1822 թ. ապստամբած Քոզան-օղլին նրան թունավորեց և սպանեց։ Կիրակոս Ա-ին թաղեցին իր կառուցած եկեղեցում։ Պատմում են, որ երբ եգիպտացի Իբրահիմ փաշան այցելում է կաթողիկոսարանի եկեղեցի և ցանկություն հայտնում տեսնելու հիմնարկողի գերեզմանը, նա բացականչում է. «Ո՛վ Անաստօլիայի առիւծ, երանի՛ թէ ապրէիր այսօր, երբ Արաբիստանի առիւծը, կարիք ունի քեզ նման մեծախորհուրդ մի անձի»։ Տե՛ս «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 142։

¹ Տե՛ս Անդ։

² Նրա մասին տե՛ս Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 693-768։

³ Աղազարյան Մ., Դէպի անհայրենիք պետութիւն !! Սիսի վերջին աթոռակալը եւ իր մեղապարտ գաւառականը, Լիբանանահայ գաւառականի ընտրութեանց առթիւ, Պէյրութ, 1926, էջ 26։

Երբ 1865 թ. Կիրակոս Գ հրաժարվեց գահից, 1871 թ. Կիլիկիան առաջին անգամ ունեցավ «սահմանադրական» կաթողիկոս ընտրելու հնարավորություն, այն է՝ կաթողիկոսական ընտրությունը կատարել արևմտահայերի 1863 թ. Ազգային սահմանադրության դրույթներով։ Մ. Խրիմյանի պատրիարքության օրոք Ազգային ժողովը Սսի կաթողիկոս ընտրեց մարաշցի Մկրտիչ Քեյֆ-սիզյանին, որի 25-ամյա կաթողիկոսությունն ի վերջո անցավ ապարդյուն և Սսի աթոռը կամաց-կամաց բռնեց քայքայման ուղին¹։ Բանն այն էր, որ կաթողիկոսը, որը վարդապետ էր ձեռնադրվել Երուսաղեմում, իսկ եպիսկոպոս՝ էջմիածնում, միշտ վարում էր աստանդական կյանք՝ գտնվելով մերթ Այնթապում, երբեմն՝ Հալեպում, բայց ավելի շատ Մարաշի մոտ գտնվող Քերխան գյուղի ամառանոցում։

Լինելով ժամանակի ոգին ընկալող, ազգային-կրոնական իրավունքները պաշտպանող նախանձախնդիր քարոզիչ-հոգևորականներից մեկը, նա Այնթապում բացեց «Կիլիկիոյ գիշերօթիկ վարժարան», իսկ Մարաշում՝ «Ժառանգաւորաց դպրոց»։ Միաժամանակ, նա ցանկացավ Կիլիկիայի դպրոցական գործը դնել նոր սկզբունքների վրա։ Սակայն եռանդուն աջակիցների և համախոհների պակասը, նյութական սուղ վիճակը, ինչպես նաև 1880 թ. մեծ աղմուկ հանած Սսի կաթողիկոսության և Կ.Պոլսի պատրիարքության հարաբերությունների կարգավորման ձախողումն իրենց ազդեցությունը թողեցին կաթողիկոսի անփառունակ գործունեության վրա²։ Այդ է պատճառը, որ Գևորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այդ շրջանի Սսի աթոռը որակել է որպես «հետսեալ

¹ Տե՛ս «Հանրագիտակ բառարան բաղկացած երկու հատորից», հատոր I, Ա-Ն, կազմեց Համբարձում Առաքելյան, Թիֆլիս, 1915, էջ 1217։

² Տե՛ս «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 143-144։

և հերձուածող»¹, սակայն փոքր - ինչ ավելի ուշ Մատթեոս կաթողիկոս Իզմիրլյանը վերացրեց այդ բանադրանքը²:

Մկրտիչ Քեյֆսիզյանի մահից հետո արևմտահայերի Ազգային ժողովը Կ.Պոլսում կաթողիկոս ընտրեց Գրիգորիա արք. Ալեաթճյանին, որի ընտրությունը սակայն Օսմանյան կայսրությունը չհաստատեց, որի պատճառով էլ Սսի Կաթողիկոսական աթոռը թափուր մնաց մինչև 1898 թ.³:

XIX վերջին և XX դ. սկզբին Սսի կաթողիկոսարանը (հյուրանոց, խոհանոց, լողարան, պարտեզ, ագարակ) կիսակործան և աղետալի վիճակում էր և թափառաշրջիկ վրանաբնակների մի լքված բնակարան էր հիշեցնում: Ինչպես ժամանակակիցներն էին վկայում՝ «Շրջապարսպի մէջ փակուած ահագին տարածութեան վրայ մի խուց անգամ չկայ հիւր ընդունելու համար, և վանքի պահապան մի քանի կրօնաւորներ ողորմելի սենեակների մէջ ողորմելի կեանք են վարում՝ լաւագոյն օրերի յուսով»⁴:

Սսի միակ շինությունը Կիլիկիո կաթողիկոսարանն էր, որի շնորհիվ քաղաքը գաղափարական խորհուրդ էր ստանում իբրև հայկական շնչի նշանակ: Կաթողիկոսարանի տարածքում սսեցի հայերի խիստ ողբալի վիճակում աչքի էր զարնում ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գեղեցիկ ճարտարապետությունը, որը մի

¹ «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ (11-րդ). Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քրեւստեճեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1866-1882), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածո», կազմեց Սանդրո Բեհրուդեանը, Երեւան, 2004, էջ 393-395, 409-411:

² Տե՛ս Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 760-763:

³ Տե՛ս «Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լուսի տակ (պատմական համառոտ ակնարկ)», առանձնատիպ «էջմիածին» ամսագրի (1959 թ., թիվ Լ, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և 1960 թ., թիվ Բ, Գ), Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 1960 թ., էջ 25:

⁴ «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 145-146:

փոքր վնասվել էր XIX դ. երկրաշարժից: Եկեղեցու գլխավոր զարդը՝ Կիրիկիո կաթողիկոսի մարմարե գահն էր, որը պատրաստել էին Կ.Պոլսի սսեցի արհեստավորները¹:

Եկեղեցու թանգարանում, (որի բանալին պահվում էր Մարաշի Քերիսան կաթողիկոսական ամառանոցում) էին պահվում Գր. Լուսավորչի, Սեղբեստրոսի², Նիկողայոս Աքանչեղագործի³ և Պարսամ ճգնավորի⁴ աշերը, արծաթյա ոսկեզօծ տապանակը, մյուռոնի պղնձե կաթսան, որը պոլսահայ Տյուգյանց տոհմի նվերն էր, ոսկեհուռ խաչերով և պատկերներով մի եմիփորոն, որը պատրաստվել էր Հալեպում 1234 թ. և Հռոմկլայից Սիս տեղափոխվել Հակոբ կաթողիկոսի համար, Լեոն V-ին և Կոստանդին IV-ին պատկանող երկու արծաթապատ ավետարաններ⁵: Հստ ֆրանսիացի ճանապարհորդ և գիտնական Վիկտոր Լանգլուայի՝ Գրիգոր Լուսավորչի՝ աշ ձեռքն ամենաթանկ ու կարևոր մասունքն էր, որ պահվում էր վանքում և դրված էր դրվագազարդ ձեռքի մեջ, վրան ուներ զմրուխտե մի քար և երևում էին ոսկեզօծ լինելու հետքերը⁶:

Եկեղեցուց հետո կաթողիկոսարանի տարածքում հետաքրքրություն էր ներկայացնում նաև «Քեօշկ»-ի՝ ապարանքի նման կանգնած, գունավոր նկարներով և արևելյան ճաշակով

¹ Հստ ոմանց՝ հայրապետական աթոռը նվիրել էր Ռուսաստանի Նիկոլայ I (1825-1855) կայսրը: Տե՛ս Քէլէջեան Մ., Սիս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրուք, 1949, էջ 166:

² Սեղբեստրոսը (314-335 թթ.) Հռոմի 33-րդ պապն է, որն ընդհանրական եկեղեցու տոնելի սուրբ է:

³ Նիկողայոս Աքանչեղագործը Զմյուռնիայի IV դարի հույն պատրիարքն էր և ընդհանրական եկեղեցու ամենասիրված սրբերից մեկը:

⁴ Պարսամ ճգնավորը, կամ Բարսիմեոս եպիսկոպոս Եդեսիացին ապրել է 11 դարում:

⁵ Տե՛ս «Կիրիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիրիկիոյ», էջ 146-147:

⁶ Տե՛ս Դոլուխանյան Ա., Եվրոպացի հայագետներ, III, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 61:

զարգարված վեհարանը (կաթողիկոսի նախագահությանը գումարվող թեմական ժողովների դահլիճը) և նրա հանդիսարանը:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացրել Կիլիկիո կաթողիկոսների դրոշները և զինանշանները, որոնք հիմնականում կազմված են եղել ս. Գրիգոր Լուսավորչին խորհրդանշող երկգլխանի արծվից և Կաթողիկե ս. Խաչի տարրերից: Ըստ Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի կաթողիկոսարանում պահվող կաթողիկոսական հին աթոռի վրա պահպանված քանդակազարդ զինանշանի՝ արծվի մագիլները նման են եղել մարդու ձեռքերի, որոնցից աջով նա բռնել է ուղիղ մի գավազան, իսկ ձախ ափի մեջ դրված է եղել խաչանիշ «ոսկե խնձոր» գունդը¹:

Վանքը գոյատևում էր «պտղի», այլ տուրքերի և օսմանյան կառավարության կողմից ամեն ամիս հատկացվող 35 ոսկի նպաստի հաշվին: Բայց, ինչպես ժամանակակիցն է նշում՝ «Ուր են գնում այդ տուրքերն ու նուէրները յօգուտ վանքի՝ ոչ ոք չի կարողանում գիտենալ...»²:

Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունն ուներ 86 եկեղեցական կալվածքներ՝ Սիսում, Ադանայում, Մարաշում և Զիհանում՝ 1,318,780 քառ.մ. ընդհանուր տարածքով և 184,435,00 օսմանյան ոսկի արժողությամբ³:

¹ Զինանշանը գործածվել է մինչև 1292 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերի կողմից կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդի գրավումը: Դրա մի նմուշ մինչ օրս պահպանվել է Ռումկլա (Հռոմկլա) բերդի արևելյան ճակատի պարսպի կենտրոնական աշտարակի վրա: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ճևահիրճյան Մ.**, Ամենայն հայոց կաթողիկոսի զինանշանը Հռոմկլա բերդում, «Պայքար», 1997 թ., թիվ 2, էջ 36:

² «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 148:

³ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն. պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական», խմբագրեց՝ Բիւզանդ. Եղիայեան, Անթիլիա-Լիբանան, 1970, էջ 880: Մանրամասները տե՛ս հավելված 1-ի աղյուսակ 1-ում և հավելված 10-ում:

բ) Կիլիկիո կաթողիկոսության թեմական բաժանումները: Կիլիկիայի հայ բնակչությունը հավատքի տեսանկյունից բաժանված էր կրոնադավանական երեք մեծ խմբերի: Կիլիկիահայերի մեծամասնությունը հայ առաքելականներ էին, սակայն նկատելի թիվ էին կազմում նաև հայ կաթոլիկները և հայ ավետարանականները: Հայ առաքելական եկեղեցու Կիլիկիո կաթողիկոսության թեմերը տարածքային սփռվածության առումով շատ ավելի ընդարձակ էին, քան Կիլիկիայի բուն աշխարհագրական սահմանները, քանի որ ժամանակի ընթացքում էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների միջև գործունեության հստակ բաժանում չէր իրականացվել, և ոչ էլ նրանց իրավասությունների հստակեցում էր կատարվել: Եղած թեմական բաժանումներն էլ պայմանավորված են եղել կա՛մ հանգամանքների և հարմարությունների բերումով, կա՛մ էլ շատ անգամ զանազան դիտումներից կամ պատճառներից ելնելով՝ մեկից մյուսին են անցել: Սկզբնական շրջանում Եփրատից դեպի արևելք ընկած տարածքները համարվել են էջմիածնական, իսկ Եփրատից դեպի արևմուտք՝ Կիլիկիո թեմական շրջաններ: Նույնիսկ Երուսաղեմի պատրիարքությունն ի սկզբանե ենթարկվել է Կիլիկիո կաթողիկոսությանը: Երկար ժամանակ Կիլիկիո կաթողիկոսության թեմեր են հանդիսացել Կեսարիայի, Էնկյուրիի և Սեբաստիայի շրջանները, իսկ մինչև վերջ Կիլիկիո կաթողիկոսության թեմեր մնացին Եոզղատը, Կյուրինը և Մալաթիան¹:

Բացի այդ, անպակաս են եղել նաև երկու կաթողիկոսությունների կողմից մեկը մյուսի իրավասությունների դեմ փոխադարձ ոտնձգությունները, հատկապես՝ եպիսկոպոսների ձեռնադրության և մյուսոնի բաշխման ժամանակ: Այդ նպատակով նրանք հաճախ իրար դեմ կոնգակներ էին հրապարակում և իրար

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 267:

հակաթոռ ու անվավեր էին անվանում: Էջմիածնի տեսակետն այն էր, որ Կիրակոս Վիրապեցին իր ընտրությանը և օծումով ավտոմատ չէր նախնական վայրում՝ Էջմիածնում էր հաստատել, որով Սսի կաթողիկոսության հետագա գոյությունը դառնում էր ապօրինի: Իսկ Կիլիկիո կաթողիկոսները պնդում էին, որ Ամենայն հայոց հայրապետների ուղիղ գծով հաջորդներն իրենք էին¹: Այս վեճերին վերջ դնելու և երկու ավտոմատների միջև կարգ ու կանոն հաստատելու համար Էջմիածնի Փիլիպպոս և Կիլիկիո Ներսես կաթողիկոսները 1652 թ. Երուսաղեմում ժողով գումարեցին, որտեղ ընդունվեցին իրենց իրավասության կանոնները, որոնք մինչև օրս ընկած են նրանց հարաբերությունների հիմքում²:

XII – XIV դդ. Կիլիկիայի հայկական թագավորությունն ունեցել է հայկական 23 եկեղեցական թեմ, որոնցից 5-ը՝ արքեպիսկոպոսական, այդ թվում՝ Սիսի (աթոռանիստը՝ Դրազարկի վանքը), Տարսոնի (աթոռանիստը՝ Մլիճի վանքը), Լամբրոնի (աթոռանիստը՝ Սկեռայի վանքը), Անավարզայի (աթոռանիստը՝ Կաստղոնի վանքը), Մամեստիայի (աթոռանիստը՝ Արքակաղինի վանքը), իսկ 18-ը՝ եպիսկոպոսական, այդ թվում՝ Ադանայի, Այասի, Բարձրաբերդի (աթոռանիստը՝ Ակների վանքը), Կապանի (աթոռանիստը՝ Արեգնի վանքը), Ծամնդավի, Կոպիտառի, Սելեկիայի,

¹ Կաթողիկոսությունն Էջմիածին տեղափոխելուց հետո էլ Կիլիկիայի շրջակայքը և ընդհանրապես Փոքր Ասիայի հայությունը երկար ժամանակ համակիր էր Սսի կաթողիկոսությանը, որի ազդեցությունը մեծ էր նաև Կ.Պոլսի և Երուսաղեմի վրա: Ըստ Հռոմի պապական ներկայացուցիչ Լեոնարդո Սիդոնի, որը 1585 թ. այցելել էր Սիս, Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ էին 24 արքեպիսկոպոսարան, 20 վանք, 100 վանական, 300 քահանա և բազմաթիվ սարկավազներ: Տե՛ս **Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, նշվ. աշխ., էջ 1013:

² Տե՛ս «Ձարթօնք», Պէլրութ, 1940 թ., ապրիլ, նաև **Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, նշվ. աշխ., էջ 343-350:

Ընկուզուտի, Հարգանի (Հաճընի?), Մոլևոնի (աթոռանիստը՝ Գո-
ների վանքը), Մաշկևորի, Բերդուսի, Սանվելանց, Հովնանց, Փի-
լիպոսյան, Մեծքարի, Մաշարդի, Տիանայի¹:

XVI դ. Հռոմ այցելած ինչ-որ նվիրակի հաղորդման համա-
ձայն՝ Կրիկիո կաթողիկոսությունն ունեցել է 20 «եպիսկոպո-
սունս»՝ թեմ²: Կարապետ Եվդոկացի (1446-1477) կաթողիկոսից
150 տարի անց կազմված ցուցակի համաձայն՝ XVII դ. սկզբին
Կրիկիայի թեմի մեջ էին մտնում նաև Հալեպը, Կիպրոսը և Թեսա-
ղոնիկեն:

Ոսկան Երևանցու Հայ եկեղեցու նվիրապետության վիճա-
կագրական տեղեկագրի համաձայն՝ XVII դ. կեսերին թեմերի քա-
նակը 12-ն էր (արքեպիսկոպոսական՝ Կ. Պոլիս, Երուսաղեմ, Բե-
րիա, Թեսաղոնիկե, Կիպրոս, Տարսոն, եպիսկոպոսական՝ Անար-
զաբա, Ադանա, Մոպսուեստիա, Թիանա, Նեոկեսարիա, Անկյու-
րիա)³:

1887թ. դրությամբ Կրիկիայի կաթողիկոսությանն էին են-
թարկվում 17 քաղաքների (իրենց գյուղերով) 239.000 բնակչու-
թյուն, որոնցից 8-ը՝ Կրիկիայի Սիս, Ադանա (այդ թվում՝ Մերսին,
Տարսոն), Հաճըն, Հայ լեռ (Գյավուր դաղ), Այնթապ, Մարաշ, Զեյ-
թուն, Ֆոնոուզ), 7-ը՝ Փոքր Ասիայի (Կյուրին, Տարենտե, Տևրիկ,
Մանշըլըզ, Մալաթիա, Ադիաման, Յոզկատ), 2-ը՝ Սիրիայի (Քիլիս,
Անտիոք, այդ թվում՝ Բեյլան, Ալեքսանդրետ): Եվ եթե այդ ամենի

¹ Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրութիւն Հայկական Կրիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 65-70:

² Ալիշան վ.Ղ.հ.Մ., Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ - ս. Ղազար, ՏՅԶԲ=1890=ՌՅԼԹ, էջ 231:

³ Տե՛ս Օրմանեան Մ. արք., Նախկին պատրիարք, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կ. Պոլիս, 1912, էջ 2549:

վրա ավելացնենք հիշյալ քաղաքներում առկա 21.000 հայ կաթո-
լիկների, բողոքականների և անգլիական եկեղեցու հետնորդներին
թվաքանակը, ապա ընդհանուր գումարը կստացվի 260.000¹:

Հստ Մ. Քելեշյանի 1903թ. Կիլիկիո կաթողիկոսությունն ու-
նեն 15 թեմ.

1. Միս (Գոզան) – կաթողիկոսանիստ քաղաք, որի մեջ էին
մտնում քաղաքի 7 թաղերը և Գոզանի սանջակը: Այն ուներ
10000 հայ առաքելական, 700 բողոքական բնակիչ և 7 եկեղե-
ցի:
2. Ադանա – արքեպիսկոպոսական քաղաք, որի մեջ էին մտնում
քաղաքի 162 թաղերը և Ադանայի, Մերսինի, Իջիլի սանջակնե-
րը: Այն ուներ 30000 հայ առաքելական, 1000 կաթոլիկ, 500 բո-
ղոքական բնակիչ և 12 եկեղեցի²:
3. Հաճըն – եպիսկոպոսանիստ քաղաք, որի մեջ էին մտնում քա-
ղաքի 5 թաղերը և Հաճընի Գազանի շրջանը: Այն ուներ 20000
հայ առաքելական, 1000 կաթոլիկ, 700 բողոքական բնակիչ և
8 եկեղեցի:
4. Փայաս (Բերեքոթ) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին
մտնում քաղաքի 25 թաղերը, Պերեքեթ դաղի սանջակը (Դ-
յորթ-Յոլ, Օսմանիե, Ամանոս և այլն): Այն ուներ 11000 հայ ա-
ռաքելական բնակիչ և 11 եկեղեցի:

¹ Տե՛ս «Արաքս». պատկերազարդ հանդէս, ս. Պետրբուրգ, 1887, գիրք Ա, նոյեմբեր,
էջ 84-85: Մանրամասները տե՛ս հավելված 1-ի աղյուսակ 2-ում:

² Հստ Ադանայի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանի տվյալների
Ադանայի թեմն ուներ 36152 հայ առաքելական, 1775՝ հայ-կաթոլիկ և 2969՝ հայ-
բողոքական բնակիչ: Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս. Առաջնորդ Հայոց Ատանայի եւ
միացեալ վիճակաց, Հովիւին խրատները ուղղուած Ատանայի ու ամբողջ
թեմական ժողովուրդին, Կ. Պոլիս, 1908, էջ 172-174:

5. Հալեպ (Բերիա) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին մտնում քաղաքի 17 թաղերը և Հալեպի, Ալեքսանդրետի և Պեյ-լանի կազանները: Այն ուներ 15000 հայ առաքելական, 5000 կաթոլիկ, 2000 բողոքական բնակիչ և 8 եկեղեցի:
6. Մարաշ (Գերմանիկ) – արքեպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին մտնում քաղաքի 35 թաղերը և Մարաշի, Ալբիստանի, Բազարճագի կազանները: Այն ուներ 30000 հայ առաքելական, 4000 կաթոլիկ, 3500 բողոքական բնակիչ և 24 եկեղեցի:
7. Զեյթուն (Ուլնիա) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 18 թաղերը և Զեյթունի, Անտերունի կազանները: Այն ուներ 20000 հայ առաքելական, 500 կաթոլիկ և 500 բողոքական բնակիչ և 14 եկեղեցի:
8. Ֆոնուզ – վանական թեմ, որի մեջ մտնում էին քաղաքի 6 թաղերը և Ֆոնուզի նահիեն: Այն ուներ 7000 հայ առաքելական բնակիչ և 10 եկեղեցի:
9. Այնթափ – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 4 թաղերը, Այնթափի և Քիլիսի կազանները: Այն ուներ 30000 հայ առաքելական, 1000 կաթոլիկ և 4000 բողոքական բնակիչ և 6 եկեղեցի:
10. Անտիոք (Անթեքա=Անթաքիա) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 16 թաղերը և Այնթաքիայի, Շուղուրի, Սահրունի կազանները: Այն ուներ 1200 հայ առաքելական, 200 կաթոլիկ, 1500 բողոքական բնակիչ և 9 եկեղեցի:
11. Մալաթիա (Մեղիտինե) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 42 թաղերը և Մալաթիայի սանջակը: Այն ուներ 20000 հայ առաքելական, 2000 կաթոլիկ, 1000 բողոքական բնակիչ և 23 եկեղեցի:
12. Նոզդատ (Նոզդատ) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 46 թաղերը և Նոզդատի սանջակը: Այն

ուներ 40000 հայ առաքելական, 1000 բողոքական բնակիչ և 43 եկեղեցի:

13. Կյուրին (Քյուրին) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 11 թաղերը, Կյուրինի և Ղանղալի կազաները: Այն ուներ 17000 հայ առաքելական, 500 կաթոլիկ և 1000 բողոքական բնակիչ և 26 եկեղեցի:
14. Տևրիկ (Տեփրիկե) – եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 11 թաղերը և Տևրիկի կազան: Այն ուներ 11000 հայ առաքելական, 300 բողոքական բնակիչ և 19 եկեղեցի:
15. Տարանտիա (Տարենտե) – վանական թեմ, որի մեջ մտնում էին քաղաքի երկու թաղերը և Տարենտեի կազան: Այն ուներ 7000 հայ առաքելական բնակիչ և 4 եկեղեցի¹:

Այսպիսով, Կիլիկիո կաթողիկոսությունն ուներ 1 կաթողիկոսական, 2 արքեպիսկոպոսական, 10 եպիսկոպոսական, 2 վանական թեմեր՝ 267 թաղերով, 224 եկեղեցիներով, 279000՝ հայ առաքելական, 17000՝ կաթոլիկ, 16500՝ բողոքական բնակչությամբ: Ամենից շատ թաղեր (46), եկեղեցիներ (43) և հայ առաքելական բնակչությունը՝ (40000) ուներ Շոզղատը:

Կիլիկիո հայոց թեմի ընդհանուր բնակչությունը կազմում էր 312500, որի 74000-ը՝ Ադանայի նահանգում, 138000-ը՝ Հալեպի նահանգում² և 100800-ը՝ Մելիտինեի, Շոզղատի, Կյուրինի, Տևրիկի և Տարանտիայի շրջաններում:

Ըստ Մ. արք. Օրմանյանի Կիլիկիայի կաթողիկոսությունն ուներ 16 եկեղեցական թեմ՝ ըստ հետևյալ քաղաքների՝ 1) Ադանա, 2) Մերսին, Տարսոն, 3) Սիս, 4) Հաճըն, 5) Փայաս- Դյորթ-Յոլ,

¹ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., նաև Հակոբյան Պ., նշվ. աշխ., էջ, 140-141, 148:

² Ըստ Պետրբուրգում հրատարակված «Արաքս» ամսագրի տվյալների Հալեպի նահանգի բնակչության թիվը կազմում էր 98000, որից 70000-ը՝ ենթարկվում էր Կիլիկիայի կաթողիկոսության թեմին:

6) Իսկենտերուն-Բեյլան, 7) Մարաշ-Ալպսթ-Փազարճըզ, 8) Զեյթուն- էնտերուն , 9) Ֆոնուզ, 10) Այնթապ-Քիլիս, 11) Անտիոք-Սուլեմիա, 12) Մալաթիա, 13) Յոզղատ, 14) Կյուրին, 15) Տևրիկ և 16) Տերենտե: Ընդհանուր առմամբ նշված քաղաքներում և շրջաններում եղել է 267 թաղ, 224 եկեղեցի, իսկ բնակչության ընդհանուր թիվը կազմել է 332,400 որից հայ առաքելական՝ 299.000, կաթոլիկ՝ 17.000 և բողոքական՝ 16.400¹:

Սահակ Բ Խապայանը 1931թ. Բաբկեն աթոռակից Կյուլեսերյանի ընտրության ժամանակ իր բացման խոսքի մեջ նշում է, որ նախկինում Սսի կաթողիկոսությունն ուներ 13 թեմ (Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ուներ 40 թեմ)²՝ 400000 բնակչությամբ, իսկ 1931թ. այն ուներ ընդամենը 5 թեմ՝ 130000 բնակչությամբ³:

Այսպիսով, հոգևոր իրավասության սահմանների հաճախակի փոփոխման և գործունեության հստակ բաժանման բացակայության արդյունքում պատմական տարբեր դարաշրջաններում, տարբեր հեղինակների մոտ, տարբեր ժամանակներում, հանդիպում են Կիլիկիո կաթողիկոսության թեմական տարբեր բաժանումներ, որոնց թվաքանակը տատանվում է 12-ից մինչև 23-ի սահմաններում: XX դարասկզբին Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո եղել է 13-16 եկեղեցական թեմ:

գ) Կաթողիկոսանիստ Սսի սրբավայրերը: Միջնադարյան Կիլիկյան Հայաստանում հաշվվում էր շուրջ 91 վանական համալիր⁴,

¹ Տե՛ս Օրմանեան Մ. արք., նախկին պատրիարք, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1911, էջ 263-264: Մանրամասները տե՛ս հավելված 1-ի աղյուսակ 4-ում:

² Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 302: Մանրամասները տե՛ս հավելված 1-ի աղյուսակ 2-4-ում:

³ Տե՛ս Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ. էջ 1013:

⁴ Ըստ Ղ. Ալիշանի՝ վանքերի թիվը հաշվվում էր 59: Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան. համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 221:

որոնցից առանձնապես նշանավոր էին Սկևռայի, Ակների, Մլիճի, Դրազարկի, Մաշկեանքի և մի շարք այլ վանքերը:

Միջնադարում Սիսն ունեցել է մի քանի տասնյակ եկեղեցիներ ու վանքեր, որոնցից հիշարժան են եղել հատկապես հին եպիսկոպոսարանը և նրա եռախորան ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որոնք գտնվում էին քաղաքի հարավային ծայրամասում: Կիրիկյան իշխաններն ու Լևոն Բ-ն ավելի շատ հետամուտ էին և մտահոգ արտաքին հարձակումների դեմ մայրաքաղաքն ամրացնելու և ամուր բերդեր ու դղյակներ կառուցելու, քան թե եկեղեցիներ կանգնեցնելու համար: Լևոն Բ Մեծագործը Սիսում հիմնադրել է միայն ս. էջմիածնի կաթողիկե, ս. Մարինե և ս. Աստվածածին (այստեղ է ամփոփված Լևոն Բ-ի մարմինը) եկեղեցիները:

Լևոն Բ-ի հաջորդներն էին, որը «կանգնեցրին ու բարձրացուցին շէնքեր, եկեղեցիներ ու վանքեր»¹, ավելացրին եկեղեցիների և վանքերի թվաքանակը, որոնք դարձան «բարոյական ու կրօնական բերդեր»²: Հեթում Ա-ի օրոք հիմնվում է արքունական ս. Սոփիայի եկեղեցին: Սաի հայկական եկեղեցիներից հայտնի են եղել նաև՝ ս. Սարգիս, ս. Հովհաննիս, ս. Հակոբ, ս. Հոգի, ս. Նշան, ս. Սիմեոն, ս. Նիկողայոս, ս. Ստեփանոս, ս. Մերկերիոս, ս. Պետրոս և Պողոս, ս. Աթանազիոս և ս. Աննա:

Սսում եկեղեցիներ են ունեցել նաև հույները, ջենովացիները, վենետիկցիները, խաչակիր ասպետները և ասորիները: Իգնատիոս Բ Ասորին 1244 թ. Սսում հիմնել է կաթողիկոսարան՝ Ս. Պարսամա և Ս. Աստվածածին եկեղեցիներով³:

¹ Դվար. Ոսկեան Հ. Գ., Կիրիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 284:

² Անդ:

³ Տե՛ս Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրութիւն Հայկական Կիրիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 221, նաև «Քրիստոնեյա Հայաստան» հանրագիտարան, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Երևան 2002, էջ 921:

XIX դ. Միսում նոր կաթողիկոսարանի կառուցման հետ զուգընթաց առաջնայնությունն ձեռք բերեցին Միսի կաթողիկոսությունն վանքերը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Սսի սրբավայրերն ունեին հետևյալ պատկերը.

1) Հին Վանք - Այն ուներ մի քանի անուններ, որոնցից մեկն, ըստ Ստ. Օրբելյանի, կոչվում էր Գլխաբաց¹, որը XX դ. սկզբին հայտնի էր Հին կաթողիկոսարան անունով²: 1292 թ. Հռոմկլայի գրավումից և Ստեփանոս կաթողիկոսի գերությունից հետո այստեղ 1294 թ. կաթողիկոս դարձավ Գրիգոր Անավարզեցին (Հեթում Բ-ի օրոք): 1734 թ. Ղուկաս կաթողիկոս Աջապահյանն Օսմանյան վեզիրի թուլլությունից աչքն ազնվորդաց և վերանվանեց ս. Աստվածածին եկեղեցի: Այնտեղ տարին մեկ անգամ «Յդութին Ս. Աստուածածնի ի յԱննայե» տոնին մատուցվում էր հանդիսավոր պատարագ, որից հետո բաժանվում էր մատաղ³: Հին վանքը կոչվում էր նաև ս. Նշան, քանի որ այնտեղ էին պահվում Կրիկիայի նշանավոր աջերը և խաչերը:

1810 թ. Կիրակոս Ա-ի օրոք կաթողիկոսարանը տեղափոխվեց արքայական պալատի մոտ, որտեղ գտնվող ս. Սոփիայի եկեղեցին վերանորոգվեց և վերանվանվեց ս. Գրիգոր Լուսավորիչ և դարձավ հայրապետանոց: Ի տարբերություն Հին վանքի, այն կոչվում էր Նոր Վանք կամ ս. Երրորդություն՝ շնորհիվ փառավոր խաչակալի⁴:

¹ Այն գլխաբաց էր կոչվում իր գմբեթի պատուհանների պատճառով: Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 347, 351:

² Տե՛ս Օրմանյան Մ. արք., նախկին պատրիարք, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույն անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, էջ 1719:

³ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 164:

⁴ Տե՛ս անդ, էջ 164:

2) Հին Վանքի մոտ էր գտնվում սպիտակ մարմարով կառուցված ս. Աննա եկեղեցին¹:

3) ս. Էջմիածին կամ Կաթողիկե եկեղեցի - Իրականում այդ անունով առանձին եկեղեցի չկար: Այն Նոր Վանքի խորանի ձախակողմյան մատուռն էր, որը կառուցվել էր Կոնստանդին Պալլի որդի Վասակի կողմից², և որտեղ իրենց քառասունքն էին անցնում նորընծա քահանաները: Լոհման էռնստը նշում է, որ մատուռը զարդարված էր Կիլիկիայի տարբեր՝ Սսից, Լամբրոնից, Մոպսուեստից, Անավարզայից բերված բազմաթիվ պատկերներով, երեք արձանագրություններով և մանրանկարչական զարդերով³:

4) ս. Աստվածածին – Շռախորան և պարսպապատ եկեղեցի էր, որը հավանաբար կառուցվել էր Լևոն Բ-ի կողմից, որտեղ էլ նա թաղվել էր: Առաջին անգամ նորոգվել է 1852 թ., իսկ երկրորդ անգամ 1907 թ.՝ ժողովրդական հանգանակություն: Մինչև 1915 թ. եկեղեցու մեջ պահպանվում էր մարմարե մի քառասյուն (20 սմ տրամագծով և 250 սմ բարձրությամբ), որը երաժշտության ժամանակ պառկեցնում էին գետնին, և ըստ ավանդության՝ անձրև էր տեղում⁴: Հետագայում եկեղեցին ծառայում էր որպես իգական վարժարան:

5) ս. Մարիամի, Մարիանեի կամ ս. Կույսի եկեղեցի – Կառուցվել է հավանաբար Զաբել թագուհու կողմից գեղեցիկ մի վայրում, որովհետև «ի հարաւ նայի յէջմիածին և ընդ արեւելս ի Ս.

¹ Սսի կաթողիկոսության միաբան Եղիշե եպիսկոպոս Կարոյանը ս. Աննան նույնականացնում է Զանլըի հետ, որը կառուցվել էր ս. Սոփիայի տեղում և XX դարասկզբին պահպանվել էր ընդամենը երկու սյուն: Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 164:

² Տե՛ս Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 223:

³ Տե՛ս Ստյ վանքը, երեք արձանագրութիւնք, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1901 թ., թիւ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 306:

⁴ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 166:

Սոֆի»։ Ըստ ավանդության՝ Զաբելը բաղնիքից վերադառնալու ժամանակ դիվահարվում է և խորունկ հավատքով բացականչում՝ «Օգնեա ինձ Ս. Մարինե»։ Նա նույն վայրկյանին բժշկվում է և նույն տեղում կառուցում է եկեղեցի, որի վրա եղել է ս.Կույսի պատկերը, վիշապը և կառուցման թվականը։ Բացի այդ, նա նշանակում է քահանա, որի հաջորդները՝ Ստեփեկանց սերունդը հասան մինչև 1634-1635 թթ.¹։ Եկեղեցին կործանվել է երկրաշարժից։

6) ս. Սոփիա – Սսի մայր եկեղեցին էր, որը կառուցվել էր Հեթում Ա-ի կողմից 1226 թ. Հուստինիանոս I կայսեր կողմից Կ.Պոլսում կառուցված Այա Սոփիայի նմանությամբ և հատակագծով²։ Հեթում պատմիչն այն կոչում է «Սագաշեն»³, իսկ Վահրամ Բաբունին՝ «Հրաշագեղ»։ 1266 թ. եկեղեցին հրկիզվել և ապա նորոգվել է։ Կիրակոս Ա-ն ս. Սոփիայի հարևանությամբ կառուցում է Մայրավանքը։ XX դարասկզբին այն ավերակ էր, և մնացել էին տաճարի երկու անկյունները (20 մ. բարձրությամբ և 5-6 մ. հաստությամբ), որը, ոմանց պատկերացմամբ, արքայական պալատի բեկորներն էին, իսկ նոր եկեղեցին՝ «Չանլը (Չանլըգ) Քիլիսեն» կառուցվել էր նախկին ս. Սոփիայի տեղում։

7) ս. Սարգիս – Սսի հին եկեղեցիներից մեկն է, որը կառուցվել էր Հեթում Ա-ի օրոք և ուներ կղմինդրաձև փայտաշեն առաստաղ։ Ս. Սարգսի տոնին մատուցվում էր պատարագ և մատաղ էր բաժանվում։ Վանքին կից գործում էր արական և իգական դպրոց։ Եկեղեցու տարածքում էին թաղված Կիլիկիո նշանավոր ազգային գործիչներ՝ Ֆերմանյանները և Նալբանդյանները⁴։

¹ Տե՛ս Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 223։

² Տե՛ս նույն տեղում, էջ 222։

³ Տե՛ս Հեթում պատմիչ, Թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, ի ձեռն հ.Մկրտիչ աթոռակալ վարդապետի Ավգերեան, ի Վնեետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, յամին 1951 ՌՆ, էջ 87։

⁴ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 167։

8) ս. Հռիփսիմե կամ ս. Կույսի եկեղեցի – տեղը հայտնի չէր, սակայն այն հիշատակվում է 1269 թ. արձաթե մասնատուփի մի հիշատակարանում:

9) ս. Հակոբ – ավերակ եկեղեցի էր, որը կանգուն էր մինչև 1914 թ.: Գտնվել է Սիսի կամրջի ձախակողմյան հատվածում, բերդի ստորոտում: Այստեղ 1270 թ. գրվել է Ավետարան: Երուսաղեմ ուխտի մեկնողները պարտադիր կանգ էին առնում եկեղեցում՝ աղոթելու:

10) ս. Հոգի կամ Հոգին Սուրբ – Տեղը հայտնի չէր:

11) ս. Նշան:

12) Զորավարաց եկեղեցի – գտնվում էր բերդի հարավային պարսպի վրա՝ նախատեսված բերդի բնակչության կամ զինվորների համար:

13) ս. Սիմեոն – խորանաձև ավերակ եկեղեցի էր, որը գտնվում էր քաղաքից դուրս և հայտնի էր Զամուրտան քիլիսե անվամբ: Եկեղեցին վերանորոգվել է 1280 թ. Լևոն Գ-ի օրոք, իսկ Տիրատուր քահանան այստեղ մանրոսում է գրել:

14) ս. Նիկողայոս – ավերակ մատուռ էր, որը հիշատակվում է 1374 թ. Զորավանքի ս. Նշանի և Վանկո ս. Նշանի հետ: Զրօրհնեք կատարելու ժամանակ ժողովուրդը նախ այնտեղ էր աղոթում, իսկ հետո՝ գետեզերքի բարձրադիր ժայռի վրա՝ «Գրզլար Օյնաղը» կոչվող վայրում:

15) ս. Ստեփանոս – գտնվում էր քաղաքից դուրս: Կիսավեր խորանով մի մատուռ էր, որ կառուցվել էր Սմբատ Գունդստաբլի կողմից: Կարծիք կար, որ այնտեղ էր գտնվել գանձարանը¹:

16) ս. Մերկերիոս – քաղաքից դուրս միախորան ավերակ եկեղեցի էր, որտեղ աղոթելու էին գնում ավագ ուրբաթ օրը:

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 168:

17) ս. Պողոս-Պետրոս – պարսպապատ միախորան մատուռ էր քաղաքի կենտրոնում: Պողոս-Պետրոսի տոնախմբության օրը մատուցվում էր պատարագ և մատաղ էր բաժանվում:

18) ս. Մինաս – կանոնավոր խորանով և պարսպապատ եկեղեցի էր, որ գտնվում էր Մայրավանքի մոտ և սսեցիների սիրելի մատուռներից մեկն էր: Հնուց ի վեր եկեղեցու տարածքը նախատեսված էր որպես երեխաների գերեզմանոց, որի համար էլ յուրաքանչյուր շաբաթ օր կատարվում էր զոհաբերություն և մատաղ: ս. Մինասի տոնին մատուցվում էր պատարագ, իսկ Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը, որ կոչվում էր «հատիկների շաբաթ», վերջին 5-6 ամսվա ընթացքում ամուսնացած նորահարսները թուրքական «գարի» (սև գլխաշոր – Վ. Հ.) փոխարեն հարսանեկան սպիտակ «գարով» պարուրված գալիս էին ուխտի: Բացի այդ, ս. Մինասը կորսված իրեղենները «գտնող» սուրբն էր¹:

19) Սըվասը (ս. Վասիլ?) – Մայրավանքի մոտ գտնվող ավերակ եկեղեցի էր՝ իր հոնարեն արձանագրությամբ: Սսեցիները կարծում էին, որ այն հոնական վանք էր, իսկ Ղ. Ալիշանը կարծում է, որ այն կառուցվել էր Լևոն Բ-ի կողմից, որը XVII դ. կեսերին ավերվել էր²:

20) Սյուլլոք (Saint Lus?) – եղել է լատինական եկեղեցի ս. Ղուկաս անունով: Սակայն ենթադրվում էր, որ այն եղել էր հայկական եկեղեցի ս. Կարապետ անունով:

21) Հայր Աբրահամ – կես խորանով ուխտատեղի էր, որի մասին պատմական և ավանդական տեղեկություններ չեն պահպանվել: Շրջակա թուրքերը պատմում էին, որ երազում հաճախ էին տեսնվում եկեղեցու սրբի հետ³:

¹ Տե՛ս անդ:

² Տե՛ս Ալիշան Վ.Ղ.հ.Մ., Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 224:

³ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 168:

22) ս. Աթանագինես – գտնվելու վայրն անհայտ էր: Ենթադրվում է, որ այն Սսի 1342 թ. եկեղեցական ժողովի մեջ հիշատակված «Saneta Etennacine» եկեղեցին է, որը Մ. Զամչյանի կարծիքով՝ կառուցել է Հեթումը և կոչվել է Հեթումաշեն¹:

23) Մայր Եկեղեցի – գտնվելու վայրն անհայտ էր: Կառուցվել է Կոստանդին Պալիեֆի որդի Վասիլի կողմից:

24) ս. Բարսեղ – գտնվելու վայրն անծանոթ է: Կառուցվել է Լևոն Բ-ի կողմից, սակայն ի թիվս այլ եկեղեցիների ավարտվել է XVII դ. կեսերին:

25) Հանդիպակաց ժամ (Ամաճքը ժամ) – անանուն քարայր-մատուռը գտնվել է Սսի արևելքում, մի բլրի գագաթին: Մեծ Պահքի առաջին հինգշաբթի օրը սսեցիները այնտեղ մոմ էին վառում, աղոթում և ճաշակում ագապե²:

26) ս. Դավիթ Աստվածահայր – գտնվելու վայրն անհայտ է: Հայտնի է միայն այն, որ այնտեղ 1291 թ. գտնվել է Ավետարան՝ գրված ոմն Միքայելի կողմից:

27) ս. Հովհաննես – գտնվելու վայրն անհայտ է, սակայն հայտնի է, որ մինչև XVI դ. այդտեղ են պահվել կաթողիկոսության չորս Աչերը (Գր. Լուսավորչի, Սեդրետրոսի, Նիկողայոս Աբանչելագործի և Պարսամ Ճգնավորի):

28) Զեորթին ժամ – գտնվել է քաղաքի փոքր աշտարակի մոտ քարայրում:

29) ս. Գևորգ (Արքայակաղին վանքը)՝ այստեղ է գրվել Հովհաննու Ավետարանի մեկնության թարգմանությունը (1180 թ.) և Ն. Լամբրոնացու խորհրդածությունները (1165 թ.): Այս վանքում է թաղվել Գր. Մուսաբեկյանը:

¹ Տե՛ս Զամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), Գ հատոր, Երևան, 1984, էջ 252:

² Տե՛ս Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 169:

Դրազարկը Սսի թեմի արքեպիսկոպոսական և արքայական կալվածքն էր և աթոռանիստը: Դրազարկը եղել է Կիլիկիայի ամենահին վանքը (1105 թ.), որը կոչվել է Փոսի կամ Ավագ վանք¹: Այն կոչվում էր ս.Աստվածածին կամ Փոսի անապատ և իր հեղինակությամբ երկրորդն էր Սսից հետո, իսկ նրա արքեպիսկոպոսները արքայական քարտուղարներն էին²: Դրազարկի տեղի մասին ստույգ նկարագրություն չկա, միայն Ղ. Ինճիճյանն է որոշ ստուգությամբ գրում. «Դրազարկ անապատ եկեղեցի յանտառախիտ ձորամիջի, հեռի ի Սսոյ իբրև միօրեայ, յարեւմտեան կողմն նորա, իսկ յԱնաւարզայ իբրև երկօրեայ, անցանէ առա նովաւ և առու. երևին անդէն նաւ աւերակքը ինչ նախնի հռչակաւոր մեհաստանին... Լինի ի Դրազարկ ուրկումիլ գունով դեղին և կաղին առատ, որպէս և ի Սիս»³:

Թորոս Ա-ն ԺԲ դարի սկզբին նորոգել է վանքը Գևորգ Մեղրիկ վասպուրականցու (1045-1114) և Կիրակոս Գիտնականի օժանդակությամբ և հետագայում վերածել Ռուբինյան հարստության արքունի դամբարանի և ուսումնական կենտրոնի: Գևորգ Մեղրիկն ու Կիրակոս Գիտնականը, որոնք եղել են Գրիգոր Վկայասերի աշակերտներն ու գործակիցները Դրազարկում ծավալել են մատենագիտական գործունեություն, հավաքել ճգնավորական խստակեցությամբ միաբանություն և մշակել վանական կանոնադրություն: Դրազարկ վանքը հաճախ հիշվում է անապատ, ճգնավորանոց, ինչպես նաև մեծ, սուրբ, հրեշտակաբնակ, ականավոր, հռչակավոր, գերահռչակ: Գևորգ Մեղրիկն ու Կիրակոս

¹ Տե՛ս **Նղիայեան Բ.**, Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան երեք դարերը, Երևան, 1994, էջ 117:

² Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 173:

³ **Ինճիճեան վրդ. Ղ. հ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ, և Ամէրիկոյ, մասն առաջին, Ասիա, հատոր Ա, ի Վէնետիկ, ՚ի վանս սբոյն Ղազարու, 1806 ի թուին ՌՄՄԵ, էջ 365:

Գիտնականը թաղվել են Դրազարկում, որի պատճառով էլ վանքը կոչվել է «գերեզմանատուն սուրբ Վարդապետացն»։ Այստեղ են թաղվել նաև մի շարք իշխաններ, թագավորներ, հայրապետներ և վարդապետներ։ Հայրապետներից այնտեղ են թաղված Գրիգոր Տղան (1173-1193), Գրիգոր Քարավեժը (1193-1194), Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսը (1203-1221), Սսի արքեպիսկոպոս Բարսեղը (Հեթում Բ-ի եղբայրը՝ 1275), Կոստանդին Ա Բարձրաբերդցին՝ (1264), Կոստանդին Դ Լամբրոնացին (1323-1326), իշխաններից՝ Թորոս Ա. (1129), Թորոս Բ. (1169), Թորոս Գ. (1299), Ռուբեն Բ (Լ-ևոն Բ-ի եղբայրը՝ 1186), թագավորներից՝ Հեթում Ա (նույն ինքը՝ Մակար վրդ.՝ 1270), Զաբել թագուհին, Ստեփանեն (Հեթում Բ-ի որդին), Ալինսի զորավարը (Օշինի եղբայրը՝ 1317), Օշինը (1320), Անիի թուրք Ամիրայի որդին Փաղլունը (1130 թ., որն ընդունել էր քրիստոնեություն և 15 տարի ճգնավորական կյանք էր վարել Դրազարկում) և ուրիշներ¹։

Մեզ անհայտ է թեմի և վանքի հիմնադրման թվականը։ Ամենայն հավանականությամբ թեմը ստեղծվել է ԺԲ դարի սկզբին, իսկ վանքը գոյություն է ունեցել ավելի վաղ, որովհետև Թորոս Ա. նորոգել է այն և ոչ թե կառուցել։ Առաջին հիշատակությունը Գ-ևորգ Մեղրիկի մասին է (1113 թ.)՝ որպես Սսի և Դրազարկի առաջնորդ²։ Վերջին հիշատակությունը թեմի և առաջնորդի վերաբերյալ 1375 թվականին է, որտեղ հիշվում է Բարսեղը, որն այդ թվականին մահացել է³։

¹ Տե՛ս **Նղիսյան Բ.**, Կիրիկիոյ Հայոց թագաւորութեան երեք դարերը, էջ 117։

² Տե՛ս Նույն տեղում, էջ 234։

³ Տե՛ս **Ալիշան վ. Ղ.հ.Մ.**, Հայապատում, պատմիչք եւ պատմութիւն հայոց, Վենետիկ - ի վանս ս. Ղազարու, ՌՅՄԱ-1901, էջ 534։

XX դարասկզբին Օսմանյան Թուրքիայում կար 1388 հայկական եկեղեցի և 134 վանք: Դրանց մի մասը՝ 222 եկեղեցի և 12 վանք, ենթակա էր Կիլիկիո կաթողիկոսությանը¹:

դ) Կիլիկիահայերի եկեղեցական ակնածամբ և ազգային-եկեղեցական տոները: Սսեցին հատուկ ակնածանք ուներ իրեն շրջապատող կրոնական սրբությունների նկատմամբ և աչքի էր ընկնում ընդգծված կրոնասիրությամբ, որը հոգեկան վայելքի արտահայտություն էր: Եկեղեցու զանգերի ձայնը լսելուն պես սսեցին խաչակնքում էր, իսկ եկեղեցու կողքով անցնելիս խաչակնքելով համբուրում էր եկեղեցու դուռը: Եկեղեցու զանգերին արձագանքում էին ոչ միայն քահանան և ժամկոչը, այլև ամբողջ ժողովուրդը, որոնք սիրով գնում էին եկեղեցի՝ որպեսզի «Աստուածային օրհնութիւնը բերէր իր նախաճաշի սեղանին», որի շուրջը անխտիր հավաքվում էին ընտանիքի բոլոր անդամները: Կիրակի օրերը թաղային եկեղեցում քրիստոնեական արարողությունը մասնակցելուց հետո, որն ավարտվում էր շատ կանուխ, ժողովուրդը բռնում էր Մայրավանքի ճանապարհը՝ այնտեղ ևս ս. Պատարագին մասնակցելու և Վեհափառի կրոնաշունչ պատգամները լսելու համար, որոնք հաճախ շատ երկար էին տևում քարոզները տեղում թուրքերեն թարգմանելու պատճառով: Այդ մասին Մ. Քելեշյանը հիշում է. «Այն գիշեր անկողին կը մտնէինք նոխազին լեարդը, սիրտը ու երիկամունքները ճաշակելէ վերջ միայն: Այդ գիշերը գրեթէ չէինք քնանար, պէտք էինք կանուխ ելլել, նոր հագուստ կապուստով զարդարուիլ և ժամ առաջ գրաւել մեր տեղը տաճարէն ներս, Վեհափառին արքայական մարմարեայ Աթոռին մօտիկ, անոր հոգեշունչ քարոզները կատարեալ լսելու համար»²: Օրվա մատաղից բաժին էին ստանում ոչ միայն տաներեցն

¹ Կերտող Ս., Հայ առաքելական եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, 2003, էջ 51:

² Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 381:

ու ժամկոշը, այլև թաղի աղքատ ընտանիքները և այլազգի մու-
րացկանները: Աղոթքը բնական անհրաժեշտություն էր, քանի որ
ամեն ինչ սկսվում և ավարտվում էր աղոթքով: Սսեցին շատ էր
սիրում ուխտի գնալ Երուսաղեմ՝ իր հետ նվերներ տանելով: Բացի
հասարակ ժողովրդից, գրեթե բոլոր կաթողիկոսները և թագավոր-
ները ուխտագնացության են մեկնել Երուսաղեմ¹:

Հակառակ այն բանին, որ Կիլիկիայի հայությունը թուրքա-
կան ճնշումների պայմաններում մասամբ մոռացել էր իր մայրենի
լեզուն, և մասամբ այլափոխվել էր հասարակական կյանքը, նա
կարողացել էր անաղարտ պահել իր հավատքը, եկեղեցին, նահա-
պետական ոգին և ազգային ու կրոնական տոները: Այդ մասին
էին արձանագրում ժամանակակիցներից շատերը²: «Աղըր
տէն»-ների (մեծ տոներ-Վ. Հ.) օրերին փակվում էին վարժա-
րանները, շուկան և բանվորական հաստատությունները, և բազ-
մամարդ էին դառնում եկեղեցիները: Կիլիկիայի հայերն այնքան
բծախնդիր էին, որ եկեղեցական տոները չհարգողները դիտվում
էին որպես հեթանոսներ:

Կիլիկիայում մեծ խանդավառություն էին նշում Զատիկը,
Մեռելոցը, «Գալակյունիվը» (Բերդի օրը - Վ.Հ.)³, ս. Մնունդը, ս.
Աստվածածնի, Վարդավառի⁴, Խաչի, «Շիֆեթ»-ի (Տյառնընդառա-
ջի-Վ. Հ.), «Զանախթարյի», (Ծաղկազարդի-Վ. Հ.), Ավագ Հինգշաբ-
թի, Նոր տարվա (Կառնտես), Մեծ պահքի (Ախաս, աղուհացի),

¹ Տե՛ս անդ, էջ 382:

² **Զագմագճեան Գ. Յ.**, Հաւատքի զօրութիւնը. Կիլիկիոյ հայկական կեանքէն, Անթիլիաս-Լիբանան, 1949, էջ 1:

³ Զատիկի 3-րդ օրը բարձրանում էին պարսպի վրա գտնվող ավերակ մատուռ, ուր
մատուցվում էր հանդիսավոր պատարագ: Տոնական խրախճանքները համեմվում
էին Ռուբինյան շրջանի շիջած փառքի անշեջ հուշերով: Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ.
աշխ., էջ 519:

⁴ Կիլիկիայում Վարդավառի՝ չուր շաղ տալու սովորությունը չունեւ ընդհանրական
և ազգային-կրոնական նկարագիր: Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 520:

Հոսսավորչի (Հոսսավորչի Մուտն ի վիրապ)¹, Բարիկենդանի (Պարկենտակի), ս. Հակոբի (ս. Օօբի), Հիսնակի (Հսնեկի), Համբարձումի, ս. Սարգսի և Զրօրհնեքի տոնակատարությունները:

Կիլիկիայում թուրք և ընդհանրապես մահմեդական կանանց շրջանում հաճախադեպ հանդիպող կրոնական սովորույթյուններից էր նաև բուժման նպատակով իրենց հիվանդ երեխաներին հայկական եկեղեցի տանելը և քահանայի օգնությամբ նրանց համար Ավետարան ընթերցելը: Նրանք հավատում էին, որ իրենց նեղությունների հաղթահարման համար հայկական եկեղեցում կարող էին հայցել աստծո ողորմությունը և արժանանալ հավատացյալների աղոթքներին²:

Այսպիսով, կանոնական կանոնների համաձայն՝ Կիլիկիայի աշխարհագրական տարածքը պատմականորեն մտնում էր և առ այսօր էլ շարունակում է մնալ Անտիոքի Ուղղափառ եկեղեցու կանոնական իշխանության իրավասության ներքո: Սակայն, հոգևոր առումով Կիլիկիան կազմել էր հայկական առանձին մի կաթողիկոսություն և իր նշանակությամբ, եկեղեցավարչական ընդգրկումով, տարածքային-թեմական բաժանումներով ու իրավասությամբ համարվում էր երկրորդային Հայոց Հայրապետության՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի նկատմամբ: Նախորդ դարերում Կիլիկիո կաթողիկոսությունը կարողացել է պահպանել Հայ եկեղեցու ավանդույթները, որը նպաստել է վերջինիս ինքնուրույնությանն ու անկախացմանը: XX դարասկզբին Կիլիկիո կաթողի-

¹ «Մուտն ի վիրապ»-ը համապատասխանում էր Մեծ պահքի 7-րդ կիրակիին և լինելով ուտիքի օր, սկսած Ռուբինյան իշխանապետության ժամանակներից, տոնվում էր մեծ շուքով: Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 522:

² **Քուրքճեան Վ. Մ.**, Հայկական Կիլիկիա. Ուսումնասիրություն մը Կիլիկիոյ Հայկ. Թագաւորութեան վրայ, «պանծալի Այաս», Ալեքսանդրեդ, Նիւ Եորք, 1919, էջ 32:

կոստությունն, ըստ տարբեր հաշվարկների, ուներ 12-23 եկեղեցական թեմ, իսկ Սսի սրբավայրերի թիվն անցնում էր երեք տասնյակից:

1.2. Պաշար Սսի կաթողիկոսական աթոռի համար (1894-1902թթ.)

1894 թ. նոյեմբերի 8-ին Սսի կաթողիկոս Մկրտիչ Ա (Մարաշցի) Քեյֆսիզյանի մահից հետո, որը կաթողիկոս էր ընտրվել 1871 թ. Մկրտիչ Խրիմյանի պատրիարքության օրոք, Կիլիկիո հայրապետական աթոռը շուրջ ութ տարի՝ 1894-1902 թթ. մնում է թափուր, որն էլ առիթ է դառնում զանազան վեճերի ու ապօրինի ձեռնադրությունների համար:

Մ. Քեյֆսիզյանը մահացավ մի այնպիսի ժամանակահատվածում, երբ նոր-նոր թափ էին առնում աբղուհամիդյան կոտորածները: Օգտագործելով ստեղծված հոգևոր ժամանակավոր անիշխանությունը՝ օսմանյան կառավարութունը խորացնելով հայ ազգային և հոգևոր գործիչների միջև առկա տարաձայնությունները, որոշեց միջամտել կաթողիկոսական ընտրություններին և առաջադրել իր թեկնածուին:

Կիլիկիո կաթողիկոսի ընտրություններն առավել հրամայական դարձան 1890-ական թվականների բուն կոտորածների շրջանում, երբ կարիք զգացվեց հոգևոր-եկեղեցական միասնության, առանց որի հնարավոր չէր դիմակայել ահազնացող սարսափներին: Մ. Խրիմյանը ելքը տեսնում էր կաթողիկոսի, թեկուզ ոչ լավագույնի, ընտրության մեջ¹:

ա) Գրիգոր Եպիսկոպոս Ալեաթեյանի թեկնածությունը: Մ. Քեյֆսիզյանի մահվանից շուրջ հինգ ամիս անց բարձրացվում է

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1820, թ. 1:

հաջորդ կաթողիկոսի ընտրության հարցը, որի կազմակերպման և անցկացման աշխատանքների համակարգումը 1895 թ. մարտի 30-ին հանձնվում է Գրիգորիս եպիսկոպոս Հովհաննիսյանին, որն էլ ապրիլի 12-ին մեկնում է Ադանա: Նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո նա մայիսի 24-ին ներկայացնում է քվեարկության արդյունքում ընտրված հինգ թեկնածուների անվանական ցուցակը, որը պետք է հաստատվեր Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և Ազգային ընդհանուր ժողովի կողմից, և ըստ որի էլ Կենտրոնական խառը ժողովը պետք է ընտրեր Կիլիկիո ապագա կաթողիկոսին: Սակայն սպասվածին հակառակ Կենտրոնական խառը ժողովը, միտում ունենալով իր թեկնածուին դարձնելու կաթողիկոս, մայիսի 30-ին կազմում և ներկայացնում է թեկնածուների նոր ցուցակ, որտեղ չկային Ընդհանուր ժողովի կողմից առաջադրված թեկնածուները: Ի վերջո, 1895 թ. հունիսի 7-ին ընտրությունների արդյունքում հավաքելով 16 քվե՝ նոր կաթողիկոս է ընտրվում Գրիգոր եպիսկոպոս Ալեաթճյանը: Սաի մի շարք բարձրաստիճան հոգևորականներ, այդ թվում՝ Նիկողայոս եպիսկոպոս Դավթյանը (Ֆոնուզի առաջնորդ), Հովհաննես եպիսկոպոս Գազանճյանը, Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնյանը (Ադանայի առաջնորդ) և Կ.Պոլսի Կիրակոս վարդապետ Կեռքճյանը, համաձայն չլինելով ընտրության արդյունքների հետ, հունիսի 14-ին բողոքագիր են ներկայացնում թուրքական կառավարությանը, պատճառաբանելով, որ կաթողիկոսական ընտրությունը կատարվել է Սաի Կաթողիկոսական աթոռի ընտրական կանոններին հակառակ¹, որն էլ հետագայում հիմք է հանդիսանում թուրքական

¹ Տե՛ս Քելեճեան Մ., նշվ. աշխ., էջ 261:

կառավարության կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկմանը¹: Ծավալված հետագա պայքարի արդյունքը լինում է այն, որ Կիրիկիո աթոռը միաժամանակ ունենում է երկու կաթողիկոս:

Չնայած վերոգրյալի առնչությամբ թուրքական կառավարությունը Կ.Պոլսի պատրիարքարանից բացատրություն է պահանջում, սակայն իսառ ժողովը՝ ի դեմս Կիրակոս եպս. Բեքմեզճյանի, Կիրակոս եպս. Քեչեճյանի (Զեյթունի առաջնորդ) և Մկրտիչ եպս. Վեհապետյանի, օգտվելով Ընդհանուր ժողովի բացակայությունից, վավերական է համարում ընտրության արդյունքները և այն հաստատում 1895 թ. հունիսի 16-ին:

բ) Հովհաննես եպիսկոպոս Գազանճյանի քեկնածությունը: Սակայն ընդդիմադիր երեք եպիսկոպոսները շարունակում են իրենց բողոքը: Նրանք նազիմ փաշայի թելադրանքով և Կ.Պոլսի Կիրակոս վրդ. Կեոքճյանի ուղեկցությամբ հասնելով Սիս, 1895 թ. հուլիսի 18-ին «Խաչ Օտայի» մեջ Հովհաննես Գազանճյան եպիսկոպոսին գաղտնի օժում են որպես Կիրիկիո կաթողիկոս², որն անասելի դժգոհություն է առաջ բերում ժողովրդի շրջանում: Այդ մասին Մ. Քելեճյանը նշում է. «Շանթահարիչ տպաւորութիւն մըրաւ այս անկոչ հիւրերու անախորժ ներկայութիւնը՝ Սիսի կրօնասէր և հայրենական աւանդութեանց նախանձախնդիր ժողովուրդին վրայ, որոնք զայրացած...զէնքերով և բիրերով զինուած խռնուեցան վանքին բակը և սպառնալիքներ տեղացին ապօրէն օծման մեղսակիցներուն դէմ. ասոնք ամբողջ գիշերը սպասեցին հոն՝ ոտնակոխ ընել չտալու համար դարաւոր աթոռի իրաւունքները...»³:

¹ Տե՛ս «Տանն Կիրիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ (պատմական համառոտ ակնարկ)», առանձնատիպ «էջմիածին» ամսագրի (1959 թ., թիվ Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և 1960 թ., թիվ Բ, Գ), Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 1960 թ., էջ 25:

² Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիրիկիոյ, նշվ. աշխ., էջ 775:

³ Քելեճեան Մ., նշվ. աշխ., էջ 230:

Կ.Պոլսի Ազգային Կենտրոնական վարչությունն իմանալով կատարվածի մասին՝ հուլիսի 19-ին անվավեր է համարում Հովհաննես եպիսկոպոս Գազանճյանի ընտրությունը: Սակայն այն հետ չի կանգնեցնում վերջինիս՝ որպես նորընծա կաթողիկոսի¹: Իր հերթին թուրքական իշխանությունները վերջնականապես մերժում և չեն վավերացնում Գ. Ալեաթճյանի կաթողիկոսական ընտրությունը:

Գ. Ալեաթճյանից հետո շուրջ երկու տարի վիճակը մնում է լարված, քանի որ Աբդուլ Համիդ Բ-ն ամենագործուն միջամտություն էր հանդես բերում ընտրություններին: Ռ. Գասպարյանն իրավացիորեն նշում է, որ ընտրությունների ձգձգմամբ սուլթանը ցանկանում էր Կիլիկիո կաթողիկոսությունն անկախ ճանաչել և այն դուրս բերել Կ.Պոլսի պատրիարքարանի ենթակայությունից²: Այդ մասին մենք իմանում ենք Ամենայն Հայոց կաթողիկոսին հղված Մ. Օրմանյանի նամակից. «Այստեղ հարկ է ուշադրութիւն դարձնել կառավարութեան ընդհանուր դիմումին վրա, որ է Պատրիարքութեան ազդեցութիւնը նուազեցնել և այս նպատակին հասնել Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը առանձին պատրիարքութեան վերածելով, Թուրքիո հայութիւնն երկփեղկելով և մայր թեմերից անջատելով, ընդհանուր հայությունը ջլատել և յուր մասը ավելի կղզիացեալ և ավելի նկուն կազմել»³: Ընտրությունները թույլատրելու համար Բ. Դուռն առաջ էր քաշում հետևյալ պահանջները. ա) Սսի կաթողիկոսությունն անկախ ճանաչել Կ.Պոլսի պատրիարքարանից, բ) բացառել Կ.Պոլսի պատրիարքության

¹ Տե՛ս Բարգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 776:

² Գասպարյան Ռ., Կիլիկիա հայությունը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1999, էջ 7, նաև նույնի Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունների հարցի շուրջ, Հոգվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, 2013, էջ 160:

³ ՀԱԱ, ֆ.57, ց. 1, գ.355, թ.3, նաև ֆ. 57, ց.2, գ. 1821, թ.2:

մասնակցությունը և միջամտությունը ընտրություններին, գ) կաթողիկոս ընտրել Կիլիկիո թեմի եպիսկոպոսներից մեկին, դ) թեկնածուների ցուցակը նախօրոք ներկայացնել իր հաստատմանը:

Իր նպատակին հասնելու համար 1897 թ. մարտին թուրքական կառավարությունը Կ.Պոլսի պատրիարքի ազդու միջամտությամբ Հ. Գազանճյանին աքսորում է Բեյրութ, որով պատրիարքությունն ու Կենտրոնական վաչությունը «դժվարին կացության մը առջև գտավ ինքզինքը»¹: Կաթողիկոսական տեղապահ է նշանակվում Կիրակոս եպս. Քեչեճյանը, որն իր հրահանգներն անմիջականորեն ստանում էր Կ. Պոլսի պատրիարքարանից:

Մտահոգվելով առկա խնդիրներով և կարևորելով Սսի Կաթողիկոսական աթոռին նոր կաթողիկոս ունենալու անհրաժեշտությունը, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը 1899 թ. փետրվարի 12-ին Հարություն փաշա Տատյանին ուղղված իր մասնավոր նամակում խնդրում էր կազմակերպել Կիլիկիո կաթողիկոսական աթոռի ընտրությունները և աշխատել Աթոռը պահել երկար ժամանակ²:

Այդուհանդերձ, Սսի կաթողիկոսական աթոռի շուրջ առաջացած խնդիրներն իրենց լուծումը ստանում են միայն 1899 թ. օգոստոսի 15-ին Գ. Ալեաթճյանի վախճանով: Այս անգամ նոր ընտրություններ անցկացնելու համար՝ որպես պատրիարքարանի և կենտրոնի պատվիրակ, որոշվում է Սիս ուղարկել Երուսաղեմի վանքի լուսարարապետ Սահակ արքեպիսկոպոս Խապալանին: Միաժամանակ 1900 թ. հունվարի 22-ին Արդարության և կրոնի նախարարությունից Կ.Պոլսի հայոց պատրիարքին հայտնում են,

¹ «Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ (պատմական համառոտ ակնարկ)», առանձնատիպ «էջմիածին» ամսագրի (1959 թ., թիվ Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և 1960 թ., թիվ Բ, Գ), Մալր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1960 թ., էջ 25:

² Տե՛ս Քեչեճեան Մ., նշվ. աշխ., էջ 261:

որ Բ. Դուռն ընտրությունների կազմակերպման ընթացքին հետևելու համար Ադանա է ուղարկելու կառավարության ներկայացուցիչ Կրոնի տեսչության պետի օգնական Բեհա բեյին:

1900 թ. փետրվարի սկզբին Ս. Խապայանը հասնում է Ադանա և նոր ժողով գումարելու համար անց է կացնում նախապատրաստական աշխատանքներ: Սակայն ժամանելով Ադանա՝ Բեհա բեյը նահանգապետ Պահրի փաշայի¹ օգնությամբ մեկուսացնում է Սահակ եպս. Խապայանին: Փետրվարի 14-ին Ադանայի կուսակալը և Կրոնի տեսչության պետի օգնականը հրամայում են կաթողիկոսական տեղապահ Կիրակոս եպիսկոպոս Բեքմեհյանի նախագահությամբ գումարել ընտրական ժողով և մարտի 10-ին անցկացնել ընտրություններ²: Տեղապահը հրավիրագրեր է ուղարկում ընտրողներին, և որոշվում է ժողով հրավիրել մարտի 10-ին: Սակայն այս անգամ էլ նոր վեճեր են բռնկվում, և կրկին ընտրության հարցը ձախողվում է: Մարտի 8-ին Մ. արք. Օրմանյան պատրիարքը պաշտոնապես հայտարարում է, որ ինքն ամբողջ արևմտահայոց պատրիարքն է և չի կարող հանդուրժել, որ Կիլիկիայի կաթողիկոսն ընտրվի առանց պատրիարքարանի անմիջական հսկողության³, որով էլ խափանվում են ընտրությունները: Ս. Խապայան սրբազանը ինը ամիս Կիլիկիայում մնալուց հետո 1900 թ. նոյեմբերին ձեռնունայն հետ է վերադառնում Երուսաղեմ:

Այսպիսով, 1894 թ. նոյեմբերի 8-ին Սսի Մկրտիչ Ա (Մարաշի) Քեյֆսիզյան կաթողիկոսի մահից հետո, Կիլիկիո հայրապետական աթոռը շուրջ ութ տարի՝ 1894-1902 թթ. մնաց թափուր,

¹ Պահրի փաշան ծագումով քուրդ էր, անուս, բայց շատ սրամիտ: Նա օրենքին կարևորություն չէր տալիս, նրա «գործադրութիւնը գաւազանով» էր: Տե՛ս «Հայ եղեռնը. իմ վկայութիւններս», թուրքերէն բնագրէն թարգմանեց Արշակ Ա. Շալճեան, Գահիրէ, 1925, էջ 36:

² Տե՛ս АВПРИ, ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1900, д. 27, л. 280.

³ Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 777:

որն էլ առիթ դարձավ զանազան վեճերի ու ապօրինի ձեռնադրությունների համար: Կիլիկիո կաթողիկոսի ընտրություններն առավել հրամայական դարձան 1890-ական թվականների աբդուլ-համիդյան կոտորածների շրջանում, երբ կարիք զգացվեց հոգևոր-եկեղեցական միասնության, առանց որի հնարավոր չէր դիմակայել ահագնացող սարսափներին: Օգտագործելով Կաթողիկոսական աթոռի շուրջ ստեղծված ժամանակավոր անիշխանությունը, օսմանյան կառավարությունը խորացնելով հայ ազգային և հոգևոր գործիչների միջև առկա տարաձայնությունները, որոշեց միջամտել կաթողիկոսական ընտրություններին և առաջադրել իր թեկնածուին:

1.3. Սահակ Բ Խապայանի՝ որպես Սսի Հայոց նոր կաթողիկոսի ընտրությունը և օծումը

ա) Գևորգ եպիսկոպոս Երեցյանի թեկնածությունը: Կ. Պոլսի պատրիարքությունը նորից քննարկում է Սսի կաթողիկոսի ընտրության հարցը և նորից Ս. Խապայան սրբազանին հրահանգվում է գնալ Ադանա՝ նոր ընտրություններ կազմակերպելու համար: Իշխանություններն անցանկալի համարելով Մ. արք. Օրմանյանի ընդվզումներն ընտրությունների առիթով, ցանկանում էին Կ. Պոլսի նոր պատրիարք դարձնել Մելիքսեդեկ սրբազանին, իսկ Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ նշանակել Աբրահամ եպիսկոպոսին և նրանց օգնությամբ ու տնօրինության ներքո իրականացնել Կիլիկիայի կաթողիկոսական նոր ընտրությունը¹: Գրաքննություն է հաստատվում նաև Սահակ Խապայանի նամակների

¹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», կազմող՝ Սանդրո Բեհբուդեան, Երևան, 2007, էջ 288-289:

նկատմամբ¹։ Սակայն 1901 թ. նոյեմբերի 29-ին Ադանայում գումարվում է ընտրական ժողով, որտեղ կաթողիկոս է ընտրվում Գևորգ եպիսկոպոս Երեցյանը, որն ընդամենը մի քանի ամիս ավտոակալելուց հետո դեկտեմբերի 13-ին անսպասելիորեն հրաժարական է ներկայացնում։

բ) Սահակ արքեպիսկոպոս Խապայանի թեկնածության առաջադրումը և ընտրությունը։ Այդ ընթացքում լրանում է Սահակ Բ-ի՝ որպես պատվիրակի ժամկետը, և նա ստիպված է լինում հետ վերադառնալ Երուսաղեմ։ Այս անգամ նրա փոխարեն ընտրությունների կազմակերպչական հարցերով զբաղվում է Բիլեջիկի առաջնորդ Մովսես եպս. Քեոմյուրճյանը, որը 1902 թ. սեպտեմբերի 5-ին հասնում է Ադանա և ձեռնամուխ լինում նոր ընտրությունների անցկացմանը²։ Հ. Ազգապետյանը նկատում է, որ «կիլիկեցիք բաղդ չունին. երրորդ անգամ ըլլալով ընտրութեան պիտի սկսին» և հույս հայտնում, որ նրանք կընտրեն «խղճամիտ, աշխատութենէ չքաշուող, գաւառէ գաւառ վազող,...պարտաճանաչ, անձնուէր եկեղեցական մը, եպիսկոպոս կամ վարդապետ»³։

Սահակ եպիսկոպոսը Կ. Պոլսի Ազգային կրոնական ժողովի ատենապետ Վահրամ արք. Մանկունուն հասցեագրած 1902 թ. փետրվարի 14-ի նամակում ահազանգում էր և առաջարկում, որ 1901 թ. նոյեմբերի 29-ին անցկացված կաթողիկոսական ընտրությունների խախտումներից զերծ մնալու համար անհրաժեշտ էր Կիլիկիայի կաթողիկոսի նոր ընտրություններն անցկացնել միայն վիճակավոր պատգամավորների հրահանգի համաձայն և յուրաքանչյուր թեմից Լնդհանուր ժողովին մասնակից դարձնել թե՛

¹ Տե՛ս անդ, էջ 291։

² Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 263։

³ «Բանասէր», Պարիս, 1902 թ. մարտ, թիւ 3, էջ 65։

հոգևոր և՛ թե աշխարհիկ պատգամավորներին¹։ Կաթողիկոսական թեկնածուների ընտրության օր նշանակվեց 1902 թ. սեպտեմբերի 29-ի կիրակին՝ Վարազա ս. Խաչի տոնի օրը։ Ընտրական ժողովին ներկա էին 43 պատգամավորներ, որոնցից 14-ը ուներ կրկնակի ձայնի իրավունք, որով քվեների թիվը հասավ 57-ի։ Արևմտահայ 33 եպիսկոպոսներից առանձնացվեցին առավելագույն ձայն ստացած 15 թեկնածուները, իսկ նրանցից էլ առանձնացվեցին 6-ը, որոնց թվում էին՝ Տրդատ եպս. Պալյանը (Կեսարիայի առաջնորդ)՝ 44 ձայն, Ստեփան եպս. Հովակիմյանը (Նիկոմիդիայի թեմի առաջնորդ)՝ 42 ձայն, Բարդուղիմեոս արք. Չամչյանը (Բրուսիայի թեմի առաջնորդ)՝ 40 ձայն, Ներսես եպս. Արսլանյանը (Ռոդոսթոյի թեմի առաջնորդ)՝ 39 ձայն, Սահակ արք. Խապայանը (Երուսաղեմի վանքի լուսարարապետ)՝ 37 ձայն, և Մովսես եպս. Քեոմյուրճյանը (Բելեջիկի թեմի առաջնորդ)՝ 34 ձայն։ Հոկտեմբերի 2-ին Բ. Դուռը հաշվի առնելով առանձին մասնավոր հանգամանքներ՝ 6 թեկնածուներից հաստատեց միայն 3-ին՝ թողնելով Բարդուղիմեոս, Մովսես և Սահակ սրբազանների անունները։ Հոկտեմբերի 10-ին ինքնաբացարկ ներկայացրեց Բարդուղիմեոս արքեպիսկոպոսը, իսկ հոկտեմբերի 12-ին նաև Մովսես եպիսկոպոսը, որն ավելի արժանավոր համարեց Սահակ արք.

¹ Տե՛ս Библиотеке Nubar de l'UGAB, p.000013. Կիրիկիայի թագավորության շրջանում Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր եպիսկոպոսաց ժողովի կողմից, որը հաստատվում էր Հայոց արքայի հրամանով։ Ընտրություններին երբեմն մասնակցում էին նաև վարդապետները և իշխանները, սակայն հասարակ ժողովուրդն ընտրական ձայնի իրավունք չուներ։ Տե՛ս **Հացունի վ. Վ. հ.**, Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ, Վնեետիկ-ս.Ղազար, 1930, էջ 44։

թեկնածութիւնը¹: 1902 թ. հոկտեմբերի 12-ին՝ Թարգմանչաց տոնի օրը, Ադանայի ս. Աստվածածին եկեղեցում գումարվում է Ընտրական ժողով՝ Վարչության և երուսաղեմի հայոց պատրիարքության պատվիրակ Մովսես եպս. Քեոմյուրճյան եպիսկոպոսի նախագահությամբ: Ժողովի 62 պատվիրակները միաձայն Կիլիկիո հայոց կաթողիկոս են ընտրում 53-ամյա Սահակ արքեպիսկոպոս Խապայանին և այսպիսով վերջ դնում Կիլիկիո աթոռի տագնապին²: Հետաքրքրական է, որ Աբդուլ Համիդ Բ-ը արգելել էր Կիլիկիայի Ազգային ընդհանուր ժողովի գումարումը, որի հետևանքով ընտրությունը մասնակցում են ոչ թե 120, այլ 62 պատվիրակներ³: Ընտրվում է մի կաթողիկոս, որը ժամանակակիցների բնութագրմամբ՝ «Աստծու խորագրիտակ և նվիրված ծառան էր»⁴: Վարչութիւնը օրինական համարելով ընտրական գործողությունները՝ հաստատում է Ս. Խապայանի ընտրության արդյունքները⁵:

1902 թ. դեկտեմբերի 9-ին հրատարակվում է ընտրությունների վավերականացման կայսերական հրովարտակը, որն էլ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց 2, գ. 1821, թ. 74-76, նաև «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908). Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», էջ 359-361:

² Սահակ Բ կաթողիկոսը Կիլիկիո կաթողիկոսների մեջ ամենաերկար ապրած (1849-1939, 90 տարի) և ամենաերկար գահակալած (1902-1939, 37 տարի) կաթողիկոսն է:

³ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 291:

⁴ The catholicosate of Cilicia. A brief historical survey, Antelias», 1895, p.10.

⁵ Տե՛ս Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ (պատմական համառոտ ակնարկ), առանձնատիպ «Էջմիածին» ամսագրի, էջ 26: Գրականության մեջ շրջանառվում է այն չարախոսությունը, որ իբր Սահակ եպիսկոպոսը կաթողիկոս առաջադրվելու համար թանկարժեք մատանի էր նվիրել Ադանայի նահանգապետ Պահրի փաշային, որն էլ ժողովրդին կոչ էր արել՝ «Եթէ կաթողիկոս մ'ունենալ կ'ուզէք, ձեր միակ ընտրելին պէտք է ըլլայ Սահակ եպիսկոպոս»: Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 263:

պատրիարքարանին է փոխանցվում դեկտեմբերի 16-ին: Իսկ 1903 թ. հունվարի 4-ին Սահակ Խապայանը սուլթանի կողմից պարգևատրվում է «Մէճիտիէ» I աստիճանի շքանշանով¹:

գ) Կաթողիկոսական ընտրության նշանակությունը և արձագանքները: Ընտրությունից անմիջապես հետո թե՛ Կ.Պոլսում և թե՛ գավառներում ուրախություն էր տիրում: Բոլոր կողմերից շնորհավորական ուղերձներ են ուղարկվում նորընտիր կաթողիկոսին²: 1903 թ. ապրիլի 10-ին³ և մայիսի 17-ին իր պատվական «քրիստոնյա եղբորը» շնորհավորական ուղերձ է հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը, որը մասնավորապես նշում է՝ «զօրացիր այսուհետև զորութեամբ Տեառն և լեր հովիւ քաջ բանաւոր հօտին Քրիստոսի...»⁴: Մինչ այդ՝ 1902 թ. նոյեմբերի 29-ին Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամներին ուղղված իր կոնդակում Մկրտիչ Ա Խրիմյանը կոչ էր արել նաև սատարելու Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսին⁵:

Սահակ Խապայանի ընտրությունը կարևոր նշանակություն ունեցավ արևմտահայության կյանքում նախ այն պատճառով, որ ութ տարուց ի վեր թափուր էր մնացել Կիլիկիոյ Կաթողիկոսական աթոռը, և հաճախ էին հայ հասարակության ներկայացուցիչները և մամուլն իրենց ցավն արտահայտում այդ առիթով: Բացի այդ, կիլիկիահայերը կարող էին նորընտիր և սահմանադ-

¹ Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 811:

² Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Թ. Ազատյան, գ. 159, թ. 1:

³ Տե՛ս «The catholicosate of Cilicia. Her place and status in the Armenian church», Antelias-Lebanon, 1961, p.11-12.

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 87, թ. 73-73 շրջ.:

⁵ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցւո պատմութեան, գիրք ԻԲ. Մկրտիչ Ա Խրիմեան կաթողիկոս Ամենայն Հայոց (1892-1907), մաս Բ, փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի)», կազմող՝ Գոհար Աւագյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 446--447:

րորեն ընտրված կաթողիկոսի հետ իրենց ապագայի և բարգավաճման մեծ հույսեր կապել, քանի որ Սահակ Բ-ն վայելում էր պետության հարգանքը և վստահությունը¹։ Սաի աթոռի գոյությունը և կայունությունը ձեռնառու էր նաև էջմիածնի համար։ Հ. Թերզյանը խոսելով կաթողիկոսի ընտրության նշանակության մասին նշում է, որ «ընտրությունները հրապուրեցին Հայ ժողովուրդն և Հայերը համախմբուեցան եկեղեցւոյ շուրջը ու պինդ կերպով յարեցան ու փարեցան իրենց Մայրենի Եկեղեցիին»²։ Ընտրությունները տեղի ունեցան մի այնպիսի ժամանակահատվածում, երբ ցարական իշխանությունները բռնություններ էին սկսել հայ եկեղեցու նկատմամբ և պատրաստվում էին առգրավել նրա գույքը։

Սահակ Բ խապայանը ծնվել է 1849 թ. մարտի 25-ին խարբերդ նահանգի Եղեգի գյուղում՝ Մահտեսի Կարապետ և Գոհար խապայանների ընտանիքում։ Նրա ծննդյան՝ ավագանի անունը եղել է Գաբրիել (փաղաքշական ձևով ծնողները նրան կոչում էին Գաբո)։ Նա դեռ փոքր հասակից բավականին եկեղեցասեր մանուկ էր, և ինչպես Բաբկեն Ա Կյուլեսերյան կաթողիկոսն է նրա մասին նշում. «Առտուց իրիկուն գիւղի եկեղեցին կ'երթար, կը մասնակցէր ժամասացութեան»³ :

Եկեղեցասեր Գաբրիելն իր առաջինն եկեղեցական աստիճանն ստանում է Սսի կաթողիկոսությունից ժամանած Հարություն եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ, որը գալով խարբերդ հյուրընկալվում է ապագա կաթողիկոս Սահակ խապայանենց տանը և հավանելով նրա երաժշտական ընդունակությունները և

¹ Sanjian A. K., *The Armenian Communities in Syria under Ottoman Dominion*, Cambridge, Massachusetts, 1965, p.253.

² Թերզյան Յ. Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 21:

³ Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 816:

լրջմտությունը, Խարբերդի ս. Հակոբ եկեղեցում նրան շնորհում է դպրության աստիճան:

1867 թ., երբ Գաբրիելն արդեն 18 տարեկան երիտասարդ էր, ընդունվում է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանը և բարձր առաջադիմությամբ ավարտելով այն, 1869 թ. Եսայի պատրիարք Ուզունյանի կողմից ձեռնադրվում է սարկավագ¹: Ուսումը կատարելագործելու նպատակով նրան շամգցի Մագսուտ Մագսուտյանի (հետագայում ս. Հակոբ վանքի տեսուչ՝ հայր Ղևոնդ վարդապետ) և թեքիրտաղցի Մելքոն Հակոբյանի (հետագայում հայր Վահան վարդապետ) հետ միասին գործուղում են Կ.Պոլսի Երուսաղեմատուն՝ Սիմոն վարդապետ Սեֆերյանի հարկի տակ ուսանելու: Երկու տարի անց՝ 1871 թ. նրանք հետ են վերադառնում Երուսաղեմ և նշանակվում Ժառանգավորաց վարժարանի ուսուցիչներ: Գաբրիել սարկավագը այնքան լուրջ դիրք է ձեռք բերում միաբանների շրջանում, որ նրան վանական միջավայրը հատուկ հեգնանքով, կամ նախանձով անվանում է «եպիսկոպոսապատիւ Սարկավագ»²:

1877 թ. հուլիսի 3-ին Երուսաղեմի ամենապատիվ Եսայի պատրիարք Ուզունյանը՝ Եսայի արքեպիսկոպոսը, նրան ձեռնադրում է վարդապետ՝ տալով Սահակ անունը:

Սահակ վարդապետ Խապայանը 1874-1881 թթ. վարել է «Սիոն» ամսագրի խմբագրի պարտականությունները, միաժամա-

¹ Ավելի մանրամասն տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 817-823:

² Նույն տեղում, էջ 825:

նակ ժառանգավորաց վարժարանի համար կազմելով աշխարհագրություն¹, տիեզերագրություն², բնագիտություն³ և Հին Կտակարանի պատմություն⁴ առարկաներին վերաբերող արժեքավոր դասագրքեր: Նրա գրչին են պատկանում նաև Երուսաղեմի սրբավայրերին⁵ և փիլիսոփայությունը նվիրված մի շարք աշխատություններ⁶:

1881 թ. Եսայի պատրիարքի հրահանգով նա գործուղվում է Կովկաս և Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով նշանակվում է որպես Կովկասի նվիրակ: Նա հինգ տարի շարունակ քարոզչական գործունեություն է ծավալում Արևելյան Հայաստանում, 50 օր լինում է Շիրակի բոլոր գյուղերում⁷: Միաժամանակ նա կատարում է հանգանակություն, որի արդյունքում հավաքվում է մոտավորապես 6000 օսմ. ոսկի՝ Երուսաղեմի պարտքերը մարելու համար: Ոչ միշտ էր, որ անցկացված հանգանակություններն ուղեկցվում էին իշխանությունների հաճությամբ: Այդ մասին երիտասարդ վարդապետն իր դժգոհությունն էր արտահայտում Վահրամ արք. Մանկունուն ուղղված 1882թ. հունիսի 19-ի իր նամակներից մեկում⁸:

Մինչ իսպալյանն իր նվիրակությամբ Կովկասում էր, 1885 թ. մարտի 7-ին Երուսաղեմի միաբանական ընդհանուր ժողովը

¹ Տե՛ս **Խապայեան Ս. Գ.**, Համառօտ աշխարհագրութիւն բնական, քաղաքական, ուսումնական, Յերուսաղէմ, 1874:

² Տե՛ս **Խապայեան Վ. Ս.**, Նոր դասագիրք Տիեզերագրութեան, Յերուսաղէմ, 1884:

³ Տե՛ս **Խապայեան Վ. Ս.**, Բնական պատմութիւն, Յերուսաղէմ, 1888:

⁴ Տե՛ս **Խապայէնց Վ. Ս.**, Պատմութիւն Հին Կտակարանի, Յերուսաղէմ, 1879:

⁵ Տե՛ս **Խապայեան Ս. Վ.**, Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց ընկերովի իրաւանցարարողութեանց եւ սովորութեանց ի տնօրինական ս. Տեղիս, Յերուսաղէմ, 1880:

⁶ Տե՛ս **Սահակ եպիսկոպոս եւ Մեսրոպ վարդապետ**, Բաղրատութիւն տպագիր Սոկրատի եւ Երուսաղեմի ձեռագրի, Վաղարշապատ, 1897:

⁷ Այդ մասին նա գրել է «Յիսուն օր ի Շիրակ», Անթիլիաս, 1937 աշխատությունը:

⁸ Տե՛ս Bibliothèque Nubar de l'UGAB, p.000012.

քվեների մեծամասնությունը նրան ընտրում է Երուսաղեմի վանքի լուսարարապետ: Նույն տարվա նոյեմբերի 24-ին Երուսաղեմի հայոց պատրիարքի միջնորդությամբ Մակար Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը ս. էջմիածնի Մայր Տաճարում նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Այդ առթիվ «Արարատ» ամսագիրը գրում է. «Ամսոյս 24-ին կիրակի օրը Վեհափառ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթողիկոսն Ամենայն Հայոց, Ռուսաստանեայցս նուիրակ և Երուսաղէմայ սուրբ Յակովբեանց Վանաց Միաբան Արժ. Հայր Մամբրէ և նորընտիր լուսարարապետ Սահակ վարդապետներին ձեռնադրեց յաստիճան եպիսկոպոսութեան... Աղօթենք որ նոյնպիսի արժանաւոր հոգեւորական մշակաց թիւը բազմանայ մեր ազգի մէջ»¹:

Եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո նա դեկտեմբերի 16-ին վերադառնում է Կ.Պոլիս, իսկ 1886 թ. հունվարի 9-ին հասնելով Երուսաղեմ ստանձնում է լուսարարապետի պաշտոնը՝ միառժամանակ շարունակելով դասավանդել Ժառանգավորաց վարժարանում:

Մեծ բժախնդրությամբ ու հմտությամբ է Սահակ եպիսկոպոսը շուրջ 17 տարի վարում լուսարարության պաշտոնը, կարգի բերելով մատենադարանը՝ ցուցակագրելով հարուստ ձեռագրերի հավաքածուն, կարգավորելով գանձարանը, ինչպես նաև աշխատանքներ կատարում եկեղեցական անոթներն ու սպասքը պահպանելու ուղղությամբ:

1892 թ. որպես Երուսաղեմի հայոց պատրիարքության պատվիրակ նա մասնակցում է Մկրտիչ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը:

¹ «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ ս. էջմիածնի, Վաղարշապատ, ՌՅԼԴ - 1885 թ., թիւ ԺԱ, էջ 528:

Սահակ Խապայայանը մինչև 1903 թ. հունվարի 20-ը շարունակում է լուսարարապետության իր պաշտոնը, մինչև որ Երուսաղեմի նոր՝ Հարուժյուն պատրիարքը միաբանական ընդհանուր ժողով է գումարում նոր լուսարարապետի ընտրության համար։ Ժողովի ժամանակ նա իր հրաժարականի ու հրաժեշտի խոսքն է ուղղում միաբանությանը, որտեղ ծառայել էր շուրջ 26 տարի¹։

Հեռանալով Երուսաղեմից՝ Սահակ Խապայայանը մեկնում է Սիս՝ կաթողիկոս օծվելու նպատակով։ Ինչպես ժամանակակիցներն էին նշում՝ նրա մուտքը Սիս եղավ «շքեղ ու արքայավայել»²։ Հայ և թուրք ժողովուրդը նրան դիմավորեց Սսի կամրջի մոտ։ Տեղի ու շրջակա տարածքներից Սիսում էին հավաքվել 30 հազար ուխտավորներ³, որոնք քաղաքում տեղ չլինելու պատճառով հանգրվանել էին դրսում՝ վրանների տակ⁴։ Ազգային վարժարանի աշակերտները երգերի շարանով դիմավորեցին կաթողիկոսին, որն արտահայտում էր խանդավառ մթնոլորտի ոգին⁵։

1903 թ. ապրիլի 20-ին, Կանաչ կիրակիի օրը, չորս եպիսկոպոսների՝ Մովսես եպս. Քեոմյուրճյանի, տեղապահ՝ Կիրակոս եպս. Բեքմեզճյանի, Ֆոնուզի՝ Նիկողայոս եպս. Դավթյանի, Զեյթունի՝ Կարապետ եպս. Քեչեճյանի, 12 վարդապետների, 45 քահանաների և բազմաթիվ դպիրների մասնակցությամբ, Կիլիկիայի

¹ Տե՛ս **Զիլինկիրեան Ծ. եպիսկ.**, Արձագանք ազգ. զանազան անցուդարձերու. շարք մը լրագրական յօդուածներու եւ նամակներու, Երուսաղեմ, 1925, էջ 209-210։

² **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 265։

³ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 291։ Ըստ Մ. Քելեշյանի ներկա էր 20 հազ. ուխտավոր։ Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 265։

⁴ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 291։

⁵ Դրանցից մեկը Հարուժյուն Քեոեյանի ստեղծագործությունն էր. «Ահա Հայր մեր, Վեհ սիրավառ, Քան Զարուսեակ ծագի պայծառ, Բերելով Լոյս, շնորհ և սէր, Սիրուն որդւոց իւր ի նուէր։ Սիրեցէք, հապօն՝ մանկունք, Թոյր ի թոյր վարդ և ծաղկունք, Հիւսեցէք պսակ փալլուն, Սիրով տանք մեր Հօր գլխուն։ Կեցցէ՛, Տէր մեր պատուական, Կեցցէ՛, Սահակ Սրբազան»։ Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 265։

արքայական ավերված պալատի տեղում կառուցված վանքի բա-
կում ամենափառավոր շքեղությամբ իրականացվում է նորընտիր
կաթողիկոսի օծումը¹։ Օծմանը հեռագրված էին նաև ներկա լինե-
լու Տրդատ եպս. Պալյանը և Հմայակ եպս. Դիմաքսյանը։ Սակայն
հիվանդության պատճառով նրանք չեն կարողանում մասնակցել։
Օծմանը ներկա էին նաև կառավարական և զինվորական բարձ-
րաստիճան ներկայացուցիչներ և զինվորական մի գումարտակ։
Ապրիլի 27-ին՝ Կարմիր կիրակիի օրը, նույն փառահեղությամբ,
Սահակ Բ Խապայանի մասնակցությամբ կատարվեց նաև մյուսո-
ւորհնեքի արարողությունը։

Սահակ Բ Խապայանն ինչպես իր օծման, այնպես էլ մյու-
սուորհնության պատարագների ժամանակ արտասանած իր ու-
ղերձներում հիշատակում է ոչ միայն իրեն նախորդած բոլոր կա-
թողիկոսներին, այլև ընդհանրական հայրապետ Մկրտիչ Խրիմյա-
նին՝ կարծես թե ցանկանալով վերջ դնել երկու եկեղեցիների տա-
րածայնություններին։ 1441 թվականից ի վեր թերևս առաջին ան-
գամ էր, որ Կիլիկիո կաթողիկոսը հիշատակում էր Մայր Աթոռի
ընդհանրական հայրապետին²։

1903թ. ապրիլի 15-29-ը՝ կաթողիկոսական օծման և մյու-
սուորհնեքի բուն արարողություններին Սսի մոտակայքում
գտնվող կայսերական ազարակից անմիջականորեն հետևում էր
նաև Ադանայի հայասեր կուսակալ քուրդ Պահրի փաշան, որը
ձեռք էր բերել Բարձր Դռան արտոնությունը ուխտավորների ներ-
կայությունն ապահովելու և ժողովրդական հավաքները հսկելու
համար։ Այդ մասին մենք իմանում ենք Ադանայի առաջնորդարա-
նի դիվանապետ Տեր Սահակ ծ. վրդ.-ի (Քերովբե էֆենդի Փափագ-
յան) ձեռագիր հուշերից, որից օգտվել է Բ. Եղիայանը։ Բանն այն
էր, որ «Երլտըզի բռնակալին» տեղեկացվել էր, որ իբր հայերը

¹ Տե՛ս «Ատանայի հալոց պատմություն», էջ 291։

² Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 815։

կրոնական համախմբման պատրվակով «հայ իշխան մը պիտի ընտրեն»։ Սակայն Պահրի փաշան իր պատասխանն անմալում հավաստում է, որ «բացարձակ շինծու է տրուած լուրը»¹։

Այսպիսով, 1902 թ. հոկտեմբերի 12-ին Ադանայի ս. Աստվածածին եկեղեցում գումարված Ընտրական ժողովի 62 պատվիրակները միաձայն Կիլիկիո Հայոց Կաթողիկոս են ընտրում 53-ամյա Սահակ արքեպիսկոպոս Խապայանին և վերջ դնում Կիլիկիո աթոռի տագնապին։ Ս. Խապայանի կաթողիկոսական ընտրությունը կարևոր նշանակություն ունեցավ այն առումով, որ Կիլիկիո աթոռը ութ տարուց ի վեր թափուր էր մնացել և առաջ բերել հայ հասարակության ներկայացուցիչների ցավագին մտահոգությունը։ 1902 թ. դեկտեմբերի 9-ին հրատարակվեց ընտրությունների վավերականացման կայսերական հրովարտակը, իսկ 1903 թ. ապրիլի 20-ին, Զատիկին հաջորդած Կանաչ կիրակիի օրը, Կիլիկիայի արքայական ավերված պալատի տեղում կառուցված վանքի բակում մեծ շքեղությամբ իրականացվեց նորընտիր կաթողիկոսի օծումը։

1.4. Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանը (1902-1909 թթ.)

ա) Իրավիճակը Սսի մայրավանքում։ Ստանձնելով Կաթողիկոսական աթոռը՝ Սահակ Բ Խապայանը ձեռնամուխ եղավ իր առջև ծառացած դժվարին և անհետաձգելի խնդիրների լուծմանը։ Նրա կառավարման առաջին հինգ-վեց տարիները բավականին ծանր էին և ոչ հուսադրող։ Մայրավանքը ժամանակի ընթացքում մեծ պարտքեր էր կուտակել, աղքատացել էր և բավարար միջոցներ չունեին ստեղծված վիճակից դուրս գալու համար։ Այդ

¹ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 291։

մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ, որոնցից մեկը փաստում է, որ. «Կաթողիկոսը բնակարան չունի, միաբանները սննդեան և զգեստի հետ բնակարան չունին, եկեղեցին անծեփ և գրեթե քայքայուն, ուխտաւորք, եթէ գան, ինչպէս այս անգամ եղաւ, կամ խաներու, կամ մասնաւորներու, կամ Վանքէն վարձուած տուներու մէջ պիտի տեղաւորուին»¹:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ «խարխուլ շէնքերու կոյտ մը Մայրավանքը»² և կաթողիկոսարանը կիսականգուն էին: Մի խուց անգամ չկա հյուր ընդունելու համար: Մայրավանքի միաբանները և ուսանողներն ապրում էին 80 տարի առաջ կառուցված և արդեն քայքայված ու կյանքի համար վտանգավոր սենյակներում: Որպեսզի իրական և հստակ պատկերացում կազմենք կաթողիկոսության անշուք և թշվառ վիճակի մասին, բավական է ընթերցել թուրքական կենտրոնական կառավարությանն ուղղված կաթողիկոսության 1903 թ. հունիսի 3-ի տեղեկագիրը³:

Մ. արք. Օրմանյանը նկատում է, որ ստեղծված ողբալի կացության պատճառն այն էր, որ 150 տարուց ավելի կաթողիկոսությունն իրենց ձեռքում պահած սսեցիները ոչ մի կերպ չէին հանդուրժել ծագումով ոչ սսեցի կաթողիկոս Մ.Քեյֆսիզյանի գործունեությունը: Մյուս կողմից էլ կաթողիկոսի անխոհեմ քայլերն ավելի էին սրել իրավիճակը, և փոխադարձ հակամարտության պատճառով վանքը հասցրել էին աղետալի կացության⁴:

¹ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», Պէյրութ, 1927, էջ 8:

² Սերոբեան Մ., Դիտումներ եւ դատումներ էջեր օրագրէս (էջեր օրագրէս), Պէյրութ, 1932, էջ 61:

³ Տե՛ս Տեղեկագրի պատճենը տե՛ս Բարգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 859-884:

⁴ Տե՛ս Օրմանեան Մ. արք., Նախկին պատրիարք, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Գ.Գ, մասն Բ, էջ 4329:

Վեհարանի թշվառ վիճակին անդրադարձել է նաև Սահակ Բ կաթողիկոսը հիշելով, որ «... տակաւին երէկ չէ միւս օր (խոսքը՝ 1903 թ. մայիսի 25-ի մասին է – Վ.Հ.) երեկոյեան դէմ՝ ջրհեղեղեան անձրեւ մը սկսաւ բոլոր տեղերը, կամ մանաւանդ Կիլիկեցւոց սիրած բառով Վեհարանս աւազան դարձաւ, թղթերուս հետ միայն սագեր և բադեր կը պակսէին լողալու համար, գրուելու համար պատրաստուած կոնդակները թրջուեցան, շատերը փճացան, կարելոր գործի թղթերը միակ ապահով տեղ գրասեղանին տակ կոխեցի, ահա Զեզ Կաթողիկոսութիւն մը...»¹:

Իսկ «Արեւելեան մամուլ»-ը գրում էր, որ հենց կաթողիկոսի օժման նախորդ օրը վեհարանում, ուր «անձրեւեց, Սահակ Կաթողիկոս ստիպուեցաւ անձրեւարգելով շրջիլ կամ նստիլ՝ տանիքէն կաթկթած անձրեւէն չթրջուելու համար»²:

Մ. արք. Օրմանյանի հավաստմամբ՝ այդ տարիներին Սահակ կաթողիկոսը բազմաթիւ նամակներով փորձում է հանգանակություններ կազմակերպել կուտակված պարտքերը և ծախսերը հոգալու համար: Այդ առիթով Սահակ կաթողիկոսը Գևորգ եպիսկոպոսին ուղղված 1903 թ. մայիսի 25-ի իր նամակում նշում է. «...Ամէն շնորհաւորութենէ աւելի թանկ պիտի արժէ երբ յաջողիմ Տեառն ողորմութեամբ և եղբայրութեանդ աջակցութեամբ մէկ աչքառու գործ կատարել՝ յօգուտ Աթոռոյ և Վիճակայնոց: Ա՛խ, ինչեր չպիտի կարողանայինք ընել այս աւերեալ աշխարհին, եթէ Մանթաշօֆի, ի վերանորոգութիւն Ս.Էջմիածնի նուիրածին կէսն ունենայինք...»³:

¹ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», էջ 8-9:

² «Արեւելեան մամուլ» շաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Իզմիր, 1903 թ., մայիսի 24, թիւ 21, էջ 504:

³ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», էջ 7:

Սահակ Բ Խապայանը սկզբից ևեթ առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Մայրավանքի վերականգնման խնդրին: Վանքի ամբողջական վերաշինության և թեմերի աշխատանքների իրագործման համար անհրաժեշտ էր առնվազն 10 հազ. օսմանյան ոսկի: Այդ նպատակով նա դիմում է զանազան մեծահարուստների՝ ֆինանսական օժանդակություն ստանալու ակնկալիքով: Ի վերջո նրան հաջողվում է մասնավոր բարերար-նվիրատուների՝ ադանացի Միհրան և Տիգրան Աշրգյան եղբայրների միջոցով միաբանական նոր մասնաշենք կառուցել¹:

Սահակ կաթողիկոսը վերաշինեց նաև Մայրավանքի պարիսպների փլված պատերը՝ պարիսպներից ներս պարփակելով այն երեք աշտարակները, որոնք ժամանակին պարիսպների շինարարության ժամանակ Կիրակոս Ա Աջապահյան կաթողիկոսը պարիսպներից դուրս էր թողել ավելորդ զրպարտությունների տեղիք չտալու համար: Սահակ Բ կաթողիկոսի այս ձեռնարկումն առաջ է բերում Սսի կառավարիչ Չոլագ Մուհարեմի դժգոհությունը, որը ծածկագիր-հեռագրով սուլթանին տեղեկացնում է, որ՝ «կաթողիկոսը վանքի նորոգութեան առթիւ, գիշերով գաղտնաբար պարիսպէն ներս առնել կու տայ արաբական... քանի մը աշտարակներ, անշուշտ չար միտումի մը համար»²:

Ելտզին՝ օսմանյան կառավարությունը հանդիմանում է Պահրի փաշային և քննիչ մարմին է ուղարկում ինչպես այդ, այնպես էլ Պահրիի կողմից արտոնված Ադանայի Մայր եկեղեցու քառահարկ զանգակատան հարցը քննելու համար, որի դեմ բողոք էր ներկայացրել թուրք երեւելիներից մեկը՝ Աբդուլ Գատերը, որը Բաղդադից աքսորվել էր Ադանա: Հետաքննությունն ավարտելուց հետո քննիչները տեղեկացնում են, որ՝ «թէև Եկեղեցիին գետինը քաղաքին բարձր մէկ վայրին կը գտնուի, զանգակատունը ո՛չ թէ

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 291:

² Անդ:

մինարէներէն աւելի բարձր է, այլ հազիւ անոնց շէրէֆէին - Իմամին էզէն կարդացած տեղը - կը հաւասարի և ոչ թէ ի նորոյ շինուած, այլ յարկերը նորոգուած եւ ամրապնդուած են», իսկ աշտարակները, պարզվում է, որ դիտարաններ են և կատուցվել էին հարյուր տարի առաջ Մայրավանքի շինարարության ժամանակ՝ գիշերը Գոգանի լեռներից իջնող թալանչիներին հսկելու համար¹:

բ) Սսի միաբանությունը: Մայրավանքում տիրող նման անհուսալի պայմաններում Սսի միաբանությունը մատնված էր անգործության և դատարկաբանության, որոնց մասին ժամանակին լուրջ հոգվածներ են հրապարակել «Մուրճ»-ը և «Արևելեան մամուլ»-ը²: Մտավոր զարգացվածության առումով ևս Սսի միաբանությունը չէր փայլում: «Արևելեան մամուլ»-ը դառնորեն գանգատվում էր վանքի միաբանների մասին, իբրև՝ տգետ, թույլ, մեղք, անհոգ, եսասեր արարածների, որոնց մեջ կատարվել էր պարտականությունների բաժանում, սակայն գործերը տեղից չէին շարժվում³: Նրանցից շատերը «քունով, շաղակրատութեամբ, կրօնականի անվայել խօսակցութեամբ կը ջանային սպաննել ժամանակը...»: Հոգևորականներից շատերը «հայերէն պարզ խօսակցութեամբ մը չէին կըրնար արտահայտուիլ, և թուրքերէնն էր իրենց գաղափարին արտահայտութեան միջոցը», բայց մյուս կողմից՝ «անոնք էին ցեղային առաքինութեանց հարատւման քաջ ախտեաններ» (իմա՝ պաշտպաններ)⁴:

Միաբանությունն ուներ 12 հոգևորական, որոնցից 1-ը՝ եպիսկոպոս, 7-ը՝ ծայրագույն վարդապետ, 1-ը՝ վարդապետ, 1-ը՝ արքեպ, և 2-ը՝ սարկավագ: Երուսաղեմից ուղարկվել էին նաև 1

¹ Տե՛ս անդ:

² Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 271:

³ Տե՛ս «Արևելեան մամուլ», շաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Իզմիր, 1903թ. էջ 269:

⁴ Տե՛ս **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 288:

աբեղա ու 1 սարկավագ, որոնք միայն ծառայում էին միաբանութ-
յան թիվն ավելացնելու գործին: Վանքն ուներ նաև 1 քարտուղար
և 3-5 բանվոր¹: Այդ էր պատճառը, որ վշտացած կաթողիկոսը
դառնություն մը խորհրդան Հայրիկին գրում էր, որ՝ «Բախտ չունի ան-
բախտ Կիլիկիան, կամ ես՝ մեղաւորս, անձնական անբախտու-
թեամբս նսեմացուցի Կիլիկիոյ բախտը»²:

Հետագայում Մ. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխա-
տության մեջ խիստ քննադատության է ենթարկում Սահակ Բ-ին՝
երուսաղեմական նոր վարդապետներին Սիս բերելու համար՝
«Սիոն մ'ալ Սիսն եկաւ, Սիոն մ'ալ Սիսն եղաւ», և կարծում է, որ
Սսի միաբանությունն է՛լ ավելի կարող էր զորանալ, եթե այն հա-
մալրվեր նաև Կ. Պոլսի հոգևորականներով³:

գ) Եկեղեցական կյանք: Մինչև Սահակ Բ խապայանի գա-
հակալումը խիստ անուշադրության էին մատնվել Սսի կաթողիկո-
սության թեմական գործերը, և բարոյական տեսանկյունից անմ-
խիթար վիճակ էր ստեղծվել եկեղեցականների մեծ մասի համար:
Թեմական չլուծված հարցերը կարգավորելու և սուլթան Աբդուլ-
Համիդ II-ի հետ հանդիպելու նպատակով Սահակ Բ կաթողիկոսն
ուղևորվում է Կ. Պոլիս: Սակայն իր ողջ ուղևորության ընթացքում՝
մինչև 1904 թ. սեպտեմբերի 14-ին Կ. Պոլիս հասնելը, նա այցելութ-
յուններ կատարեց նաև թեմեր: Նա եղավ Հաճընում, Զեյթունում,
Մարաշում, Այնթապում, Իսկենտերունում, իսկ հետդարձի ճանա-
պարհին նաև Իզմիրում, Մերսինում, Ադանայում, Հալեպում, Մա-
լաթիայում, Տևրիկում, Կարինում, Եօզղատում, իր ծննդավայր

¹ Տե՛ս Բարգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 786,
տե՛ս նաև Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 272-273: Տարբեր տարիների միաբանության
ցանկը տե՛ս հավելված 7-ում:

² Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 276:

³ Օրմանեան Մ. արք., նախկին պատրիարք, Ազգապատում. Հայ ուղղափառ
եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային
պարագաներով պատմուած, հ. Գ, մասն Գ, էջ 5249:

հարբերդում, Գըրշեհիրում, որտեղ էլ առաջին անգամ հանդիպում է իր ապագա աթոռկից կաթողիկոս՝ Բաբկեն եպս. Կյուլեսերյանին, ով էնկյուրիի (Անկարայի) հոգևոր առաջնորդն էր¹: Բոլոր վայրերում նորընտիր կաթողիկոսին դիմավորում էին մեծ հարգանքով և ակնածանքով: Այսպես, Յ. Պ. Պողոսյանը նշում է, որ Հաճընում. «Ժողովուրդը խուռներամ հետեւած է նորին Վեհափառութեան, ուր որ ալ գացած եւ ուր որ ալ խօսած է»²: Ամենուր նա արժանանում էր արեւմտահայերի ջերմ ընդունելությանն ու գովասանքին և թուրքական բանակի զինվորական պատիվներին: Ի պատիվ կաթողիկոսի հետ հանդիպման, հնչեցվում էին եկեղեցիների զանգերը, կանգնեցվում էին հաղթական կամարներ, ծանր գորգերով և ծաղիկներով զարդարում էին շինությունների հատակները և պատշգամբները³:

Կիրիկիո կաթողիկոսության եկեղեցական կյանքի անբաժան մաս էին կազմում նաև ձեռնադրությունները: Շուտով Սահակ Բ-ի անձնական հաճությամբ արմաշական երկու վարդապետներ՝ Տ. Մուշեղ Սերոբյանը (Սերովբյանը) և Տ. Կորյունն ընտրվում են համապատասխանաբար՝ Ադանայի և Մարաշի թեմակալներ, որոնք հետագայում ձեռնադրվում են նաև եպիսկոպոսներ⁴: Ի դեպ, երբ Մուշեղ եպս. ընտրվում էր թեմական առաջնորդ, իշխանություններն ամենևին էլ չէին շտապում հաստատել նրա ընտրությունները և ձգձգում են նրա պաշտոնը վավերացնող «բե-

¹ Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիրիկիոյ, նշվ. աշխ., էջ 908:

² Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլլոս, 1942, էջ 372:

³ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 265-266:

⁴ Տե՛ս «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ ս. էջմիածնի, Վաղարշապատ, 1907 թ.-ՌՅԾԶ, տարի Խ, յունուար, էջ 42:

րաթի» (հրամանագրի –Վ. Հ.) ուղարկումը: Բան այն էր, որ Մուշեղը «յեղափոխական» գործիչ էր եւ «Արաբկիրի իր առաջնորդութենէն հրաժարեցուած է պետական միջոցներով»¹:

Այս շրջանում Պահրի փաշան իր բարյացակամ վերաբերմունքն է արտահայտում ինչպես Սահակ Բ կաթողիկոսի, այնպես էլ Ադանայի առաջնորդական տեղապահ Գրիգոր ավ. քհն. Ներկարարյանի և Ադանայի առաջնորդ Մուշեղ վրդ.-ի նկատմամբ: Մ. Օրմանյանը Պահրի փաշային խնդրում է իր պաշտպանության տակ վերցնել Մուշեղին, և երբ 1906 թ. Երևանի ծածկագիր-հեռագիր է ուղարկվում Ադանայի կուսակալին, պարզելու համար, թե «էրմէնի մուրախասը Մուշեղ Արտաշէսին (աշխարհական անունը) Կոմիտէճի թէշէքքիւլէրինէ մէնսուպ օլտուղը թէսպիթ էտիւմիշ օլտուղունտան, տէր հալ մուհաֆազա ալթընտա Տէր-ի-ալիյէէ իսեար վէ հարէքէթինին իշարը...»², Պահրին անմիջապես պատասխան հեռագիր է ուղարկում իշխանություններին՝ նշելով, որ «Մուշեղի համար ըստածները յերիւրածոյ զրպարտութիւններ են. ես կ'երաշխատեմ անոր հաւատարմութիւնը, եւ եթէ հակառակը պատահի՝ զինքը կը զընդակահարեմ եւ ես ալ անձնասպան կ'ըլլամ...»³:

Բանն այն էր, որ Մուշեղ վարդապետը նախապես մինչև Արմաշում ուսանելը եղել էր հնչական կուսակցության անդամ, իսկ հետագայում դարձել էր վերկազմյալ հնչակյան: Ադանայում գտնված ժամանակ նա Պահրի փաշայի թույլտվությամբ իր հովանու տակ էր վերցրել հնչակյան կուսակցության անդամներին և

¹ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 294:

² «Քանի որ պարզված է, որ հայոց առաջնորդ Մուշեղը (աշխարհական անունը՝ Արտաշէս) կոմիտեականների (կուսակցական –Վ.Հ.) կազմակերպության անդամ է, անմիջապես նրան վերցնել հսկողության տակ և նրա տեղաշարժման մասին գեկուցել Բարձր Դռանը»:

³ Անդ, էջ 295-296:

նրանց տեղավորել ազգային վարժարանում: Միայն մի փոքր ավելի ուշ՝ Բ. Դռան այն ժամանակվա իրավագետ-խորհրդական (1912 թ. Օսմանյան կառավարության արտաքին գործերի նախարար) Գաբրիել էֆենդի Նորատունկյանի անձնական միջնորդութ-յամբ է, որ ստացվում է Մուշեղ վարդապետի թեմակալ առաջնորդի «բերաթը»:

Մուշեղը՝ որպես Ադանայի քաղաքապետարանի «մէճլիս իտարէ»-ի անդամ մեծ հեղինակություն ուներ թե՛ հայ և թե՛ թուրք պաշտոնյաների շրջանում: Հաշվի առնելով նրա կարողություննե-րը և ազդեցիկությունն ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի շրջանում, Արաբկիրի առաջնորդական թեմի գավառական ժողո-վը, որտեղ նախապես պաշտոնավարել էր Մուշեղ վարդապետը, նրան եպիսկոպոսանալու միջնորդագիր է ներկայացնում կաթո-ղիկոսությունը, սակայն 1903-1904 թթ. Արևելյան Հայաստանում բռնկված հակացարական ելույթների պատճառով նա հնարավո-րություն չի ունենում էջմիածին մեկնելու և ձեռնադրվելու: 1906 թ. վերջին Ադանայի թեմի գավառական ժողովը Մուշեղ վրդ. Սե-րոբյանին եպիսկոպոսացումի նոր ընծայագիր է ներկայացնում¹, որը սակայն լուրջ խոսակցությունների և լարվածության առիթ է դառնում երկու՝ էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների միջև: Խնդիրն այն էր, որ եպիսկոպոս կարող էին ձեռնադրվել միայն էջմիածնում, իսկ Կիլիկիո կաթողիկոսության կողմից ձեռնադր-վածները կարող էին գործել միայն Կիլիկիո կաթողիկոսության թեմերի տարածքում: Այդ մասին Սահակ Բ Խապայանն իր մտա-հոգություններն է հայտնում էջմիածնի Սինողի նախանդամ Գևորգ արք. Սուրենյանին և նշում, որ «...եթէ ստոյգ է այս յան-դուզն և խիզախ եղելութիւնը, մեզ կը մնայ մտածել, թէ ով որու

¹ Տե՛ս անդ, էջ 294:

ստորագրասեալն է, Հայրապետը պատրիարքներուն, թէ պատրիարքները Հայրապետին հնազանդելու և հրամաններուն պատկառ կալու պարտաւոր են»¹:

Այդուհանդերձ, Սահակ Բ կաթողիկոսը գնահատելով Մուշեղ Սերոբյանի արժանիքները, առանց պատրիարքարանին տեղեկացնելու 1906 թ. հոկտեմբերի 28-ին նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Սակայն պատրիարքարանը Մուշեղ եպս. Սերոբյանի պաշտոնավարումը իրավական է ճանաչում միայն Կիլիկիո թեմերի շրջանում²: Այս հարցում իր մտահոգությունն է արտահայտում Մ. արք. Օրմանյանը, որը Սահակ Բ-ին մեղադրում է Կիլիկիո նախկին կաթողիկոս Մկրտիչ Քեյֆսիզյանի քաղաքականությունը շարունակելու մեջ: Դեռ ավելին, ընդհանուր առմամբ քննադատելով Սահակ Բ. կաթողիկոսի վաղ շրջանի գործունեությունը, Մ. արք. Օրմանյանը մատնանշում է, որ նա մինչև 1908 թ. որևէ լուրջ գործունեություն չի իրականացրել և ավելի շատ կենտրոնացած է եղել Երուսաղեմի վանքի տնտեսական հարցերը տնօրինող Ղևոնդ վրդ. Մագսուդյանի խնդրով³: Միաժամանակ, նա հավելում է, որ Կիլիկիայի համար հանգանակված 2000 օսմանյան ոսկուց և «Շահնազարյան» կտակով Կիլիկիային հատկացված գումարից

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 107, թ. 11:

² Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 234:

³ Ղ. վ. Մագսուդյանը հափշտակել էր Երուսաղեմի վանքի փողերը և ոչ ոքի հաշիվ չէր տալիս: Մաղաքիա արք. Օրմանյանը կարողանում է այդ «գող» վարդապետին իր պաշտոնից հանել և պատասխանատվության կանչել Կ. Պոլիս: Տե՛ս Զիլինկիրեան Ե. Եպիսկ., Արձագանք Բ. Վերջուշեր անցեալէն եւ ազգ. զանազան անցուդարձերու 1900-1918, Պէյրուս, 1927, էջ 62:

Սահակ Բ Խապայանի կողմից Կ. Պոլսի պատրիարքությունը գումար չհատկացնելը Ղևոնդ վրդ. Մագսուդյանին հովանավորելու և նրան պաշտպան կանգնելու արդյունք էր¹:

դ) Հոգևորականներ պատրաստելու առաջնահերթությունը: Տնտեսական խնդիրներից պակաս կարևոր չէր նաև Սսի Աթոռի միաբանների հոգևոր-կրթական պատրաստվածության հարցը: Դեռևս 1871 թ. Մկրտիչ կաթողիկոս Քեյֆսիզյանը 16 ուսանողներով ժառանգավորաց վարժարան էր բացել Այնթապում, որը 1882 թ. տեղափոխվեց Սիս (35 ուսանող), իսկ 1890 թ. դադարեցրեց իր գոյությունը²:

Հոգևոր-կրթական առումով որոշ աշխատանքներ տարավ նաև կաթողիկոսական տեղապահ Կիրակոս եպս. Բեքմեզճյանը, որը 1899 թ. մայիսի 17-ի շրջաբերականով հավաքեց մոտ 18-20 պատանիների և սեպտեմբերին վերաբացեց ժառանգավորաց վարժարանը, որի տեսչությունը 1900 թ. ստանձնեց Յսայի Փուլատյանը: Նրան հաջորդեց Մեսրոպ վրդ. Ամատունին, որի տեսչության տարիներին՝ 1902 թ., վարժարանում ըմբոստություն ծագեց, և որոշ ուսանողներ հեռացվեցին ուսումնական հաստատությունից: Ժառանգավորացից բացի, Կիրակոս սրբազանը բացեց նաև Զանշյան որբանոցը, (տեսուչ՝ Եզնիկ քհն. Թուրսարգիսյան), որտեղ Կիլիկիայի տարբեր շրջաններից հավաքվեցին 1895-1896 թթ. կոտորածների ժամանակ որբացած մոտ 50 երեխաներ:

¹ Տե՛ս Օրմանեան Մ. արք., նախկին պատրիարք, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Գ, մասն Գ, էջ 5318:

² Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 253:

Սահակ Բ Խապայանի համար առաջնահերթ խնդիրներից էր Սսի դպրեվանքի գոյատևումը¹, նրա աշակերտների խղճահարույց վիճակի, սննդի և առողջապահական պայմանների բարելավումը, քանի որ նրանց սպառնում էր զանազան տարափոխիկ հիվանդությունների վտանգը: Հաշվի առնելով այդ ամենը՝ նա ժամանակավորապես փակեց վարժարանը: Նոր վարժարանի վերաբացման ուղղությամբ որոշակի հույսեր ներշնչեց Պարսկա-Հնդկաստանի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարյանի նամակը Սահակ Բ Խապայանին, ըստ որի՝ հայ մեծահարուստ Մարգար Պապովյանի կտակով նախատեսվում էր Սիսում դպրոց բացել²: Այդ մասին Ս. Խապայանը 1904 թ. փետրվարի 28-ի իր նամակում տեղեկացնում է Մկրտիչ Խրիմյանին և առաջարկում, որ Սսի փոխարեն, որն աչքի էր ընկնում կլիմայական շոգ և չոր անբարենպաստ պայմաններով, դպրոցը բացել Այնթապում, Մարաշում կամ Անտիոքում: Սակայն Մ. Օրմանյանն ականակում էր դպրոցը դնել Կ.Պոլսի պատրիարքարանի հսկողության ներքո³:

Միայն 1906 թ. մեծ գոհողությունների գնով իր օժման և մյուռոնօրհնության հանդիսությունների առիթով գոյացած հասույթով Սահակ Բ Խապայանին հաջողվեց վերաբացել Ժառանգավորացը⁴: Որպես տեսուչ Սիս ժամանեց արմաշական շրջանավարտներից Գարեգին Ծ. վրդ. Խաչատուրյանը (հետագայում՝ Կ.Պոլսո պատրիարք): Վերջինս 1906-1908 թթ.՝ ուսումնական երկու

¹ Տե՛ս Աղանունի եպս. Մ., Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 437:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ., 92, թ. 51:

³ Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայանի կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940», կազմեց Սանդրո Բեհբուդեան, Երևան, 1997, էջ 182-183, նաև «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907թթ.)», հատորը կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհբուդեանը, Երևան, 2000, էջ 286:

⁴ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 289:

շրջանների ընթացքում, կազմակերպեց դպրեվանքի կյանքը և 1907 թ. հունիսին մեկնեց Սսից: Նրան հաջորդեց «սասական վարդապետ» մականունով Ներսես Ժ. վրդ. Դանիելյանը, որը մեկ տարի պաշտոնավարելուց հետո մեկնեց Հաճն՝ որպես առաջնորդ: Նրանից հետո 1908 թ. սեպտեմբերին նորից հետ վերադարձավ հայր Գարեգինը և «կանոնաւոր հիմքերու վրա դրաւ դպրեվանքը»՝ մինչև 1909 թ. մայիս¹, երբ «տգետ և ապիկար» հոգևորականներին կամաց-կամաց փոխարինելու եկան վերաբացված Ժառանգավորաց վարժարանի ընթացավարտները: Այս շրջանում վարժարանում դասավանդում էին Եղիշե եպս. Կարոյանն ու Հարություն Քետերյանը: Սակայն վրա հասավ Ադանայի ջարդը, և վարժարանը փակվեց, իսկ աշակերտներն էլ ցրվեցին:

Միջոցներ ձեռնարկվեցին նաև այլ շրջաններում ուսումնադաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու նպատակով: Այսպես, 1908 թ. վերջերին և 1909 թ. սկզբներին Ազգային ժողովի գումարման նախապատրաստական շրջանում Մուշեղ եպիսկոպոսը Ադանայի գավառական ժողովի որոշմամբ և կաթողիկոսի արտոնությամբ մեկնեց Եգիպտոս՝ այնտեղ Մեծ Պահլի շրջանում ի նպաստ կրթական ծրագրերի՝ մանավանդ Ադանայի գիշերօթիկ վարժարանի, հանգանակություն կազմակերպելու նպատակով և Զատկական շրջանի վերջում հետ վերադառնալու ու համագումարին մասնակցելու ակնկալությամբ²: Սակայն վրա հասած Ադանայի կոտորածն ի չիք դարձրեց Մուշեղ եպս.-ի բոլոր ծրագրերը:

Ե) Զեյթունի սովյալների օգնության կազմակերպումը: 1907-1908 թվականները երաշտի տարիներ էին Կիլիկիայի համար: Բերք չլինելու պատճառով 4000 տուն հայ ազգաբնակչություն ու-

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 266:

² Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 302:

նեցող Զեյթուն գյուղաքաղաքի 3000 հայեր կանգնած էին սովամահության վտանգի առջև¹։ Կարոտյալներին օգնելու կոչերով անհապաղ և բազմիցս հանդես է գալիս Սահակ Բ Խապայանը։ Նա 1907 թվականի դեկտեմբերի 24-ին ներկայացնելով ստեղծված ծանր իրավիճակը մասնավորապես նշում էր, որ «կարօտութեան ձայները կը կշատնան, այս անգամ ալ Զեյթունէն կը հասնի ավելի սրտակեղիկ։ Այգիները, գէյթունցոց ապրուստի միակ միջոցը, գարնան մեծաւ մասամբ փչացած են որթալվիճէն. հացահատիկը սովորական գնոյն եռապատիկը բարձրացած է. պաճարախտը մեծ կոտորած ընելով զրկած է հողագործը ապրուստի միակ նեցուկէն. այս ամենուն վրա Պօգ-պայիր թաղը հրդեհ ծագելով 21 տուն այրացաւեր դարձուցած և ուրիշ տուններու և աղքատ ընտանիքներու վնասներ պատճառած է։ ...ժողովրդի առողջական վիճակն ալ ապահով չէ, մանավանդ հարսանիթը մատաղ կյանքեր կը հնձե։ Առաջնորդարանը շուարած է, զուրկ ըլլալով արկածյալները և սովեալները միսիթարելու միջոցներէն, ուստի պատրիարքարանի և ազգի գթության դիմում կընենք և նպաստ կը խնդրենք»²։

Մեկ այլ հոգւածում Սահակ Բ Խապայանը ներկայացնում էր Զեյթունի սրտաճմլիկ վիճակը, նշելով, որ «...կրակն ու սուրն արհամարհող լեռնորդիք մահու սարսուռով համակված որ սովի անբաժան ընկերն է, օրըստօրե հալումաշ ըլլալու և հատնելու վրա են, մանավանդ հաց պոռացող անգիտակից մանուկներու ողորմ ճիշերեն շվարուն և հուսահատ մեռելական վիճակի ենթարկված են։ Անմիջական դարմանի կարոտ այս ցավը միայն քաղաքինը չէ. Ալապաշիկ գյուղախումբ՝ քաղաքին շրջակա գյուղերը, թվով 33, միևնույն ցավով կը գալարվին, պատառ մը չարաբեկ հա-

¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 16, թիւ 255։

² «Մշակ», Թիֆլիս, 1908, փետրվարի 27, թիւ 44։

ցով կը տվայտին: Տաք, մսեղեն կերակուր միտքներեն չէր անցներ, երազի և արթնութեան հաց, ըլլա կորեկ կամ գարեղեն, հաց կը երազեն և կը խնդրեն»¹:

«Մշակ»-ում հրապարակած իր հոդվածներից մեկում Կիլիկիայի հայրապետը գրում էր, որ. «Զեյթուն հաց կը խնդրէ ազգէն, Զեյթունի ժողովուրդը, որը դարեր ի վեր կապրի պատառ մը հացով և իր ձեռնատունկ այգիներուն բերքով, այսօր ո՛չ հաց ունի, ո՛չ չամիչ...»²:

Սահակ Բ Խապայանի օգնության կոչերը մեծ արձագանք գտան հատկապես հայ գաղթօջախներում, որտեղ հանգանակություն կազմակերպվեց սովի ճիրաններում հայտնված զեյթուն-ցիների օգնության համար:

զ) Հարաբերությունները Մայր Աթոռ և Էջմիածնի կաթողիկոսության հետ: Կիլիկիայի կաթողիկոսության բարեկարգության գործում վճռորոշ նշանակություն ունեին նորընտիր կաթողիկոսի հարաբերությունները Մայր Աթոռ և Էջմիածնի և Կ.Պոլսի պատրիարքության հետ: Հայտնի է, որ երկար ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի և Կիլիկիո Մկրտիչ Քեյֆսիզյան կաթողիկոսների օրոք գոտություն կար երկու աթոռների միջև: Սակայն Մակար կաթողիկոսի օրոք պաշտոնապես վերացվեց այդ անհամաձայնությունը: Սահակ Բ Խապայանի անձնական հատկանիշներն ու նրա ծավալած հեռատես գործունեությունը ժամանակակիցների շրջանում հույս էին ներշնչում Էջմիածնի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, որը լիապես արդարացավ նրա անձնվեր գործելակերպով: Նա սիրալիր հարաբերություններ հաստատեց Մայր Աթոռ և Էջմիածնի հետ, ընդունեց Մ. Խրիմյանի գերազահությունը և իր կողմից անցկացրած հենց

¹ «Մշակ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 12, թիվ 251:

² Անդ:

առաջին պատարագի ժամանակ հիշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը: Սահակ Բ Խապայանն իր նամակներից մեկում անդրադառնալով Սսի և էջմիածնի կաթողիկոսությունների փոխհարաբերություններին, նշում է, որ. «Պիտի աշխատի կրկին Աթոռոց հարաբերությունները քաղցրացնել և սուրբ միութիւնը պահպանել, և Ազգի կրկին հատվածոց, էջմիածնականաց և կիլիկեցւոց մեջ եղբայրական սեր հաստատել»¹: Իսկ Մ. Խրիմյան կաթողիկոսին Ազանայից ուղղված 1903 թ. հուլիսի 31-ի իր մեկ այլ նամակում հաստատում է, թե՝ «իմ միակ և անկեղծ նպատակս էր Հայոց Հայրիկին գերակայութիւնը ճանշել, խոստովանիլ և հռչակել ընդ ամեննայն ծագս աշխարհի»²: Քահանաների կրկնամուսնության առթիվ իր գրած թղթի մեջ ևս նա պատշաճ հարգանքով է դիմում Ս. էջմիածնի գերագահ աթոռի հայրապետին:

Սահակ Բ Խապայանն անտարբեր չի մնում նաև էջմիածնի կալվաքների ու գույքի բռնագրավման վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքին: Նա իր բողոքի ձայնն է բարձրացնում և 1903 թ. դեկտեմբերին նամակ-աղերսագիր է հղում Ռուսաստանի ցար Նիկոլայ Բ-ին՝ խնդրելով չեղարկել օրենքը. «...զի վեհափառութիւն Ձեր հաճեսցի մի ի բաց տանել յեկեղեցւոյ Հայոց ըզբարձր և զգաթառատ հովանաւորութիւն, զոր լիապէս վայելեն համայն եկեղեցիք արևելեայք, պաղատախառն ողբովք հայցեմք, զի հաճեսցիք բարձու հրամանսս խափանել զտարադէպ հետևանս նորոգ օրէնսդրութեան, որ ծնունդ գոլով վրիպանօք արատաւորեալ տեսութեանց՝ զհետ բերէ զգրկումն Գերագահ և Համազգային Աթոռոյ Հանուրց Հայոց յէական իրաւանց հաստատելոց և նուիրագործելոց յերջանկայիշատակ նախնեաց Ձերոց և

¹ Օրմանեան Մ. արք., *Նախկին պատրիարք*, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ, հ. Գ, մասն Գ, էջ 5146:

² ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ.1824, թ. 8:

հաճեսցիք հրամայել զգադարումն բռնադատիչ գործողութեանց, որովք վարին տեղական իշխանութիւնք ընդդէմ եկեղեցւոյ մերոյ, որ արեամբ նահատակութեամբ պաշտպան հանդիսացաւ քրիստոնէութեան յարեւելս՝ ընդդէմ մոգակրօնիցն Պարսից»¹։

Միաժամանակ, ցարական իշխանությունների կողմից հայ եկեղեցական կալվածքները վերադարձնելու և հայկական դպրոցները վերաբացելու լուրը մեծ ուրախություն պատճառեց կաթողիկոսին, որն այդ մասին տեղեկացնում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին հասցեագրած 1905 թ. սեպտեմբերի իր նամակում²։

1908 թ. հունվարին Սահակ Բ Խապայանը հատուկ կոնդակով իր ցավակցությունն է հայտնում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին, Սինոդին և էջմիածնի միաբանությանը Ամենայն Հայոց հայրապետ Մկրտիչ Ա Խրիմյանի մահվան առիթով՝ նշելով, որ. «...զի յօրմէ յայնմամէ մերոյս ընտրութեան ի կաթողիկոսութիւն իղձք մեր եւ տարփանք սրտի եղեն բանիւ եւ արդեամբ քարոզել զմիութիւն եկեղեցւոյ, դաւանութեան, ծիսից եւ համարին ժողովրդեան, վասն որոյ որչափ Դուք, նոյնչափ եւ առաւել եւս մեք համակեցաք ի սուգ, զի Հայրն հանրուց, մեծ ջատագովն խաղաղութեան, միութեան եւ սիրոյ ոչ ևս է ի կեանս»³։ Այն յուրատեսակ մի վկայություն էր բարեկամական այն

¹ «Վաւերագրեր Հայ եկեղեցւո պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940», էջ 181։

² Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցւո պատմության, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907թթ.)», էջ 363։

³ «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ ս. էջմիածնի, Վաղարշապատ, 1908թ.-ՌՅԾԶ, տարի ԽԱ, յունուար, համար Ա, էջ 38-39, նաև «Վաւերագրեր Հայ եկեղեցւո պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», կազմող՝ Սանդրո Բեհբուդեան, Երեւան, 2005, էջ 60։

հարաբերությունների, որ հաստատվել էին Սսի և էջմիածնի կաթողիկոսությունների միջև Սահակ Բ Խապայանի ընտրությունից ի վեր: Միաժամանակ, նա իր ջերմ շնորհավորանքներն է հղում Մատթեոս Բ Իզմիրլյան Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի ընտրության առիթով, նշելով, որ «...յաջողութիւն և երջանկութեան սկզբնավորութիւն թող լինի Հայ մարտիրոս եկեղեցւոյն համար»¹:

էջմիածին - Սիս հարաբերությունների կարգավորմանն էր ուղղված նաև 1911 թ. Սահակ Բ Խապայանի էջմիածին մեկնելը՝ 1911 թ. դեկտեմբերի 13-ին Գևորգ Ե Սուրենյանցի կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար: Այն թվով իր երրորդ այցելությունն էր էջմիածին²:

է) Հարաբերությունները Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների հետ: Սահակ Բ կաթողիկոսի աթոռակալման առաջին շրջանում այնքան էլ դյուրին չէին հարաբերությունները Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների հետ: Բանն այն էր, որ Երուսաղեմի պատրիարք Հարություն եպս. Վեհապետյանն անձնական խնդիրներ հետապնդող երուսաղեմցի մի խումբ խռովարար հոգևորականների դրդմամբ Սահակ Բ-ին 1903 թ. աշնանը ամբաստանել էր Երուսաղեմի VII դարի ձեռագիր մի Ավետարանը 10,000 օսմանյան ոսկով վաճառելու և ստացված գումարը յուրացնելու մեջ: Հաշվի առնելով, որ անյուր գրպարտանքներն ունեին անձնական դրդապատճառներ և կարող էին վնասել Կիլիկիո կաթողիկոսության դերն ու նշանակությունը, Սահակ Բ 1904 թ.

¹ ՀԱՍ, Ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 21, նաև Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 532:

² Սահակ Բ Խապայանն առաջին անգամ՝ 1881-1885 թթ. Գևորգ Դ-ի հրամանով նշանակվել էր որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի գործերի Կովկասի նվիրակ: Երկրորդ անգամ՝ 1892 թ.՝ որպես Երուսաղեմի հայոց պատրիարքության պատվիրակ, նա մասնակցել էր Մկրտիչ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը:

փետրվարի 3-ին դիմում է Կ. Պոլսի պատրիարք և իր հեղինակութ-
յամբ հայտնի Մ. արք. Օրմանյանին՝ առաջարկելով անհապաղ հե-
տաքննություն անցկացնել խնդիրը պարզելու համար: Սակայն Կ.
Պոլսի պատրիարքն ինչ-ինչ պատճառներով գործը ձգձգում է:
Սահակ Բ Խապայանը Մ. արք. Օրմանյանին ուղղված իր 1904 թ.
փետրվարի 28-ի նամակում հանդիմանում էր վերջինիս՝ մեղադ-
րելով նրան անհրաժեշտ ձևով ուղղամիտ քննություն չկազմակեր-
պելու և զրպարտությունը չհերքելու մեջ՝ սպառնալով Արդարութ-
յան և կրոնի նախարարին փոխանցել գործի հանգամանքները և
իր հրաժարականը: Միայն դրանից հետո հարցը կարծես թե փակ-
վում է¹:

ը) Սահմանադրական ժողովների վերակազմումը: Սահակ Բ-
ն Կիրիկիո կաթողիկոսության իրավասության սահմաններում
ձեռնարկում է Ազգային սահմանադրական ժողովները վերակազ-
մելու գործը, ինչպես այն կատարվել էր Կ. Պոլսի պատրիարքա-
րանի 40 թեմերում: Նշենք, որ 1894 թ. ի վեր Կ. Պոլսի Ազգային
ժողով չէր գումարվել: 1896 թ. Տատյան փաշայի ջանքերով հնա-
րավոր էր եղել գումարել միայն մի մասնավոր ժողով, որի ժամա-
նակ կազմակերպվել էր Կ. Պոլսի պատրիարք Մ. արք. Օրմանյանի
ընտրությունը: Հետագա տարիներին կառավարությունն արգե-
լում էր ոչ միայն ժողովներ գումարելը, այլև պարտադրում էր վե-
րանայել 1863 թ. սահմանադրությունը: Մ. արք. Օրմանյանի ջան-
քերով 1906 թ. հնարավոր է լինում իրականացնել Ազգային ժողո-
վի գումարումը և համապատասխան վարչությունների վերակազ-
մությունը²: Եվ ահա Սահակ Բ-ն 1908 թ. վերջերին կազմակերպում
է Կիրիկիո կաթողիկոսության բոլոր թեմերի հոգևոր և աշխարհիկ

¹ Տե՛ս Bibliothèque Nubar de l'UGAB, p.000015-000017.

² Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.)», էջ 606:

պատգամավորների ընտրություններ՝ 1909 թ. գարնանը Կիլիկիո ազգային ընդհանուր ժողով գումարելու ցանկությամբ:

Մինչ Սահակ կաթողիկոսը հուսով էր, որ ամեն ինչ կկարգավորվի, 1908 թ. հուլիսի 11-ին անակնկալ տեղի է ունենում երիտթուրքական պետական հեղաշրջումը, և հռչակվում է օսմանյան սահմանադրությունը, որով Օսմանյան կայսրության ներքո գտնվող հալածված ազգերի՝ այդ թվում նաև հայերի մոտ նոր հույսեր են արթնանում ապագայի ակնկալիքով: Սակայն երիտթուրքական խոստումները միայն երազանքներ էին, որոնք չէին համապատասխանում իրականությանը, իսկ Ադանայի 1909 թ. կոտորածների պատճառով կաթողիկոսի կրթական ու եկեղեցական բազում ձեռնարկումներ մնացին անկատար:

Այսպիսով, Սահակ Բ կաթողիկոսի կառավարման առաջին հինգ-վեց տարիները բավականին ծանր էին և ոչ հուսադրող: Մայրավանքը ժամանակի ընթացքում մեծ պարտքեր էր կուտակել, աղքատացել էր և բավարար միջոցներ չունեի ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Ստանձնելով Կաթողիկոսական աթոռ՝ Սահակ Բ Խապայանը ձեռնամուխ եղավ իր առջև ծառացած դժվարին և անհետաձգելի խնդիրների լուծմանը, որը միայն մասամբ նրան հաջողվեց:

1.5. Մահմեդական անհանդուրժողականության և բռնությունների դրսևորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիո Հայոց կաթողիկոսության գործունեության համատեքստում

1890-ական թվականների արդուլհամիդյան կոտորածներին¹ հաջորդեց արևմտահայերի ձերբակալությունների, հալածանքների ու բռնությունների երկարատև մի շրջան, որը ոչ միայն չընդհատվեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման և օսմանյան սահմանադրության հռչակումով, այլև խորացավ և ողբերգական վախճան ունեցավ հատկապես Ադանայի և Հալեպի նահանգների հայաբնակ տարածքներում, մասնավորապես՝ Ադանայում, Սիսում (Գոզան), Ճեպել-Բերեքեթում, Տարսոնում, Օսմանիեում, Մերսինում, Հասան-Բեյլիում և այլ վայրերում 1909 թ. ապրիլին տեղի ունեցած կանխամտածված և հրեշավոր ջարդերի ու ողջակիզման ժամանակ։ Պատահական չէր, որ Ադանայի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը դեռևս 1909 թ. մարտի 28/ապրիլի 13-ին Վ. Մալեզյանին հասցեագրված նամակում նկատում էր, որ. «...Օսմ. ազատութիւնը Հայութեան գերեզմանը պիտի ըլլայ»²։

ա) Կոտորածներն Ադանայում և Կիլիկիո կաթողիկոսությունը։ Կիլիկիայի 1909 թ. կոտորածների մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, լույս են տեսել ականատեսների հուշագրություններ, հրատարակվել են արխիվային վավերագրեր, սակայն հայ եկեղեցու և մասնավորապես Կիլիկիո կաթողիկոսության

¹ Կիլիկիայի 1895-1896 թթ. կոտորածների մասին տե՛ս Հակոբյան Ն. Ս., Համիդյան կոտորածները և կիլիկիահայությունը 1895-1896 թթ., «Ցեղասպանագիտական հանդես», տարի 6, 2018 թ. թիվ 2, էջ 9-23։

² Ե. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 479ա, թ.1։

պատմութեան ուսումնասիրման տեսանկյունից այն դուրս է մնացել հետազոտական դաշտից:

Պատմական Ադանան գտնվում էր Դաշտային Կիլիկիայում, Սիրիոն գետի աջ ափին՝ շրջապատված պարտեզներով: Այն գետային ճանապարհով կապված էր Միջերկրական ծովի հետ: Զնայած քաղաքն առ այսօր ունի վատառողջ կլիմա, սակայն դարեր շարունակ այն հանդիսացել է Կիլիկիայի ամենամեծ և բազմամարդ քաղաքը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին այն ուներ 60000 բնակիչ, որի մոտ կեսը հայեր էին¹: Շնորհիվ քաղաքի շուրջ գտնվող բարեբեր հողատարածքների Ադանան դարձել էր հարուստ քաղաք և Չուքուր Օվայի գյուղատնտեսական կարևոր արվարձաններից մեկը: Քաղաքում զարգացած էր բամբակագործությունը, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը, արհեստներն ու առևտուրը²:

Մինչև 19-րդ դարը Ադանան ուներ 12 եկեղեցի, որոնց մի մասը հետագայում վերածվեց մզկիթի: Զարդերից առաջ Ադանայում կար 18 մզկիթ և 8 եկեղեցի, որոնցից 3-ը պատկանում էին Հայ առաքելական, մեկը՝ Հայ ավետարանական, իսկ մյուսը՝ Հայ կաթոլիկ եկեղեցիներին: Մեկական եկեղեցիներ ունեին հունական, ասորական ու քաղդեական համայնքները³: Ադանայում էին

¹ Տե՛ս **Տէվէճեան Հ.**, Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի. բնական, քաղաքական և տնտեսական, Հալէպ, 1933, էջ 94-95: Ըստ անգլիացի դիվանագետ և ճանապարհորդ Ֆերիման Դաքեսի կղզի-քաղաք Ադանան ուներ 80000 բնակիչ, որից 18000-ը հայեր էին: Տե՛ս **Duckett F.**, *Turkish Atrocities. The Yong Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909*, Erevan, 2009, p. 9.

² Հայերի 40%-ը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, իսկ 30%-ը՝ արհեստավորներ և խանութպաններ էին: Տե՛ս **Duckett F.**, *Turkish Atrocities. The Yong Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909*, p. 8.

³ Տե՛ս **Վեր. Առճեան Յ. Հ.**, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (պատմութեան համար), Նիւ Եորք, 1950, էջ 15:

գտնվում՝ ս. Մինաս, ս. Աստվածածին, ս. Ստեփանոս, ս. Առաքելոց, ս. Ղազար, բյուզանդական ս. Հովհաննես Մայր Տաճար, ասորական ս. Մորոթու (Մորաթու) և քաղղեական ս. Դիլի (Դալիլա) եկեղեցիները¹:

Հայերը 1908 թ. հուլիսի 11-ի երիտթուրքական հեղաշրջումը և օսմանյան սահմանադրության հաստատումը «ովսանաներով դիմաւորեց ու տօնեց զայն», քանի որ ինքը «զուլումէն դէպի լոյս ու խաղաղութեան կը տենչար»²: Սակայն մեկ և կես ամիս անց Ադանայի նահանգում՝ այն է պատմական Կիլիկիայի տարածքում, «սահմանադրասեր» հայերի և «բռնապետութեան վարժուած» հակասահմանադրական մահմեդական պահպանողականության միջև առկա հակասությունը լուրջապես վերաճում է հայերի նկատմամբ ջարդի սպառնալիքի: Հաշվի առնելով ստեղծված պայթյունավտանգ կացությունը, Սահակ Բ կաթողիկոսը 1908 թ. հոկտեմբերին հեռագրով դիմում է Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանին՝ պահանջելով Եգիպտոսից շտապ վերադառնալ Ադանա, քանի որ Ադանայի կուսակալության մահմեդական ազդաբնակչությունը հայերի հանդեպ լցված էր ջարդի կազմակերպման սպառնալիքներով: Վերադառնալուց հետո Մ. եպս. Սերոբյանը հաշվի առնելով ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը, Ադանա է հրավիրում դաշնակցական գործիչ Սարհադին և խնդրում, որ նա ստանձնի ժողովրդին զինելու և ինքնապաշտպանություն կազմակերպելու գործը³: Ստեղծված իրավիճակի մասին Սահակ Բ խապայանը Մատթեոս Բ Իզմիրլյանին ուղղված 1909 թ.

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 863-864:

² «Աղէտի աշխարհ. Իրական վէպ Ատօղլու գիւղէն (Ատանա): Երկու քոյր Վարդէ եւ Շուշան եւ Քիպար Հիւսէյինի որդիք Մուհամմէտ եւ Իսմայէլ», Պուէնոս Այրէս, 1947, էջ 3:

³ **Սերոբեան Մ.**, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով. Վերլուծումներ հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948, էջ 219:

հունվարի 5-ի իր նամակում ահագանգում էր, որ. «Ղուրանի վրայ եղած երգումը դրժողներուն Սահմանադրութեան վրայ ըրած երգումին հաւատալ՝ միամտութիւն է. տարբեր բան մը պէտք է, զոր չեմք կարող կերտել... Ժողովուրդը հացի չափ պէտք ունի ինքնապաշտպանութեան միջոցներու... Հաճընոյ նպաստէն հարիւր ոսկի ակնարկեալ պէտքին յատկացնենք»¹:

1909 թ. կոտորածների նախօրյակին Ադանայի նահանգապետ Զեադ բեյի և նահանգի զորքերի հրամանատար Մուստաֆա Ռեմզիի կողմից հրահրվում է ազգամիջյան ատելություն²: Քուրդ Աբդուլ-Գատերի, Քանիզադե Սայիդի, Քերիմ աղայի, Կերկելլի Ալիի, Բայրաքդարզադե Բեքիրի կողմից Կիլիկիայի մահմեդական բնակչության շրջանում կեղծ և վարկաբեկիչ լուրեր էին տարածվում, որ իբր քաղաքի Ուլու ջամիի (Մեծ մզկիթ) դռանը հայերը կղկղանք էին քսել և այն պղծել, որը մեծ հուզում էր առաջ բերել մոլեռանդ մահմեդականության շրջանում: Այդ առիթով Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը Մուշեղ սրբազանին Սսից ուղարկած 1909 թ. փետրվարի 10-ի իր գրության մեջ ցավով և տագնապով հայտնում էր, որ. «... այս ճանաւար Ազգը արիւն խմելու գազանութեան յագուրդ տալու համար իր Սրբութիւնները իր ձեռքով կը պղծէ, ըսելու համար, որ «Հայը ըրավ». դարերով այս մեթոտին հետեւած են... »³:

¹ Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 11, վավ. 190, նաև «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհրուզեանը, Երեւան, 2001, էջ 243:

² Տե՛ս Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, էջ 269:

³ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», էջ 73-74, նաև Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910, էջ 46:

Լուրեր էին պատվում նաև, որ իբր մի հայ եպիսկոպոս, որը լուսանկարվել էր արքայական թագը գլխին, շրջում էր Կիլիկիայում և հայերին կոչ անում քիչ ուտել, քիչ ծխել, վաճառել ամեն ինչ՝ նույնիսկ իրենց հանդերձանքը և այդ գումարով գնել Կիլիկիայի ազատագրության համար¹։ Կեղծ լուրերի թվում էր և այն, որ հայ ապստամբները շուտով գրավելու էին Ադանայի գինապահեստը, որին էլ հաջորդելու էր Հաճընի հայերի հարձակումը Ադանայի վրա²։

Իրավիճակն Ադանայում թեժանում է հայկական կոտորածների սարսափով։ Ելնելով իրավիճակից՝ Մուշեղ եպիսկոպոսը նահանգի հայ ազգաբնակչությանը կոչ է անում լինել խոհեմ և հավատարիմ մնալ պետությանն ու սահմանադրության սկզբունքներին։ Բացի այդ, նա անմիջապես ընդարձակ մի տեղեկագիր է ուղարկում նահանգապետ Զևադ բեյին՝ ներկայացնելով դեպքերի իրական պատկերը, մոտալուտ ջարդի վտանգը և մատնանշում թուրք պարագլուխների անունները։ Հատկապես վտանգ էր ներկայացնում էրզինի մյութեսարիֆ իթթիհատական Ասաֆ բեյը։ Սակայն նահանգապետը հրաժարվում է այն քննարկել, իսկ թուրք պաշտոնյաներն էլ խորամանկորեն վստահեցնում են, որ ամենևին էլ ջարդի սպառնալիք չկա։ Այս անգամ Մուշեղ եպիսկոպոսը տեղեկագրի պատճենները և սադրիչների անուններն ուղարկում է Կ.Պոլիս՝ Հայոց պատրիարքությանը, կենտրոնական իշխանություններին, հայկական և թուրքական թերթերի

¹ Տե՛ս Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 38-39։

² Տե՛ս Թէրզեան Յ. Յ., Կիլիկիոյ աղէտը (պատկերազարդ). Ականատեսի նկարագրութիւններ, վաւերաթուղթեր, պաշտօնական տեղեկագիրներ եւ թղթակցութիւններ, վիճակագրութիւններ եւ այլն կարեւոր պատկերներով, Ա.հատոր, Կ. Պոլիս, 1912, էջ 44-45։

խմբագրություններին և պահանջում ստեղծել հատուկ հանձնա-
ժողով՝ փաստերը տեղում ստուգելու և հանցավորներին պատաս-
խանատվության ենթարկելու համար: Սակայն կառավարույն-
ը ոչ միայն անտարբերություն է հանդես բերում այս հարցում,
այլև խրախուսում է կազմակերպիչներին¹:

Կոտորածների հենց նախօրյակին՝ 1909 թ. ապրիլի 1-ին,
զատիկին հաջորդած չորեքշաբթի վաղ առավոտյան Ադանայի ա-
ռաջնորդարանում գումարվում է քրիստոնյա հոգևորականների և
ազգային երևելիների մի ժողով, որը կազմում է պատվիրակույթ-
յուն՝ Ադանայի նահանգապետ Ջևադ բեյի հետ հանդիպելու հա-
մար: Նահանգապետը պատվիրակներին, որոնց մեջ էին՝ Պողոս
Եպս. Թերզյանը, Տեր Արսեն քհն. Յեմենիճյանը, վերապատվելի
հայր Համբարձում Աշճյանը, հանրային դատախազ Արտուր Էֆեն-
դին և Ադանայի առաջնորդարանի քարտուղարը, հորդորում է,
թե՝ «վտանգ բան չկայ...»²: Սակայն իշխանությունների անմիջա-
կան հրահրմամբ հենց նույն օրը սկսում են կոտորածները: Կոտո-
րածների առիթը, ինչպես Մուշեղ սրբազանն է նշում ՀԲԸՄ-ի ա-
տենադպիր Վահան Էֆենդի Մալեզյանին ուղղված իր 1909 թ. ապ-
րիլ 6/19-ի նամակում, մի քանի թուրքերի կողմից «հայու մը պա-
տիւր բռնաբարել»-ն էր, սակայն այդ հայը սպանում է թուրքերից
մեկին և պատսպարվում Կիպրոսում³:

Ադանայի ջարդերի առաջին փուլում՝ ապրիլի 1-4-ը⁴, տա-
րաբախտ հայերի մի մեծ բազմություն՝ ըստ բրիտանացի ականա-

¹ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 33:

² Վեր. Աշճեան Յ. Հ., նշվ. աշխ., էջ 17:

³ Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 479 գ, թ. 4-5:

⁴ Ադանայի 1909 թ. կոտորածների մասին ավելի հանգամանորեն տե՛ս Համբարյան
Ա. Ս., Կիլիկիայի 1909թ. հայկական կոտորածները, «ՊԲՀ» 1988, թիվ 4, էջ 13-29,
նաև Գասպարյան Ռ., Ադանայի 1909 թ. կոտորածները, Հոգվածների և
հրապարակումների ժողովածու, Երևան, 2013, էջ 33-51:

տեսների վկայություն, ապաստանել էր Մուշեղյան դպրոցում և եկեղեցիներում¹, մասնավորապես՝ Հայ առաքելական ս. Աստվածածին և ս. Ստեփանոս, Հայ կաթողիկ, Հայ ավետարանական և ասորական եկեղեցիներում, ֆրանսիական Ճիզվիտների և մայրապետների դպրոցում, ամերիկյան «Աղջկանց Գոլէճ»-ում և միսիոներ Ուիլյամ Չեմբրսի բնակարանում, որոնք դարձան հայերի փրկության ապավենը, իսկ ս. Ստեփանոս եկեղեցու բակում գտնվող Աշխենյան իգական վարժարանը վերածվեց հիվանդանոցի²։ Ահա այսպես է նկարագրում ստեղծված իրավիճակը Ս. Ստեփանոս եկեղեցում պատասպարվածներից մեկը 1909 թ. ապրիլի լույս 1-ի գիշերը. «Երկսեռ ժողովուրդն ամբողջապես ծունկի եկած աղեկտուր եւ լաց ու կոծերով «Տէր ողորմեա» կը կանչէր եւ դուրսը խուժանը եկեղեցւոյ վրայ... քարիւղ կը սրսկէր ջրհաններով... Եկեղեցւոյ առաջնորդարանը կրակ առած էր։ Եկեղեցւոյ բակն ալ ելլել անկարելի դարձաւ, որովհետեւ, կարգը եկեղեցիին եկած էր։ Տաճարին ներսը սոսկալի տաքով խեղդող մոլիս մը սկսաւ լիցուիլ։ Հակառակ ամբողջապէս քարաշէն ըլլալուն, ջերմութեան սաստուկենէն գմբէթը, պատերն ու մարմարեայ սիւներն ճաթեցան։ Ժողովուրդն այլեւս յուսահատ սկսաւ միաձայն պռուլ «Օգնութի՛ն, օգնութի՛ն, խղճացէ՛ք, կ'այրուինք»։ Կիները արին արցունքներով «Գթացէ՛ք մեզ» կը կանչեն, այրերը «Լոռութիւն» կը գոչեն, մանուկները շնչահեղձ կ'ըլլան, գոռում, գոչում, աղմկում եւ իրարանցում ճշմարիտ դժոխքի մը վերածած էին Սբ. Ստեփանոս եկեղեցին»³։

Խելակորույս տղամարդիկ ու կանայք, երեխաներն ու ծե-

¹ Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX-րդ դարի 30-ական թթ.- 1914 թ.), Երևան, 1999, էջ 391։

² Տե՛ս «Ատանալի հայոց պատմութիւն», էջ 235, 238։

³ Թէրզեան Յ.Յ., նշվ. աշխ., էջ 103։

րերը, ողջերն ու վիրավորները, բոլորը՝ հրո ճարակ դարձան: Բացառությամբ Մայր եկեղեցու, պղծվեցին և թալանվեցին քաղաքի բոլոր հայկական եկեղեցիները, իսկ մեկը թալանվեց և ամբողջությամբ հրկիզվեց¹, խորտակվեցին սեղանները և խաչերը, թալանվեցին սուրբ անոթները, և ոտնատակ արվեցին բոլոր սրբությունները:

Կոտորածներն ուղեկցվում էին այնպիսի դաժանություններով, որ Ադանայի քրիստոնյա հոգևորականությունն ապրիլի 6-ին օսմանյան պառլամենտին ուղղված իրենց հեռագրում նշում էին, որ այդպիսի հալածանքներ տեղի չէին ունեցել անգամ Չինգիզ խանի և Լանգ Թեմուրի ժամանակներում²: Հայ հոգևորականի նկատմամբ իրականացված այդպիսի դաժանություններից մեկի մասին է հաղորդում Ադանայի կաթոլիկական առաքելության ներկայացուցիչ հայր Ռիգալը, որը նշում է. «Մի տերտերի հավատուրաց դարձնելու նպատակով աչքերը հանեցին չեքեզական երկսայրի սրով, որը պատեցնում էին աչքերի արյունշաղախ բներում այնպես, ինչպես փայտի կտորն են շաղափում: Այդ նույն սրով կտրեցին նրա լեզուն և ջարդեցին ատամները»³:

Ջարդերից զերծ չմնացին նաև հայ հարանվանությունների՝ Հայ ավետարանական, Հայ կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները: Մարտի 31-ին, երբ կենտրոնական իշխանությունը զբաղված էր Կ. Պոլսում հակասահմանադրական ցույցերի ճնշմամբ, Օսմանիեի մոտակայքում քաղաքի փոխկառավարչի թողտվությամբ դաժանաբար ողջակիզվեց Հայ ավետարանական եկեղեցու Հասան Բեյլիի 23 (ըստ որոշ տեղեկությունների՝ 11⁴,

¹ Տե՛ս АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 22.

² Տե՛ս Վեր. Առճեան Հ., նշվ. աշխ., էջ 21:

³ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ», Երևան, 1991, էջ 258:

⁴ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 227:

ըստ այլ տեղեկությունների՝ 26¹) հոգուց բաղկացած պատվիրակությունը, որը մեկնում էր Ադանա ապրիլի 4-ին նախատեսվող Հայ ավետարանական եկեղեցիների տարեկան համագումարին՝ «Հոգևոր Պետերու Կիլիկեան Միութեան Ժողով»-ին մասնակցելու համար²։ Սպանվածների թվում էր նաև Հաճընի որբանոցի կառավարչուհին և Այնթապի քուլեջի պրոֆեսոր Սարգիս Լևոնյանը³։ Նույն ճակատագրին արժանացան նաև Մարաշից, Այնթապից և Ուրֆայից եկած և Սայ-Կեչիտում, Զայրը-Աղչըում և Համիդիեում հավաքված Ավետարանական 31 հոգևոր առաջնորդները⁴։ Նրանց նկատմամբ իրականացված վայրագությունները ոչնչով չէին զիջում Հայ առաքելական եկեղեցու հետևորդներին բաժին հասած տառապանքներին։ Անաստաս Ատոսիտիսը մեջբերելով բողոքական հայր Լապարտենի վկայությունը Հասան Բեյլիի կոտորածների մասին՝ մատնանշում է, որ Հասան Բեյլիի հայ բողոքական պատվելիի կինը ապրիլյան կոտորածների ժամանակ կորցրել էր ամուսնուն, երկու որդիներին, չորս եղբայրներին և բազմաթիվ

¹ Տե՛ս «Արեւելեան մամուլ». շաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Իզմիր, 1909 թ., ապրիլի 28, թիւ 18, էջ 520:

² Տե՛ս **Ճեպեճեան Ռ., Տոքտ.**, Ինքնակենսագրութիւն. Յուշեր եւ գործունէութիւն, Հալեպ, 1999, էջ 18-19:

³ Տե՛ս «Արեւելեան մամուլ». շաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Իզմիր, 1909 թ., ապրիլի 28, թիւ 18, էջ 520:

⁴ Վերապատվելի Եղիա Քասունին իր՝ «Լուսաշաւիղ» աշխատութեան մեջ ներկայացնում է սպանված բոլոր գործիչների անունները... Տե՛ս **Վեր. Քասունի Ե.Ս.,** Լուսաշաւիղ. պատմութիւն Հայ ավետարանական շարժման 1846-1946, Պէյրուս, Լիբանան, 1947, էջ 264-265:

այլ ազգականներին¹։ Ըստ օսմանյան խորհրդարանի պատգամավոր Հ. Պապիկյանի տվյալների հայ բողոքականներից զոհվեց 655, իսկ հայ կաթոլիկներից՝ 200 հոգի²։

Այրվում ու կործանվում են նաև ոչ հայկական՝ ճիզվիտական, ասորական, քաղդեական, կաթոլիկական բոլոր եկեղեցիները՝ բացառությամբ հունական եկեղեցու, որը գտնվում էր քրիստոնեական թաղամասի ծայրամասում։ Կ.Պոլսում Իտալիայի դեսպանատան հանձնակատար Սֆորցան՝ Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին հասցեագրած 1909 թ. ապրիլի 20-ի իր հեռագրում տեղեկացնում էր, որ Ադանայի քրիստոնյա իտալացիները սպառնալիքի տակ էին, որ քաղաքից դուրս նրանցից շատերը սպանվել էին և որ. «Տեղի իշխանությունների հանդեպ հավատ չունենք։ Օսմանիեում 100 բողոքական քարոզիչներ այրվել են հենց եկեղեցու մեջ...»³։

Իսկ Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեռլեգարդը՝ Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին ուղղված 1909 թ. մայիսի 8-ի իր թիվ 217/28 հեռագրում տեղեկացնում էր, որ ճիզվիտների ֆրանսիական կույսերի կրոնական շինությունները ավերվել են, սրի են քաշվել ոչ միայն այնտեղ ապաստան գտածները, այլ նաև որոշ ճիզվիտներ⁴։ Խոսելով Ադա-

¹ Տե՛ս Աստուխիս Ա., Հայերը եւ երիտասարդ թուրքերը։ Կիլիկիոյ կոտորածները, հ. Ա, Հալէպ, 2009, էջ 94։

² Տե՛ս «Ատանայի եղեռնը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան էտիրների)», Ֆրանսիա տը Պրէսանսէի յառաջաբանով, հայացուց՝ Յակոբ Սարգիսեանի, Կ. Պօլիս, 1919, էջ 16։

³ «Իտալիայի Արտաքին գործերի նախարարութեան պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հատոր Ա, 1913-1917», նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակութեան պատրաստեց՝ Արամայիս Բալոյանը, Երևան, 2008, էջ 211։

⁴ Տե՛ս անդ։

նայի քրիստոնեական այլադավան բնակչության կոտորածի մասին՝ ամերիկացի պատմաբան Ջոզեֆ Գրինը նշում էր, որ Ադանա քաղաքի ու նահանգի մուսուլմանական բնակչությունը, որին հրահրում էին Կոստանդնուպոլսից, հարձակվեց քրիստոնյա ազգաբնակչության վրա և մի քանի օրվա ընթացքում կողոպտեց ու սպանեց 20.000 հայերի, ավիրեց բազմաթիվ գյուղեր, եկեղեցիներ, դպրոցներ, սպանեց մեծ թվով վարդապետների, այդ թվում՝ ամերիկացի երկու միսիոներների, բողոքական 20 պապոսորների...»¹։

Առաջին ջարդի ավարտից հետո՝ ապրիլի 5-11-ը, իշխանությունները հայերին խաղաղության կոչ են անում։ Զինվորական ատյանը հայ հոգևորականներից պահանջում է, որ նրանք հավաքեն և կառավարությանը հանձնեն ինքնապաշտպանության դիմած հայերի զենքերը, հակառակ դեպքում՝ «Եթէ ոչ ուրիշ ջարդ մըն ալ կրնայ պատահիլ»²։ Արդյունքում, իշխանությունները խաբեությանմբ հավաքում են հայերին պատկանող զինամթերքը։ Ապահովագրելով իրենց հայերի հնարավոր նոր դիմակայությունից, թուրքերը Ռումելիից՝ եվրոպական Թուրքիայից բերված 3 գունդ զինվորների մասնակցությամբ, նախապես կազմակերպված սադրանքի միջոցով (իբր հայերն իրենց եկեղեցու զանգակատնից կրակոցներ էին արձակել թուրքական բանակի վրա), երկրորդ անգամ՝ ապրիլի 12-13-ին, Ադանայում կազմակերպեցին նոր կոտորած³։

Ապրիլի 13-ին ճիզվիտ հայերը լինելով անեկանելի իրավիճակում, որոշում են ժողովրդին մատնել բախտի քմահաճույքին

¹ Rev. Joseph K. Greene D. D., *Leavening the Levant*, Boston, New-York, Chicago, 1916, p. 42.

² «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 243։

³ Տե՛ս Ղազարեան Հ. Գ., *Յեղասպան թուրքը*, Պէյրուս, 1968, էջ 15։

և, «...իրենց խաչին ներքեւ ապաստանած ժողովուրդը տանիլ ոչ-խարներու հօտերու պէս յանձնել կառավարութեան գութին...Ի՛նչ կ'ուզեն թող ա՛ն ընեն...»¹։ Նրանց կոչով հայութեան խլիւղները «...բոկոտն, գլխաբաց, անսուղ, յուսահատ...» հայ քահանաների, հայ գերապայծառների, հայ երեւելիների, ֆրանսիացի կրօնավորների առաջնորդութեամբ թափոր-թափոր հասնում են կուսակալանիստ Սերայի և Սիհուն գետի միջև ընկած պարտեզները և սպասում իրենց ճակատագրին։

Ապրիլի 13-ին երկրորդ անգամ իշխանութեան եկած Աբդուլ-Համիդ II-ը, որը վայելում էր իր 33-ամյա գահակալութեան վերջին օրը և Կ. Պոլսում իր վերջին կռիվն էր մղում երիտթուրքական «Ազատութեան բանակի» դեմ, «ներում» է շնորհում Ադանայի հայերին՝ պահանջելով, որ նրանք քանդեն սահմանադրութեան պատվին Ադանայի քաղաքապետարանի շէնքի առջև կանգնեցված Ազատութեան կամարը և բացականչեն՝ «Փատիշահըմ չօք եաշա» («մեր սուլթանը շատ ապրի» - Վ. Հ.)²։

1909 թ. ապրիլի 1-4-ը և 12-13-ը կենտրոնական ու տեղական իշխանութիւնների փոխհամաձայնութեամբ Ադանայում տեղի ունեցած խաղաղ հայ բնակչութեան կոտորածի արդյունքում

¹ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 250։

² Անդ, էջ 251-252։

զոհվեցին մոտ 18627 քրիստոնյա անմեղ հայեր¹, հրո ճարակ դարձավ 5189 տուն², երեք հարյուր կալվածք, հափշտակվեց ավելի քան տասը հազար զլուխ անասուն, իսկ նյութական վնասը կազմեց 20 մլն. թուրքական լիրա (մոտավորապես 500 միլիոն ֆրանկ)³: Իրավացի է Ա. Աստույանը, երբ նշում է, որ Ադանան բարգավաճ հայկական կենտրոն էր, և թուրքերը տեղյակ էին, որ այնտեղ կար չավարառված հարստություն, որին տիրանալու

¹ Տե՛ս Պողոսյան Հ.Մ., Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ., Երևան, 1969, էջ 367: Ըստ մեկ այլ վկայության՝ Ադանայի հայ ազգաբնակչության զոհերի քանակը կազմում էր 23500: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910 թ. ապրիլ 2, թիվ 73: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ զոհերի ընդհանուր թիվը կազմում էր 20008, որից 608-ը՝ մահմեդականներ, 18656-ը՝ հայ, իսկ 744-ը՝ օտարազգի քրիստոնյաներ: Տե՛ս Աճառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915, էջ 57: Աշխարհում առաջին հայ կին դիվանագետ, Ճապոնիայում Հայաստանի առաջին Հանրապետության դեսպան Դիանա Աբգարը, հիմք ընդունելով ամերիկացի ականատես Ի. Գ. Ֆրայերի վկայությունները, զոհերի թիվը ներկայացնում է 63 հազար: Տե՛ս «Դիանա Ադաբեկ Աբգար. կեանքը եւ գործունեությունը», Նոր Զուղա, 2011, էջ 77:

² Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Յուսուֆ Քեմալի կողմից հիշատակվող թիվը վերաբերում է միայն այն շինություններին, որոնք ենթակա էին վերականգնման: Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ», էջ 265:

³ Տե՛ս Մարտիրոսյան Հ.Հ., Կիրիկիայի 1909 թվականի ապրիլի հայկական կոտորածը և երիտասարդ թուրքերի պատասխանատվության հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», V, Թուրքիա, էջ 301: Կիրիկիահայության նյութական վնասն ըստ թուրքական կառավարության տվյալների կազմում էր ընդամենը 96000 օսմանյան ոսկի, իսկ ըստ Հ. Պապիկյանի հաշվարկների՝ 3 մլն օսմանյան ոսկի: Տե՛ս «Ատանայի եղեռնը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան էտիրներ)», Ֆրանսիա տը Պրէսանսէի յառաջաբանով, հայացուց՝ Յակոբ Սարգիսեանի, էջ 20-21:

հրապուրիչ հեռանկարը խթան հանդիսացավ կոտորածների համար¹։

Կոտորածներից հետո «շքեղ Ադանան» դարձավ «ղըմա Ադանա» («Մսաղաց Ադանա»), իսկ կոտորածի գիշերը կոչվեց «Ջամուզ դելլենդի» («գոմեշը գժվեց»)²։ Ի դեպ, Հալեպում Իտալիայի արքայական հյուպատոս Բեուրեգարդը Իտալիայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին ուղղված 1909 թ. մայիսի 8-ի վերոհիշյալ հեռագրում մատնանշում էր նաև, որ ամբողջ մուսուլմանական աշխարհում գոհունակությամբ են նշում կոտորածների հիանալի կազմակերպված լինելու հանգամանքը, քանզի դրա արդյունքում ոչ մի մուսուլման ոչ միայն չսպանվեց, այլև նույնիսկ չվիրավորվեց³։

Զապել Եսայանն իր «Աւերակներուն մէջ» վկայագրութեան մէջ խոսելով Ադանայի եղեռնից հետո քաղաքում տիրող ընկճված տրամադրութեան մասին, նշում է, որ մահացածների հոգեհանգստի և սգավոր հայութեան միախառնութեան համար Հայոց առաջնորդական եկեղեցում պատրիարքական պատվիրակ Գնել ծ. վրդ.-ի կողմից մատուցվում է պատարագ։ Այդ մասին նա հիշում է. «...հազիվ թէ լուսցած՝ արկածեալներու բազմութիւնը խռնուած էր եկեղեցիին բակին մէջ գլխիկոր եւ յուսաբեկ, ձեռքերնին ծալլած կուրծքերնուն վրայ՝ այրիներու շարքը դանդաղօրէն եւ երկշոտ քայլերով կը դիմէր դէպի եկեղեցի...։ Մեծ յուզում մը կը սաւառնէր դժբախտ ժողովուրդին վրայ...երբ մենք մտանք եկեղեցի,

¹ Տե՛ս Աստույան Ա., Դարի կողպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրութիւնում 1914-1923 թթ., Երևան, 2013, էջ 12։

² Սվազյան Վ., Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ, Երևան, 2011, էջ 433։

³ Տե՛ս «Իտալիայի Արտաքին գործերի նախարարութեան պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հատոր Ա, 1913-1917», էջ 219։

պատարագը սկսած էր արդէն: Խուռն բազմութիւն մը, գրեթէ բոլորովին կազմուած այրիներէ եւ որբուհիներէ, կը լեցնէր տաճարը, գաւիթները ու վերնատունը, ... այրերը ցանցառ բացառութիւն կը կազմէին, մեծ մասով անդամահատ ու խեղանդամ...: Դասը կանգնած էին խստադէմ եւ տխուր քահանաներ, ամէնքն ալ մէջ մէկ աղէտեալ վայրէ հրաշքով ազատուած ու ապաստանած հոգ... անոնց միին աչքերը դեռ պահած էին արհաւիրքի եւ սարսափի արտայայտութիւնը...: Հոն էր Ատանայի փոխառաջնորդ Տէր Արսէն քահանան իր փղձկած դէմքով եւ ցաւոտ աչքերով, պատրաստ ամէն բոլոր արտասուելու. Հոն էր Տէօրթ Եօլի Տէր Սահակ քահանան...: Հօն էին նաեւ տարբեր եկեղեցիներու պատկանող եկեղեցականներ, Կաթողիկ, Բողոքական, Յոյն, Ասորի եւ Քաղդէացի, ամէնքն ալ հաւաքուած Լուսաւորչի բազմաշարքար եկեղեցիին մէջ, վերջին մարտիրոսներու հոգիին հանգստեան համար իրենց աղօթքը ըսելու եւ եղբայրանալու այն մէծ եւ անսահման վշտի արտայայտութեան մէջ՝ որ քանդած էր այլազան աղանդներու մէջ եղած բոլոր սահմանները...»¹:

Ադանայի հայ բնակչութեան համատարած ջարդի սրտաճմլիկ դեպքերի առիթով Սահակ Բ Խապայանը և մի շարք բարձրաստիճան հայ հոգևորականներ բողոքի զեղուն խնդրագրերով և խստաոճ հեռագրերով դիմեցին Գողանի (Սսի) մյութեսարիֆին, ներքին գործերի նախարարութեանը, արդարադատութեան նախարարին, կայսերական պալատին, Օսմանյան խորհրդարանին, Կ. Պոլսի պատրիարքարանին՝ պահանջելով պատժել թուրք ոճրագործներին, վերականգնել արդարութիւնը և նյութական օժանդակութիւն ցուցաբերել անապահով հայերին²: Այսպէս, Օսմանյան խորհրդարանին ուղղված 1909 թ. հունիսի 11-ի տեղեկագրի վերջում կաթողիկոսը մտահոգութիւն էր

¹ Եսայեան Զ., Աւերակներուն մէջ (վկայագրութիւն), Ստանպուլ, 2010, էջ 49-51:

² Տէս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 277:

հայտնում, որ եթե Օսմանյան պետությունը և քաղաքակիրթ օսմանցիները անհոգ լինեն ջարդերի հանդեպ և չցանկանան՝ «Օսմանեան ազգին ճակատէն սրբելու ջարդի, հրկիզումի, կողոպուտի, առեւանգութեանց և հարստահարութեանց ամօթի արատը... պիտի դիմեմ յօտա Աստուածային գահոյից»¹:

Նախատեսվում էր, որ այդ խնդրով պետք է զբաղվեր նաև Հայոց պատրիարքարանը, սակայն ինչպես «Հորիզոն» պարբերականն է նշում, այն ոչ մի ցանկություն չուներ այդ խնդրով զբաղվելու՝ համարելով այն ավելորդ և անուշադրության արժանի²:

Սակայն թուրքական իշխանությունների շրջանում երկար ժամանակ արձագանք չէին գտնում կաթողիկոսի և Կ. Պոլսի հայոց պատրիարքի միջնորդությունները³: Ի վերջո, բողոքների հիման վրա կոտորածների կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու և Օսմանյան խորհրդարանին «Տեղեկագիր» ներկայացնելու համար իր թուրք գործընկերներոջ՝ Յուսուֆ Քեմալի հետ մայիսի 29-ին Ադանա է ժամանում օսմանյան խորհրդարանի էդիրների հայազգի պատգամավոր և երիտթուրքական կուսակցության անդամ Հակոբ Պապիկյանը, որը եզրակացնում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամները մասնակցել էին Ադանայի եղեռնագործության կազմակերպմանն ու իրագործմանը⁴: Սակայն իր անաչառության և արդարամտության համար նա օգոստոսի 1-ին թունավորվում է:

Զնայած ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգից հանրապետական կոնգրեսական ընտրված Իրվինգ Վանգերը դեռևս 1909 թ.

¹ «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», էջ 88:

² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910թ. փետրւարի 19, թիւ 39:

³ Տե՛ս АВПРІ, ф. 149 Турецкій стол, оп. 502/2, д. 1002, л. 20-20 об.

⁴ Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս «Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան էտիրների)», Ֆրանսիս տը Պրէսանսէի յառաջաբանով, հայացուց՝ Յակոբ Սարգիսեանի, էջ 42:

ապրիլի 29-ին համատեղ բանաձև էր ներկայացրել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ և հուլյս հայտնել, որ երիտթուրքական կառավարությունը կարող էր կանխել «քրիստոնյա միսիոներների և մնացած ոչ մահմեդականների» նկատմամբ իրականացված ջարդերը¹, այդուհանդերձ, ջարդերի պատճառը քննելու համար կազմվեց Պատերազմական ատյան՝ կոտորածից փրկված անմեղ հայերին դատելու համար: Դեպքերի ականատես հույն հայտնի վաճառական Մավրոմատին 1909 թ. սեպտեմբերի 8(21)-ին հաստատում էր, որ բավական էր լինել քրիստոնյա, որպեսզի նրա գործը դատարանում տանուլ տված լիներ և կախաղան բարձրացնելու արժանի համարվեր, եթե հակառակորդը մահմեդական էր²:

Ի վերջո, «վստահությունը» և «արդարությունը» վերականգնելու ակնկալիքով երիտթուրքերը ձերբակալեցին կոտորածներին մասնակցած 200 թուրք հանցագործների, որոնցից 9-ին կախաղան բարձրացրեցին: Սակայն, 1912 թ. բանտարկվածներից միայն 86-ն էին մնացել բանտում, որոնք էլ շուտով ներման արժանացան³:

Ադանայի արյունալի դեպքերից չորս ամիս անց՝ օգոստոսի կեսերին (1910 թ. սկզբներին)⁴ Ադանայի վիլայեթի նոր նահանգապետ է նշանակվում երիտթուրքերի պարագլուխներից Ա.

¹ Տե՛ս Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914 թ.), Երևան, 2014, էջ 341-342:

² Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 205.

³ Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 910:

⁴ Հստ Ջեմալ Փաշայի վկայության, նա Ադանայի նահանգապետ է նշանակվել 1909 թ. օգոստոսի կեսերին, տե՛ս «Записки Джемаль Паши 1913-1919», Тифлис, 1923, с. 210: Սակայն կան տեղեկություններ, որ նա նահանգապետ է դարձել 1910 սկզբներին, տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 911:

Զեմալ փաշան, որը հաշտեցման նպատակով 1910 թ. հունվարի 23-ին Ադանայի, Տարսուսի և Մերսինի թուրք, հայ, հույն, ասորի պետական, զինվորական և հոգևոր 400 երեկերի գործիչների և հյուպատոսների պատվին կազմակերպում է խնջույք, որտեղ արտասանած իր ճառում նա այդ կոտորածները քրիստոնյաների համար գնահատում է որպես նյութական, իսկ մահմեդականների համար՝ բարոյական մեծ վնաս¹։ Խնջույքի ժամանակ ի թիվս այլոց, հայերենով պերճախոս ելույթ է ունենում նաև Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը, որի խոսքը տեղում թարգմանվում էր թուրքերեն։ Ինչպես նա, այնպես էլ քրիստոնյա հոգևոր մյուս գործիչները իշխանություններից պահանջում են «արդարութիւն եւ իրաւունք»², քանի որ կոտորածների հետևանքով Ադանայում կործանվեցին 32 եկեղեցիներ և զոհվեցին 42 հոգևորականներ, որոնցից 16-ը՝ Հայ Առաքելական եկեղեցու, 19-ը՝ Հայ Ավետարանական եկեղեցու, իսկ 7-ը՝ հույն, ասորի, բողոքական և կաթողիկ եկեղեցիների սպասավորներ³։ Հաշվի առնելով այդ ամենը՝ Նյու-

¹ Տե՛ս **Թէրզեան Յ.Յ.**, նշվ. աշխ., էջ 254, նաև **Պողոսյան Հ. Մ.**, Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ., էջ 369։

² «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 284-285։

³ Հայ Առաքելական եկեղեցու նահատակված սպասավորներն էին՝ Միքայել վրդ. Աջապահյանը (Մխիս), Մկրտիչ վրդ. Թապաղյանը (Համիդիե), Կարապետ քհն. Թեյլալյանը (Համիդիե), Արսեն վրդ. Հարությունյանը (Անտիոք), Դանիել վրդ. Հակոբյանը (Անտիոք), Ստեփան/Արսեն քհն. Գոփուշյանը (Ադանա), Պետրոս քհն. Քեշիշյանը (Հասան-Բեյլի), Հովհաննես քհն. Քեշիշյանը (Հասան-Բեյլի), Ներսես քհն. Պողոսյանը (Հասան-Բեյլի), Վահան քհն. Տեր-Ստեփանյանը (Պահչե), Հովհաննես քհն. Քեշիշյանը (Լափուճը), Դևոնդ քհն. Քեշիշյանը (Լափուճը), Մկրտիչ քհն. Զափարճյանը (Խարնը), Պողոս քհն. Տեր-Պողոսյանը (Օճազը), Հակոբ քհն. Նաբաբեկյանը (Գըրբեխան), Արմենակ քհն. Դոնադոսյանը (Անտիոք)։ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 267-268։

Յորքում տպագրվող «World Almanax» պարբերականը Ադանայի 1909 թ. դեպքերը բնութագրել է որպես «հակաքրիստոնեական ապստամբություն Ադանայում»¹:

Երիտթուրքական կառավարող շրջանները կոպիտ կերպով խեղաթյուրելով պատմական իրական փաստերը և խուսափելով մեղսակցությունից, Ադանայի ջարդերի պատասխանատու են համարում «հոգևորականի քողի տակ հանդես եկող մոլի կոմիտեական» Ադանայի հայոց հոգևոր առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանին², որն իբր կոտորածի օրերին զոհվել էր իր բնակարանում պայթած ռումբի հետևանքով³: Սակայն իրականում Մուշեղ

¹ Դիանա Աղաբեկ Աբգար. *Կեանքը եւ գործունէութիւնը*, էջ 77:

² Տէս Esat Uras, *Tarihte Ermeniler ve Ermeni meselesi*, Ankara, 1950, s. 456: Մուշեղ եպս. Սերոբյանը (1869-1951) Կիլիկիո կաթողիկոսության ազատամիտ և խիզախ հոգևորականներից էր: Նա ծնվել է 1869 թ. Բուլանիայի Իզմիթ (Արսլանբեկ) քաղաքում, սովորել է Արմաշի դպրոցում և Մ. արք. Օրմանյանի ձեռամբ 1895 թ. դարձել վարդապետ: 1905 թ.-ին Մուշեղ եպս. դառնում է Ադանայի հոգևոր առաջնորդ և իր նրբամիտ քաղաքականությամբ ձեռք բերում Ադանայի նախկին կուսակալ Պահրի փաշայի համակրանքը: Նրա պաշտոնավարման շրջանը դարձավ Կիլիկիայի հայության վարկի բարձրացման ժամանակաշրջան: Սահակ Բ կաթողիկոսը գնահատելով նրա մարդկային և հոգևոր արժանիքները, 1906 թ. հոկտեմբերի 28-ին առանց Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի համաձայնության նրան ձեռնադրեց եպիսկոպոս: Այս քայլն առաջ բերեց Արևմտյան Հայաստանի կրոնական բարձրագույն երկու իշխանությունների վիճաբանություն, որի հետևանքով Կ.Պոլսի պատրիարքությունը Մուշեղ եպս. հոգևոր պաշտոնավարումը իրավական առումով ճանաչեց միայն կաթողիկոսության կիլիկյան թեմերի շրջանում: Տէս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 234: 1910 թ. նա տեղափոխվում է Ամերիկա, ուր երկու տարի հրատարակում է «Ամերիկահայ Տարեցույց»-ը: Ավելի ուշ նա կարգաթող է եղել և զբաղվել ուսուցչությամբ և գրական գործունեությամբ: Մուշեղ եպս. Սերոբյանը մահացել է Կիարոսում 1951 թ.: Տէս Սիրունի Հ. Ա., Պատրիարք հաշատուրեան: Մենագրութիւն, Ստանպուլ, հոկտեմբեր 2003, էջ 146:

³ Տէս Arikoğlu Damar, *Hatıralarım: Milli Mücadele: Çukurova'da Fransız işgali ve kanlı savaşlar, Birinci Büyük Millet Meclisi, yurttta çeşitli isyanlar*,

եպիսկոպոսը Ադանայի դեպքերից մոտ մեկ ամիս առաջ՝ մարտի 4-ին մեկնել էր Եգիպտոս՝ Ադանայում կառուցվելիք Երկրագործական վարժարանի համար նախատեսվող ծախսերը հանգանակելու համար։ Դեռ ավելին, երբ նա լսում է աղետի լուրը, անգլիական նավով շտապում է վերադառնալ Ադանա։ Սակայն թուրքական իշխանություններն արգելում են Մուշեղ եպիսկոպոսի մուտքը Մերսին՝ որպես անցանկալի անձնավորության։ Այդ մասին օսմանյան իշխանությունները տեղեկացնում են Մերսինի անգլիական հյուպատոսին և սպառնում, որ եթե՝ «Մուշեղ ցամաք ելլէ՝ թէ՛ Մերսինի մէջ դէպքեր կը պատահին եւ թէ՛ Ատանայի եւ շրջակայից մէջ նոր խռովութիւններ կը ծագին, ուստի Խտիւական (եգիպտական փոխարքա – Վ. Հ.) նաւապետին հրաման ըրէք, որ Մուշեղը արգիլէ նաւէն դուրս ելլելու»¹։ Անգլիական հյուպատոսի հրահանգով Մուշեղ եպիսկոպոսը արգելափակվում է նավում և հետ է վերադառնում Ալեքսանդրիա։ Եթե նա իսկապես մեղավոր էր, ապա ամենահարմար տարբերակը նրան ձերբակալելն էր և պատասխանատվության ենթարկելը և ոչ թե հետ՝ Ալեքսանդրիա ուղարկելը։

Ա. Զեմալ փաշան, ինչպես ինքն է նշում՝ «իրենից ավելի լավ ոչ ոք չէր կարող ծանոթանալ հոգեբանական այն նախադրյալներին, որոնք առաջ բերին այդ կոտորածը»², անտեսելով իրականությունը՝ Ադանայի ջարդերի կազմակերպման գործում մեղավոր է համարում միայն հայերին և հատկապես միայն մեկ մարդու, վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ Մուշեղ եպիսկոպոսին։ Այդ մասին նա նշում է. «Ես անձամբ համոզված

yunanlıların denize dökülmesi, Atatürkten hatıralar, resimler vesikalar, İstanbul, 1961, s. 54:

¹ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 225 և 304:

² «Записки Джемаль Паши 1913-1919», с. 210.

եմ,- գրում է նա,- որ այդ արյունալի դեպքերի գլխավոր մեղավորը մոնսինյոր Մուշեղն էր...»¹։

Ա. Զեմալ փաշայի այս տեսակետը բաժանում է նաև XX դարի թուրք պատմաբան Իսմայիլ Համի Դանիշմենդը, որն իր «Օսմանյան պատմության համառոտ ժամանակագրություն» քառահատոր աշխատության չորրորդ հատորում գրում է, որ «Ադանայի դեպքը» կազմակերպել էր այնտեղի հայ հեղափոխական եպիսկոպոս, Մուշեղ անունով արյունարբու հոգևորականը²։

Մուշեղ եպիսկոպոսին և հայ ժողովրդին ուղղված զրպարտություններից զերծ չեն մնացել նաև միսիոներ-ճիզվիտները։ Այդ մասին մենք իմանում ենք Մուշեղ եպիսկոպոսի՝ Ալեքսանդրիայից Ա. Չոպանյանին հասցեագրված նամակից³։

Սակայն թուրք լրագրող, ծագումով քուրդ Մելան Զադե Բիֆաթը, որը եղել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի ժողովների անմիջական մասնակիցը և քաջատեղյակ էր այդ կուսակցության ողջ գործունեությանը, իր անձնական հուշերի և փաստական հարուստ նյութերի հիման վրա նկարագրելով Կիլիկիայի 1909 թ. արյունալի դեպքերը, կարծում է, որ կոտորածների իսկական կազմակերպիչը ոչ թե Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանն էր, այլ երիտթուրքական կուսակցությունը և նրա կողմից նախապես որոշված և գործադրված կոտորածի քաղաքականությունը⁴։ Իսկ Վեր. Աշճյանը կոտորածների պատճառներից մե-

¹ Անդ, Ը, 214։

² Տե՛ս **Danişmend İ.H., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt TAKİM, Cilt 4, İstanbul, 1947, s. 374.**

³ Տե՛ս Ե. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ. 6553, I բաժին։

⁴ Տե՛ս **Բիֆաթ Մ. Զ., Օսմանեան յեղափոխութեան մովթ ծալքերը եւ իթթիհատի հայաչինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 104-111։**

կը համարում էր մահմեդական ազգաբնակչության կրոնամոլութ-
յունը: Նա նշում էր, որ քրիստոնյաները, մահմեդականները և հ-
րեաները միշտ իրար հակառակ էին և թշնամի¹:

Ի դեպ, Կիլիկիո հայերի 1909 թ. կոտորածներից հետո մի-
ջազգային մամուլի էջերում տեղ էր գտել նաև այն մտայնություն-
նը, որ կոտորածներն անմիջական վերջաբանն էին համիդյան կո-
տորածների քաղաքականության²: Մուշեղ եպիսկոպոս Սերոբյա-
նը, իսկ նրանից հետո նաև՝ Հակոբ Թերզյանը, եկեղեցական և
ընդհանրապես հայ պատմագրության մեջ առաջին հեղինակներն
էին, որոնք բացահայտեցին Ադանայի 1909 թ. կոտորածների ժա-
մանակ երիտթուրքերի հանցապարտ քաղաքականության խորա-
մանկ էությունը: Մուշեղ եպիսկոպոսը 1909 թ. ֆրանսերենով
հրատարակած իր արժեքավոր աշխատության մեջ³ և «Հայկական
նոր ջարդերի նախօրյակին» հոդվածում⁴ վեր հանեց և մերկաց-
րեց երիտթուրքերի անմիջական մասնակցությունը 1909 թ. կոտո-
րածների կազմակերպման գործում՝ շեշտելով, որ Կիլիկիայի ջար-
դերն ամենևին էլ վերջինը չէին, այլ իթթիհատի կառավարության
ջարդարարական քաղաքականության սկիզբը:

¹ Տե՛ս Վեր. Աղճեան Յ. Հ., նշվ. աշխ., էջ 149:

² Այդ մասին առավել հագամանորեն տե՛ս Խառատյան Ա., Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, «ՊԲՀ», 2009 թ., թիվ 1, էջ 3-14, նաև Ղալթախյան Տ.Ա., Ադանայի 1909 թ. կոտորածների առաջին արձագանքները արևմտահայ մամուլում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2015, թիվ 1, էջ 3-13:

³ Տե՛ս M^{re} Mouchegh [Serobian], *Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents*, Alexandrie, 1909. Մեկ տարի անց աշխատությունը մի փոքր համառոտակի տարբերակով թարգմանվել և հրատարակվել է հայերեն Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910 վերնագրով:

⁴ Տե՛ս M^{re} Mouchegh, «À la veille des nouveaux massacres arméniens», *La Revue*, Paris, 15 août 1910.

բ) Իրավիճակը Սիսում: 1909 թ. ապրիլի 1-ին սկսված Ադա-նայի քստմնասարսուռ ջարդը տարածվեց ողջ Կիլիկիայով մեկ և նույն ճակատագրին արժանացան նաև Սիսի, Այասի, Պայասի և մյուս վայրերի հայութիւնը¹: Փորձութիւններից անմասն չմնաց հատկապես Սիսը, որն աշխարհամարտի նախօրյակին ուներ 3500 բնակիչ, որից 2500-ը հայադավան էին, 300-ը՝ հայ - կաթոլիկ և հայ - բողոքական, իսկ 700-ը՝ մահմեդական²: Քաղաքում էր գտնվում Կիլիկիո կաթողիկոսարանը, իսկ Սսի մոտակայքում՝ Անարզաբա-յի (Անավարզայի) բերդը³:

1908 թվականի սահմանադրութեան ընդունումը բռնի ոգ-ևորութիւն առաջ բերեց Սսի հայ ազգաբնակչութեան շրջանում: Գավառապետ Մուսա Քյազիմ բեկը ելույթ ունենալով քաղաքի վանքերից մեկում՝ հռչակեց հայ և թուրք ժողովուրդների բարե-կամութիւն և հավասարութիւն⁴: Բացվեցին վարժարանները՝ ա-զատ ուսուցման ծրագրերով և կուսակցական ակումբները⁵: Սա-կայն այդ ամենից հետո էլ շարունակվեցին ձերբակալութիւննե-րը, սպանութիւններն ու բռնութիւնները: 1908 թ. հուլիսի 10-ին՝ երիտթուրքական հեղաշրջման օրը, Սսի մոտակայքում գազանա-բար հռչակեցին երեք հաճընցիներ: Ձերբակալված ոճրագործ-ները հայտարարեցին, որ. «Քրիստոնեաները ջարդելու գաղտնի կազմակերպութիւն մը կա, և թէ իրենք ալ անոր հրամանը գոր-ծադրած են»⁶: Նրանք թեև մահվան դատապարտվեցին, սակայն

¹ Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 193.

² Տե՛ս «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», էջ 151: Հստ մեկ այլ վկայութեան՝ Սիսն ուներ 3700 բնակիչ, որոնցից 3000-ը հայեր էին: Տե՛ս «Հռիփօն», Թիֆլիս, 1910 թ., ապրիլի 1, թիվ 72:

³ Տե՛ս **Տէվէճեան Հ.**, նշվ. աշխ., էջ 96:

⁴ Տե՛ս **Քէլէճեան Մ.**, նշվ. աշխ., էջ 111:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 542:

⁶ **Թէրզեան Յ. Յ.**, նշվ. աշխ., էջ 13:

բանտից փախան և միայն 1910 թ. կախաղան բարձրացվեցին Սսի Բազար Երի կոչվող հրապարակում¹:

Ռամադան² ընթացքում Սսի թուրք հոգևորականն իր քարոզում չվարանեց անգամ նշել, որ. «Մենք գլաուրներու հետ եղբայր չենք կըրնար ըլլալ, անոնց հետ միութիւնը անկարելի է: Շերիաթը բացարձակօրէն կ'արգիլէ այդ բանը, չենք կըրնար մեր ծոցը պահել օձերը, որոնց խայթող ըլլալուն կասկած չունինք»³:

Քաղաքի կաթողիկ վարդապետի (անունը մնում է անհայտ) սադրանքով ձերբակալվեցին Եզնիկ քահանան, Գրիգոր էֆ. Գյոքչյանը և Հարություն աղա Գասպանը, սակայն հարցաքննությունից հետո նրանք ազատ արձակվեցին⁴:

Եվ ահա ապրիլի 1-ին, Զատիկին հաջորդող երկուշաբթի օրը, երբ Աղանայում արդեն արյան գետեր էին հոսում, դեպքերից անտեղյակ սսեցիները ավանդույթի համաձայն հավաքվեցին մոտակա դաշտում՝ դիտելու հայ և թուրք ըմբիշների մենամարտերը: Թուրքերը բոլոր անցուդարձներից տեղյակ և մինչև ատամները զինված, պատրաստվել էին թուրք ըմբիշի պարտության դեպքում, առանց հապաղման, սկսելու կոտորածը: Բարբախտաբար, սսեցի հայասեր թուրքերից մեկը հայերին զգուշացնում է հնարավոր վտանգի մասին, և ըմբիշի պարտության միջոցով հայերը կարողանում են առժամանակ խուսափել ջարդից, որից հետո թուրքերը հայտարարում են. «Թող գլաուրները օր մ'ալ ապրին»⁵:

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 544:

² Հայտնի է նաև որպէս Ռամազան, Ռամզան, Ռամադհան կամ Ռամաթհան անուններով: Այն իսլամական օրացույցի իններորդ ամիսն է և համարվում է որպէս մուսուլմանական աշխարհի պահքի ամիս: Ռամադանի ժամանակ մահմեդականները հիշատակում են Մուհամմեդ մարգարեի առաջին հայտնությունը:

³ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 544:

⁴ Տե՛ս անդ, էջ 541:

⁵ Անդ, էջ 545:

Ապրիլի 2-ին Սիս հասավ Սայ-Կեչիտի ողբերգության լուրը, որտեղ սպանվել էին 30 անմեղ բողոքական քարոզիչներ, այդ թվում նաև Սսի 38-ամյա հովիվը՝ Մելիտոն Մալյանը¹։ Շատ ծանր տպավորություն թողեց նաև 28-ամյա Միքայել ծ. վրդ. Աջապահյանի նահատակության լուրը, որն իբրև կաթողիկոսական փոխանորդ գատկական արարողություններին մասնակցելու համար ուղարկվել էր Միսիս, սակայն տեղի խուժանի կողմից վայրագորեն խոշտանգվել էր և անդամահատվել²։

Սահակ կաթողիկոսը, որը պաշարված վիճակում մի քանի օր մնացել էր վանքի մեջ³. «...մինչև որ ռեժիմի փոփոխութեամբ հանդարտութիւն զինուորներու դէպի Ատանա...»⁴, տեսնելով դրույթյան լրջությունը՝ Հաճընից գինված օգնություն խնդրեց Սսի հայերի ջարդը կանխելու համար։ Իր պատասխան հեռագրում Հաճընի առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանը հայտնում էր, որ մինչև՝ «Զեյթունի ուժերն ալ հասնին, մենք արդէն 500 հաճնցիներ ճամփայ հանեցինք»⁵։ Երբ նրա հեռագիրը հասավ Սսի մյուլթեսարիֆին, վերջինս սարսափած շտապեց կաթողիկոսի մոտ և խոստացավ համերաշխ կերպով քաղաքը պաշտպանել բաշիբոզուկներից, միայն թե հաճընցիները չհասնեն Սիս։ Երկար տատամսումներից հետո տեղական իշխանությունը որոշեց զենք բաժանել հայերին։ Ղևոնդ ծ. վրդ. Թուրսարգիսյանի և Գյուլտ ծ. վրդ. Մխիթարյանի գլխավորությամբ կազմվեցին կամավորական ջոկատներ։ Քաղաքի շուրջը կառուցվեցին պատնեշներ, իսկ կա-

¹ Տե՛ս Թէրզեան Յ. Յ., նշվ. աշխ., էջ 159։

² Տե՛ս Զազմագճեան Գ. Յ., Տէր, զի բացցին աչք մեր, Կիպրոս, 1957, էջ 7-9։

³ Տե՛ս Քասունի Կ. Ե., Հանդիպումներ ճանապարհին. դէմքեր, դէպքեր, վայրեր (ծանոթագրութիւններ), Պէյրութ, 2010, էջ 252։

⁴ «Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939)», «Հասկ», Անթիլիաս-Բեյրութ, 1939 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 146։

⁵ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 545։

նայք և երեխաները պատսպարվեցին վերին թաղում և Մայրավանքի պարիսպների հետևում: Ինչպես ի սեր ճշմարտության Մ. Քելեշյանն է նշում, ճակատագրական այդ պահին՝ «Սիսեցի թուրքերն ալ հայերու հետ էին»¹: Թուրքերից և հայերից կազմվեց 50 հոգանոց մի հեծելակ, որոնց հրամանատարներն էին ալբանացի Գոլ Աղասին և թուրք Դելի Մեթոն (Մահմեդ)², և որը դիրքավորվեց ամենավտանգավոր բարձունքի վրա:

Միաժամանակ, Սահակ Բ-ի հրամանով բացվեցին վանքի ամբարները, և այնտեղ եղած ամբողջ հացահատիկն ու մյուս մթերքները բաժանվեցին սովահարներին ու քաղաքի օրհասական պաշտպաններին: Կաթողիկոսը հաճախ էր լինում կռվի առաջին գծում և իր հորդորներով ու խրատներով ոգեշնչում կռվողներին, որոնք նրան երգում էին տալիս մինչև վերջին հնարավորությունը դիմագրել թշնամուն³:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Սսի մյուլթասարիֆը ապրիլի 3-ին հեռագրում է Ադանայի կուսակալին և խնդրում. «Սիսի, Ղարսպագարի շրջակայից մէջ հայոց կեանքը վտանգի մէջ ըլլալով գինուորական ոյժ ղրկեցէք»: «Օգնությունը» չհապաղեց, ուղարկվեց Ռումելիից բերված գինվորական ուժը, որը պատրաստվում էր Սիսում իրականացնել այն, ինչ արդեն կատարել էր Ադանայում, այն է՝ կոտորել հայ բնակչությանը: Իր հերթին Սահակ կաթողիկոսը ապրիլի 4-ին և 7-ին հեռագրեր ուղարկեց Կ.Պոլիս հետևյալ բովանդակությամբ. «Ամէն կողմ ջարդերն ու հրդեհները կը շարունակուին. խնդրեցէք կառավարութենէն շուտափոյթ տնօրինութիւն»: Ապրիլի 9-ին եկավ հուսագրիչ պատասխան, «Դիմումներ կը կատարուին, ուր որ անկ է»:

¹ Անդ, էջ 546:

² Վերջիններս, ինչպես նաև մյուլթասարիֆ Մուհարրեմ բեյը հետագայում պաշտոնազրկվեցին և մահապատժի ենթարկվեցին քեմալականների կողմից:

³ Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 145:

Ապրիլի 14-ին 5000 թուրք գյուղացիներ շրջապատեցին Սիսը և պատգամավորություն ուղարկեցին Գոլ Աղասու մոտ, որպեսզի քաղաքը հանձնվի: Մերժողական պատասխան ստանալով, նրանք անցան հարձակման, սակայն չարաչար պարտություն կրեցին և նահանջեցին՝ թողնելով տասնյակ դիակներ: Արտակարգ խիզախություն դրսևորեց Կիլիկիո աթոռի միաբան Ղևոնդ ծ. վրդ. Թուրսարգիսյանը, որը ստացած վերքերից հետագայում մահացավ 1910 թ. Կ. Պոլսի ս. Փրկչի Ազգային հիվանդանոցում¹:

Նույն օրը Ռումելիից բերված բանակի զինվորական կենտրոնը, որը խուժանի հետ միացած սաստիկ կոտորած էր իրականացրել Ադանայում, հեռագրեց Սիսում գտնվող ուժերին՝ իրենց օրինակին հետևելու կոչով: Սաի զինվորական վարչությունը, հրամանին հնազանդ, գրավեց բերդը և թնդանոթներն ուղղեց քաղաքի վրա: Դրուժյունը դարձավ սպառնալից: Ղևոնդ և Գյուտ վարդապետները դիմադրության աննկուն պատրաստակամությամբ տագնապալի գիշեր անցկացրին՝ կազմակերպելով նոր ջոկատներ և փորելով նոր խրամատներ: Զաբել Նսայանն իր «Աւերակներուն մէջ» գրքում խոսելով Սիսում տիրող խիստ ընկճված տրամադրության մասին, միաժամանակ գրվատանքի խոսքեր է ուղղում սսեցիների հասցեին՝ նրանց կազմակերպվածության համար²:

Այսպիսին էր իրավիճակը Սիսում, երբ բացվեց ապրիլի 15-ի առավոտը, և զարմանալիորեն պարզվեց, որ Կ. Պոլսում դարձյալ հեղաշրջում էր տեղի ունեցել, և նորից իշխանության եկած երիտթուրքերը հրաման էին ուղարկել անմիջապես դադարեցնել կոտորածները: Դեպքերի անմիջական ականատես վերապրող Արամ Զալըգյանը հիշում է, որ Սիսը և Մայրավանքը պաշարված էին

¹ Տե՛ս անդ:

² Տե՛ս **Նսայան Զ.**, *Աւերակներուն մէջ* (վկայագրութիւն), Ստանպուլ, 2010, էջ 192:

թուրքերի կողմից և՛ «Մենք մեր վերջին վայրկեանները կ'ապրէինք...»: Սակայն հանկարծ սպիտակ դրոշը ձեռքին հայերի ուղղությամբ է շարժվում մի թուրք զինվոր, որը կաթողիկոսին է հանձնում Զեյթունի կառավարչի հեռագիրը հետևյալ բովանդակությամբ. «Վեհափա՛ռ, եթէ ոեւէ վտանգ կ'սպառնայ ձեզի եւ ձեր ժողովուրդին, մենք պատրաստ ենք շուտափոյթ օգնութեան հասնելու, եթէ հեռագիրնիս անպատասխան մնայ, մենք կասկածելով ձեր անապահովութեան մասին՝ պիտի յարձակինք, ձեզի օգնութեան հասնելու համար»¹: Կառավարիչն իր նամակով կաթողիկոսից խնդրում էր, որ հեռագրով իրեն տեղեկացնի իր և ժողովրդի անվտանգության մասին՝ անհրաժեշտության դեպքում խոստանալով «զինուորական ոյժով ցրուել խուժանը»: Կաթողիկոսի հեռագրից հետո խուժանը ցրվեց, և երջանիկ պատահականությամբ Սսի բնակչութիւնը զերծ մնաց կոտորածից:

Սսի դեպքերից անմիջապես հետո Սահակ Խապայանը ջարդին մասնակցած թուրք զինվորականների ուղեկցությամբ ուղևորվում է Ադանա: Ճանապարհին իմանալով կատարված ոճիրների մասին, ականատես լինելով կոտորածների սարսափներին, տեսնելով անթաղ մնացած հազարավոր հայ դիակները, հրկիզված հայկական գյուղերը և Ադանայի ավերակները, նա իր մտքի և հոգու զայրույթն է արտահայտում կատարվածի առիթով, բողոքելով, որ. «Եթե իմ Աստուածս այս անօրէններուն, այս գազաններուն ալ Աստուածն է, ես Աստուծոյ չեմ հաւատար»²:

Կոտորածներ տեղի ունեցան նաև Կիլիկիայի այլ վայրերում: Հստ գերմանական միսիոներական առաքելության ներկայացուցիչ Պ. Շեֆերի տվյալների՝ թուրքերը Հաճընում ջարդել էին

¹ «Զեյթունի պատմագիրը», Պուէնոս Ալրէս, 1960, էջ 978:

² Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 910:

տեղի հայ առաքելական եկեղեցու դռները, ապա հրկիզել եկեղեցում ապաստանած 100 հայերի¹։ Բախչեում, նույն Պ. Շեֆերի վկայությամբ, բոլորի աչքի առջև կտրել էին տեղի հայ քահանայի լեզուն, ապա սպանել նրան և նետել ջրհորը, որտեղ կարելի էր դեռևս տեսնել ջրհորից դուրս ցցված նրա ոտքերը։ Իսկ Օսմանիեում ողջակիզել էին տեղի հայկական եկեղեցում ապաստանած 500 գաղթականների²։

Կիլիկիայի որոշ շրջաններ զերծ մնացին կոտորածներից հայ հոգևորականության աշալրջության, խոհեմության, դիմադրության խելամիտ կազմակերպման և ինչ-որ տեղ նաև թուրքերին սպառնալու արդյունքում։ Այսպես, հաճընցիները կարողացան միավորվել և իրենց 13-օրյա կռիվներով ոչ միայն ինքնապաշտպանվեցին և թույլ չտվեցին, որ 10000 հոգուց բաղկացած «խուժանը» մտնի քաղաք և կոտորի Հաճընի հայությանը, այլև փրկեցին Սսի հայությանը Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանի անմիջական սպառնալիքներով։ Վերջինս մի հեռագիր ուղարկեց Սսի մյուսասարիֆին՝ հայտնելով, որ. «Եթէ վտանգէք Սիսի հայերը, 500 ձիաւորով պատրաստ եմ հասնելու Սիս եւ քար քարի վրայ չձգելու»³։

Խոսքը 5000 հաճընցի և գեյթունցի այն քաջերի մասին էր, որոնք պատրաստվում էին արշավել մինչև Ադանա։ Խուճապի մատնված մյուսասարիֆն իսկույն միջոցներ ձեռնարկեց և Ղարս-պազարի հայությունը՝ Ջին Թորոսի ղեկավարությամբ կարողա-

¹ Տե՛ս Մարտիրոսյան Հ., Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919 թթ., գիրք Ա, Երևան, 2016, էջ 61։

² Տե՛ս անդ, էջ 62։

³ «Ցեղասպանութենէն վերապրող Հաճընի հպարտ զաւակ Ասատուր Զալեանի յուշերը», Լոս Անջելես, 2015, էջ 116։

ցավ բարեհաջող կերպով նահանջել դեպի Սիս և փրկվել կոտորածից¹։

Դիմադրության արդյունքում փրկվեց նաև Տարսոնի եկեղեցում ապաստանած և դիմադրություն կազմակերպած հայությունը։ Այդ մասին միսիոներ պատվելի Հերբերտ Ադամս Գիբոնսը Կ. Պոլիս ուղարկված 1909թ. ապրիլի 28-ի իր հաղորդագրության մեջ նշում էր. «...թուրքերը կրակին են տվել Տարսոնի հոյակապ հայկական հնագույն եկեղեցին՝ քաղաքի ամենակարևոր շինությունը։ Նրանք ոչնչացրել են մարմարյա արձանները և ջարդել պատմական կարևոր նշանակության հուշատախտակներ։ ...սակայն եկեղեցին դիմադրել է իրեն հրդեհելու՝ նրանց փորձերին։ Բարեբախտաբար, այնտեղ քիչ մարդ է սպանվել»²։

Լինում էին դեպքեր, երբ հայ հոգևորականները հայերին փրկելու համար օգտագործում էին «մեկ հայ մեկ ոսկի» բարեգործական միջոցը։ Ադանայի դեպքերի ականատես-վերապրող Արուսյակ Վանեսյանը (ծնվ. 1909 թ.) վկայակոչում է, որ Ադանայի ջարդերի ժամանակ, երբ ժողովրդի մի մասը պատսպարվել էր եկեղեցում, Թոքատի կաթոլիկ գերապայծառ սրբազանը՝ «Ոսկիները քսակին մեջ լեցուցած կուգա, ամեն մեկ հայի կյանքի համար մեկ-մեկ ոսկի կուտա, կազատե»³։

Մեծ է նաև Հայ Առաքելական եկեղեցու սպասավորների հաղորդած տեղեկությունները Կիլիկիո կաթողիկոսության հեռավոր թեմերում կազմակերպված կոտորածների, հայ որբերի և այրիների անմխիթար վիճակի մասին։ Այս առումով չափազանց ար-

¹ Տե՛ս Թաթուկեան Գր., Անթեղում զաղտնիքներ, Պէյրուս, 1967, էջ 204-05։

² Գիբոնս Հելեն Դավենպորտ, Տարսոնի կարմիր գորգերը. Մի կնոջ հուշերը 1909 թվականի հայկական կոտորածների մասին, Երևան, 2015, էջ 188։

³ Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանությունը. Ականատես վերապրողների վկայությունները, էջ 436։

ժեքավոր են Սահակ քհն. Մոմջյանի (Հալեպի Հայոց առաջնորդական տեղապահ՝ Շահե վրդ. Գասպարյանին ուղղված 1909 թ. հուլիսի 17-ի, օգոստոսի 10-ի, օգոստոսի 12-ի, օգոստոսի 14-ի), Մեսրոպ քհն. Աֆարյանի (Հալեպի Հայոց առաջնորդական տեղապահ՝ Շահե վրդ. Գասպարյանին ուղղված 1910 թ. հունվարի 9-ի, փետրվարի 11-ի, հուլիսի 14-ի, դեկտեմբերի 25-ի) և Հարություն քհն. Թամայանի (Հալեպի Հայոց առաջնորդ՝ Տ. Ներսես եպիսկոպոս Դանիելյանին ուղղված 1913 թ. ապրիլի 14-ի) նամակները 1909 թ. Անտիոքում կազմակերպված կոտորածների մասին:¹

Այսպիսով, Կիլիկիո կաթողիկոսությունը Կիլիկիայի 1909 թ. դեպքերի ժամանակ մեծ դժվարությամբ մաքառեց և վերապրեց կոտորածների, բռնությունների ու հալածանքների ահասարսուռ մի ժամանակաշրջան, որն ամեն քայլափոխի ուղեկցվում էր մահմեդական անհանդուրժողականության և կրոնական մոլեռանդության բացահայտ դրսևորումներով:

1.6. Կիլիկիո Հայոց կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքը 1909-1914 թթ.

ա) 1909 թ. կոտորածների հետևանքները և հայ հոգևորականների հետագա նակատագիրը: Կիլիկիայի 1909 թ. կոտորածներից հետո կյանքը Ադանայի նահանգում աստիճանաբար վերականգնվեց և շարունակվեց իր հին ընթացքով: Կիլիկիահայությունը նորից վերադարձավ իր խաղաղ, ստեղծագործ աշխատանքին՝ փորձելով դարմանել իր վերքերը և լավատեսությամբ սպասել իրադարձությունների հետագա զարգացումներին: Ինչպես 1909 թ.

¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մինասեան Մ., Անտիպ փաստաթուղթեր 1909-ի Անտիոքի հայոց կոտորածին մասին, Բ, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2017, տարի 5, թիվ 2, էջ 48-67:

ապրիլյան դեպքերի ժամանակակից և մասնակից Հաճընի հոգևոր առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանն է նշում. «Ո՛վ տարաբախտ ժողովուրդ Հայոց Կիլիկիոյ, դու որ հոգեւարսուռ ու սոսկալի հարուածներու լախտին տակը ջախջախուած կեանք մը կ'ապրիս հիմա, նոյն հարուածներու տակ ոչ նուազ ջախջախուած, բայց սակայն ո՛չ երբէք ընկճուած կամ յուսահատած...»¹:

Առժամանակ մնալով Ադանայում՝ Սահակ Բ կաթողիկոս խապայանը աշխատեց օգնել և մխիթարել իր հոտին: Նա այցելեց ավերածությունների ենթարկված բոլոր քաղաքներն ու գյուղերը և գրեթե 8 ամիս շրջագայելուց հետո միայն կարողացավ նորից հետ վերադառնալ կաթողիկոսական նստավայր՝ Սիս:

Կոտորածների ընթացքում անդառնալի կորուստներ էր կրել և խաթարվել էր հատկապես եկեղեցական կյանքը: Սակայն կոտորածներից հետո էլ իշխանությունները խժոժությունների մեղավորներին հայտնաբերելու պատրվակով հալածանքներ սկսեցին և ձերբակալություններ իրականացրին ինչպես Կիլիկիայի հայ ազգաբնակչության մյուս խավերի, այնպես էլ հոգևորականության ներկայացուցիչների նկատմամբ: Կ. Պոլսի պատրիարք Ե. Դուրյանը կաթողիկոս Մ. Իզմիրլյանին ուղղված 1909 թ. դեկտեմբերի 31-ի իր նամակում տեղեկացնում էր, որ Ադանայի պատերազմական ատյանները բանտարկում և դատապարտում էին նույնիսկ եկեղեցականներին²: Զենք - զինամթերք փնտրելու պատրվակով ազգային գործիչների հետ բանտարկվեցին նաև Զեյթունի առաջնորդ Վաղարշակ վրդ. Արշակունին, Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանն՝ իբրև «գրգռիչ ատենախօսութիւններ ընող»³ և Դյորտ-Յոլի առաջնորդական փոխանորդ Տեր

¹ Դանիելեան եպսկ. Ն. (Սսական վարդ.), Կաթիլ մը ջուր ալրած սրտերու, Կ. Պոլիս, 1912, էջ 39:

² Տէս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 2:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 82րջ.:

Սահակ քահանան միայն այն բանի համար, որ նրանք հանդգնել էին պայմանավորվածություններ ձեռք բերել Զեյթունի, Հաճընի, Չոք-Մարգվանի և լեռնային մյուս շրջանների մահմեդական ազգաբնակչության հետ հայկական գյուղերին վնաս չհասցնելու համար, որով իշխանություններին «շատ ախորժ չէին պատճառած»¹։ Ձերբակալության առիթով Սահակ Բ խապայանն իր խիստ դժգոհությունն ու բողոքն է հայտնում իշխանություններին՝ նրանց կշտամբելով, որ եթե հոգևորականներն «ըմբոստ եւ ժողովուրդը ապստամբեցնող են, ուրեմն կը նշանակէ թէ ես ալ ապստամբապետ մըն եմ... Ուստի թող ինձմէ առնուի կայսերական ֆերմանը եւ ես ալ դատուիմ իբր ըմբոստ...»²։ Կաթողիկոսի դժգոհությունը տալիս է իր արդյունքը և հոգևորականներն ազատ են արձակվում³։ 1910 թ. հուլիսին իթթիհատական հեղաշրջման ազգային տոնի առիթով արդարացվում է նաև Մուշեղ եպս. Սերոբյանը⁴։

1909 թ. զարհուրելի իրադարձությունները ծանր հետևանքներ թողեցին կոտորածներից մի կերպ փրկված հայ հոգևորականության գոյապահպանության վրա, քանի որ նրանցից շատերը հայտնվել էին նյութական անդառնալի վիճակում և ոչնչով չէին տարբերվում սովորական գաղթականներից։ Կենսապայմաններն ազդում էին նաև ֆիզիկական գոյության վրա։ Սիմոն Զավարյանը հաշվել էր, որ, օրինակ, եթե Ադանա քաղաքի Հայ ավետարանականների համայնքում նախկինում տարեկան լինում էր 30-35 մահվան դեպք, ապա կոտորածից հետո այդ թիվը կտրուկ աճել էր. ջարդին անմիջապես հաջորդած երեք ամիսների ընթացքում նույն համայնքից մահացել էր 55 հոգի, իսկ հետագա

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 14, թ. 9, նաև **Թորոսյան Շ.**, Կիլիկիայի հայությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Բեձ, 1968, թիվ 3, էջ 218։

² «Ատանայի հայոց պատմություն», էջ 305։

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 14, թ. 5 շրջ., 7-11։

⁴ Տե՛ս Ե. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեգյան, գ. 283դ, թ. 7։

9 ամիսներին (1909 թ. հունիս-1910 թ. մարտ)՝ ևս 110 հոգի, այսինքն՝ 12 ամսում՝ 165 հոգի, ասել է թե՛ նորմալ ժամանակից 5 անգամ ավելի¹:

Հոգևորականության օժանդակելու և նրանց աշխատանքով ապահովելու խնդրին էր միտված Սահակ Բ կաթողիկոսի՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Իզմիրլյանին ուղղված 1909 թ. նոյեմբերի 22-ի թիվ 2435 նամակը²:

Կիլիկյան կոտորածների արդյունքում կիլիկիահայությունը կանգնեց նաև բռնի կրոնափոխության և ազգային ուժացման վտանգի առջև: Քիչ չէին դեպքերը, երբ թուրքերը կրոնափոխության պարտադրանքի դիմաց խոստանում էին փրկություն, բայց շատ անգամ դրժում էին իրենց խոստումը և կոտորում հայերին: Այդ առումով հատկանշական է ջարդերից մազապուրծ եղած Խառնիի սպանված հայ քահանայի կնոջ նամակի այն հատվածը, որը վերաբերում է բռնի կրոնափոխության խնդրին: Այդ մասին նա հիշում է. «Թուրքերը գտած ըլլալով մեր պատսպարուած վայրը, մեզմէ դրամ պահանջեցին: Այնուհետեւ մեզի ազդարարեցին ուրանալ մեր կրօնքը, թուրք դարձնելու համար...: Տուգճեանը եւ որդին Սամուէլը, աղայի մը առաջարկեցին 80 թրքական ոսկի, որպէս կեանքի փրկագին: Թուրքը դրամը առաւ եւ զիրենք երկու օր հիւրընկալեց, յետոյ փորձեց զանոնք կրօնափոխ դարձնել: Երբ անոնք մերժեցին, սպաննեց զիրենք»³:

Հատկանշական է, որ հայ հոգևորականները հաճախ հրաժարվում էին կրոնափոխության առաջարկից՝ գերադասելով մեռ-

¹ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910 թ., ապրիլի 2, թիվ 73:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց. 2, գ.1850, թ. 2 շրջ. - 3:

³ Վեր. Աւագեան Ա., Վկայագրութիւն. Հաւատքի ծառայական ճանապարհորդութեան մը Հասանալէյլէն (Կիլիկիա) Սառնիա (Գանատա), Պէյրութ, 2010, էջ 341-342:

ներ, քան թե մահմեդականություն ընդունել: Անձնագոհ, քաջասիրտ և «ազնիւ հոգի կրող» օրինակելի հոգևորականի այդպիսի կերպար էր Հասան Բեյլիի 80-ամյա քահանա Տեր Պետրոս Քեշիշյանը՝ «Աստուծոյ պաշտոնեայ ու ժողովրդին անձնուէր հովիւը», որն արիաբար պաշտպանեց գյուղը, չբաժանվեց ժողովրդից և գերադասեց ծնրադրած նահատակվել ու մերժել մահմեդական կրոն ընդունելու առաջարկը, ասելով, որ ինքը. «...նախամեծար կը համարի այս զուլումի ու զալըմի երկրէն երկինք փոխադրուիլ մահուամբ, քան կրոնափոխ ըլլալ...»¹:

Բնակչության ուժացման խնդիրն ուներ ճակատագրական նշանակություն: Այդ մասին էր փաստում Կ.Պոլսի Հայոց Միացյալ ընկերության ժողովի ատենապետ Հովակիմյանը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Իզմիրլյանին ուղղված 1909 թ. հոկտեմբերի 22-ի իր նամակում, երբ նշում էր, որ Կիլիկիայում 10.000 մարդ կանգնած էր ուժացման վտանգի առջև²:

բ) Անօթևանների խնամատարությունը և որբախնամ գործունեությունը: Կոտորածների անմիջական հետևանքը չքնաղ Կիլիկիայի ավերածությունն էր և հազարավոր անօթևան ու սովամահության եզրին կանգնած հայ խլկաների առաջացումը: Այս մասին է փաստում Կ.Պոլսի հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը Ամենայն Հայոց կաթողիկոս Մ. Իզմիրլյանին ուղղված 1909 թ. դեկտեմբերի 31-ի թիվ 108 գրության մեջ, երբ նշում է, որ. «...ամէնուրեք համատարած թշուառութիւն և կարօտութիւն կը տիրէ: Կարօտեալներու թիւը 80000 կը հաշուուի, 7-10.000 երկսեռ որբեր, բազմաթիւ նորատի կիներ, այրի և անպաշտպան կը մնան և թշուառներու այս մեծ բազմութիւնը կորսուած ամէն բան, կը տուայտի կիսամեռ թշուառութեան մէջ»³:

¹ Դանիէեան եպսկ. Ն. (Սսական վարդ.), նշվ. աշխ., էջ 40-41:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 5:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 14, թ. 7:

Արևմտահայ ազգային և հոգևոր գործիչներն ու կազմակերպությունները, որոնք ժամանակին խորությամբ չգիտակցեցին ցեղասպանության շղթայի Կիլիկիայի 1909 թ. քստմենլի ջարդերի «կապող օղակի» ողջ խճանկարը¹, իրենց ուշադրությունը կենտրոնացրին հիմնականում տնտեսական վնասների հաղթահարման, անօթևաններին և որբերին աջակցելու աշխատանքների ուղղությամբ:

Մեծ թիվ էին կազմում անտերունչ որբերը՝ զրկված և՛ հորից, և՛ մորից: Ո՞վ պետք է փրկեր որբ մանուկներին, և ովքե՞ր էին սրբելու նրանց արցունքները: Եկեղեցին սատար կանգնեց իր ծնողագուրկ զավակներին, փութաց ու հասավ այնտեղ, ուր կարոտյալ ու լացող որբ կար: Որբերի հավաքման և նրանց ապրեցնելու դժվարագույն գործը գլուխ բերելու համար Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը ստեղծեց «Ադանայի արկածելոց նպաստող հանձնաժողով», «Կիլիկիոյ կեդրոնական յանձնախումբ», որոնք անմիջապես ձեռնամուխ եղան իրենց պարտականություններին կատարմանը²:

Համոզվելով հայերի անմեղսունակության մեջ, իշխանությունները, նրանց հետ միասին նաև ազգային-հոգևոր մարմինները, սկսեցին օժանդակություն ցուցաբերել հազարավոր որբերի և այրիների նկատմամբ: Այդ առումով հատկանշական է Կահիրեի Հայոց առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Հակոբյանի 1909 թ. ապրիլ 10/23-ի կոչն ուղղված կահիրեաբնակ հայությունը³:

¹ Տե՛ս Ավագյան Գ., Կիլիկիայի հայության 1909 թ. կոտորածների արձագանքները, «Վէմ» համահայկական հանդես, 2009 թ., թիվ 1(26), ապրիլ-հունիս, էջ 173:

² Տե՛ս «Արեւելեան մամուլ», շաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Իզմիր, Զմիւռնիա, 1909 թ., ապրիլի 21, թիւ 17, էջ 583-584:

³ ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 3, թ. 2-3:

Համանման բովանդակություն ուներ նաև Ադանա ուղարկված եգիպտահայերի պատվիրակության 1909 թ. ապրիլի 17-ի գրությունն ուղղված Եգիպտոսի Հայոց առաջնորդ՝ Մկրտիչ ծ. Վրդ. Աղավնունուն¹։

Խոսելով կիլիկիահայերի օգնության մասին՝ Սահակ Բ Խապայանը Մատթեոս Բ Իզմիրլյանին ուղղված 1909 թ. մայիսի 13-ի իր նամակում նշում էր, որ. «...Կիլիկիան յօշոտուած, կողոպտուած և հրդեհուած է... պէտք ունին կովկասահայք, պէտք ունին պարսկահայք, ինչպէս և տաճկահայք բոլորանուէր գործողի, իսկ կիլիկեցիք՝ գութի և կարեկցութեան։ Ամենաողորմածին թերևս ներկայանաք. մի՛ մոռնաք, որ Զեր կիլիկեցի զաւակները կարօտ են երկնային առատագեղ կրկին ողորմութեան»²։

Ադանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը 1909 թ. մայիսի 25-ին Կահիրեից կոչով դիմում է համայն հայությանը՝ կիլիկիահայ որբերին, այրիներին ու ծերունիներին սովից փրկելու հորդորով։ «Օգնութի՛ն բոլոր որբերուն եւ որբուհիներուն,- ասված էր կոչում,- որոնք տառապանքը սնունդի տեղ կը խմեն եւ աւերակները, մոխիրները իրենց արցունքով կը թրջեն, մահուան ու արիւնի բաժակը մինչև մրուրը քամած։ Օգնութի՛ն անհայր-անմայր մանկիկներուն, որոնց սնունդ մատակարարող ստինքները չորացած ու կատաղօրէն փրցուած են թիւրք մոլեռանդներու ձեռքով... Օգնութի՛ն այդ խոշտանգուած, խաչուած, կենդանուոյն այրուած, մահուան տանջանքն ու չարչարանքին բոլոր վայրագ տեսակետներու փորձը իր վրայ կրած, մարտիրոսացած ժողովուրդի մը մնացորդ զաւակներուն, անժառանգներուն, որբերուն, այրիներուն, որոնց անունով ու ձայնով կոչում կ'ընեմ

¹ ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 3, թ. 11։

² Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 13, վավ. 403 (168), նաև «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», էջ 267-268։

ձեզի, անոնց ցաւը իմ կուրծքիս տակ ու անոնց արիւնոտ արցունքը աչքերուս խորը: Օգնութի՛ն, օգնութի՛ն, օգնութի՛ն ... եթէ չէք ուզեր որ ի սպառ բնաջնջուի Կիլիկիան»¹:

Մնալով Ադանայում՝ Սահակ կաթողիկոսն աշխատեց օգնել և մխիթարել անօթեաններին և որբերին: Նա Փառեն ծ. վրդ. Մեղրոնյանին նշանակում է Կիլիկիայի ազգային որբանոցների տեսուչ՝ խաչատուր Գռուզյանի օգնականը: Հետագայում՝ 1910-1913 թթ. Փառեն ծ. վրդ. Մեղրոնյանը նշանակվում է Դյորթ-Յուլի և Հասան-Բեյլիի ազգային որբանոցների տեսուչ²: Խոսելով օգնության հարցում կաթողիկոսի անմիջական դերակատարութեան մասին՝ Զ. Եսայանը իր ամուսնուն՝ Տիգրանին 1909 թ. սեպտեմբերի 3-ին Ադանայից գրած նամակում նշում էր, որ. «...տարօրինակ, աննկարագրելի ազդեցութիւն ըրաւ իմ վրաս կաթողիկոսը. կարծես պատմութենէն իջած դէմք մըն է, մեծ հաճույքով զինքը վեհափառ կը կոչիմ, և առաջին անգամ է, որ կյանքիս մէջ հպարտութեան զգացումներ կ'զգամ. ինծի կը թուի, որ մեր պատմութեան մեծ դեմքերէն մեկն է, որ վերադարձած կեանքի՝ Կիլիկիոյ ազարակներու մէջ կը թափառի»³:

Զնայած Կիլիկիայի նյութական ու բարոյական պայմանները բոլորովին աննպաստ էին որբանոցներ բացելու համար, բայց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, այնուամենայնիվ, գերադասեցին 8000 կարոտյալների և 7000-10000 որբերի հիմնական զանգվածը պահել Կիլիկիայում: Այդ մասին տեղեկացնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը՝ Ամենայն հայոց կաթողիկոս

¹ «Տարագ», Թիֆլիս, 1909 թ., թիւ 5-6, մայիս-հունիս, էջ 69:

² Մեղրոնեան եպս. Փ., Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 14:

³ Եղ. Զարեցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Զապել Եսայան, գ. 234, թ. 9-10:

Մատթեոս Բ Իզմիրլյանին ուղղված 1909 թ. դեկտեմբերի 31-ի իր թիվ 417 նամակում¹։

1909 թ. կոտորածներից հետո Ազգային պատվիրակութ-
յունը Կարմիր խաչի հանձնաժողով ուղարկեց Կիլիկիա, որի կազ-
մի մեջ էին Զապել Եսայանը (տնօրինուհի), բժիշկներ՝ Խ. Բոնա-
պարտյանը, Զ. Պզտիկյանը, Սուրյանը և Միրզոյանը, օրիորդ Սա-
թենիկ Օհանջանյանը և մի դեղագործ։ Նրանք որբանոցներ կազ-
մակերպեցին Ադանայում, Այնթապում, Ուրֆայում, Մերսինում,
Դեոթ-Յոլում, Հասան-Պեյլիում, Մարաշում, Հաճընում և միջոց-
ներ ձեռք առնվեցին որբերի վիճակը բարելավելու ուղղությամբ։
Այդպիսի որբանոցներից մեկի մասին Զ. Եսայանը հիշում է. «Այս
շաբթու կը բանանք Ատանայի մէջ առժամեա որբանոց մըն ալ,
մինչև որ գործը այս վիճակին բերի հոգիս բերանս եկալ»²։ Միա-
ժամանակ, օգնություն ցույց տրվեց հիվանդ և կարոտյալ գաղ-
թականներին և կազմակերպվեց մեծ հանգանակություն³։

Հաճընի մեջ բացվեցին նաև գուլպայի և կարպետի, իսկ
Այնթապում՝ ձեռագործի արհեստանոցներ, որտեղ աշխատում
էին կանայք և չափահաս որբ աղջիկներ։ Դրանք համապատաս-
խանաբար գտնվում էին Կիլիկիո կաթողիկոսության, Կ. Պոլսի
պատրիարքարանի կողմից ստեղծված Այրիախնամ մարմնի և
Բարեգործականի ենթակայության ներքո⁴։

Կիլիկիո որբախնամ կենտրոնական հանձնաժողովը 1909
թ. հոկտեմբերի 10-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կազմած
թիվ 1528 նամակով դիմում է ս. էջմիածին Ամենայն Հայոց կաթո-
ղիկոսին՝ Արևելյան Հայաստանի և Ռուսաստանի տարածքում

¹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 7-11։

² Եսայան Զ., Նամակներ, Երևան, 1977, էջ 99։

³ Տե՛ս Եղ. Զարենցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Զապել Եսայան, գ. 233, թ. 6-8ա։

⁴ Տե՛ս Կիլիկեաբեան Բ., նշվ. աշխ., էջ 911։

դրամական օգնություն գործը փութացնելու խնդրանքով¹ պահանջելով աչքաթող շանել կիլիկյան որբերին, որոնք՝ «...իրենց ինքքեն, գոյքեն ու ամէն բանէ զրկուած՝ կը հեծեն, անմոռնչ, կարօտ պատառ մը հացի ողբալով իրենց դառն ճակատագիրը»²։

Համանման բովանդակությամբ մեկ այլ նամակ էջմիածին է ուղարկվում դեկտեմբերի 18-ին³։ Որպես այդ երկու նամակների ընդհանուր պատասխան էջմիածնի սինոդը Կ.Պոլսի ԿՈԿԷ-ին տեղեկացնում է, որ ուղարկում է իր անդամների կողմից հանգանակված 100 ռուբլին⁴։ Վերջնական արդյունքում, Կովկասում և Ռուսաստանում Կիլիկիայի կարոտյալների համար հավաքվեց 3000 ռուբլի օգնություն⁵։ Կ. Պոլսի հայոց հրաժարյալ պատրիարք Եղիշե արք. Դուրյանը 1909 թ. դեկտեմբերի 23-ին շնորհակալություն հայտնելով Ամենայն հայոց կաթողիկոսին 3000 ռուբլի ուղարկելու համար, միաժամանակ գրում էր, որ ճիշտ կլիներ, եթե, «Ձեր Վեհափառութեան միջոցաւ Ռուսիոյ պատուական մեր եղբայրները վիճակին մօտէն տեղեակ լինեն եւ ըստ այնմ շարունակեն տածել գութ եւ հոգածութիւն իրենց տառապեալ եղբայրներու մասին»⁶։

1910 թ. հունվարի 15 (28)-ին ԿՈԿԷ-ի ղեկավարությունը վերջին անգամ դիմեց էջմիածին և խնդրեց՝ «Ռուսաստանի եղբարց որբասէր զգացումը ուղղել դէպի Կիլիկեան որբերը»⁷։ Բայց, ավա՛ղ, ռուսահայությունից ստացված 3000 ռուբլին առաջին և վերջին օգնությունը եղավ Կիլիկիայի որբերին ու այրիներին։

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 3-5։

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 4։

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 3-5։

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 8-9։

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 6 և 6 շրջ.։

⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 6 և 6 շրջ.։

⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 17-18 և 18 շրջ.։

Աղետյալներին ֆինանսական օգնություն ցույց տալու գործում անմասն չմնաց նաև օսմանյան պետությունը, որը տրամադրեց 250.000 օսմանյան ոսկի, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսությունը և Կ. Պոլսի պատրիարքությունը: 1910 թ. հունվարի 10-ին Ադանայի հոգևոր պետերը՝ Ադանայի Հայոց Առաջնորդական փոխանորդ Արսեն քհն. Յեմենիճյանը, Ադանայի Հայ բողոքականների հոգևոր առաջնորդ Համբարձում Աշճյանը, Ադանայի Հին ասորիների պատրիարքական փոխանորդ էլ-Գաս Մանսուրը, Ադանայի Հայ կաթողիկեների առաջնորդական փոխանորդ Հարություն Քեքլիկյանը, Ադանայի ասորի և հույն կաթողիկեների պատրիարքական փոխանորդ էլ Խուրի Փիլիպպոս Շազգալը, Ադանայի քաղղեական պատրիարքական փոխանորդ էլ-Գաս Իստիֆան Մազսապուհն իրենց երախտագիտությունը հայտնեցին սուլթան Մեհմեդ V Բեշատին, նախարարներին, Պետական խորհրդին, Օսմանյան Երեսփոխանական ժողովի անդամներին՝ «ցավերուն դարման եւ վերքերուն սպեղանի հայթայթելու» և աղետյալներին 250.000 օսմանյան ոսկի օգնություն տրամադրելու համար: Մատուցած առանձնահատուկ աջակցության, օգնության և անձնվեր ծառայության համար խոր երախտագիտություն էր հայտնվում հատկապես Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապալանին, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանին, մյուս ազգությունների ու հարանվանությունների պատրիարքներին և հայ գաղթօջախների ներկայացուցիչներին¹:

Կիլիկյան սպանդից ողջ մնացած և ծնողազուրկ երեխաների մի մասի հոգաժությունն ստանձնեցին նաև տարբեր ազգությունների և երկրների կաթողիկ ու բողոքական միաբնակները, որոնց անմիջական քարոզչության ազդեցության ներքո հետագա տարիներին Կիլիկիայում աճեց բողոքականություն ընդունած հայերի թվաքանակը:

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 271-272:

գ) Տարագրության և դավանափոխության հարցը: Կիլիկիայի 1909 թ. ողբերգությունը բազմահազար նահատակների և բազմամիլիոն նյութական կորուստների կողքին առաջ բերեց նաև տեղի հայ ազգաբնակչության տարագրության նոր ակիճ դեպի հարևան երկրներ: Մասնավորապես, որոշ կիլիկիահայեր կոտորածներից հետո տեղափոխվեցին Հալեպ, իսկ շուրջ 2000 (ըստ որոշ տվյալների՝ 4000)¹ գաղթականներ էլ 1909 թ. ապրիլ-դեկտեմբերին ապաստանեցին Կիպրոսի Լառնակա քաղաքում, որտեղից հետագայում շատերը հետ վերադարձան Ադանա, կամ էլ տեղափոխվեցին այլ երկրներ²: Նշենք, որ Կիպրոսում ապաստանած կիլիկիահայերի առաջնահերթ և հրատապ խնդիրներից մեկը նրանց կրոնական պահանջմունքների բավարարման հարցն էր, քանի որ կղզում չկար հայկական եկեղեցի և հայ հոգևորականություն՝ բացառությամբ Լևկոսում գտնվող կիսախարխուլ մի եկեղեցու: Հաշվի առնելով այդ և մի շարք կարևոր այլ հանգամանքներ՝ Մուշեղ եպիսկոպոսը կարևորում էր հատկապես կիլիկիահայերի վերադարձի հարցը: Նա Եգիպտոսի Հայոց առաջնորդ Մկրտիչ Ժ. Վրդ. Աղափնունուն ուղղված 1909 թ. օգոստոսի 25-ի իր նամակում անհրաժեշտ էր համարում, որ. «...տեղույդ գաղթականներն ալ մեկնին, այս պահուն Ատանա իրենց ներկայութիւնը անհրաժեշտ է: Տան շինութեան և վնասուց հատուցման խնդիրը կը լսենք, թէ ձեռք առած է նոր կուսակալ ճէմալ պէյ. ազարակներու վնասը դրացի թուրք գիւղերէն գանձելով՝ վերաշինելու պիտի սկսի...»³

¹ Տե՛ս АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 15.

² Տե՛ս «Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը», 1909, Լառնազա, խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս Հէրկէլեանի, 1909, Լառնազա, Նիկոսիա, ապրիլ 1, 2010, էջ 2: Հետագայում կիլիկիահայերից շատերը մասնակցեցին Կիլիկիո կաթողիկոսության Կիպրոսի թեմի վերակազմությանը: Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս Հովհաննիսյան Է.Գ., Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940 թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան., Երևան, 2021, էջ 14:

վախցուի, որ դուրսը գտնուողները սոյն ձեռնարկութեանց ար-
դիւնքէն զրկուին»¹։

Մեծ վտանգ էր ներկայացնում նաև Կիպրոսում հայտնված
գաղթականների դավանափոխութեան հարցը, քանի որ հազարա-
վոր կիլիկիահայեր, ելնելով իրենց ազգային անվտանգութունից,
փորձում էին ընդունել բողոքականութուն, կաթոլիկութուն կամ
ուղղափառութուն՝ «յոյս ունենալով որ այս միջոցով կարող կը լի-
նին պաշտպանութիւն գտնել, իրենց բոյնը դառնալ ու նորոգել»²։
Նրանք հավատում էին, որ դավանափոխ լինելով՝ իրենք կստա-
նային եվրոպական մի շարք երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիա-
յի, Ավստրո-Հունգարիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի պաշտպանութու-
նը, կկարողանային ուսանել այդ պետութիւնների ուսումնական
հաստատութիւններում և ստանալ որակյալ ու անվճար բուժօգ-
նութիւն³։ Այդ մասին էր իրազեկում Ռուսաստանի Սինոդի ավագ
դատախազ Ս. Մ. Լուկյանովը՝ արտգործնախարարին ուղղված
1909 թ. դեկտեմբերի 23-ի իր հեռագրում⁴։

Դավանափոխութեան գործում մեծ դեր էր խաղում եգիպ-
տոսում ձևավորված Հայ-ռուսական ուղղափառ կոմիտեն⁵։ Սա-
կայն Կ. Պոլսի Ռուսաստանի դեսպան Ն. Վ. Չարիկովը նշում էր,
որ հայերին հավատափոխութեան դրդում էին ոչ թե կրոնական
համոզմունքները, այլ բացառապէս քաղաքական կամ նյութա-
կան հաշվարկները, որն իհարկե չէր մեղմացնում նրանց իրավա-
բանական կարգավիճակը⁶։

¹ ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 3, թ. 39։

² Աճառեան Հ., նշվ. աշխ., էջ 61։

³ Տե՛ս Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. միսիոներաբարեգործական
կազմակերպութիւնների աշխատանքը Մերձավոր Արեւելքում և Անդրկովկասում,
առաջաբանը և ծանոթագրութիւնները Ռ.Օ. Սահակյանի, Երևան, 2008, էջ 6։

⁴ Տե՛ս АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 15-16, 21 об.

⁵ АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 3.

⁶ Տե՛ս АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 16 об.

Այն, որ հայերն իրոք ամուր կառչած էին իրենց կրոնին, երևում է նաև Կահիրեում Ռուսաստանի դեսպան Ա. Ա. Սմիրնովի 1910 թ. հուլիսի 15-ի նամակից՝ ուղղված Կ. Մ. Արգիրովին¹։

Կիպրոսում ապաստանած հայ գաղթականներին օգնելու համար Կ. Պոլսի նպաստից հանձնաժողովը հանգանակեց սկզբում 90, ապա՝ 150 անգլիական ոսկի²։ Գաղթական աղանցիներն իրենց աշխատասիրությունքը և նվիրատվություններով մասնակից դարձան Լառնակայի կոտորածների զոհերի հիշատակին կառուցվող ս. Ստեփանոս եկեղեցու շինարարությունը³։ Մատուցվող օգնության կառուցման համար 1912 թ. ծավալված հանգանակություն աշխատանքներին մեծապես օժանդակեցին Սահակ Բ Խապայանը և Ադանայի հոգևոր առաջնորդ Եղիշե եպս. Կարոյանը։ Կիպրոսի թաղական խորհուրդը 1913 թ. մարտի 9/22 նամակով իր երախտաշատ շնորհակալությունն է հայտնում Սահակ կաթողիկոսին, նշելով, որ. «Առիթէն թոյլատրուելով, համեստօրէն կու գանք յիշեցնել թէ Ձերդ Ս. Օծութեան օրհնեալ անունը յաւէտ միացած պիտի ըլլայ Լառնագայի մատուռին անուան, որուն կառուցումին մեծապէս սատարեցիք։ Մեր որդիական խոնարհ յարգանքները միացնելով մեր ջերմագին շնորհակալութիւններուն,

¹ Տե՛ս АВПРИ, ф. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002, л. 7-8.

² Տե՛ս «Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը», 1909, Լառնագա, էջ 28։

³ Տե՛ս Блохин В., Между православием и англиканством: Роль религиозно-политического фактора в судьбе киликийских армян-эмигрантов в 1909-1910 гг., РЗԱ, 2011թ, թիվ 2, էջ 143։ Եկեղեցին հիշեցնում էր Ադանայի ս. Ստեփանոս եկեղեցին, որի հիմնարկերը դրվել էր 1909 թ. ապրիլի 1-ին, շինարարությունը ավարտվել է 1913 թ. ապրիլի 1-ին, առաջին պատարագը մատուցվել է 1914 թ. մայիսին, իսկ օծումը տեղի է ունեցել՝ 1918 թ. հունիսին։ Տե՛ս «Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը», 1909, Լառնագա, էջ 6, նաև Հայ=Կիպրոս. Հայ գաղութը եւ ս. Մակար, Անթիլիաս-Լիբանան, 1936, էջ 61։

կըմատչիմք խոնարհաբար Ս. Աջոյն ձեր Ամենապատուութեան, որուն ենք ու կը մնանք հաւատարիմ զաւակները»¹:

դ) Հոգևոր-եկեղեցական կյանքի աշխուժացումը: Ադանայի կոտորածներից հետո ամենաողբալին այն էր, որ տարաբախտ ժողովուրդը բացի նյութականից կարիք էր զգում նաև հոգևոր մխիթարության: Բանն այն էր, որ նվազել էր հոգևորականության թվաքանակը, իսկ կաթողիկոսն էլ՝ «գրեթէ առանձին մնացած է ...և ինքնալ կարծես գուժկան մեղած է աղեկեզ նկարագրութեանց»²:

1909-1914 թթ. մեծ ջանքերի գնով վերականգնվեց հոգևոր-եկեղեցական կյանքը, կատարվեցին վարչա-կրոնական փոփոխություններ, և որոշվեց նշանակել թեմական նոր առաջնորդներ: 1909 թ., երբ քաղաքական պատճառներով ձերբակալվել էր Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանը, Սահակ կաթողիկոսը նրա փոխարեն Հաճընի նոր առաջնորդ է նշանակում Փառեն ծ. վրդ. Մելքոնյանին³: Սակայն մի քանի ամիս անց, երբ Հաճընի առաջնորդն արդարացվում է և հետ է վերադառնում, Սահակ Բ Խապայանը 1910 թ. աշնանը Ներսես ծ. վրդ. Դանիելյանին՝ որպես կաթողիկոսական փոխանորդ, ուղարկում է Ադանա: 1911 թ. մայիսին Ադանայի Գավառական ժողովի 42 անդամներից 38-ը հոգևոր-թեմական առաջնորդ են ընտրում արմաշական Շահեն ծ. վրդ. Գասպարյանին, որը 1905-1907 թթ. եղել էր Մերսինի առաջնորդական փոխանորդը⁴:

¹ «Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը», 1909, Լառնագա, էջ 145:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 14, թ. 9 շրջ.-10:

³ Մելքոնյան Խաչ. Փ., նշվ. աշխ., էջ 14:

⁴ 1913 թ. Շահեն ծ. վրդ. Գասպարյանը Պողոս Նուբար փաշայի կրթաթոշակով մեկնում է Ամերիկա աստվածաբանական բարձրագույն կրթություն ստանալու համար, իսկ 1930-1935 թթ. ստանձնում է Անթիլիասի Դպրեվանքի վերատեսչի պաշտոնը: Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 306:

Կոտորածներից հետո 1912 թ. Սահակ Խապայանը կրկին այցելում է Հաճըն, Զեյթուն և Այնթապ, որտեղ ժողովուրդը՝ «մեծ հաճությամբ վայելած է իր ներկայությունը եւ ընդունած է հոգեւոր քաջալերանք ու կազդուրում»¹: 1912 թ. Այնթապում, կաթողիկոսի անմիջական ներկայությամբ, բացվում է Կիլիկիո ճեմարանը², իսկ 1912 թ. հունիսի 12-ին Սահակ Բ Խապայանը Հաճընի ս. Գևորգ եկեղեցում Պետրոս Սարաճյան վարդապետին շնորհում է գավազանի և ծայրագույն վարդապետի աստիճաններ: Այդ նույն ժամանակ էր, որ Պետրոս Սարաճյանի ջանքերով նա Հաճընի ս. Աստվածածին եկեղեցուն կից հիմնեց փառավոր Աղջկանց վարժարանը, որի համար հաճընցիների և Որբախնամ հանձնաժողովի կողմից հանգանակվեց 1750 օսմանյան ոսկի: Շինարարությունը տևեց մեկ ու կես տարի և ավարտվեց 1914 թ. վերջին: Յոթ հարկանի շինությունն ի հիշատակ գրերի գյուտին ստացավ Սահակ--Մեսրոպյան անունը³:

Երկու տարի անց՝ 1914 թ., Սահակ Բ Խապայանը որոշեց եպիսկոպոս ձեռնադրել Պետրոս Ժ. վրդ. Սարաճյանին և իր քարտուղար՝ Գյուտ վրդ. Մխիթարյանին, սակայն արարողությունը ներկա հնչակյանները վերջինիս համարելով անարժան՝ ընդվզեցին կաթողիկոսի որոշման դեմ և խանգարեցին «դաշնակցական» թեկնածուի ձեռնադրությունը: Ներսես եպս. Դանիելյանի և Եղիշե եպս. Կարոյանի բոլոր հորդորները մնացին ապարդյուն: Սաի կառավարիչ Ղարիբ բեյը, որը մի շարք երևելի թուրքերի և ոստիկանների հետ ներկա էր հանդիսությանը, փորձեց միջամտել և

¹ Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 372:

² Սարաֆեան Գ. Ա., Պատմություն Անթեպի Հայոց, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 1953, էջ 905:

³ Տե՛ս «Յուշամատեան նուիրուած Հաճնոյ հերոսամարտի 75-ամեակին», պատրաստեց Կարպիս Գույումճեան, Աթենք, 1995, նաև Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 912:

սաստել խանգարողներին: Սակայն հնչակյանները ծառացան կառավարչի միջամտության դեմ՝ հայտարարելով, որ. «Կրօնական և եկեղեցական խնդիր է այս, և ժողովուրդը իր իրավունքին մէջն է»¹:

Այդուհանդերձ, ընդամենը մի քանի օր անց՝ 1914 թ. մայիսի 1-ին, լուռ և գաղտնի պայմաններում կաթողիկոսը իրականացնում է երկու վարդապետների եպիսկոպոսական նոր ձեռնադրություն, որի մասին նա տեղյակ է պահում Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանին²: Այս ամենն իր արտացոլումն է գտել դեպքերի ականատես Ասատուր Զալյանի հուշերում, որտեղ նա մասնավորապես նշում է. «Հաճրնի ժողովրդի բուռն փափաքին գոհացում տալով՝ Սահակ Կաթողիկոս եպիսկոպոս օծել ուզեց Սարաճեան Պետրոս վարդապետը: Հաճրնցիներ իրենց Առաջնորդին եպիսկոպոս օծուիլը տեսնելու ցանկութեամբ մեծ թիւով գացին Սիս, ես ալ գացի կարգը մը ուսուցիչներու հետ: Սարաճեան վարդապետի եւ Գիւտ վարդապետի եպիսկոպոս ձեռնադրուելու պահուն կարգ մը սիսեցիներ կուսակցական նեղմտութեամբ՝ «Գիւտ վարդապետ օծումի արժանի տէյիլ է» («արժանի չէ») պոռացին ու խափանեցին արարողութիւնը եւ այս իրարանցումին պատճառով պատարագը կէս մնաց եւ օծումը չկատարուեցաւ: Հետեւեալ օրը, Երկուշաբթի, հակառակորդ կողմին հետ գոյացած համաձայնութեամբ, երկու վարդապետներուն օծումները կատարուեցան եւ անոնք ձեռնադրուեցան եպիսկոպոս: Գիւտ վարդապետին «անարժան» պոռացողները հնչակեաններ էին, որոնք անձնական

¹ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 234:

² Տե՛ս Բաբգէն Ա Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 912:

հաշիւներէ մղուած չէին ուզեր անոր եպիսկոպոս օծուիլը: Հաճըն-ցիները փառաւոր կերպով իրենց Եպիսկոպոսը Հաճըն տարին: Մեծ ընդունելութիւն եղաւ մուտքին»¹:

Հոգեւոր-եկեղեցական կյանքի աշխուժացման ճանապարհին 1915 թ. նախատեսվում էր Ժառանգավորաց վարժարանի վերաբացումը՝ կրթված քահանաներ պատրաստելու համար: Սակայն կաթողիկոսության այդ ցանկությունը չիրականացավ քաղաքական նոր իրավիճակի սրմամբ:

Սահակ կաթողիկոսի հոգեւոր-եկեղեցական գործունեության անքակտելի մասն էր կազմում նաև նրա պայքարը բողոքական «րուհճի» և «մուհապեթճի» հակաեկեղեցական աղանդավորական հոսանքների դեմ, որոնք տարածվել էին Կիլիկիայի գրեթե բոլոր մեծ ու փոքր գյուղերում և քաղաքներում: Նրանք իրենց քարոզչությունն իրականացնում էին թուրքերեն, իսկ երաժշտության մեջ օգտագործում էին հայ եկեղեցական շարականներն ու ապաշխարչության երգերը: «Րուհճի»-ներին և «մուհապեթճի»-ներին համեմատելով թոնդրակեցիների հետ, Սահակ Բ Խապալանը մտահոգված էր, որ ժողովուրդը «բարոյապէս փճանալու վրայ է...վա՛յ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Աթոռին»²:

Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան--Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, Հաճընի հայրենակցական վերաշինութեան միութեան կենտրոնական վարչութիւն, 1942, 1903 թ. արքունական պատվանշաններ և ամսաթոշակ ստանալու նպատակով Կ.Պոլսում գտնված ժամանակ Սահակ Բ կաթողիկոսը հետամուտ է լինում Թլանի խնդրի լուծմանը: Սակայն երկու-երեք

¹ «Ցեղասպանութենէն վերապրող Հաճընի հպարտ զաւակ Ասատուր Զալեանի յուշերը», էջ 126-127:

² Պօղոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, 1942, էջ 348:

տարի անց պարզվում է, որ մահմեդական վտարանդիների բնակեցման հարցը վավերականացվել էր Նախարարների խորհրդի կողմից:

Թլանի ագարակի հարցը կարգավորելու համար 1906 թ. Սահակ կաթողիկոսը միաբանության երեք անդամների հետ մեկնում է Ադանա՝ հայասեր տրամադրություններով աչքի ընկնող Պահրի փաշայի մոտ: Միաժամանակ, նա 1909 թ. փետրվարին թախանձագին խնդրագիր և բողոք է ներկայացնում Բ.Դռանը, սատրազամին՝ մեծ վեզիրին, Ներքին գործերի նախարարին և անգամ սուլթանի աղոթասաց հալեպցի արաբ կրոնավոր Աբուլիլային՝ Կիրակոս եպս. Բեքմեզճյանի և Մկրտիչ կաթողիկոս Քեյֆսիզյանի անունով գրանցված վանքապատկան կալվածքներն իր անունով դարձնելու և Թլանի ագարակի մեջ թուրք գաղթականներ հաստատելու կառավարական որոշումը չեղարկելու պահանջով: Նույնիսկ նա իր հրաժարականն է ներկայացնում իշխանություններին՝ իբրև բողոքի նշան հայ եկեղեցու իրավական վիճակի ոտնահարման¹: 3-4 ամիս պայքարելուց հետո Պահրի փաշայի կողմից ստացվում է կայսերական իրադեով հաստատված Նախարարների խորհրդի որոշումը Թլանի ագարակում ո՛չ մահմեդական և ո՛չ էլ քրիստոնյա գաղթականներին բնակեցնելու մասին²:

Պարզվում է, որ Ադանայի կուսակալ Ա. Ջեմալի միջամտությամբ էր, որ չեղարկվել էր Թլանի մասին որոշումը, քանի որ այդ շրջանում բարեկամական հարաբերություններ էին հաստատվել Ս.Խապայանի և Ա. Ջեմալ փաշայի միջև: Միայն դրանից հետո Մ. Քեյֆսիզյան կաթողիկոսի բեհեսնիցի ժառանգորդները 300 ոսկի գումարի դիմաց Սահակ կաթողիկոսի անունով փոխան-

¹ Տե՛ս Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 277:

² «Ատանայի հայոց պատմություն», էջ 294:

ցեցին Մ. Քեյֆսիզյանի կալվածքների իրավունքը: Սահակ կաթողիկոսը ՀԲԸՄ-ի ատենադպիր Վահան Մալեզյանին ուղղված 1910 թ. հունիսի 1-ի նամակում հույս էր հայտնում Թլանի ագարակի օգտակարությունն վիճակը վերականգնելու և այն վանքի նպատակներին ծառայեցնելու համար¹: Իսկ մեկ այլ նամակում նա նախատեսում էր հնարավորություն դեպքում նոր հող գնել ագարակի համար²:

Բանն այն է, որ ժամանակի ընթացքում Սսի կաթողիկոսությունը Թլանի ագարակի պատճառով նյութական մեծ կորուստներ էր կրել, քանի որ վանքի եկամտի գլխավոր աղբյուրը հենց այդ ագարակն էր, որի գործավոր հայ մշակներին սրախողխող անելուց զատ, մահմեդական ավարառուները քշել-տարել էին ագարակի կովերն ու գոմեշները, ապա հրդեհել տարածքի շինությունները: Զրկված լինելով Թլանի եկամտի հիմնական աղբյուրից և հնարավորություն չունենալով պահելու Սսի ժառանգավորաց դպրոցը, Սահակ կաթողիկոսը ստիպված փակում է այն և արձակում ուսանողներին³: Բացի այդ, 1911 թ. երաշտի տարի էր ողջ Կիլիկիայում: Սովի ուրվականը, որը տևեց մինչև նույն թվականի դեկտեմբերը, մղձավանջի պես «կը լլկէր հոգիները»⁴: Սահակ Բ-ն 1911 թ. փետրվարի 20-ին Սսից Վ. Մալեզյանին ուղղված իր նամակում խոստովանում էր, որ. «Ոսկի չունենք, աղքատին բաժինը պղինձն է, այն ալ դժվարութեամբ ձեռք կը բերենք»⁵:

Թեև մինչև 1915 թ. կառավարությունը որևէ գաղթական չի տեղավորում Թլանի մեջ, սակայն կաթողիկոսին էլ չեն հանձնում

¹ Տե՛ս Եղ. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 283բ, թ.4:

² Տե՛ս անդ, թ.6:

³ Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 146:

⁴ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 526:

⁵ Եղ. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 283դ, թ.8:

ազարակի կալվածաթուղթը: Իշխանությունները «մտավախություն» ունեին, որ Սահակ Բ Խաչապանը Մ. Քեյֆսիզյանի նման իբր ցանկանում էր լեռնաբնակ հայերին բնակեցնել Թլանի ազարակում և Անավարզայի կայսերական ազարակի՝ «Անավարզա Ձիֆթլիքի հյուժայուն» հարևանությամբ հաստատել հայաբնակ կենտրոններ: Իսկ արդեն 1922 թ. Կիլիկիայի դատարկումից հետո Թլանը վերջնականապես միացվեց Անավարզայի կայսերական ազարակին և բնակեցվեցին մահմեդական զաղթականներով¹:

զ) Կաթողիկոսության հաւաքերությունները պետության հետ: 1910 թ. Զեյթունում տեղի ունեցավ մի փոքրիկ միջադեպ: Մեկ տասնյակից ավելի լեռնականներ, որոնք խուսափել էին բանակից և պետք է ներկայանային Մարաշի զինվորական ատյա-

¹ Անթիլիասում՝ Կիլիկիայի կաթողիկոսական դիվանատան մեջ պահվում են Կիլիկիայի կաթողիկոսական կալվածքների և Կիլիկիայի 8 քաղաքների (Սիս, Ադանա, Մարաշ, Զիհան, Տարսուս, Մալաթիա, Մերսին, Ձիլիֆիկե) ազգապատկան կալվածքների կալվածաթղթերը, սուլթանական ֆերմանները և թափուները: Սահակ Բ Խաչապանի կաթողիկոսական հրամանով բոլոր այդ կալվածաթղթերի արձանագրությունները, որոնք կազմվել են դեռևս 19-րդ դարում, հավաքվել են Զաքարիա Պզտիկյանի կողմից, որն էլ ֆրանսերենով կազմել է դրանց լման ցուցակը: Այդ ցուցակի մեջ են հաշվառված բոլոր կալվածքների 192 արձանագրությունները, 225 հա հողատարածքի 407 շինություններ, 53 կտոր դաշտագետին՝ 12.000 դյունյում տարածությամբ, որոնց փոխարժեքն այն ժամանակվա գումարով կազմում էր շուրջ 623.000 օսմանյան ոսկեդրամ (1964 թ.-ի դրամական կուրսով՝ 5.000.000 օսմանյան ոսկի, կամ 50.000.000 ԱՄՆ դոլար): Հաշվարկից դուրս են մնացել Հայ կաթոլիկ և Հայ ավետարանական եկեղեցիների, Կիլիկիայի կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող քաղաքների՝ Այնթապի, Մարաշի, Զեյթունի, Հաճընի, Դյորթ-Յոլի, Վահկայի, Կապանի «քված» ազգապատկան կալվածքների հաշիվները: Հետաքրքրական է, որ Ադանայի ազգապատկան կալվածքներից շատերի թափուների մեջ՝ որպես «կալվածատեր» արձանագրվում է՝ «Մարիամ Պինդի Հովակիմ» (Ադանայի ս. Աստվածածին մայր եկեղեցու անունը) անվանակոչումը: Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 878-879:

նին, որոշում են հեռանալ Կիլիկյան Տավրոսի բարձունքները: Նրանց են միանում նաև Զեյթունի շրջակա գյուղերից թաքնված ուրիշ հայ փախստականներ: Զկարողանալով բռնել լեռներում պատսպարված զեյթունցի հայ դասալիքներին, իշխանությունները կալանավորում և Մարաշ են տեղափոխում Զեյթունի Վաղարշակ վրդ. Արշակունուն, որին մեղադրանք են ներկայացնում թաքնված լեռնականներին իբր օգնելու համար: Շուտով Զեյթունում հասունանում է նոր պոռթկում: Իմանալով այդ մասին և չցանկանալով շիկացնել մթնոլորտը, տեղական կառավարությունն ազատ է արձակում Վաղարշակ վրդ.-ին և փոխում է Զեյթունի կայմակամին: Միաժամանակ, լեռնականները Հալեպի կուսակալին են ներկայացնում իրենց խնդրագիրը: Այս դեպքերի մասին «Մշակ»-ը գրում է. «Զեյթունի փոխառաջնորդ Վաղարշակ վարդապետը կը գրե, թե արձակված են նոր բանտարկյալներ, ուրիշներ պիտի արձակին ազգային տոնի առթիւ, հուլիս 10 և թե՛ կառավարութիւնը խոստացած է ալ չհալածել Զեյթունի փախստականները»¹:

Սաի կաթողիկոսության և Ադանայի թուրքական իշխանությունների միջև հարաբերությունները նորից սրվում են այն բանից հետո, երբ 1911 թ. մայիսին կուսակալ Ա. Զեմալ փաշան տեղափոխվում է Բաղդադ, իսկ նրա փոխարեն նոր նահանգապետ է նշանակվում ծագումով չերքեզ ումեյցի Զիկան Մուամմերը, որը մինչ այդ Կեսարիայի մյուլթասարիֆն էր, իսկ ապա Կոնիայի վալին (կուսակալ): Նրա օրոք սրվում են հարաբերությունները նահանգապետի և Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանի միջև: Վերջինս չհանդուրժելով նահանգապետի հողային և դատական չարաշահումները, սուր քննադատության է ենթարկում նրան, որին Մուամմերը Ադանայի առաջնորդարանի դիվա-

¹ «Մշակ», Թիֆլիս, 1910, հուլիսի 3, թիւ 143:

նապետի միջոցով պատասխանում է. «Խորհուրդս տուր ձեր կրօնապետին, որ թէ՛ իր, թէ՛ իմ դիրքս կը պահանջէ որ ամէն խնդրոյ համար, ո՛չ թէ խիստ եւ ամուր՝ այլ կակուղ եւ սակաւ խօսի. հետեանքը անբաղձալի ուղղութեան մը կրնայ երթալ...»¹:

Նահանգապետի և կաթողիկոսության հարաբերությունները ոչնչով չբարելավվեցին նաև հետագա տարիներին: Միհրան Էֆենդի Գարակչոզյանին գրած իր 1911 թ. դեկտեմբերի 13-ի նամակում Սահակ Բ կաթողիկեսը խոստովանում էր, որ. «Այն սև ու կարմիր օրերէն շուրջ երեք տարիներ անցան և մենք տակաւին աչք չ'արտասուս և վրդովեալ հոգւով կը թափառինք իբր ստուեր անմխիթար՝ աւերակաց և մշտնջենաւոր սուգի այս երկրին – Կիլիկիոյ – մէջ, ուր նախճիրներէն վերապրածները կեանքէ աւելի գերեզմանը կը պատկերացընեն, ուր Եկեղեցիներն ու Սրբավայրերը կամ կործանած են հրոյ ճարակ, կամ խրթնացած են իրենց բեմերու պայծառութենէն՝ առանց պաշտօնէի ու դատարկ, ուր չը հնչեր տառապեալներու Աստուծոյն Աւետարանին մխիթարիչ ձայնը... ուր՝ Որբանոցներէն դուրս, դեռ բիւրաւոր անպաշտպան, ընտանեզուրկ որբերու և որբուհիներու երամներ վիրաւոր թռչնոց նման կը թափառին փողոցներու և աղբջուաներու մէջ...»²:

1912-1913 թթ. բալկանյան պատերազմները նոր էին սկսել Ռումելիի ռազմաճակատում, երբ ռումելցի Ձիկան Մուամմերի հրահանգով Ադանայի նահանգում քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ սկիզբ առան նոր սպառնալիքներ: Հայերի տների դռների վրա պատկերվում էին արյունով խաչեր, իսկ պատերին գրվում էին սպառնալից բառեր: Կաթողիկոսարանի բողոքների

¹ 1915 թ., երբ Ներսես վրդ. Դանիելյանը Եոզղաթի առաջնորդն էր, դեպի Սեբաստիա աքսորի ճանապարհին նա սրախողխող է լինում Մուամմերի վրեժխնդիր ցուցմունքով: Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 307:

² «Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915», էջ 97:

հիման վրա, կուսակալն անձամբ ուստիկանական և ժանդարմական զորքերի հրամանատարների հետ միասին Առաջնորդարանում հանդիպում է Սահակ Բ Խապայանին՝ առաջարկելով իր օգնությունը: Սակայն վեհափառը պատասխանում է. «Ո՛չ պատշաճ է, ո՛չ ալ տրամաբանական՝ մեր կողմէ միջոցներ առաջարկել ու թելադրութիւններ րնել: Բաւական է որ ձերդ Վսեմութիւնը զիս ապահովցնէ թէ այս տեսակ սպառնական եւ հանրային անդորրութիւնը խանգարող գրգռութիւններ պիտի չպատահին այլեւս, որպէսզի ես ալ ահարեկումի մատնուած ժողովուրդս ապահովեցնեմ»¹:

1912 թ. Հաճընի կայմակամ նշանակված «Պալքէսիրցի Գառնիկ Ֆիքրի Պէյ»-ի՝ Գառնիկ Վրթանեսյանի պաշտոնավարման օրոք 1913 թ. փետրվարին Օսմանյան բանակի դասալիք մի խումբ հայ զինվորներ, խուսափելով զինվորական իշխանությունների հետապնդումներից, գրավում են Հաճընի Ազգային վարժարանի շենքը, սակայն հարձակման ենթարկելով փախչում են: Շրջակայքի մահմեդական գյուղերի բնակչությունն օգտագործելով պատրվակը՝ բողոքագրեր են ուղղում Սսի կառավարչին և Ադանայի կուսակալ Ալի էմին բեյին, որն էլ դիմում է Սահակ Բ-ին, որպեսզի վերջինս կոչով դիմի Հաճընի հայությունը և տեղի առաջնորդ Պետրոս Ժ. վրդ. Սարաճյանին՝ դասալիքներին ապաստան չտալու համար, քանի որ նրանք՝ «Իրենց հակապետական գործունէութեանց խարիսխ կրնան դարձնել լեռնային Կիլիկիոյ շրջանները...»²:

Հայտնի է, որ 1912-1914 թթ. հայկական հարցի վերաբացման շրջանում, Փարիզում հրավիրված արտաքին գործերի նախարարների ժողովը վերածվեց դեսպանների ժողովի և 1913 թ.

¹ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 308:

² Անդ, էջ 309:

դեկտեմբերից մինչև 1914 թ. մայիս քննարկեց հայաբնակ 6 նահանգներից 2 շրջանների բերանորոգումների ծրագիրը: 1914 թ. գարնանը Կիլիկիայի Մերսին նավահանգստում էր խարսխվել գերմանական մի ռազմանավ, որի ծովակալ (ապա՝ ամիրալ) Սոխոն Երուսաղեմից ծանոթ էր Սահակ Բ-ին: Հանդիպելով կաթողիկոսին՝ նա առաջարկում է դիմել Փարիզի ժողովին և պահանջել, որպեսզի Կիլիկիայի տարածաշրջանն էլ՝ որպես երրորդ մի շրջան, ընդգրկվի բերանորոգումների ծրագրի մեջ: Նա կաթողիկոսին վստահեցնում էր, որ Գերմանիան կպաշտպանի հայերի պահանջը: Դեմ լինելով նմանատիպ առաջարկին՝ Սահակ Բ այդ մասին անմիջապես տեղեկացնում է Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը՝ իր գրության մեջ նշելով, որ. «Կիլիկիան Օսմանեան պետութեան աչքին կասկածելի դարձնելէ...»¹: Պողոս Նուբարն իր պատասխանն նամակում հավանության է արժանացնում Սահակ Բ-ի զգուշավորությունը, այն համարելով վաղաժամ և վտանգավոր:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Սիսում և Կիլիկիայի մյուս քաղաքներում տիրում էր խաղաղ եռուզեռ: Վերելք էր ապրում կրթամշակութային և եկեղեցական կյանքը: 1914թ. մայիսի 1-ին եպիսկոպոսական ձեռնադրության և մյուռոնօրնեքի կապակցությամբ Սիս են ժամանում հազարավոր ուխտավորներ: Այնպիսի տպավորություն էր, որ Սիսը «Հայաստանի մայրաքաղաքի կերպարը առած էր բնակչությամբ ու հանդեսներով»²: Սակայն վրա հասած պատերազմը գահավեժ փոխում է դեպքերի հետագա ընթացքը:

Այսպիսով, Սսի կաթողիկոսությունը Ադանայի կոտորածից հետո շուրջ հինգ տարի անց միայն կարողացավ մասամբ ոտ-

¹ Անդ, էջ 310:

² Թերզեան Ա., Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Աթենք, 1937, էջ 49:

քի կանգնել և զարկ տալ բարենորոգչական և շինարարական որոշ աշխատանքներին: Մինչ հոսսահատ և վշտաբեկ հայրապետը Ադանայի 1909 թ. կոտորածներից հետո աշխատում էր գոնե ազգային միջոցներով «սրբել անթիւ այրիներու և որբերու արցունքները», դպրոցներ և որբանոցներ հաստատել Մայրավանքում և կաթողիկոսութեան մյուս քաղաքներում բռնկվում է Առաջին աշխարհամարտը:

ԳԼՈՒԽ II

ԿԻՒԼԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

2.1. Կիլիկիայի հայ բնակչության բռնաճնշումները և տարագրությունը 1914-1915 թթ.՝ Սսի Հայոց կաթողիկոսության գործունեության լույսի ներքո

ա) Կաթողիկոսության դիրքորոշումը զորահավաքի և դասալուծության նկատմամբ: Առաջին աշխարհամարտի տարիներին իրագործվեց և գործողության մեջ դրվեց հայերի զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության քաղաքականությունը, որի արդյունքում արևմտահայությունը ոչ միայն ենթարկվեց բռնաճնշումների և կոտորածի, այլև զրկվեց իր դարավոր հայրենիքից, և ինչպես Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսն է մատնանշում՝ «իր դարաւոր հայրենի հողէն խլուելով կալի մղեղներու պէս»՝ փշուր-փշուր տարածվեց աշխարհի ծովերում ու ցամաքներում¹:

Սահակ կաթողիկոսի պաշտոնավարման առաջին կեսը՝ մինչև 1921 թ., լի է դժբախտություններով, կոտորածի և տարագրության սրտաճմլիկ դրվագներով: Պատերազմի սկսվելու ժամանակ սսեցիներից շատերը Կիլիկյան Տավրոսի փեշերին էին՝ իրենց լեռնային ամառանոցներում: 1914 թ. հուլիսի 21-ի (օգոստոսի 3-ի) գիշերը Սսի բերդի վրա հսկայական մի խարույկ բոցավառվեց, որը մի տեսակ ահազանգ էր քաղաքի հայ ազգաբնակչության համար: Վերջիններս սոսկումով տուն վերադառնալուց հետո շինությունների պատերին տեսան փակցված հայտարարություններ «սեֆեր-բերլիկի»՝ զորահավաքի վերաբերյալ, որն

¹ Տե՛ս **Նդիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 35:

ինչպես այլուր, այնպես էլ Կիլիկիայում, իրականացվեց մեծ աճապարանքով, և քաղաքը զրկվեց ինքնապաշտպանության ընդունակ բնակչության զգալի մասից:

Արդեն 1914 թ. սեպտեմբերին Հալեպի հայասեր կուսակալ Զելալ բեյը, որը Կարինում, Բաղեշում, Տրապիզոնում և Կ.Պոլսում ուներ բազում հայ բարեկամներ և համախոհներ, Հալեպի Ազգային առաջնորդարանի միջոցով Սահակ Բ կաթողիկոսին ուղղված իր նամակում զգուշացնում էր, որ զեյթունցի հայ դասալիք զինվորներն իբր սնունդ և փամփուշտ հայթայթելու նպատակով գիշերային հարձակումներ էին կազմակերպում և թալանում շրջակայքի թուրքական գյուղերն ու ագարակները: Ուստի, Հալեպի Զինվորական արտասովոր հրամանատարությունը, որը ստեղծվել էր Զեյթունի 1895 թ. դեպքերից հետո, կուսակալի միջոցով խնդրում էր կաթողիկոսին, որ՝ «Գործակցաբար այս խնդիրը յորդորական եւ անոյշ միջոցներով կարգադրուի և զինուորական շարժումի մը առաջքը առնուի»¹:

Նույն խնդրանքով կաթողիկոսին են դիմում նաև Հալեպի հայ երեւելիները, նահանգային ժողովի անդամ՝ Գարեգին Ճիյերճյանը և «Օթել Պարոն» հյուրանոցի սեփականատերեր Մազլումյան եղբայրները, որոնք հույս էին հայտնում, որ Ուլնիայի, Մարաշի, Այնթապի, Քիլիսի և Կիլիկիայի հայաբնակ մյուս վայրերի մեջ «անհաճոյ դէպքերու ծագումին առիթ չտրուելու համար» իրականացվեն կանխարգելիչ միջոցառումներ²:

1914 թ. աշնանը, երբ Օսմանյան Թուրքիան դեռ չէր մտել պատերազմի մեջ, զորակոչիկների շրջանում «զինուորական փախստականներ» փնտրելու պատրվակով և ինչպես Սահակ Բ կաթողիկոսն է նկատում՝ «քաղաքական նպատակներ վերագրելով անմեղ և միամիտ զեյթունցւոց»³, Զեյթունի մյուլթեսարիֆ Հու-

¹ «Ատանայի հայոց պատմություն», էջ 318:

² Անդ, էջ 318:

³ Եղ. Զարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. վ. Մալեզյան, գ. 283գ, թ.9:

սեյն Հյուսնին ձերբակալում է Զեյթունի ավագանու և հոգևորականության 50 ներկայացուցիչների, որոնց մեջ էր նաև Հովհաննես վրդ. Գարանֆիլյանը¹: Զեյթունի հայ մեծամեծները ստեղծված իրավիճակից դուրս գալու հույսով քաղաքի մյուսքեսարիֆի մոտ են ուղարկում երեք հոգևոր պետերից բաղկացած մի պատվիրակություն, որի մեջ էին Զեյթունի առաջնորդ Խաչատուր վրդ. Տեր-Ղազարյանը, Հայ կաթողիկոսների հոգևոր հովիվ Հովսեփ վրդ. Ագրեպյանը և Հայ ավետարանականների ներկայացուցիչ պատվելի Տիգրան Անդրեասյանը: Սակայն բանագնացները ծեծի են ենթարկվում²:

Սահակ Խապայանը շտապում է եղելության մասին Ադանայից տեղեկացնել Կ.Պոլսի Հայոց պատրիարքին, ավելացնելով, որ Զեյթունի շարանենգ մյուսքեսարիֆը վերադառնալով Մարաշ՝ իր հետ բերել էր մի խումբ հայ կալանավորների, որոնց պիտակավորելով որպես «էտէպահներ» (անինքնասերներ - Վ. Հ.), «խալըներ» (դավաճաններ - Վ. Հ.), «ալլագներ» (ստորներ - Վ. Հ.), թուրքական խուժանին կոչ էր արել հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Ըստ էության, նրա սադրիչ գործողությունների նպատակն էր հայերին անհնազանդության մղելը և որպես «ապստամբներ» ներկայացնելը, և որ, իբր, եթե ձերբակալվածներն ազատ արձակվեին, կխախտվեր գավառի անդորրությունը: Զուգապես Սահակ Բ կաթողիկոսը Զեյթունի հայ ազգաբնակիչներին կոչ էր անում լինել զգույշ, համբերատար ու շրջահայաց և պատրվակ չստեղծել զինվորական միջամտության համար³:

Զեյթունցիների ձերբակալության փոթորկագույժ լուրը

¹ Տե՛ս **Նղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 40:

² Տե՛ս **Վէր Կէօրիզեան Ա. Ա.**, Անմոռանալի հուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն. Ազգային դէմքերու եւ դէպքերու կապակցութեամբ, Պէյրուս, 1967, էջ 239-240:

³ Տե՛ս **Նղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 40:

ստանալուն պես Սահակ Բ հապայտանք Ադանայից մեկնում է Հալեպ (որը Զեյթուն-Մարաշ-Այնթապ շրջանի կուսակալության կենտրոնն էր) և հաստատվում քաղաքի Սալիբայի քրիստոնեական պարսպապատ թաղամասում, ուր գտնվում էր ս. Քառասուն Մանկունք Հայոց Մայր կեղեցին և Առաջնորդարանը¹։ Նա տեսակցում է Հալեպի նահանգապետ Ահմեդ Զելալ փաշայի հետ, որին նա համարում էր «պարկեշտ և հայախնամ պետական մարդ»²։

Նահանգապետի հետ երկրորդ հանդիպմանը մասնակցում էին նաև Հալեպի թուրքական զորքերի հրամանատար, գնդապետ Շիրֆրեհի դիվանապետը և Հայոց առաջնորդարանի փոխանորդ Տ. Շասյի ավագ քահանան։ Դասալիքների խնդրի վերաբերյալ երկու կողմերը համաձայնվում և մշակում են ընդհանուր մի նախագիծ, որի կատարումը դրվում է Զինվորական Արտասովոր հրամանատարության վրա, և հրահանգի կատարման մասին տեղյակ պահվում ինչպես Մարաշի կառավարչին, այնպես էլ Մարաշի և Ուլնիայի Հայոց առաջնորդարաններին³։ Բացի այդ, կաթողիկոսը Զելալին առաջարկում է ձեռքալված զեյթունցիների

¹ Հալեպի Սալիբայի քրիստոնեական թաղամասը հիմնվել էր դեռևս խաչակիրների տիրապետության շրջանում։

² **Նզիպեան Բ.**, նշվ. աշխ., էջ 40։ Ըստ Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի՝ Զեմալը IV զորաբանակի ընդհանուր հրամանատարությունը ստանձնել էր 1914 թ. նոյեմբերի սկզբներին։ Տե՛ս «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի յիշատակները եւ հայկական Նեղոճին գաղտնիքները», Կ. Պոլիս, 1919, էջ 143։

³ Մարաշի առաջնորդ Տ. Մկրտիչ արք. Վեհապետյանը վախճանվել էր, որի փոխարեն Առաջնորդական տեղապահ էր նշանակվել Տ. Հովհաննես ավագ քահանան։ Իսկ Ուլնիայի Առաջնորդարանի տեղապահ Տ. Հովհաննես վրդ.-ը Մարաշի կառավարչի պահանջով տեղափոխվել էր Հալեպ, իսկ նրա տեղը նշանակվել էր փորձառու Տ. Խաչատուր ծ.վրդ. Տեր-Ղազարյանը։ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 319։

«դատավարութիւնը» Մարաշից տեղափոխել Հալեպ՝ կանխատեսելով այդ ամենի աղետալի հետևանքները, և խորհրդակցելով նահանգապետի հետ՝ նա հեռագրում է Կ.Պոլսի կենտրոնական կառավարութեանը «յուսադրուած պետական արդարութենէն»¹։

Զեյթունում հոգևոր հովիվ նշանակված իսաաթուր ծ. վրդ. Տեր-Ղազարյանին ուղղված իր 1914 թ. սեպտեմբերի 21-ի նամակում Սահակ կաթողիկոսը լիահույս էր, որ Զեյալի կողմից «...փափաքելի եղանակաւ մը գործը կը կարգադրուի»²։ Իսկ Կ.Պոլսի պատրիարքին հասցեագրված նույն թվականի սեպտեմբերի 27-ի նամակում նա հավաստիացնում էր, որ ինքը բոլոր հնարավորությունները գործադրելու է «այդ ճիւղը (խոսքը՝ Մարաշի կառավարչի մասին է - Վ. Հ.) պաշտօնանկ ընել տալ...», հակառակ դեպքում, նա պատրաստակամութիւն էր հայտնում հրաժարվել և՛ պատրիարքութիւնից, և՛ կաթողիկոսութիւնից, որովհետև «...ո՛չ զէյթունցիք, ո՛չ մարաշցիք եւ ո՛չ նոյնիսկ շրջակայից կիլիկեցիք անդորր կեանք պիտի ունենան, եւ ո՛չ ալ թուրք հայրենակիցները համերաշխ վերաբերում պիտի ունենան, Կիլիկիոյ ընդհանուր Հայութիւնը լքումի ենթարկելով»³։

Արդյունքը երկար սպասել չի տալիս։ Երկու օր անց Հ. վրդ. Գարանֆիլյանը Ս. իսապայանի միջնորդութեամբ երեք կալանավորների հետ միասին Մարաշի բանտից տեղափոխվում է Հալեպ, իսկ հետո Սիս՝ «վանքի մեջ արգելափակուած» մնալու կարգավիճակով։

Սակայն իրավիճակը Մարաշում և Զեյթունում գնալով լարվում է։ Դաժան ծեծի ենթարկվելով սպանվում է նշանավոր գործիչ Նազարեթ Չավուշ Ենիտունյանը (Լեոն Նորաշխարհյան), որի գերեզմանը դրվում է զինվորական հսկողութեան ներքո։ Զեյթունի

¹ Եղիապեան Բ., նշվ. աշխ., էջ 40։

² Անդ։

³ Անդ, էջ 41։

27 հայկական գյուղերը ենթարկվում են ավերածությունների, թալանի և 25 օր շարունակ բռնադատվում 1600 հոգուց բաղկացած թուրքական բանակի կերակրմանը:

Շարունակվող անարդարությունները և իշխանությունների անտարբերությունը Սահակ Բ կաթողիկոսի մեջ արթնացնում են այն կասկածը, որ այն, ինչ կատարվում է Կիլիկիայում «Կեդրոնի հրամանով» է, և որ բնաջնջման քաղաքականությունը պետական հրահանգ է:

1914 թ. նոյեմբերի 2-ին կաթողիկոսն իտալական նավով Հալեպից տեղափոխվում է Բեյրութ, այնտեղից՝ Մերսին և Ադանա, որտեղ ս. Աստվածածին Մայր Տաճարում, կիրակի օրը, Ադանայի նահանգապետ Իսմայիլ Հազգը բեյի, ոստիկանության ընդհանուր հրամանատար և պատերազմական ատեանի նախագահ Ավնի բեյի ու քաղաքային պետական պաշտոնյաների ներկայությամբ հանդիսավոր մաղթանքներ է կատարում Օսմանյան բանակի հաջողության համար¹: Եվ այդ քայլը, ինչպես կաթողիկոսն է նշում Կ.Պոլսի պատրիարքին ուղղված 1914 թ. նոյեմբերի 14-ի իր նամակում, ոչ միայն գոհացնում է վալիին, այլև ամրապնդում «համերաշխության այն արժէքատուր կապը որ արդէն գոյութիւն ունի նահանգիս թուրք եւ հայ ազգաբնակչութեան մէջ»²:

Սահակ Խապայանն իր սրտում վատ կանխազգացումներ ուներ համաշխարհային պատերազմի արհավիրքների հետ կապված³: Նա 1914 թ. դեկտեմբերի 11-ին ժամանում է Հաճըն՝ ներկա լինելու Սահակ-Մեսրոպյան վարժարանի և առաջնորդարանի վերաբացմանը, ինչպես նաև Ս. Մննդյան պատարագին, ջրօրհնեքին

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 320:

² **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 42:

³ Կիլիկիայի այս ժամանակաշրջանի պատմության մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Գասպարյան Ռ. Հ.**, Կիլիկիահայությունը ցեղասպանության նախօրեին, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1995 թ., թիվ 1 (586), էջ 83-94:

և այլ տոնախմբություններին ու միջոցառումներին («Խսահակայ Պարթևի Հայրապետի», Վեհի տոնը, Գավառական, Քաղաքական, Կրոնական, Տնտեսական, Վանական ժողովները) մասնակցելու համար: Իր մեկնելու նախօրյակին՝ փետրվարի 11-ին, վեհափառը խոստովանում է, որ. «Կեանքիս մէջ երբեք այսքան փառաւոր տօնախմբութիւն կատարած չէի, պիտի չմոռնամ այսօրուան յիշատակը, ուրախ եմ, չափազանց ուրախ եմ, բայց կը վախնամ որ մեր այս ուրախութիւնը տխրութեան չփոխուի, որովհետեւ համայն աշխարհ սեւ ամպերով պատած է...»¹:

Իսկ երբ նա տոնախմբություններն ավարտելուց հետո փետրվարի 19-ին հրաժեշտ է տալիս Հաճընի առաջնորդ Պետրոս եպս. Սարաճյանին, ողջագուրվում և արտասվում է: Սարաճյանի այն հարցին թե՝ «Վեհափա՛ռ, ուրիշ անգամ ալ եկած ու մեկնած էք, բայց մեկնման ատեն չէք լացած, ինչո՞ւ այս անգամ կու լաք», Ս. Խապայանը պատասխանում է. «Զեմ գիտեր, գեշ նախազգացումներ մը ունիմ, կը կարծեմ թէ այս վերջին անգամն է, որ հրաժեշտ կուտամ Հաճընի, չեմ գիտեր, չեմ գիտեր, մնաք խաղաղութեամբ, Աստուած համբերութիւն և կարողութիւն տայ ամենուս»²: Յավոք, հայրապետի կանխազգացումները ճիշտ էին:

Սահակ Բ-ի հաշտվողական քաղաքականությունը և ռազմաճակատներում թուրքերի կրած անհաջողությունները մի պահ կարծես թե մեղմացնում են կառավարության վերաբերմունքը Ուլնիայի մեջ: Մարաշում բանտարկված 60 զեյթունցիներից 19-ը ազատ են արձակվում: Այս և նմանատիպ դեպքերը Սահակ Բ-ի մոտ այն աստիճան են հույս արթնացնում իշխանությունների նկատմամբ, որ նա Զեյթունի կաթողիկոսական փոխանորդ Խաչատուր վարդապետին նույնիսկ խորհուրդ է տալիս զգուշանալ հայ

¹ Բաբգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 917:

² Անդ:

դասալիքներին ապաստան տալու կառավարական ամբաստանություններից, «որով առիթ կը տրուի կառավարութեան կողմէ խստութիւններ գործադրելու»¹:

Չնայած Սահակ Խապայանի պարտադրանքով փոխվում է Մարաշի մյուլթեսարիՖ Հայդար բեյը և Զեյթունի նոր կայմակամ է դառնում Հաճընի կայմակամ Հիլմի բեյը, այդուհանդերձ, չի փոխվում իշխանությունների իսկական վերաբերմունքը Զեյթունի հայության նկատմամբ, քանի որ կասկածանք կար, որ «Զեյթուն միշտ ըմբոստ է»: Խոսելով Զեյթունում կատարվող դեպքերի մասին՝ Սահակ Խապայանը Գյուտ եպիսկոպոսին գրած իր 1915 թ. փետրվարի 25-ի նամակում նշում է. «...ըստ իս, ամենքն ալ պատճառանքներ են, իրականութիւնն է, որ կառավարութիւնը խիստ միջոցներու պիտի դիմէ, որոնց հետեանքը իր բովանդակ արհավիրքներով կրնանք ըմբռնել»²:

Եվ ահա Ադանայի կուսակալ Ա. Ջեմալ փաշան իրավիճակը «հանդարտեցնելու» նպատակով Ուլնիայի շրջանը «պաշարման վիճակ» է հայտարարում և հրամայում է պահել զինվորական խիստ հսկողության տակ: Այդ մասին մենք տեղեկանում ենք Սահակ կաթողիկոսին ուղղված ռազմածովային նախարար և Սիրիայում թուրքական 4-րդ բանակի հրամանատար Ա. Ջեմալ փաշայի 1915 թ. մարտի 10-ի հեռագրից, որի մեջ նա տեղեկացնում էր. «Զինուորական փախստականները պիտի հետապնդուին, խաղաղ ժողովուրդին ոչ մէկ վնաս կամ վտանգ կայ, բայց որպէսզի զգուշանան հարկ է որեւէ կերպով օժանդակութիւն չընեն հետապնդուելիք փախստականներուն...»³:

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 42-43:

² «Կիլիկեան կսկիծներ, վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանէն 1903-1915», էջ 55:

³ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 42-43:

Սահակ կաթողիկոսն իր պատասխան հեռագրում Ա. Զեմալին հայտնում է, որ ինքը հրահանգել է ժողովրդին, որ իրենց առօրեա գործերով զբաղվեն: Միաժամանակ, նա կուսակալին իր ցանկությունն է հայտնում մեկնել Զեյթուն՝ տեղում կացությունը վերահսկելու համար: Սակայն Ա. Զեմալն իր երկրորդ հեռագրով անհարկի է համարում, որ կաթողիկոսն անձամբ «յոգնութիւն յանձն առնէ մինչեւ Զեյթուն ճանապարհորդելու»¹:

բ) Բնակչության տարագրությունը և կաթողիկոսության դիմակայությունը: Սահակ Բ նոր էր վերադարձել Սիս, իսկ այնտեղից էլ մեկնել էր Ադանա, երբ եկեղեցական տարբեր թեմերից լուրեր են գուժում Կիլիկիայի տարբեր բնակավայրերում իշխանությունների կողմից անօրեն կերպով իրականացված հայ ազգաբնակչության բռնի տարագրության վերաբերյալ, որի առաջին հրահանգը գործադրվում է Զեյթունի շրջանում: Այդ առիթով ուշադրության արժանի է այն փաստը, որ 1915 թ. սկզբներին Ադանայում գտնվող մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա իր մտերիմ հայ վաճառականին հայտնում է, որ. «Հայոցդ գլխուն կրկին նոր փոթորիկ մը պիտի պայթի, որը պիտի գերազանցե ցարդ բոլոր պատահածները... ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան և հարստություններն պիտի գրավվի, նույնիսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան... ևս քիչ կըսեմ, դուն շատ հասկցիր... սա տեղեն ժամ առաջ հեռացիր, որպեսզի գալիք փոթորիկին մեջ դուն ալ չի խեղդվիս»²:

Մինչ Կիլիկիայից հեռանալը հայ վաճառականն այդ մասին տեղեկացնում է Սահակ կաթողիկոսին, որն էլ իր հերթին հանդիպում է Կ.Պոլսից Ադանա վերադարձած Ա. Զեմալ փաշային

¹ Անդ, էջ 43-44:

² Պալաքեան Գ. ծ. վրդ., Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենեն. Բեռլինէն դէպի Տէր-Ձոր, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 71: Տե՛ս նաև Ս. Սաղըրյան, Կեսդարեան հուշամատեան (1895-1945), Փարիզ, 1948, էջ 74:

և խնդրում պարզաբանել եղելությունը: Վերջինս խոստովանում է, որ նախարարական նիստերի ժամանակ ինքն անձամբ առաջարկել է խղճալ ու տեղահան չանել ողջ արևմտահայ ժողովրդին, այլ բավարարվել միայն կուսակցականների ու մտավորականների ներկայացուցիչներին մեկուսացնելով, բայց իր առաջարկը մերժվել է մեծամասնությունյան կողմից¹:

1915 թ. մարտի սկզբներին Սահակ կաթողիկոսը հատուկ հանձնարարությամբ Կ. Պոլիս է ուղարկում մի հայ վաճառականի՝ գույժը պատրիարքին հաղորդելու և որոշակի մանրամասնություններ պարզաբանելու համար: Նույն առիթով նա Զավեն պատրիարքին է դիմում նաև 1915 թ. մարտի 2-ի իր նամակով՝ եղելության վերաբերյալ տեղեկությունները հստակեցնելու ակնկալիքով: Վերջինս էլ իր հերթին դիմում է Կ. Պոլսի գերմանական դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմին պարզաբանում խնդրելու ակնկալիքով, սակայն գերմանական դեսպանատունը հավաստիացնում է, որ տարածվող լուրերն իրականությանը չեն համապատասխանում²: Սպասվող կոտորածների վերաբերյալ տեղեկությունները հստակեցնելու համար Սահակ Բ Խապայանը դիմում է նաև Մերսինում գտնվող գերմանական ռազմանավերից մեկի հրամանատարին, սակայն վերջինս հավաստիացնում է, որ քանի դեռ Գերմանիան պահպանում էր իր գերիշխանությունը Օսմանյան Թուրքիայում, կբացառվեն հայերի զանգվածային կոտորածները³: Սակայն, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, Կիլիկիան ևս գերծ չմնաց

¹ Տե՛ս Պալաքեան Գ. Ժ. վրդ., նշվ. աշխ., էջ 72:

² Տե՛ս Բաբգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 918:

³ «Германские источники о геноциде армян. Сборник дипломатических документов и материалов под редакцией профессора С С. Степаняна», т. 1, Ереван, 1991, с. 268.

ցեղասպանության քաղաքականությունից¹:

Կիլիկիա հայության տարագրության խնդիրն է՛լ ավելի ահագնացավ այն բանից հետո, երբ անգլիական «Doris» հաժանավը դուրս գալով Իսթենտերուն նավահանգստից գիշեր և ցերեկ ծովային շարժընթացներ սկսեց իրականացնել Փայաս, Դյորթ-Յոլ, Այաս և Քարաթաշ նավահանգիստների մոտակայքում: Մարտի 21-ին Մարաշի հայ երեւելիների պատվիրակությունը, որի կազմում էին՝ վերապատվելի Ահարոն Շիրաճյանը, հայ կաթոլիկների ներկայացուցիչ Տեր Սահակը և գերմանացի միսիոներ Հես Բլանկը մեկնում են Զեյթուն՝ ժողովրդին հորդորելով չհակառակվել կառավարության որոշմանը և հանձնել դասալիքներին, որոնք ապաստանել էին քաղաքի եկեղեցում: Մարտի 2-ին թուրքական զորքերը ուժեղացան եկեղեցին, սակայն 12 ժամյա կռիվից հետո հայ կռվող ուժերը հեռանում են քաղաքից, որից հետո թուրքերն այրում են եկեղեցին:

Այս ամենը առիթ է դառնում Զեյթունի և մյուս վայրերի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնաճնշումների սաստկացմանը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին ուղղված ապրիլի 7-ի իր նամակում Գեորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսը տեղեկացնում էր, որ 1915 թ. սկզբներից Կիլիկիայում սկսվել են բռնությունները, կոտորածներն ու սպանությունները²: Իսկ Սահակ Բ Կաթողիկոսը Ադանայից Զավեն արքեպիսկոպոսին ուղղված իր 1915 թ. ապրիլի 8/21-ի նամակում ներկայացնելով ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը՝ ցավ էր հայտնում, որ. «...պետական պաշտոնյաների

¹ Կիլիկիայի հայկական կոտորածների մասին ավելի մանրամասն տե՛ս **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005, էջ 95-123:

² Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, с. 278

չլսված ոճրագործություններն ու դաժան գործողությունները, որոնք միայն գցում են կառավարության հեղինակությունը, նպատակ ունեն խաղաղասեր ժողովրդին հասցնել ծայրահեղության, որպեսզի կառավարությանն առիթ տան նրան բնաջնջելու...Իմ 12-ամյա ծառայության ժամանակամիջոցն ինձ համար եղել է դառնության և վշտի հավերժ ժամանակ: Եթե քրիստոնեա չլինեի, կանիժեի այն օրը, երբ լույս աշխարհ եկա, կամ ավելի շատ այն օրը, երբ նշանակվեցի այս ծանր, պատասխանատու գործին»¹:

Փաստորեն, կաթողիկոսն իր անթաքույց և խռովահույզ դժգոհությունն էր արտահայտում Զեյթունում և Կիլիկիայի մյուս քաղաքներում հայերի նկատմամբ ստեղծված իշխանական վերաբերմունքից, և այնքան մեծ էր նրա զայրույթը կատարվածի նկատմամբ, որ նամակը թարգմանվում է գերմաներեն և ուղարկվում Ադանայի գերմանական հյուպատոսարան²:

Ի վերջո, ապրիլի 9-ին Զեյթունի 60 ընտանիքների աքսորով սկսվում է Զեյթունի հայ բնակչության բռնագաղթը, որն ավարտվում է վեր. Տ. Անդրեասյանի և ամերիկյան որբանոցի որբերի տարագրությամբ³:

Այդ նույն ժամանակ Դյորթ-Յուլի առաջնորդական փոխանորդ Տեր Մեսրոպ քահանա էսեֆյանը և երկու ազգային երևելիներ մեկնելով Ադանա՝ Սահակ կաթողիկոսին հայտնում են, որ տեղի կայմակամը հաշվի առնելով անգլիական զորքերի ափհանման հավանականությունը Կիլիկիայում, ծովափնյա շրջանի մահմեդական գյուղացիներին հրահանգել էր տեղափոխել Ամանոսի

¹ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի», թարգմանությունը գերմաներենից Վալենտինա Մինալյանի, Երևան, 2006, էջ 153-158:

² Տե՛ս Ստեփանյան Ս., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, 1998, էջ 23:

³ Տե՛ս Վեր.Կէօրիկզեան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 241:

լեռներ: «Ապահովության» համար նա հայերին էլ առաջարկում է առժամանակ ապաստանել այդ շրջաններում՝ «...որպէսզի դաշտային հողամասը ապահով ըլլայ», միաժամանակ սպառնալով, որ եթե կամովին չհեռանան՝ «կ'ենթադրեմ որ կը բռնադատուիք պետական ոյժով տեղահանելու...»¹:

Ս. Խապայանը զգուշանալով գործունեության հետագա անխոհեմ քայլերից, պատվիրակներին հրահանգում է անմիջապես հետ վերադառնալ Դյորթ-Յոլ և կայմակամին տեղեկացնել, որ տեղափոխման նախապատրաստական աշխատանքները սկսեն միայն նոր բնակության վայրերը որոշելուց հետո:

Շուտով պարզ դարձավ թուրքական իշխանությունների սքողված նպատակը: 1915 թ. ապրիլի 11/24-ին բազմաթիվ հայ մտավորականներ ձերբակալվեցին և տարագրվեցին Չանկըր: Հենց աքսորի ճանապարհին էր, որ Սահակ Բ Խապայանը հանդիպեց դոկտ. Տաղավարյանին, Գ. Զոհրապին և Վարդգեսին²:

Էնվերը Ա. Զեմալին ուղղված 1915 թ. ապրիլի 24-ի իր հեռագրում շտապում էր տեղեկացնել, որ գլխավոր հրամանատարի (իմա՝ Մ. Թալեաթի - Վ.Հ.) համաձայնությամբ անհրաժեշտություն էր առաջացել հայ տարագիրներին տեղահանել Դյորթ-Յոլից, Հաճընից, Զեյթունից, Սսից՝ նրանց Հալեպի նահանգի հարավ-արևելքում գտնվող Զոր կոչվող վայրը աքսորելու մասին³, չնայած նախապես՝ մարտի 26-ին Ա. Զեմալը Մ. Թալեաթին հայտնել էր, որ տեղահանվածներն ուղարկվելու էին Կոնիայի Սուլթանիե գավառ⁴: Տարագ-

¹ «Ատանայի հայոց պատմություն», էջ 320:

² Տե՛ս Բարգէն Ա. *Թողդիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ*, նշվ. աշխ., էջ 919:

³ Տե՛ս *Авакян А., Геноцид 1915 г.: Механизмы принятия и исполнения решений*, Ереван, 1999, с. 42-43.

⁴ Տե՛ս Կարգեր Հ., *համահեղինակներ՝ Կուրեր և Նենսի Էսքիջյաններ*, Դեյր էզ-Զորի խաչուղիներում. Մահ, վերապրում և ընդհատակյա մարդասիրական դիմադրություն Հալեպում 1915-1917 թթ., Երևան, 2015, էջ 25:

րության առաջին արհամիրքը Սիսը զգաց մայիսի 1-ին, երբ քաղաք եկավ Ադանայի ոստիկանապետ Ադիլ բեյը՝ խուզարկութուններ կատարելու նպատակով: Խիստ հսկողության տակ առնվեցին 96 կասկածելիներ (ցուցակը կազմված էր «սիսեցի թուրքերու կողմէ»), որոնց թվում էին կուսակցական գործիչներ՝ Պետրոս Աթմաճյանը, Կարապետ Նաջարյանը, Մինաս Մարթայանը և ուրիշներ: Խուզարկութուններ կատարվեցին ինչպես կասկածելիների բնակարաններում, այնպես էլ Մայրավանքում¹:

Սահակ կաթողիկոսը Ադանայում էր, երբ Նդիշե արք. Կարոյանը 1915 թ. մայիսի 1-ի իր նամակով նրան հաղորդակից է դարձնում, որ ապրիլի 30-ին զինյալ ոստիկանները խուզարկել էին Մայրավանքի եկեղեցին և օժանդակ շինությունները, որի ժամանակ մեծ խնդիր էր հարուցել հատկապես Մայրավանքի դպրոցի ներսի պատին գծագրված Հայաստանի քարտեզը, որի տակ գրված էր «վիվ լ'Արմենի» («Կեցցէ Հայաստանը»- Վ. Հ.)²: Խուզարկությունն ըստ էության ոչինչ չտվեց, բացի հնչակյանների պարզ անվանացանկի հայտնաբերումից: Տասը օրից հետո կառավարությունը ստիպված եղավ ազատ արձակել 81 հոգու, իսկ մնացած 15-ը ազատվեցին միայն տարագրության ուղին բռնելու պայմանով:

Այդ օրերին էր նաև, որ Կ.Պոլսից Պաղեստին մեկնող մի հայ բժիշկ, որը ծառայության էր անցել թուրքական IV զորաբանակում, Ադանայով անցնելու ժամանակ, Զավեն պատրիարքի հանձնարարությամբ, ներկայանում է Սահակ կաթողիկոսին և նրան տեղեկացնում, որ Կ.Պոլսում հրաման էր արձակվել ձերբակալել և զինվորական դատարանին հանձնել Ադանայի առաջնորդ Տեր Գևորգ Ժ. վրդ. Արսլանյանին (Ասլանյանին), միայն այն

¹ Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 556:

² Տե՛ս անդ, էջ 278:

բանի համար, որ Ադանայում ձերբակալված հնչակյանների տնե-
րում հայտնաբերվել էին հնչակյան կուսակցության անդամ Փի-
րայրի (Մարտիրոս Պոյաճյանի) եղբոր, նշանավոր գործիչ Մուրա-
տի մասին պատմող և նրա լուսանկարով տպված մի քանի գրքեր:
Ադանայի նոր վալին՝ գնդապետ Իսմայիլ Հագգըի հանձնարա-
րով՝ Սեֆյան Ադանայի վարչական մեջլիսի (ժողովի) անդամ Ավե-
տիս Կյուլպենկյանը Գ. ծ. վրդ. Արսլանյանին հորդորում է որոշ
ժամանակ մեջլիսից բացակայել և անվտանգության համար Ադա-
նայից դուրս հոգևոր այցելություններ չիրականացնել: Սակայն
շուտով Գևորգ վրդ. Արսլանյանը ևս ենթարկվում է տարագրութ-
յան: Այդ մասին դեպքերի ականատես Երանուհի Սիմոնյանը հի-
շում է. «Մեր կարաւանին մէջ էր Ատանայի Առաջնորդ Գէորգ Վրդ.
Ասլանեանը: Ան աւմէն ջանք թափած էր հեռացնելու իր հօտին
սպառնացող վտանգը: Իր ճիգերն ու յուզումները իր վրայ այնքան
ազդած էին, որ կ'ըսէին թէ Հայր Սուրբը, երբ կառավարչատունէն
առաջնորդարան կը դառնայ, իր կրած յոգնութեան ու յուզումին
հետեւանքով, յաջորդ առաւօտ զինք իր անկողինին գամուած կը
գտնեն՝ կաթուածահար: Հակառակ իր այս վիճակին, զինքն ալ
աքսորեր էին իր հօտին հետ ու հիմա Օսմանիէի գաղթականսին
մէջ ինքն ալ կը տուայտէր հաւասարապէս»¹:

Կուսակալը, միաժամանակ, իր մոտ հրավիրած կաթողիկո-
սական դիվանապետին մտերմաբար և «քաղաքավարի» հասկաց-
նում է, որպեսզի Դյորթ-Յուլի գյուղերի 18-65 տարեկան հայ բնակ-
չությունը կաթողիկոսի անմիջական հորդորներով ենթարկվեն
տարագրության զինվորական հրամանին և տեղափոխվեն Դ-
յորթ-Յուլից 50-60 կմ հեռու, Ամանոսի լեռներում գտնվող Թոփ-
րակ-Կալե բնակավայրը՝ ճանապարհների շինարարության վրա

¹ Սիմոնյան Ե. Ա., Իմ գողգոթաս, Անթիլիաս-Լիբանան, 1960, էջ 10:

աշխատելու համար¹։ Հակառակ դեպքում նահանգի ոստիկանական զորքերի հրամանատար Ավնի բեյը պատրաստ էր իրականացնելու պատժիչ գործողություններ։

Քանի որ Դյորթ-Յոլի տեղահանումն ու փախստականների ձերբակալումն իրականացվել էր առանց կաթողիկոսի հետ նախապես համաձայնեցնելու, ուստի Սահակ Բ-ին այլ բան չէր մնում, քան Ադանայի Առաջնորդական փոխանորդ Տեր Արսեն ավագ քհն. Եմենիճյանին և Առաջնորդարանի դիվանապետին նույն օրն ուղարկել Թոփրակ-Կալե և Դյորթ-Յոլ՝ ժողովրդի կողքին լինելու համար։ Միաժամանակ, Կիլիկիո հայ հոգևոր պետերը հանդես եկան թուրքական իշխանություններին ուղղված բազմաթիվ նամակներով ու կոչերով։ Նշենք, որ Սահակ Բ խապայանն իր մեծ ու անգնահատելի վաստակն ունեցավ կիլիկիահայությունյան պահպանման և նրանց բեկորների կյանքի ապահովման գործընթացում։ Նա 1915 թ. փետրվարից մինչև մայիսի 25-ը մնաց Ադանայում և կառավարությունն ուղղված իր բազմաթիվ բողոք-նամակներով փորձեց օժանդակություն ստանալ նրանից։ Մինչ այդ, նա միամտաբար հավատում էր, որ կատարվող հանցագործությունները դրանք սոսկ տեղական պաշտոնյաների ոճիրներն էին, և հույս ուներ, որ թուրքական կառավարությունը հեշտությամբ կկանխեր դրանք։ Այդ նպատակով նա հանդիպում է Ա. Զեմալ փաշային, որի պատասխանատվության ներքո էր տեղի ունենում հայ ժողովրդի աքսորահավաքը և վերջնական բնաջնջումը և նրա հետ՝ որպես հին ծանոթի վիճաբանում։ Այնուհետև կաթողիկոսը բողոքագիր է ներկայացնում Կ. Պոլսի կենտրոնական կառավարությանը, կոչեր է ուղղում օտար հյուպատոսարաններին, որպեսզի վերջիններս տեղեկանալով և զարհուրելով հայերի նկատմամբ իրականացվող բռնություններից, դատապարտեն թուրքական

¹ «Ատանայի հայոց պատմություն», էջ 322։

իշխանությունների հանցավոր վարքագիծը և վերջ տան կատարվող ոճրագործություններին: Սակայն ոչ բոլոր հույսերն էին արդարանում:

Ի դեպ, Ս. Խապայանն իր հեղինակությունը և Ա. Զեմալի հետ ունեցած մտերմությունը շատ անգամ օգտագործում էր նաև այլ վայրերի հայ հոգևորականների փրկության գործում: Այդպիսի մի դեպք գրանցվեց Նիկողիմիայի հոգևոր առաջնորդի հետ կապված: Վերջինս Թալեաթի հրամանով պետք է տարագրվեր և սպանվեր, սակայն Սահակ Խապայանի խնդրանքից հետո նա Զեմալի հրամանով տեղափոխվում է Երուսաղեմ¹:

Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ կիլիկիահայությունն այնքան էլ շատ զոհ չտվեց Մեծ եղեռնի տարիներին, սակայն նրանց մեծ մասը տարագրվեց իր հայրենիքից: Տեղահանումները սկսվեցին 1915 թ. գարնանից և տարածվեցին Կիլիկիայի 16 քաղաքներում ու գյուղերում: Առաջին տեղահանվածները 15328 կիլիկիահայեր էին, որոնք քվեցին Դեյր-Էզ-Զոր²: Հունիսի կեսերին 6000-անոց թուրքական բանակը մտավ Սիս՝ զորակոչն իրականացնելու նպատակով՝ թեև Սիսի երիտասարդության մեծ մասն արդեն զինվորագրվել էր, և նրանք, ովքեր ազատվել էին զինապարտությունից, զբաղված էին գյուղատնտեսական աշխատանքներով: Սիս մեջ ապստամբություն կամ ինքնապաշտպանություն կազմակերպելու որևէ լուրջ մտադրություն անգամ չկար, քանի որ սսեցիները ոչ զենք ունեին և ո՛չ էլ այդ ուղղութեամբ խորհելու փորձ էր կատարվել: Նրանց միակ սպառազինությունը որսորդական հրացաններն էին, որոնցով «թրքական

¹ Անտոնեան Ա., Մեծ ոճիրը. հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշան, Պոսթրեն 1921, էջ 104:

² Տե՛ս Կալզեր Հ., համահեղինակներ՝ Լյութեր և Նենսի Էսքիջյաններ, նշվ. աշխ., էջ 30:

զորամասի մը դէմ ելլել ունէ մեկուն գլխէն իսկ չէր կըրնար անց-նիլ»¹։

Թուրքական բանակը ձեռնամուխ եղավ հայության տեղա-հանմանը։ Ամեն օր մոնեմտիկը շրջում էր թաղից թաղ և հայտա-րարում տեղահանվողների անունները։ Կիլիկիահայերի ամենա-մեծ քարավանը ճանապարհ ընկավ հունիսի 25-ին, իսկ մինչև հու-լիսի 30-ը՝ ըստ անգլիական «Կապույտ գրքի», տեղահանվեց 231 ընտանիք (1317 հոգի)²։ Մինչև հոկտեմբեր քսորի ճանապարհը բռնեցին մոտ 3-4000 ստեցիներ։ Արդեն սեպտեմբերի 3-ին դոկտոր Հ. Զավրիկը հեռագրում էր Ս. Սազունովին, որ՝ «Կիլիկիայից քշված է ողջ բնակչությունը»³, իսկ հոկտեմբերին Զավեն պատրիարքը Պողոս Նուբար փաշային տեղեկացնում էր, որ՝ «Կիլիկեցիները ամբողջովին քշվել են դեպի Հալեպ, Դեր-Զոր, Դամասկոս»⁴։

գ) Մայրավանքի հոգևորականության ափսոսը։ Բնակչության հետ միասին տարագրության ուղին բռնեց նաև Մայրավանքի միաբանությունը։ Հետագայում Զավեն պատրիարքը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդին ուղղված 1919 թ. մայիսի 12-ի իր նամակում պիտի տեղեկացներ, որ թուրքական ոճրագործ կառա-վարությունը՝ «Հայ ժողովուրդը իր արմատէն հարուածելու հա-մար իր մահաբեր նետերը ուղղեց մասնայատուկ ճարտարու-թեամբ, հայ կրօնական... հաստատութիւններուն և քանդեց ու սրբապղծեց բոլոր ծաղկեալ ու գեղեցիկ վանքերը, եկեղեցիները և դպրոցները, գրաւելով և իւրացնելով բոլոր սրբազան անօթները ու սպասները»⁵։

¹ Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 331։

² Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 572։

³ «Геноцид армян в Османской империи», Сборник документов и мате-риалов под редакцией М. Г. Нерсисяна, с. 301.

⁴ Նույն տեղում, էջ 338։

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2033, թ. 18 շրջադարձ։

Տարագրության ժամանակ Մայրավանքի շորս քահանաներից երեքն աքսորվեցին: Երկուսը՝ Եզնիկ քհն. Թուրսարգիսյանն ու Հարություն քհն. Փափազյանը, նահատակվեցին Դեր-Ձորի անապատներում: Կիրակոս քհն. Ներետեյանը հրաշքով փրկվեց մահից, ներգաղթի ժամանակ վերադարձավ Սիս, հովվեց իր ժողովրդին և երկու տարի հետո կրկին իր ձեռքը վերցրեց գաղթականի ցուպը: Իսկ զառամյալ Ավետիս ավագ քհն. Աջապահյանը, որին թողել էին քաղաքում՝ չաքսորված հայության հոգևոր կարիքները հոգալու համար, հանկարծամահ եղավ Ս. Աստվածածնի տոնին և թաղվեց նույն եկեղեցու բակում: Թուրքերը նույնիսկ նրա աճյունը հանգիստ չթողեցին, քանդեցին գերեզմանը այն պատճառաբանությամբ, որ իբր թե հայերն այնտեղ զենք էին պահել¹:

Տեղահանություններից անմասն չմնացին նաև Կիլիկիայի հայ հարանվանությունների ներկայացուցիչները: Թեպետև հայ բողոքականներին չաքսորելու վերաբերյալ հրահանգ կար, սակայն այն թողնված էր տեղական իշխանությունների հայեցողությանը: Սսի թուրքական իշխանությունները որոշեցին հեռացող քարավանների հետևից ուղարկել նաև այլադավան հայերին:

Շուտով Սահակ Բ Խապայանին մեկ ուրիշ վատ լուր էր սպասում: 1915 թ. հունիսի 24-ին Ադանայից ստացված հեռագրով նա տեղեկանում է, որ վտանգի առաջ է կանգնել և տեղահանվել նաև Սսի Մայրավանքի եպիսկոպոսաց դասը: Կաթողիկոսը հաջորդ օրն իսկ գիմում է Հալեպում գտնվող Ա. Զեմալ փաշային՝ կատարվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու պահանջով: Նա բացատրում է, որ թուրքական բոլոր սուլթանների օրոք հայ-

¹ Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов под редакцией М. Г. Персисяна, с. 290-292. Նահատակված հոգևորականների ցանկը տե՛ս հավելված 8-ում:

կական վանքերը միշտ հարգանքի են արժանացել, սակայն երիտ-
թուրքերի կողմից «դարերէ ի վեր հաստատուն հոգեւոր կեդրոնի
մը քանդումը տեղի կ'ունենայ, հակառակ մեր անկեղծ հաւատար-
մութեան...»¹։

Սակայն Սահակ Բ-ն էական արդշունքի չի հասնում, որով-
հետեւ շուտով Գյուտ ծ. վրդ. Մխիթարյանն էլ է աքսորվում, և այս
անհուսալի կացութեան մեջ նա գրում է. «Մնա՛րբարեա՛լ, ութ հա-
րիւր տարիներու Կաթողիկոսական աթոռու պատմական Ս. Սո-
փիա...։ Այսուհետեւ գալիք Կաթողիկոսը մեզմէ աւելի խելագար
ըլլալու է, որ երթայ Սսոյ աւերակներուն վրայ թառի ու ողբայ,
թրքաց մօտ նստի, հոն աղօթէ, պատարագ մատուցանէ, խոնկ
ծխէ, Ս. Միւռոն օրհնէ ու Եպիսկոպոս ձեռնադրէ...»²։

1915 թ. սեպտեմբերի 13-ին վանքի բանալիները հանձնվե-
ցին թուրքերին, իսկ հաջորդ առավոտյան, միաբանությունը՝ Խաղ-
վրդ. Աջապահյանի գլխավորությամբ հեռացավ Մայրավանքից՝
իր հետ վերցնելով վանքի հիմնական գանձերը՝ 9 սնդուկների և 3
ծրարների մեջ ամփոփված։ Մինչև տեղահանությունը Սիսում
կար շուրջ 1000 գրչագիր³, որոնցից մոտ 600-ը պահվում էին վան-
քում⁴ և 823 կտոր եկեղեցական թանկարժեք ու ոչ թանկարժեք
սպասներ։ Թալանից փրկելու նպատակով ոչ թանկարժեք իրերը
տեղափոխվեցին Հալեպ, իսկ ս. Աշերը, մյուռոնի կաթսան և թան-
կարժեք սրբութիւնները՝ Երուսաղեմ⁵։ Ի դեպ, Սսից դուրս գալու
ժամանակ կոտորվում է մյուռոնի խոշոր կաթսան⁶։

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 51։

² Անդ, էջ 52։

³ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 43։

⁴ Տե՛ս անդ, էջ 275։

⁵ Տե՛ս անդ, էջ 530, նաև էջ 203։

⁶ Ոսկերիչեան Ե. Ա., Սուրիական ալպոմ (գրական բաժինով), Հալեպ, 1929, էջ 10։

Սաի կաթողիկոսության եկեղեցական մնացած իրերի և հուշարձանների կողոպտման ու ավերման գործը հանձնարարվեց Ա. Զեմալի զինակից և փոխանորդ Օմեր Ֆահրեդդինին¹, որը ցինիկաբար հայտարարում էր, որ. «Աւետարանը ձեր ձեռքէն պիտի առնենք»²: Ըիշտ է, մեծ թվով ձեռագրեր և այլ իրեր մնացին վանքի գաղտնարաններում³, սակայն ձեռագրերի մի մասը ենթարկվեց ոչնչացման, որոնց թվում խիստ թանկարժեք «Հին Աւետարան մը մագաղաթեայ և արծաթապատ կողքով»⁴: Կողոպտված հնութիւնների շարքին դասվեցին նաև Սահակ կաթողիկոս Խապայանի դրամների անձնական հարուստ հավաքածուն, որը տեղափոխվեց Կ.Պոլսի թանգարան⁵:

Մայրավանքը վերածվեց որբանոցի՝ «գպրոց» անվան տակ, որի տնօրեն նշանակվեց իր մոլեռանդությամբ հայտնի Կյոք

¹ «Անապատի վագր» մականվամբ հայտնի Օմեր Ֆահրեդդինը (1868-1948) եղել է Մոսուլում տեղակայված 4-րդ բանակի 12-րդ ջոկատի հրամանատարը և գործուն մասնակցություն է ունեցել 1915 թ. Ուրֆայի, Զեյթունի, Մուսա լեռան, Հաճնի հայերի հերոսամարտերի ճնշման գործում: Տե՛ս Պարսամյան Ա., Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը (1915-1918 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես» 6, Երևան, 2018, թիվ 1, էջ 75:

² Տօնապետեան Պ., Զայն տառապելոց, Փարիզ, 1922, էջ 289-290:

³ Տե՛ս Պալաքեան Գ. Ժ. վրդ., նշվ. աշխ., էջ 342:

⁴ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 203:

⁵ Դեռևս 1915 թ. հունվարի 15-ին որոշվել էր Մայր Աթոռի թանկարժեք իրերը, հնութիւնները և ձեռագրերը՝ 140 արկղերի մեջ զետեղված, ապահովության համար տեղափոխել Մոսկվա՝ Մոսկվայի Հայոց եկեղեցական խորհրդի անդամներին հանձնելու համար: Ինչ-ինչ պատճառներով այդ իրերի մեջ էր հայտնվել նաև Սահակ Բ կաթողիկոսի 3 արծաթյա պսակները: Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք ԺԷ. Գեւորգեան ճեմարան, թանգարան», «Արարատ» ամսագիր, փաստաթղթերի ժողովածու (Ըստ Հայաստանի ազգային արխիվի նիւթերի), կազմեց՝ Գոհար Ավագեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018, էջ 246:

Ֆազը անունով մոլլան: Նրա բողոքների հիման վրա փոշու վերածվեց Ավագ Սեղանի ոսկեզօծ փառավոր խաչկալը, որն իբր խանգարում էր «արևու լուսին ներս թափանցումին»¹:

Նույն ճակատագրին արժանացավ նաև 200 տարվա հնության արժեք ներկայացնող ձյունասպիտակ մարմարիոնից պատրաստված հայրապետական գահը, որը բաղկացած էր չորս քանդակազարդ սլացիկ սյուների վրա հենված ոսկեզօծ գմբեթից, ավետարանիչների բարձրաքանդակ խորհրդանիշներից ու երկգլխանի թագադիր արծվապատկեր դրոշից²: Այն «փշուր-փշուր ջախջախած էին» թուրք դպրոցական տղաներն իրենց մոլեռանդ ուսուցիչների հանձնարարությամբ³:

Այս բոլոր ավերածությունները կատարվեցին «ներքին նորոգությունների» անվան տակ: Ավագ խորանը վերածվեց ճաշարանի, իսկ գավիթը դարձավ լվացարան: Մի ուրբաթ օր էլ վանքը հորջորջվեց «ենի ջամի» («նոր մզկիթ» - Վ. Հ.), և քրիստոնեական հինավուրց տաճարի տանիքից լսվեց մոլլայի ձայնը: Ա. Զեմալին հասցեագրված Մ. Թալեաթի 1916 թ. հոկտեմբերի 7-ի հեռագրից կարելի է պատկերացում կազմել, թե ինչու՞ են իշխանությունները բռնագրավել Սսի կաթողիկոսության եկեղեցական գույքը, և թե ի՞նչ դրդապատճառներով է Սահակ Բ Խապայանն աքսորվել Սսից: Նա փորձում է «բացատրել», որ իր «նպատակն ուղղված է այդ վայրի (խոսքը՝ Սսի մասին է - Վ. Հ.) գոյությունը լիովին վերացնելուն, վայր, որտեղ հայերը ենթադրում են, թե Կիլիկիայում շատ մեծ պատմական և ազգային հարստություններ կան, և որն

¹ Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 200-01:

² Տե՛ս անդ, էջ 537:

³ Տե՛ս Պալաքեան Գ. ծ. վրդ., նշվ. աշխ., էջ 342:

իբրև թե եղել է հայկական կառավարության ամենավերջին արքայանիստ կենտրոնը»¹:

դ) Սահակ Բ հապայանի դիվանագիտական հմտությունները: Առաջին աշխարհամարտի տարիներին Սահակ Բ-ի գործունեությունն էր մասնավորապես կազմում նաև նրա դիվանագիտական հմտությունները: Այդ է վկայում 66-ամյա կաթողիկոսի 1915 թ. հունիսի 30-ի նամակն ուղղված Կ.Պոլսի գերմանական դեսպան Հ. Ֆոն Վանգեն-հայմին: Առաջին անգամն էր, որ նա իր կյանքում նամակ էր գրում որևէ երկրի դեսպանին, և ինչպես ինքն է խոստովանում՝ ոչ թե որպես օտարի, այլ որպես թուրքական կայսրության հետ բարեկամացած ու դաշնակցող գերմանական կայսրության «հարգելի ներկայացուցիչ»: Նամակը ոչ բողոք էր, ոչ էլ խնդրանք: Այն ընդամենը կաթողիկոսի մտահոգությունն էր, որ իբր հայերը պատերազմի տարիներին հասկանալի պատճառներով չէին նպաստում գերմանական հզոր տերության հաջողությանը և պայքարում էին նրա պարտության համար: Կաթողիկոսը դիվանագիտական ճկուն հնարքներով նախ «կարևորում» է Օսմանյան Թուրքիայի որոշիչ դերը հայ կրոնի ու լեզվի պահպանման գործում՝ միաժամանակ արժևորելով Գերմանիայի քաղաքակրթիչ բացառիկ արժեքը հայության կյանքում և եզրակացնում, որ հայերը «այնքան ստոր չեն, որպեսզի լինեն երախտամոռ»: Սահակ Բ-ը վստահեցնում էր, որ հայերի կողմից հնչող լավ ու վատ դատողությունները գերմանական պետության մասին ոչ մի ազդեցություն չէին կարող ունենալ հաղթանակներով պսակված գերմանական ժողովրդի հզորության ու փառահեղության վրա և խնդրում էր դեսպանից վերացնել հայերի նկատմամբ առաջացած կասկածանքը, քանի որ

¹ Աբչյամ Թ., Դա ցեղասպանություն է, պարոն վարչապետ, <https://akunq.net/am/?p=20598>:

այն դարձել էր «հայ ժողովրդի ամենամեծ տառապանքը՝ նրա բազում ցավերի մեջ»¹։

ե) Զեյթունի, Մուսա լեռան և Ֆրնտընագի ինֆնապաշտպանությունները և կաթողիկոսի դիրքորոշումը։ Ճիշտ է, 1915 թ. Կիլիկիայի տարբեր վայրերում հայերը հնազանդվեցին իշխանությունների տարագրության բիրտ հրամանին, իսկ Սսի կաթողիկոսական նստավայրն էլ ենթարկվեց ավերածության ու թալանի, սակայն մի շարք վայրերում՝ Զեյթունում, Ֆրնտընագում, Մուսա լեռան վրա և այլ տեղերում կիլիկիահայերը դիմեցին ինքնապաշտպանության, որի վերաբերյալ ժամանակի ընթացքում ստեղծվել է բավականին պատկառելի գրականություն, որոնց զուտ պատմագիտական ուսումնասիրումը և արժևորումն ամենևին էլ մեր խնդիրը չէ։

Հայ եկեղեցու պատմության տեսանկյունից կարևոր ենք համարում նշել, որ Զեյթունի լեռնականներին զինված ապստամբությունից հետ պահելու գործում որոշակի դեր է խաղացել Սահակ Բ խապայանը, որն ինքնապաշտպաններին ուղղված իր նամակներում հաստատակամորեն այն միտքն էր հայտնում, որ հին ժամանակներն անցել են, իսկ այժմ կարևոր է հնազանդության միջոցով ժողովրդին պաշտպանել անխուսափելի վտանգից, որի համար էլ անհրաժեշտ է հպատակվել կառավարությանը։ Ժամանակակիցների վկայությամբ՝ Զեյթունի ապստամբության օրերին Սահակ կաթողիկոսից ստացվում է չարաբաստիկ մի հեռագիր, որը նախապատրաստվել է Սիրիայի բանակի հրամանատար Ա. Ա. Զեմալ փաշայի դրդմամբ։ Երիտթուրքերի այս պարագլուխը շատ լավ գիտակցում էր, որ Կիլիկիայում դեռևս կուտակված էր ստվար մի հայություն, որի մեծ մասը պատրաստ էր հարկ եղած

¹ Տե՛ս Գուստ (Հր.)Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերը, Երևան, 2005, էջ 219-221։ Նամակի ամբողջական տեքստը տե՛ս հավելված 9-ում։

դեպքում զենքը ձեռքին, մինչև արյան վերջին կաթիլը, պաշտպանել իր ժողովրդին և իր ընտանիքի պատիվը: Այդ պատճառով էլ նա համոզում է կաթողիկոսին անել ամեն ինչ, որպեսզի Զեյթունի, Հաճընի և Կիլիկիայի այլ վայրերի հայերը կատարյալ հնազանդություն ցուցաբերեն «արդարասէր և հպատակասէր» թուրքական կառավարության կողմից արձակված բոլոր որոշումներին: Ինչ խոսք, Կիլիկիայի հայությունը տեղահան անելու իր դիվային ծրագիրը կենսագործելու ընթացքում նա միաժամանակ սին խոստումներ էր տալիս «օգնութիւն եւ պաշտպանութիւն Կիլիկիոյ տեղահան եղած ժողովուրդին, եթէ հարկը պահանջէ»¹:

Այս տեղեկությունը հաստատվում է նաև ժամանակակիցների բազմաթիվ վկայություններով: Այսպես, դեպքերի անմիջական մասնակից Հովսեփ Բշտիկյանը նշում է, որ Սահակ Խապայանը, որն այդ ժամանակ Կիլիկիայի կաթողիկոսն էր, գրավոր ուղերձ է ուղարկել (պատնեշավորված դասալիքներին)՝ ասելով. «Աստծու սիրուն, խիղճ ունեցեք. ձեր զենքերն ուսերիդ մի՛ առեք, հանձնվե՛ք»: Նա նույնիսկ հասավ Զեյթուն և բնակչությունը հանգստացրեց՝ խոստանալով և համոզելով, որ ամեն բան լավ է վերջանալու, և դա է պատճառը, որ Զեյթունի բնակչությունը չզնաց կովելու²: Այլ ականատեսներ ևս՝ դյորտյուցի Հարություն Վարդանյանը և Գևորգ Յափուջյանը, մատնանշում են, որ Սահակ Բ կաթողիկոսը կոչ է արել չընդդիմանալ և հնազանդվել կառավարության բոլոր հրամաններին³: Այդ մասին է հավաստում նաև վե-

¹ «Աղէտէն վերապրողներ, 1915. Աղէտ եւ վերածնունդ», Փարիզ, 1952, էջ 29:

² Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 200-201, նաև Սվազյան Վ., Հայոց ցեղասպանությունը. Ականատես վերապրողների վկայությունները, թիվ 253 (253) Հովսեփ Բշտիկյանի վկայությունը (ծնվ. 1903թ., Զեյթուն), էջ 446:

³ Սվազյան Վ., Հայոց ցեղասպանությունը. Ականատես վերապրողների վկայությունները, թիվ 273 (253) Հարություն Վարդանյանի վկայությունը (ծնվ.

րապատմելի Ավագ Ավագյանը, որը հաստատում է, որ այն դեպքում, երբ Մուշեղ եպս. Սերոբյանն իրենց կոչ էր անում «Զարկէ՛ք ուժգին...», վեհափառ Սահակ Բ Խապայանը ժողովրդին հորդորում էր, որ կառավարությունը «զգուշութեան» համար «երեք ամսուան համար հլու հնազանդ գաղթեցէք Սուրիա»¹:

Իսկ դեպքերի ականատես-վերապրող Հակոբ Ճղլյանը տեղեկացնում է, որ թուրքական բանակի հրամանատարությունը խոստացել էր ներում շնորհել զեյթունցի բոլոր այն ապստամբներին, ովքեր կհնազանդվեին և կվճարեին պետական տուրքերը: Արդյունքում, Զեյթունի ղեկավարության շրջանում երկվության ստեղծվեց. ոմանք կողմ էին հանձնվելուն, իսկ ոմանք էլ՝ կռիվը շարունակելուն: «Գործի վրա յուղ լցրեց» Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը, որն իր կոնդակով կարգադրեց հնազանդվել իշխանություններին²:

Ըստ ժամանակի գերմանացի լրագրող Թիզսկայի վկայության՝ այդ դեպքերի ժամանակ հայերի պատրիարքն անձամբ այցելել էր Մ. Թալեաթ փաշային, որն էլ նրան հավաստիացրել էր, որ. «Շատ գոհ է այդ հարցում (խոսքը հայերի հնազանդության մասին է- Վ. Հ.) Զեյթունի հայերի վարքից»³:

Այդ է պատճառը, որ զեյթունցիներին «ապակողմնորոշելուց» հետո Ս. Խապայանը հոգևորականների միջոցով «...կը հորդորե ձեմալ փաշայի հրամանը, ...որպեսզի կացության բացառիկ

1887 թ. Դյորթյուլ), էջ 470, և Գևորգ Յափուշյանի վկայությունը (ծնվ. 1894 թ. Դյորթյուլ), էջ 472:

¹ Վեր. Աւագեան Ա., նշվ. աշխ., էջ 9:

² Տե՛ս Ճղլյան Հ., Ստվերում մնացած կյանք, Երևան, 1991, էջ 15:

³ Աբշամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղապանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, 2015, էջ 223

դժվարությունները հաղորդեն ժողովրդին»¹։ Ամեն անգամ իր նամակներում նա մատնանշում էր. «Հիմա միայն բացարձակ հնազանդություն է, որ պիտի կրնանք ապրել մեր արդարասեր և հպատակասեր կառավարության հետ»², առանց հասկանալու, որ իր անգեն հոտը հանձնում էր զինված գալլերին, որ միևնույն է, թուրքական կառավարությունը հայակործան իր քաղաքականությունից հրաժարվողը չէր։

Նման փաստարկները հիմք են հանդիսացել, որպեսզի որոշ հեղինակներ Ս. Խապայանի վարքագիծը բնութագրեն որպես միամտություն և կույր հավատ երիտթուրք գործիչների նկատմամբ։ Այդ առումով միանգամայն դիպուկ է Ռ. Գասպարյանի այն պնդումը, երբ նշում է, որ Զեյթունի սպիտակ դրոշ պարզելու մեջ մեղքի իր մեծ բաժինն ունեցած Սահակ կաթողիկոսը երկյուղում էր, թե զեյթունցիների անհնազանդության դեպքում տեղահանության և կոտորածի վտանգը կսպառնա իր ողջ համայնքին³։

Անկասկած է, որ Զեյթունի և կիլիկյան հայաշատ մյուս կենտրոնների հայերը պիտի գերադասեին զենքը ձեռքին մինչև վերջ մարտնչել, եթե միայն կարողանային ըմբռնել արևմտահայության գլխին կախված բնաջնջման վտանգն իր ողջ համվորությունից։ Սակայն այս հարցում զգացնել տվեց Սահակ կաթողիկոսի բացասական դերը։ Նա որոշ չափով տեղեկացված էր կոտորածների մասին և իր անհարկի հորդորներով փաստորեն ապակողմ-

¹ Աղէտէն վերապրողներ, 1915. Աղէտ և վերածնունդ, էջ 29։

² Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 240ա, վավ. 75, էջ 113։

³ Տե՛ս Գասպարյան Ռ., Հայերի ցեղասպանությունը Կիլիկիայում 1915-1916 թթ. «Արաբեր» հասարակական գիտություններ, 1993 թ., թիվ 1 (584) հունվար-մարտ, էջ 43-44, նաև նույնի Հոգվածների և հրապարակումների ժողովածու, էջ 73։

նորոշեց կիլիկիահայությունը և ամլության մատնեց նրա դիմադրական շարժումը¹։ Ինչպես նշում է Սեպուհ Ակունին. «Զէյթունցիները մինչև այսօր ալ կ'անիծեն Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսը, որ իր թեթևութեամբը պատճառ եղաւ իրենց դժբաղդութեան... Կառավարութիւնը Յուդայի համբոյրով ուզեց վտանգել այդ Արծւի Բոյնը և ասոր համար ձեռք առաւ Սահակ Կաթողիկոսը...»²։

Սակայն գրականության մեջ հանդիպում են նաև այլ մոտեցումներ, որոնց հեղինակները փորձել են արդարացնել կաթողիկոսի գործելակերպը։ Այսպես, դեպքերի ականատես-վերապրող վերապատվելի Տիգրան Անդրեասյանը հանիրավի է համարում Սահակ Բ-ի հասցեին հնչեցված քննադատությունները և մեղադրանքները՝ նշելով, որ Զէյթունի ապահովության տեսանկյունից Սահակ Բ-ի գլխավոր մտահոգությունը Կիլիկիայի հայության ֆիզիկական գոյության ապահովումն էր, քանի որ արտաքին միջամտության և օգնության բացակայության պայմաններում թուրքական մեծաքանակ ուժերի դեմ պայքարելն ընդամենը միամտություն էր, իսկ «հնազանդութեան մէջ գոնէ յոյս կար»³։

Կարծում ենք, որ իրականում կաթողիկոսը զգուշավոր և երիտթուրքական նենգ քաղաքականությունից հեռու կանգնած մի հոգևորական էր, որը կարճ ժամանակ անց միայն հասկացավ հայ ժողովրդի գլխին վրա հասած ողբերգության սարսափները։ Դա հատկապես պարզվում է Սսի կաթողիկոսի և Ա. Զեմալ փաշայի 1915 թ. հունիսի 16-ի հանդիպումից հետո, երբ վերջինս լսելով

¹ Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս Պողոսյան Հ.Մ., Առաջին համաշխարհային պատերազմը և Զէյթունի բնակչության տեղահանությունը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1968 թ., թիվ 6 (301), հունիս, էջ 38-39, նաև նույնի նշվ. աշխ., էջ 391-392, նաև Թորոսյան Շ.Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987, էջ 51։

² Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 45-46։

³ Անդրէասեան Տ., Զէյթունի տարագրութիւնը եւ Սուէտիոյ ապստամբութիւնը, Հալէպ, 1935, էջ 23-25։

կաթողիկոսի մտահոգությունները հայ աքսորյալների սարսափելի վիճակի մասին, փորձում է արդարացնել հայերի հանդեպ գործադրվող պետական քաղաքականությունը նշելով, որ Վանում, Դյորթյուրում և Զեյթունում հայերի կազմակերպած «խռովություններից» հետո «կառավարությունը հայերին որպես հայ է ճանաչում, նրանց միջև տարբերություն չի դնում՝ ավագակ են, կուսակցություն անդամ, կովկասցի, թե չուքուրացի: Նրանց բոլորին իր թշնամին է համարում՝ ինչպես ռուսներին, անգլիացիներին և ֆրանսիացիներին... [Հայ] քաղաքական կուսակցություններին արմատախիլ անելը և այն շրջանները դատարկելը, որոնցում հայ հոծ բնակչություն կա, կառավարության վճռական ու վերջնական որոշումն է»¹:

Ս. Խապայանի զգուշավորությունը երկընտրանքի առջև կանգնեցրեց նաև մուսալեռցիներին: 1915 թ. հուլիսի 29-ին Մուսա լեռան 6 գյուղերից մեկում՝ Յողուն-Օլուգում՝ Աբրահամ քահանա Տեր-Գալստյանի տանը գումարվում է գավառի 6 գյուղերի (-Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Խզրբեգ, Յողուն-Օլուք, Վազըֆ, Քեբուսին) աչքի ընկնող հայ ազգային գործիչների խորհրդակցություն, որի մասնակիցներից շատերն այն կարծիքին էին, որ կարելի էր հնազանդության և խաղաղ բանակցության միջոցով խուսափել բռնագաղթի արհավիրքից²: Այդ պատճառով էլ խորհրդակցությունը որոշում է դիմել Անտիոքի իշխանություններին՝ գավառի հայությանը բռնագաղթից զերծ պահելու խնդրանքով: Բանակցություններ վարելու համար կազմվում է հանձնաժողով՝ Աբրահամ քահանա Գալստյանի գլխավորությամբ: Սակայն ժողովուրդն ու ազգային գործիչների մեծ մասը հույս չէին կապում այս

¹ Աբշամ Թ., Հայերի բռնի իսլամացումը. լուսթյուն, ժխտում և ուժացում, Երևան, 2016, էջ 214:

² Տե՛ս Մուրադյան Հ., Մուսա լեռան դյուցազնամարտը, «ԲՆՀ», 1974, թիվ 1 (22), էջ 111:

հանձնաժողովի հաջողության հետ: Իսկ ովքեր կուսակալի հուսադրիչ պատասխանին էին սպասում, կատարելապես հուսախաբ են լինում, երբ ընդամենը մեկ օր հետո՝ հուլիսի 30-ին, ստացվում է նաև սուետիահայության տեղահանության հրամանը, որով 7- օրյա պայմանաժամ էր տրված՝ հայկական գյուղերը լիովին դատարկելու համար: Աբրահամ քահանան դեռ Անտիոքից չվերադարձած՝ գումարում է ազգային գործիչների երկրորդ խորհրդակցությունը, որի մասնակիցների առջև ծառանում է երկրնորանքը՝ կա՛մ կառավարության հրամանին հնազանդվելը, կա՛մ էլ զենքը ձեռքին բարձրանալ լեռը: Սակայն այդ որոշմանը ենթարկվեցին 4231 մարդ, իսկ մնացած 2080-ը՝ Բիթիասի քարոզիչ Նոխուսյանի գլխավորությամբ բռնեց տարագրության ճամփան և կոտորվեց¹:

1915 թ. հուլիսին իշխանությունները Սահակ Խապայանին ստիպեցին մեկնել նաև Ֆրնտըճագ և համոզել, որ ինքնապաշտպանները ենթարկվեն իշխանությունների ողորմությանը: Սակայն Ֆրնտըճագցիները գերադասեցին քաջաբար մեռնել²:

զ) Սահակ Բ Խապայանի աֆսոսը և հայ տառագիրնեի օգնությամբ կազմակերպումը: Կիլիկիահայության տեղահանություններից զերծ չմնաց նաև Սահակ Բ Խապայանը, որին շուտով նույնպես առաջարկվեց թողնել իր նախորդների դարավոր աթոռանիստը՝ Սիսը, և տեղափոխվել Հալեպի գավառակներից մեկը և սգալ իր հոտի հետ պատահած զարհուրելի եղելությունը: 1915 թ. հոկտեմբերի 21-ին Սահակ կաթողիկոսը թուրքական իշխանությունների պարտադրանքով աքսորվում է Սիրիայի Իզլիբ գյուղաքաղաք և մինչև 1915 թ. հոկտեմբերի 27-ը մնում է Հալեպում, որտեղ

¹ Տե՛ս Համբարյան Ա. Ս., Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990, էջ 78:

² Տաշեան վ. Յ. հ., Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 136:

նա անձամբ զբաղվում է տեղահանվածների հարցերով: Նա այցելում է Հալեպի մոտ գտնվող Բաթմայի համակենտրոնացման ճամբար և աքսորյալ հոգևորականների օգնությամբ պատշաճ ձևով կազմակերպում ցեղասպանության զոհ դարձած հայերի անթաղ մնացած դիակների հուղարկավորությունը¹: Հալեպում Սահակ Բ կաթողիկոսին աջակցում էր Հալեպի նահանգապետ Զելալ բեյը և Հալեպի ոստիկանապետ Ֆիքրի բեյը, որոնք նպաստավոր պայմաններ էին ստեղծել Հալեպում առաջացած «Գաղթականների օգնության հանձնախմբի» և հայ տարագիրների հարցերով զբաղվող այլ կազմակերպությունների գործունեության համար, որով մինչև 1915 թ. հուլիս՝ մինչև Զելալ բեյի Կոնիա տեղափոխվելը, նահանգում աքսորի հրաման չի գործադրվում հայերի նկատմամբ:

Կիրիկիահայության կոտորածները, տարագրությունը և դժոխային հուսահատ կացությունն առաջ բերեց կարեկցանքի մեծ զգացողություն համայն հայության շրջանում: Դժբախտացած հայերին օգնելու նպատակով Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի գլխավորությամբ հայրապետական կոնդակներ ուղղեց Պետրոգրադի, Մոսկվայի, Ամերիկայի, Եգիպտոսի գաղթականական հանձնաժողովներին՝ տառապալի կացության մեջ գտնվող արևմտահայերին նյութական և բարոյական օժանդակություն ցուցաբերելու համար: Գևորգ Ե-ը Ռուսաստանի Պետական Դոմայի անդամ Միքայել Պապաջանյանի աջակցությամբ և նրա անունով 50.000 ռուբլի փոխանցեց Պետրոգրադ՝ այն Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպան Զորջ Թովմաս Մարի և Կ. Պոլսի ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի միջոցով Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանին՝ 25.000 ռ. և Կիրիկիո

¹ Տե՛ս Կայզեր Հ., համահեղինակներ՝ Լյութեր և Նենսի Էսքիջյաններ, նշվ. աշխ., էջ 34:

կաթողիկոս Սահակ Բ Խապայանին՝ 25,000 ու. փոխանցելու համար¹։ Իր հերթին Սահակ Բ Խապայանը Հալեպ քշված կիլիկիացի աղետյալների համար իր կողմից փոխանցում է նախ 25,400 և 127,000, ապա երեք անգամ 25,400-ական, հետո 38,100, երկու անգամ՝ 6,350-ական և ապա՝ 15,875 ղուրուշ²։

է) Բռնի կրոնափոխության դրսևորումները։ Կիլիկիայում հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնությունների և կոտորածների հետ մեկտեղ լինում էին նաև կրոնափոխության առաջարկներ և բռնի մահմեդականացման տարբեր դրսևորումներ։ Այն պայմանավորված էր Մ. Թալեաթի 1915 թ. դեկտեմբերի 2-ի կրոնափոխության վերաբերյալ հրահանգով, որը գործադրվեց միայն վեց ամիս անց՝ 1916 թ. ամռանը, երբ Դեր - Զորում հավաքված հայ տարագիրները տեղափոխվում էին Միջագետքի տարբեր անկյուններ կոտորվելու։ Հրահանգում մասնավորապես նշվում էր, որ. «Լու՛ր տուէք եւ տեղեկացուցէ՛ք անոնց որոնք կ'ըզձան ազատուիլ բռնագաղթէն հաւատափոխութեամբ իսլամ դառնալով, որ անոնք պէտք է մահմետական կրօնքը ընդգրկեն իրենց

¹ Տե՛ս ՀԱՍ ֆ. 57, ց. 2, գ. 1278, թ. 7-8, նաև «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, հատոր Ա. (1914-1917)», Երևան, 2018, էջ 335։

² Տե՛ս Մինասեան Մ. Ա., Բերիոյ (Հալէպի) ազգային առաջնորդարանի գործունէութիւնը Հայոց Ցեղասպանութեան տարիներուն (1915-1918), «Հայերի փրկութեան գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 8-9, 2019, Երևան 2020, էջ 235-236։ Հալեպում հայ տարագիրների օգնությանն է նվիրված նաև Kaiser H., *Resisting Genocide: The Aleppo relief network 1915-1918* հոդվածը, «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 8-9, 2019, Երևան, 2020, էջ 259-293։

աքսորավայրին մէջ»¹։ Ճիշտ է, կրօնափոխութեան հրահանգը Երուսաղէմ չհասավ, սակայն Սահակ Բ Խապայանն այդ հարցում անտարբեր չմնաց։ Դիմելով Ա. Զեմալ փաշային՝ նա անտրամաբանական էր համարում մի կողմից իրեն Թուրքիայի Հայոց կաթողիկոս ընդունելը, իսկ մյուս կողմից իր հոտը կրօնափոխութեան ենթարկելը։ Երբ կրօնափոխութեան հարցով Սահակ Բ Խապայանն իր գավազանակիր Գյուտ վարդապետին ուղարկում է «հայասեր» Ա. Զեմալի մոտ, վերջինս նրան հորդորում է. «Ես կը յարգեմ Սահակ Կաթողիկոսը. գնա խօսէ՛ իրեն (խոսքը Սահակ Բ կաթողիկոսի մասին է - Վ. Հ.), որ մինչեւ պատերազմին վերջաւորութիւնը՝ թող հայերը ընդունին եթէ կապիկի կրօնքն իսկ իրենց առաջարկուի. ետքը՝ զիս պիտի օրհնեն բոլորը»²։

Կրօնափոխութեան մասին բավական ուշագրավ վկայութիւն է փոխանցում Մուսա լեռան Քաբուսիե գյուղի ականատես վերապրող Գրիգոր Գյոզալյանը (ծնվ. 1903 թ.), որը հաղորդում է, որ. «Քահանայահավաքից մի քանի շաբաթ անց մեզ մօտ մի թուրք մոլլա հայտնվեց՝ իր օգնական գրագրով։ Մոլլան կարգադրեց հավաքել շրջանում եղած բոլոր գաղթականներին։ Մի տասնհինգ ընդհանուր քսան-քսանհինգ հոգի ժողովվեց։ Մոլլան բավական երկար քարոզ կարդաց մեզ, պարզեց մահմեդականութեան առավելութիւնները՝ քրիստոնեութեան նկատմամբ... Եվ այսպէս, մեկ ժամվա մեջ և մեկ ժամվա համար քսան-քսանհինգ քրիստոնյա

¹ Պողարեան Գ., Յեղասպան թուրքը. վկայութիւններ՝ քաղուած հրաշքով փրկուածներու գրողցներէն, Պէյրութ, 1973, էջ 7։

² «Յուշամատեն Մեծ Եղեռնի», հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, Պէյրութ, 1965, էջ 104։

հայեր դարձան մահմեդականներ...Իհարկե, մեր շրջանի դավանափոխությունը միակը չէր, և այլ շրջաններում նույնպես տեղի են ունեցել նման արարողություններ»¹:

Կրոնափոխության մասին է ակնարկում նաև Մուսա լեռան Հաջի-Հաբիբլի գյուղի ականատես վերապրող Մարիամ Բաղդիշյանը (ծնվ. 1909 թ.), որը նշում է. «Կառավարութենէն ամր՝ հրաման էկավ. «Շներին թույնե՛ք»: Ան կուգեր հասկցնել, որ հայերուն գլուխը ուտեն, ամմա Աղանայի կուսակալ Ա. Զեմալ փաշան մեզի տեր կանգնավ: Ան իսկական շներին թույնել տվեց, հայերին ազատեց մահէն, ամմա ըսավ՝ ձեր անունները պիտի փոխեք, թուրքի անուն պիտի դնեք, որ ձեզ չսպանեն...: Կըսեին քի Զեմալ փաշան փոքր ժամանակ հայ կնկա կաթ ծծած է, անոր համար հայերուն աղեկ աչքով կնայեր: Ան վերջը հրաման տվավ, որ մեր անունները փոխենք. մեկը՝ Շուքրի, մեկը՝ Ահմեդ, մեկը՝ Հյուսեին դարձավ, կնիկներուն, աղջիկներուն անուններն ալ փոխեցին, որ գլուխնին փորձանք չգա: Էսպեսով հայ մնացինք»²:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս երկրամասերը, Կիլիկիան ևս զերծ չմնաց կատարվող բռնություններից: Այդ ամենի անմիջական արդյունքը եղավ Զեյթունի և մյուս վայրերի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնաճնշումների և տարագրության ցեղասպանության քաղաքականությունը, որը դրսևորվեց նաև Կիլիկիո կաթողիկոսության նկատմամբ: 1915 թ. ապրիլի 30-ին իշխանությունների կարգադրությամբ խուզարկվեց և թալանվեց Սսի Մայրավանքի տարածքը: Սահակ Բ Խապայանը, որի պաշտոնավարման պատերազմական շրջանը լի էր դժբախտությ-

¹ Սվադլյան Վ., Մուսա լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2015, էջ 67:

² Անդ:

յունների, կոտորածների և տարագրության սրտաճմլիկ դրվագներով, 1915 թ. փետրվարից մինչև մայիսի 25-ը մնաց Ադանայում և կառավարությանն ուղղված իր բազմաթիվ բողոք-նամակներով փորձեց օժանդակություն ստանալ նրանից՝ բռնաճնշումները կանխելու համար։ Նա միամտաբար հավատում էր, որ կատարվող հանցագործությունները սոսկ տեղական պաշտոնյաների ոճիրներն էին, և հույս ուներ, որ թուրքական կառավարությունը հեշտությամբ վերջ կտար դրանց։

2.2. Օսմանյան կառավարության 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնադիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» օրինագիծը

ա) Կիլիկիանայության ազգային-կրոնական գոյության կարգավիճակի այլափոխումը։ 1915 թ. հոկտեմբերի 31-ին Սահակ Բ Խաչապանյան օսմանյան իշխանությունների նոր հրամանագրով, այս անգամ, Իգլիբից աքսորվեց Երուսաղեմ, որը հայտնի էր որպես արևմտահայ եկեղեցու հովվապետների աքսորավայր։ Սակայն նրա կապը Մայրավանքի հետ չընդհատվեց։ Բարեբախտաբար, Հալեպում և Երուսաղեմում եղած ժամանակ Սահակ Բ կարողացավ համոզել Ա. Զեմալ փաշային, որպեսզի վերականգնվեն կաթողիկոսության իրավունքները Մայրավանքի նկատմամբ։ Սակայն վանքն այդպես էլ չկարողացավ իրեն վերագտնել։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական իշխանությունների կողմից կիլիկիահայությունն նկատմամբ իրականացված տեղահանությունների և կոտորածների քաղաքականությունը հաջորդաբար նոր վտանգ ստեղծեց Սսի կաթողիկոսության հետագա գոյության և Հայ առաքելական

եկեղեցու միասնականության համար: Այս անգամ երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ կիրիկիահայության ազգային-կրոնական գոյության կարգավիճակի ալյափոխմանը: Նշենք, որ արևմտահայությանը էջմիածնից կտրելու օսմանյան քաղաքականությունը, որը սկիզբ էր առել դեռևս նախորդ ժամանակներում, ամենևին էլ նորություն չէր: Դեռևս 1624 թ. նման ծրագրով կիրիկիո կաթողիկոս էր ուզում դառնալ Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսի եղբորորդին և նրա աթոռակից Սահակ Գառնեցին: Նրանից հետո՝ 1663 թ.-ից նման մտադրություն ունեւ Կ. Պոլսի պատրիարք Եղիազար Այնթապցին, որը ցանկանում էր հիմնադրել Արևմտահայոց առանձին կաթողիկոսություն՝ Երուսաղեմ կենտրոնով: Այն իր մեջ ներառելու էր Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքություններն ու Օսմանյան կայսրության էջմիածնապատկան բոլոր թեմերը¹:

Այս ծրագրի մասին նա առաջին անգամ հայտնում է Երուսաղեմ ուխտի եկած կիրիկիո ինչաատուր Գաղատացի կաթողիկոսին², որն էլ խոստանում է օգնել նրան: Մտահղացումն, իհարկե, ձեռնառն էր նաև Խ. Գաղատացուն, քանի որ եթե Արևմտահայոց կաթողիկոսությունն իրականություն դառնար, կթուլանային էջմիածնի դիրքերը, իսկ Գաղատացին ձեռք կբերեր հզոր դաշնակից՝ ընդդեմ Դավիթ Բերիացու (Կարկառեցի), որը հակաթոռ կաթողիկոս էր ձեռնադրվել Սսում: Ե. Այնթապցին գումարով և նվերներով շտապեց Օսմանյան սուլթանության

¹ Տե՛ս **Զամչեանց Մ.**, նշվ. աշխ., Գ հատոր, էջ 697, նաև **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, Ս. էջմիածին, հրատարակության պատրաստեց Ա. Տեր-Ստեփանյանը, Ս. էջմիածին, 2014, էջ 157, նաև **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 200:

² Տե՛ս **Զամչեանց Մ.**, նշվ. աշխ., հատոր Գ, էջ 697:

մեծ վեզիրի մոտ՝ նրանից կաթողիկոսական իշխանության հաստատման հրովարտակ ստանալու ակնկալիքով: Այստեղ նա մտերմացավ վեզիրի գործակից և վերջինիս սեղանավոր Ապրո չեկեպու հետ, որին դուր եկավ Ե. Այնթապցու ծրագիրը, քանի որ այդպես հնարավոր կլիներ չեզոքացնել Մայր Աթոռի միջոցով պարսկական իշխանության հնարավոր ազդեցությունը Հայաստանի արևմտյան հատվածի վրա: 1664 թ. Ե. Այնթապցին ստացավ իր կաթողիկոսական հրովարտակը, որով իրեն պետք է ենթարկվեին Օսմանյան կայսրության տարածքում գտնվող էջմիածնապատկան թեմերը և Երուսաղեմի պատրիարքությունը: Ե. Այնթապցին մեկնելով Բերիա՝ նամակ գրեց խաչատուր Գաղատացուն, որպեսզի նա պայմանավորվածության համաձայն ժամանի և իրեն կաթողիկոսական օծում շնորհի: Օծումը կատարվեց Կ. Պոլսի Բերիայի ս. Քառասուն Մանկանց եկեղեցում 1664 թ.՝ հիմք դնելով Արևմտահայոց հակաթոռ կաթողիկոսությանը: Ե. Այնթապցու այդ գործելակերպը ավելի խորացրեց Հայ եկեղեցու հոգևոր կենտրոնների փոխհարաբերություններում առկա երկպառակության ճգնաժամը և մեծ հարված հասցվեց Ամենայն հայոց կաթողիկոսության ընդհանրական բնույթին:

1665 թ. Հակոբ Դ կաթողիկոսի գլխավորությամբ էջմիածնում ժողով գումարվեց և որոշվեց, որ Ամենայն հայոց հայրապետը պետք է անձամբ մեկնեի Կ. Պոլիս՝ վերջ դնելու համար երկպառակությանը: Ե. Այնթապցին որոշեց հաշտության ձեռք մեկնել և 12 կանոններից բաղկացած առաջարկ ներկայացնել Հակոբ Դ կաթողիկոսին, որն էլ նրան բացատրեց դրա վտանգավորությունն ազգի և եկեղեցու համար¹: Սուլթանն ընդառաջելով Հակոբ Զուղայեցու խնդրանքին՝ 1667 թ. իր նոր հրովարտակով

¹ Տե՛ս Մխիթարեան Խ., Համառոտ պատմություն Երուսաղեմի եւ ստորագրություն սրբազան տեղեաց, Երուսաղեմ, 1867, էջ 103:

նրան ճանաչեց նաև արևմտահայության կաթողիկոս՝ նրա հայրապետական իշխանությանը ենթարկելով նաև Երուսաղեմի պատրիարքությունը¹:

Արևմտահայոց հակաթոռ կաթողիկոսության գաղափարը որոշակի փոխակերպումով կիրառություն գտավ նաև Առաջին աշխարհամարտի տարիներին: Երիտթուրքերը վստահ էին, որ եթե կիլիկիահայությանը կարողանային անջատել Ս. Էջմիածնից, ապա շատ ավելի հեշտ կլինեին արևմտահայությանն իր ինքնությունից զրկելը: Իշխանական վերնախավը մտահոգ էր այն հանգամանքով, որ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, որը նկատելի ազդեցություն ուներ ողջ Օսմանյան կայսրությունում գործող իր նվիրապետական աթոռների ու թեմերի վրա, գտնվում էր իրենց դեմ պատերազմող Ռուսաստանի տարածքում: Այդ պատակով թուրքական կառավարությունը նախ որոշում է մշակել նոր կանոնադրություն՝ Երուսաղեմի պատրիարքության իրավունքները սահմանափակելու և նրա նկատմամբ հսկողություն հաստատելու համար, իսկ այնտեղ նստող հովվապետին էլ տալ «Կաթողիկոս-Պատրիարք Թուրքիոյ Հայոց» տիտղոսը: Այդ պատճառով 1916 թ. ապրիլի վերջերին Թալեաթը Զեմալին ուղղված իր նամակում նշում էր, որ Օսմանյան կայսրությունում գործող հայկական կրոնական բոլոր կառույցները Սսի կաթողիկոսության հետ միացնելու շնորհիվ հնարավոր կլինեին կանխել էջմիածնի միջամտությունը արևմտահայերի ներքին գործերին²:

¹ Տե՛ս Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս. Նշանեան, հ. Ա, Երուսաղէմ, 1931, էջ 618:

² Մանվեղյան Ս. Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի գործունեությունը 1912-1922 թթ., Ատենախոսություն, է. 00.01, «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2019, էջ 84:

Երուսաղեմի ս. Հարության տաճարը հայության այն եզակի վայրերից էր, ուր հաճախ էին այցելում թուրք բարձրաստիճան պաշտոնյաները՝ այդ թվում նաև էնվերը և Ա. Զեմալը: 1916 թ. ամռան սկզբներին հերթական անգամ Երուսաղեմի պատրիարքարան այցելեց Ա. Զեմալը: Ինչպես Երուսաղեմի պատրիարք Եղիշե եպս. Զիլինկիրյանն է հիշում. «Այդ այցելութեան մէջ թաքուն նպատակ մը կայ եղեր որ վերջէն հասկցուեցաւ»¹: Նա Սսի Կաթողիկոսական աթոռի, ինչպես նաև Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքութիւնների ընտրական եղանակների մասին Սահակ Բ Խապայանից, Կ. Պոլսի պատրիարք Մ. արք. Օրմանյանից և Երուսաղեմի պատրիարք Ե. եպս. Զիլինկիրյանից որոշակի տեղեկութիւններ ստանալուց հետո նրանց առաջարկեց խզել կապերը Ս. էջմիածնի կաթողիկոսության հետ՝ պատճառաբանելով, որ. «Ի՞նչ հարկ կայ էջմիածնի կաթողիկոսը՝ հոգեւորական գլուխ ճանչնալու Թուրքիոյ Հայուն...»: Սակայն Մ. արք. Օրմանյանն իր պատասխան խոսքում առարկում է Ա. Զեմալին, պարզաբանելով, որ էջմիածինը Օսմանյան Թուրքիայի հայ եկեղեցու խնդիրներին գրեթե չի միջամտում, և որ այն՝ «Ի սկզբանէ անտի Քրիստոնէութեան՝ Հայոց Եկեղեցին էջմիածնայ Կաթողիկոսը հոգեւոր գլուխ ճանչցված է և այնպէս ալ նուիրականացած է»²:

Նախատեսվող փոփոխութիւնները Սսի կաթողիկոսին հայտնելու և նրան նոր պաշտոն առաջադրելու համար Ա. Զեմալ փաշան իր մոտ է հրավիրում Սահակ Բ Խապայանին: Վերջինս իր հետ վերցնելով Կիլիկիայի կաթողիկոսական տեղապահ Գյուտ

¹ Զիլինկիրեան Ե. եպս., Նկարագրութիւնք Երուսաղեմի-Հալէպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, էջ 15:

² Անդ, էջ 15:

եպիսկոպոսին և իր անբաժան ուղեկից Եղիշե եպիսկոպոս Կարոյանին, մեկնում է Ա. Զեմալի հետ հանդիպման¹: Եղեռնագործ փաշան հարմար պահ ընտրելով և կաթողիկոսի հետ առանձնանալով, միանգամից նրան հայտնում է իր ասելիքը. «...չենք ուզեր, որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն Հոգեւոր Պետը ըլլայ, և կառաւարութիւնը որոշեց այդ հոգեւոր յարաբերութիւնը խզել և փոխանակ երկու Պատրիարքութեան և երկու Կաթողիկոսություն ունենալու, կը միացնէ Պոլսոյ և Երուսաղեմի Պատրիարքութիւնները և Աղթամարի Կաթողիկոսութիւնը և կը պահէ միայն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն աթոռ պիտի ըլլայ Երուսաղեմի հայոց վանքը և իր տիտղոսն պիտի ըլլայ Կաթողիկոս-Պատրիարք բովանդակ Հայոց Թիւրքիոյ»²:

Սահակ Խապայանն իհարկե գիտակցելով, որ նոր օրինագիծը մեծ հարված էր հասցնելու Հայոց եկեղեցու դարավոր ավանդույթներին, անակնկալի գալով խնդրում է իրեն ազատել

¹ Եղիշե եպս. Կարոյանը Սահակ Բ Խապայանի քարոզների թուրքերենի թարգմանիչն էր: Հետագայում նա դարձավ Լիբանանի թեմի առաջնորդը: Տե՛ս Ատանայի հայոց պատմութիւն, նշվ. աշխ., էջ 365:

² Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 57-58: Ահա թե ինչ ենք կարդում Կ.Պոլսի պատրիարք Զ. արք. Տէր-Եղիաեանի հուշերում. «1916 թ. յունուարի սկիզբը Պատրիարքարանի գործակատար Գամէր Շիրինեան Ֆիլիպպէ գնաց՝ իր ընտանիքը տեսնելու: Վերադարձին ինծի պատմեց թէ Բիւզանդ Քէշեանի հետ տեսնուած էր ֆիլիպպէի մէջ: Քէշեան պատմած էր... թե տեսակցած է ոստիկանության տեսուչ Պէտրի Պէյի եւ ոստիկանութեան քաղաքական ճիւղի տնօրէն Բէշատ Պէյի հետ, որոնք իրեն ըսած են՝ թէ Հայոց Ազգային Սահմանադրութիւնը ջնջուած է արդէն... նոր օրէնք մը շինուած է... Այս օրէնքով ծրագրուած էր Պատրիարքութիւնը էջմիածնէն բաժնել և Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ միացնել, էջմիածնի հետ ամէն յարաբերութիւն խզելով...»: Մանրամասները տե՛ս Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշեր. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 187-188:

Կիլիկիո կաթողիկոսի պաշտոնից՝ պատճառաբանելով իր ծերությունը: Սակայն Ա. Զեմալը պատասխանում է. «Ձեր ժողովուրդի սիրոյն համար ստանձնեցէք այս պաշտոնը, վստահ եղէք որ կառաւարութիւնը ամէն նիւթական և բարոյական օգնութիւն պիտի ընձեռէ Ձեզի, Ձեր ժողովուրդի հալածանքը պիտի դադրի, լաւ խորհեցեք, ոչ թէ իբրեւ հրամանատար, այլ իբրեւ Ձեր բարեկամը կը խօսիմ Ձեզ»¹: Բնականաբար, Ա. Զեմալի այս խոսքերն իրականութեան հետ ոչ մի աղերս չունեին, քանի որ բարեկամութեան մասին էր խոսում հայ ժողովուրդի գլխավոր դահիճներից մեկը: Սակայն ակնհայտ էր, որ այդ ամենի հետևում թաքնված էր իշխանութիւնների դավադիր ցանկութիւնը՝ վերացնել Սսի կաթողիկոսութիւնը և խզել նրա կապերը Ս. Էջմիածնի կաթողիկոսութեան հետ:

Ա. Զեմալը վերջնական պատասխանի համար Սահակ Բ հապայանին ընդամենը մեկ օր ժամանակ է տալիս՝ հավելելով Նախարարների խորհրդի «սիրահոժար» որոշումը, համաձայն որի՝ Սսի կաթողիկոսութեան կալվածքները հետ էին վերադարձվելու Կիլիկիո կաթողիկոսութեանը և այնտեղ պաշտօնավարելու համար նրան պատվիրում է մի եպիսկոպոս ընտրել:

Ժամանակավրեպ և ոչնչով չպատճառաբանված երիտթուրքերի կողմից պարտադրված պառակտիչ այդ որոշումը ծանրապէս ազդում է ծերունազարդ կաթողիկոսի վրա, որն էլ հուսահատ վերադառնում է ս. Հակոբի վանք: Սակայն մեկ օր անց Սահակ Բ հապայանը Ա. Զեմալին տեղեկացնում է իր հոժարամտութեան մասին, որն իհարկէ շատ է ուրախացնում փաշային: Զեմալը՝ որպէս Սսի կալվածքների պատասխանատու նշանակում է Եղիշե եպս. Կարոյանին, որն էլ 1916 թ. հունիսի 16-ին իշխանութիւնների հատուկ թույլտվութեամբ վերադառնում է Սիս՝

¹ Կիլեսերեան Բ., նշվ. աշխ., էջ 926:

փորձելով տեր կանգնել վանքի կալվածքներին և վերականգնել հայ եկեղեցու խախտված իրավունքները:

բ) «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծը: Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցուն վիրապետության դեմ ուղղված ոճրագործություններից թերևս ամենասարսափելին՝ «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» («էրմենի կաթողիկոս վե բաթրիք նիզամնամէսի») օրինագիծն էր¹, որը թվագրված էր 19 հուլիսի / 1 օգոստոսի 1916 թ. (հիշրեի 2 հունիսի 1334 թ.): Այն իրավական ուժ էր ստացել սուլթան Մեմեդ V Բեշատի կողմից, հաստատվել էր երիտթուրքական հայատյաց կառավարության ղեկավար անձանց ստորագրություններով², հրատարակվել էր թուրքական կայսերական «Թաքվիմի Վաքայի» թերթի 1916 թ. օգոստոսի 10-ի թիվ 2611 համարում³ և 1916 թ. օգոստոսի 11-ին ի լուր ամենքի պաշտոնապես տեղեկացվել էր թուրքական «Միլլի» գործակալության կողմից⁴:

Կանոնագիրը բաղկացած էր առաջաբանից, 3 գլուխներից և 39 հոդվածներից⁵: Հստ 1916 թ. հուլիսի 16-ի կանոնագրի.

¹ Տե՛ս «Հրամանաւ Տ.Տ. Սահակայ Սրբազնագոյն կաթողիկոսի Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքի Ս. Երուսաղէմի և Կ.Պոլսոյ», Երուսաղեմ, 1917:

² Տե՛ս **Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, նշվ. աշխ., էջ 948:

³ Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», հատոր II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալյանի, Երևան, 2008, էջ 86-87:

⁴ Տե՛ս АВПРИ, ф. 151 Политархив, 1916г., оп. 482, д. 3509, л. 4.

⁵ 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագրի մասին ավելի մանրամասն տե՛ս **Հրանդ Ժ. վարդապետ**, Օսմանեան պետությունը եւ հայ. եկեղեցիի անկախութիւնը, յաւելուած Կ. Պատրիարքարանի կանոնագիրը, Կ. Պոլիս, 1917, էջ 65-78, նաև «Մեծ

Ա. Սսի և Աղթամարի Հայոց կաթողիկոսությունները, Երուսաղեմի ու Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունները պետք է միավորվեին և այսուհետ հանդես գային որպես մեկ ընդհանուր եկեղեցական կառույց՝ «կաթողիկոս-պատրիարք»-ի՝ օսմանյան հայերի հոգևոր առաջնորդի ղեկավարության ներքո: Կիլիկիո Հայոց կաթողիկոսի տիտղոսն ու աստիճանը համապատասխանեցվում էր հունական Ուղղափառ եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին և կոչվում էր «կաթողիկոս - պատրիարք», իսկ Սահակ Բ Խապայանն էլ՝ որպես Կիլիկիո կաթողիկոս, ստիպված էր ընդունել կատարված փոփոխությունը և իրեն կոչել՝ «Սահակ սրբազնագույն կաթողիկոս Հայոց Թուրքիո և պատրիարք Ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսո»։ Կաթողիկոս - պատրիարքի նստավայր էր հռչակվում Երուսաղեմը: Կ.Պոլսի Հայոց պատրիարքը դադարում էր Օսմանյան կայսրության հայ համայնքի ղեկավարը լինելուց:

Իշխանություններն անտեսելով պատրիարքի հոգևոր-եկեղեցական նախկին պարտականությունները, նրան սահմանափակում էին պոլսահայ համայնքի ներքին գործերի կառավարչի պաշտոնում: Այս առիթով Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխը գրում է. «Հայերի պատրիարքը այլևս հայ միլլեթի (ազգի – Վ. Հ.) գլխավորը չէ, այլ մի ջեմայեթի՝ պաշտամունքային համայնքի առաջնորդ: Այս արտահայտությունը կիրառվում էր Բ. Դռան գրասենյակային ոճում՝ բողոքական հայերի համեստ համայնքների և կարաիտյան հրեաների վերաբերյալ (մինչդեռ հույները, հրեաները և մինչև այժմ նաև հայերը միլլեթ էին կազմում)¹:

տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)», հատոր 1, Երևան, 2005, էջ 441-454:

¹ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», գիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես

Կիրիկիո կաթողիկոսը, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքները, ինչպես նաև եպիսկոպոսները և համայնքի հասարակ քահանաները զրկվում էին իրենց նախկին բազմաթիվ լիազորություններից, իսկ Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքին իրավունք էր վերապահվում եպիսկոպոսներ ձեռնադրել միայն Օսմանյան Թուրքիայի տարածքում¹։ Կիրիկիո Հայոց կաթողիկոսի հոգևոր գործառույթների սահմանափակումը նշանակում էր, որ իշխանությունները ցանկացած պահի՝ սուլթանական հրամանագրով՝ «Ֆերմանով» կարող էին պատրիարքին զրկել իր զբաղեցրած պաշտոնից։ Նա պետք է գործեր կանոնակարգի համաձայն և համապատասխան սահմաններում և անհրաժեշտության դեպքում իրավունք ուներ դիմելու միմիայն Կրոնի նախարարություն՝ այն էլ միայն կրոնական հարցերի համար։ Դեսպան Վոլֆ Մետերնիխը 1916 թ. օգոստոսի 23-ին ռալիսականցիեր ֆոն Բեթման Հոլվեգին իրազեկում էր, որ կանոնագրի համաձայն՝ կաթողիկոսը զրկվում էր քաղաքական ամեն տեսակի գործընթացներին մասնակից դառնալու հնարավորությունից։ Նա դադարում էր ազգային խորհրդի գործադիր մարմին լինելուց և վերածվում էր միայն կառավարության հրամաններ կատարող հանձնակատարի, որն իրավունք էր ստանում գործ ունենալու միայն օսմանյան պաշտամունքային գերատեսչության՝ որպես վերադաս իշխանության հետ, մինչդեռ նախկինում նա անհրաժեշտության դեպքում մոտք ուներ օսմանյան բոլոր պաշտոնյաների՝ նաև սուլթանի մոտ։ Ըստ Վ. Մետերնիխի՝ նոր օրինագիծը

Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից Վալենտինա Մինալյանի, Երևան, 2006, էջ 54։

¹ Արևմտյան Հայաստանում եպիսկոպոս կարող էին կարգվել այն շրջաններում, որտեղ կար ավելի քան 15 000 հայ բնակչության։

հանրագումարի էր բերում կառավարության բոլոր այն միջոցառումները, որոնց համաձայն արևմտահայերը՝ որպես կենսական ազգ պետք է ոչնչացվեին¹։

Բ. 1916 թ. կանոնագրի հետին, բայց ակնհայտ բուն նպատակը՝ արևմտահայության և էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության վարչա-իրավական և հասարակական հաստատությունների միջև կապերի լիակատար խզումն էր։ Անվիճելի էր Բարձր Դռան քաղաքական շահը՝ վերացնելու երկակի և աստիճանակարգային այն կապերն ու հարաբերությունները, ըստ որի՝ Կ.Պոլսի պատրիարքը միաժամանակ ենթարկվում էր թե՛ օսմանյան կառավարությանը և թե՛ Ամենայն Հայոց կաթողիկոսին։ Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների ու երկու պատրիարքությունների միաձուլումով կաթողիկոս-պատրիարքը և նրան ենթակա եպիսկոպոսներն այսուհետև անկախ էին դառնում էջմիածնից և հայ քաղաքական կուսակցություններից։ էջմիածնի հետ բոլոր տեսակի կապերի խզումը հետագայում այն հետևանքն ունեցավ, որ արևմտահայերը զրկվեցին էջմիածնի կաթողիկոսի ընտրություններին անմիջականորեն մասնակցելու իրավունքից։

Մ. Քելեջյանը նկատում է, որ, «Կառաւարութիւնը, հայութեան բեկորները վերջնականապէս անջատելու համար իրենց հոգեւոր կեդրոններէն, կ'ուզէ մոռցնել տալ էջմիածինն ու Հայաստան...»²։ Յ. Լեփսիուսը կարծում է, որ էջմիածնի հետ Սսի կաթողիկոսության կապերի խզումը մոտավորապես նույնպիսի

¹ Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006, էջ 88։

² Քելեջեան Մ., նշվ. աշխ., էջ 280։

նշանակության միջոցառում էր, ինչպիսին եթե Գերմանիայի կաթոլիկական եկեղեցին պետական օրենքով անջատվեր Հռոմից¹: Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Մաղաքիա արք. Օրմանյանը, որը կարծում է, որ. «Հայերը Մայր Աթոռ է բաժնել նոյն է ինչ որ է կաթոլիկները Հռոմէն բաժնելը...»²: Իսկ ըստ Տիրան արք. Ներսոյանի՝ «Պոլիս կրցաւ, առանց կարենալու Հերձուածին վերացումը յաշողեցնել, անուղղակօրէն կապ մը հանդիսանալ Կիլիկիան այսպէս կոչուած կաթողիկոսութեան եւ Մայր Աթոռի միջեւ...Այս կերպ Կիլիկիան Հերձուածը որոշ չափով զսպանակուած եղաւ եւ առաջքն առնուեցաւ դաւանական եւ կանոնական ավելի խոր ճեղքուածքի»³:

Գ. Օսմանյան իշխանությունների կողմից իրագործվող երրորդ կարևորագույն խնդիրը՝ 1863 թ. արևմտահայերի Ազգային Սահմանադրության կիրառման սահմանափակումն էր, որով փաստորեն վերջ էր տրվում արևմտահայերի «դեմոկրատական իշխանությանը»⁴: Ըստ էության, փոշիացվում էր Կ.Պոլսի Հայոց պատրիարքության գործունեությունը, դադարում էին գործելուց Ազգային ընդհանուր ժողովը, Ազգային կենտրոնական վարչությունը, ազգային գավառական, տնտեսական, ուսումնական

¹ Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. 1, հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Թարգմանությունը գերմաներենից Վալենտինա Մինալյանի, էջ 54:

² **Օրմանեան Մ. արքեպս.**, Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղեմ, 1929, էջ 339:

³ «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԲ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու (նվիրվում է ծննդյան 100- ամյակին), կազմեց Սանդրո Բեհբուղյանը, Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2004, էջ 597:

⁴ Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. II, հատոր I, հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Թարգմանությունը գերմաներենից Վալենտինա Մինալյանի, էջ 87:

վարչությունները, ինչպես նաև Ազգային - կրոնական և Ազգային - քաղաքական ժողովները, և արևմտահայության ազգային գործունեությունը սահմանափակվում էր միայն եկեղեցականների կողմից կատարվող զուտ ծիսական արարողություններով: Բանն այն էր, որ Օսմանյան կայսրության տարածքում հարյուրամյակներ շարունակ իր գոյությունը պահպանած արևմտահայ եկեղեցական համայնքն ազգի միասնության վերջին կապն էր: Բացի այդ, արևմտահայերի Ազգային Սահմանադրությամբ նախատեսված ազգային-կրոնական մարմինները՝ «Մեծ խորհուրդը» հիմնականում կազմված էր Կ. Պոլսի աչքի ընկնող հայերից՝ որպես արևմտահայ ազգային-քաղաքական շահերն արտահայտող յուրատեսակ մի համակարգ, որն էլ իր հերթին Հայոց պատրիարքի՝ որպես հայ ժողովրդի հոգևոր - ազգային ներկայացուցչի տնօրինության ներքո էր:

Դ. Օսմանյան իշխանությունների կողմից ակնկալվող շորրորդ կարևոր նպատակն այն էր, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքության տնօրինության տակ գործող հայկական բոլոր դպրոցները դրվում էին Կրթության նախարարության անմիջական վերահսկողության ներքո, իսկ հայ եպիսկոպոսներն ու քահանաները կարող էին կառավարության կողմից ցանկացած պահին հեռացվել պաշտոնից¹:

Եթե ընդհանրացնելու լինենք կանոնակարգի հիմնական դրույթները, ապա կարող ենք ընդհանրացնել, որ 1916 թ. հուլիսի 19-ի օրինագծի ընդգծված վերջնարդյունքը արևմտահայոց հոգևոր իրավակարգի ձևախեղումն էր, ըստ որի՝ ա) պետք է չեղարկվեր 1863 թ. Արևմտահայերի ազգային սահմանադրությունը, բ) պետք է վերանար 1461 թ. սուլթան Մահմուտ Ֆաթիհի կողմից ստեղծված Կ. Պոլսի Հայոց պարիարքությունը, գ) Սսի

¹ Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 118:

Կաթողիկոսական աթոռը պետք է տեղափոխվեր Երուսաղեմ և կոտորված արևմտահայության հոգևոր կենտրոնն ու նստավայր պետք է հռչակվեր Երուսաղեմի Հայոց վանքը, որտեղ իր աթոռը պետք է ստանձնեի «Կաթողիկոս - Պատրիարք Թուրքիոյ Հայոցը»-ը՝ որպես օսմանյան հայերի հոգևոր առաջնորդ։ Նրա տիտղոսն ու աստիճանը պետք է համապատասխանեցվեր հունական ուղղափառ եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին, դ) կաթողիկոս-պատրիարքի իրավասուության տակ պետք է դրվեին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները։ Այդ միաձուլումով կաթողիկոս-պատրիարքն իրավունք էր ստանում եպիսկոպոսներ ձեռնադրել Թուրքիայում և էջմիածնից դառնում էր լիովին անկախ։

Նշենք ամենակարևորը, որ 1916 թ. հուլիսի 19-ի օսմանյան օրենքը հակասում էր 1878 թ. Բեռլինի պայմանագրի 62-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին, ըստ որի՝ «բոլորն ապահովվում են ամեն տեսակ ժամբարդության և եկեղեցական ծիսակատարության ազատությամբ», և ոչ մի տեսակի ճնշումներ չէին կարող խանգարել կրոնական տարբեր համայնքների աստիճանակարգային կառուցվածքին և իրենց հոգևոր պետերի հետ նրանց ունեցած կապերին¹։ Բանն այն է, որ Հայ եկեղեցու նվիրապետական կարգը կամ առաքելական օրենքներն Օսմանյան պետության կողմից չէ, որ տրվել էին հայերին, որ իշխանություններն էլ ցանկացած ժամանակ այն հետ վերցնեին կամ փոփոխեին։ Ինչ վերաբերում է նվիրապետական աթոռների ձուլմանը կամ բաժանելուն, այն նույնպես օրինական չէր Օսմանյան պետության կողմից, քանի որ ինչպես Մ. արք. Օրմանյան պատ-

¹ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Զ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 128։

րիարքն էր նշում. «Աթոռներու գոյութիւնն ու ծագումը ու կեանքը եկեղեցական օրէնքներով եղած է, և եկեղեցական օրէնքներով միայն կրնայ փոփոխուիլ... հետեւեալ, քաղաքական իշխանութեան ոտնձգութիւնը իրաւական եւ օրինական սկզբունքներու հակառակ է»¹:

Այդ է պատճառը որ Կ.Պոլսի գերմանական դեսպան Մետերնիխը 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծը համարում է հայ ազգային եկեղեցու «Capitis deminutio» (իրավունքների սահմանափակում կամ զրկում)², իսկ Յ. Լեփսիուսն այն համարում է արևմտահայության բնաջնջման գործի պսակը³:

Հայոց կաթողիկոսության և պատրիարքության օրինագծի անօրինականությանն արձագանքել է նաև նորվեգացի հայտնի դիվանագետ Ն. Հոֆը, որը դեռևս 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նշանակվել էր Արևմտյան Հայաստանի Հարավային՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիւրի և Խարբերդի շրջանների տեսուչ և կարճ ժամանակով պաշտոնավարել Վանում: Սքոլենբուրգից (Նորվեգիա) Հ. Զավրիւսին հասցեագրած 1916 թ. հուլիսի 5-ի իր նամակում Ն. Հոֆը խոսելով էջմիածնի կաթողիկոսության և կաթողիկոս-պատրիարքության հետագա փոխհարաբերությունների վրա օրինագծի բացասական հետեւանքների մասին, նա պախարակում է Կիլիկիո կաթողիկոսության նկատմամբ իշխանությունների որդեգրած հակասահմանադրական քաղաքականությունը⁴:

¹ Օրմանեան Մ. արքեպս., *Խոսք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ*, էջ 340:

² Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918», դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 88:

³ Տե՛ս նույն տեղում, հ. I, էջ 55:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 131, թ. 1-5:

1916 թ. հուլիսի 16-ի կանոնադրությունը հասկանալի պատճառներով լուրջ մտահոգություն է առաջ բերում նաև ռուսական կայսրական արքունիքում: Ներքին գործերի նախարարության Հոգևոր գործերի դեպարտամենտի տնօրեն խարլամովը Ռուսաստանի ԱԳՆ-ի I դեպարտամենտին ուղղված 1916 թ. նոյեմբերի 26-ի իր հեռագրում նշում էր, որ. «...տեղեկություններ են հայտնվել, որ սուլթանական իրադեով որոշակի փոփոխություններ են կատարվել Թուրքիայի հայ-գրիգորյան եկեղեցու կառույցի մեջ, որը մտահոգիչ է: Խնդրում եմ ուղարկել իրադեն՝ հայ-գրիգորյան եկեղեցու կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու համար»¹: Այնքան մեծ էր Ռուսաստանի հետաքրքրությունը Կիլիկիո կաթողիկոսության կառուցվածքային փոփոխությունների նկատմամբ, որ Շվեյցարիայում Ռուսական կայսերական առաքելությունը 1917 թ. փետրվարի 14/27-ին ԱԳՆ է ուղարկում կանոնակարգի ֆրանսերեն թարգմանությունը, որը 1916 թ. օգոստոսի 10-ին տպագրվել էր թուրքական պաշտոնական մամուլում²:

1916 թ. հուլիս 19-ի կանոնագիրն իրավական արժեք ունեցավ միայն երկու տարի՝ մինչև 1918 թ. նոյեմբերի 20-ը, որից հետո այն չեղարկվեց: Հետևաբար, որպես պատմաեկեղեցագիտական վավերաթուղթ, այն պետք է դիտարկել որպես ցեղապանության քաղաքականությունից փրկված արևմտահայերի նկատմամբ երիտթուրքերի նոր քաղաքականության անմիջական դրսևորում:

Այսպիսով, օսմանյան իշխանությունների նախաձեռնությամբ հերթական անգամ կյանքի կոչվեց Արևմտահայոց առանձին կաթողիկոսության ստեղծման և Ամենայն Հայոց կա-

¹ АВПРИ, ф. 151 Политархив, 1916г., оп. 482, д. 3509, л. 2.

² Տե՛ս անդ, л. 4-15.

Թողիկոսությունն Օսմանյան կայսրության իր վիճակներից մեկուսացնելու ծրագիրը: Ոչնչացնելով արևմտահայության մեծ մասին՝ օսմանյան իշխանությունները փորձում էին նաև գլխատել Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգը: Ըստ նոր կանոնագրի՝ լուծարվում էին հայ ազգաբնակչության քաղաքական և կրոնական իրավունքները, այն դեպքում, երբ Մ. Թալեաթը ժամանակին պատրիարքին հավաստիացնում էր, որ՝ «Ոչ ոք ձեռք չի տա հայ ազգաբնակչության սահմանադրական իրավունքներին»¹: Տեղի ունեցածն իրական ոճրագործություն էր Հայ եկեղեցու և նրա դարավոր ավանդույթների դեմ: Բարեբախտաբար, օրինագիծը գոյություն ունեցավ ընդամենը երկու տարի և ըստ ամենայնի որևէ արդյուք չտվեց:

2.3. Կիլիկիո «Կաթողիկոս-պատրիարք» Սահակ Բ Խապայանի պաշտոնավարման երուսաղեմյան շրջանը

ա) 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագրի գործադրումը և կաթողիկոս-պատրիարքի աթոռի հաստատումը Երուսաղեմում: Օսմանյան Թուրքիայի Արդարության և կրոնի նախարարությունը ելնելով «Էրմէնի կաթողիկոս վե բաթրիք նիզամնամէսի» կայսերական կանոնագրի իրագործման առաջնահերթությունից, 1916 թ. «Թէմմուզ»՝ հուլիսի 28-ի թիվ 34 հրամանի համաձայն 1915 թ. հոկտեմբերի 31-ից Երուսաղեմ աքսորված Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանին հեռագիր-նամակով տեղեկացնում է, որ Սսի և Աղ-

¹ Տե՛ս «Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալանի, հատոր I, էջ 55:

Թամարի կաթողիկոսությունները, ինչպես նաև Երուսաղեմի ու Կ.-Պոլսի պատրիարքությունները պետք է միավորվեն և ենթարկվեն նախարարությանը¹։ Միաժամանակ, նախարարությունը հույս էր հայտնում, որ կաթողիկոսը մանրամասն ուսումնասնելով կանոնագիրը՝ «Այս մասին տէրութեան հետապնդած գթալիր նպատակը պիտի գնահատէք, և մինչև ցարդ Ձեր ցոյց տուած փորձ հաւատարմութիւնը և շրջահայեցութիւնը՝ Ձեր բարձրութեան այս նոր պաշտօնին մէջ ալ ցոյց տալով՝ Կայսերական կառաւարութեան Ձեր մասին ցոյց տուած վստահութիւնը, համարումը բարձրացնելու ջանադիր ըլալ պիտի հաճիք»²։


Կանոնագրի հաստատումից և իրազեկումից հետո իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան դրա իրագործմանը։ Կանոնագրի որոշումներն ի կատար ածելու համար Կ.Պոլսի պատրիարքարան են գալիս ոստիկանական տեսուչ Ահմետ բեյը, Կրոնի նախարարության տեսուչ Բեհա բեյը և հիվանդ ու ծեր պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանին հանձնում Արդարության և կրոնի նախարարության կողմից պատրաստված այն գրությունը, ըստ որի՝ վերջինս դադարում էր Կ. Պոլսի պատրիարքը լինելուց, իսկ Կ. Պոլսի պատրիարքությունը՝ Երուսաղեմի պատրիարքության և Աղթամարի կաթողիկոսության հետ միասին

¹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ.», էջ 227, Հմմտ.՝ **Քելէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 278-279։ Մինչ այդ Երուսաղեմի վանքն առաջնորդվում էր 1914 թ. ընդունված նոր կանոնադրությամբ։ Այդ մասին տե՛ս **Օրմանեան Մ. արք.**, Դիտողագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին գննութիւնն ու լուսաբանութիւնը, Երուսաղէմ, 1915 թ., էջ 1-48։

² **Զիլինկիրեան Ե. եպիսկ.**, Արձագանք ազգ. գանազան անցուղարձերու. շարք մը լրագրական յօդուածներու եւ նամակներու, էջ 106-108։



Սսի կաթողիկոսական նստավայրը



Տեսարան Ադանայից



Սահակ Բ Խապայան (1849-1939)
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս



Սահակ Բ կաթողիկոսի օծման և մյուռնօրհների արարողությունը. Սիս, 1903 թ. ամառ




Մերսինի տեղական կոմիտեն ՀԲԸՄ որբանոցում՝ Սահակ Բ Կաթողիկոսի հետ



Մերսինի ՀԲԸՄ որբանոցի սաները Սահակ Բ Կաթողիկոսի 1920 թ.այցի ժամանակ



Սահակ կաթողիկոսի այցը Դյորտ-Յոլի Քելեկյան որբանոց



Սահակ Բ կաթողիկոսի այցը Դյորտ-Յոլի որբանոց



Սահակ կաթողիկոսի այցը Վենետիկի ս.Ղազար կղզու Մխիթարյան միաբանություն. 5 մայիսի, 1920 թ.



Սահակ կաթողիկոսի այցը Վենետիկի ս.Ղազար կղզու Մխիթարյան միաբանություն. 6 մայիսի, 1920 թ.




Սահակ Բ Խապայան կաթողիկոսը Կահիրեում




ՀԲԸՄ Հալեպի ապաստարանի բնակիչները՝ որբահավաք կոմիտեի անդամների հետ. ձախից աջ՝ Տիգրան Ճիկերյան, Գաբրիել Խանջյան, Տեր Հարություն քահանա Եսայան (ֆրանսիացի երկու սպաների միջև), Գաբրիել Գասպարյան, Օննիկ Մազլումյան, Մանուկ Սահակյան, բժիշկ Խաչատուրյան

Ruines d'Adana. Collège Arménien „Mouchéglian“



Ադանային ավերակները. Մուշեղյան վարժարան


Ruines d'Adana. Eglise et Ecole Syriennes.




Ադանայի ավերակները. Սիրիական եկեղեցին և դպրոցը



Ադանայի հայկական թաղամասը



Ադանայի հայկական եկեղեցու թաղամասը



Տեսարան Ադանայից



Ադանա. Սիհուն գետի աջ ափը



Դիակների տեղափոխումը քաղաքից դուրս. Ադանա, 1909թ. ապրիլ



Ադանա. շուկայի հրապարակը



Ադանա. «Դրոշակ»-ի դաշնակցական կոմիտեի շենքը



Ադանա. Գուրու-Բոփրու թաղամասը

միացվելու էր Կիլիկիո կաթողիկոսությանը: Բացի այդ, պատրիարքարանի գույքը պետք է գրանցվեր և հանձնվեր նոր նշանակվելիք փոխանորդին¹:

1916 թ. հուլիսի 30-ին Սահակ կաթողիկոսը Երուսաղեմի պատրիարքարանում ժողով է հրավիրում՝ Միաբանական ընդհանուր ժողովի ատենապետ Եղիշե եպս. Զիլինկիրյանի միջոցով միաբանության անդամներին կառավարության նոր որոշման մասին իրազեկելու և եպիսկոպոսների կարծիքը պարզելու համար²: Նշենք, որ խորհրդակցությանը, որին հրավիրվել էին միաբանության 31 ներկայացուցիչներ, մասնակցում էին 29-ը, չէր հրավիրվել Երուսաղեմի պատրիարքության գործերի վարիչ, Կ.Պոլսի նախկին պատրիարք Մ. արք. Օրմանյանը³, որը վանքի ֆինանսական խնդիրները կարգավորելու նպատակով, որպես լիազոր-պատվիրակ, Երուսաղեմում էր 1914 թ. մայիսից: Այդ առիթով նա հիշում է. «Միև օր յուլիս 30/12 օգոստոսին միաբանութիւնը ժողովի կը հրաւիրէ, հեռագիրը և հրամանը, նոր կազմակերպութիւնը և իւր պատրիարքութիւնը կը հաղորդէ Զիլինկիրեանի ձեռքով, որ Միաբանական ժողովներուն վերջին տարւոյն ատենապետը գտնուած էր. թեպէտ նոր գումարումը նոր դիւանով պետք էր բացուէր: Ես բոլորովին անգիտակ՝ միաբաններուն երթուղարձէն կը հետաքրքրուիմ, և իրողութիւնը կը լսեմ, և միաբաններուն շնորհաւորութեան համար խապայեանի մօտ երթալէն և դառնալէն ետքը ես ալ կ'երթամ ցաւ յայտնելու որ ինէ գաղտնի պահել ուզած էր, և գիտնալով ալ որ վարիչը ես եմ, զիս զանց ըրած, և դիմած էր

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 198:

² Զիլինկիրեան Ե. եպս., Նկարագրութիւնը Երուսաղեմի-Հալէպի-Գամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, էջ 17:

³ Տե՛ս Օրմանեան Մ. արքեպս., Խոհրք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 317:

մեկու մը, որ բնաւ կերպարան և պաշտօն չունէր: Բայց շատ յառաել շուգեցի, երբ ինքն յայտարարեց թէ սխալմունք մըն էր եղաւ: Հարկաւ կամաւոր է սխալմունքը, զիս իբրեւ հակառակորդ ենթադրելով, և արգելք մը հանել կրնալէս խիթալով»¹:

Ժողովի ժամանակ կաթողիկոս-պատրիարքը մասնակիցներին տեղեկացնում է և խոստովանում, որ. «...ես ուրախ չեմ, այս նոր և անակնկալ պաշտօնիս վերայ, որովհետեւ փառք մը չեմ համարեր, այլ պարտաւորութիւն մը ծանրագոյն, հոգեկան և նիւթական ուժերէս վեր: Եթէ սովորական վիճակի մէջ ըլլայինք, անտարակոյս չէի համակերպիր բարձրագոյն հրամանին, քանի որ նոյն իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, իբրեւ բողոք, տարիներով հրաժարեալ կստորագրէի..., սակայն ներկայ տագնապներուն մէջ, նոր և մեծագոյն տագնապի մը առիթ չըլլալու համար... կամայ, ակամայ խոնարհեցայ նոր խաչին տակ: Եղէք կիրենացիներ, իւրաքանչիւրնիդ վանական և եկեղեցական պաշտաման մէջ խղճի մտօք ծառայելով և այդու թեթեւացնելով խաչիս ծանրութիւնը»²:

Սաի միաբանությունը կաթողիկոսին խորհուրդ է տալիս առերես ընդունել իշխանությունների կողմից առաջադրված նոր որոշումը՝³ հանուն գաղթական հայ ժողովրդի խաղաղ կյանքի և սպասել այնքան, մինչև որ նոր առավոտ կբացվի հայ ազգի ու եկեղեցու համար:

Երիտթուրքական իշխանության հրամանով «կաթողիկոս-պատրիարք»-ի աստիճանի բարձրացված Սահակ Բ կաթողիկոսի հանդուրժողական մոտեցման վերաբերյալ ժամանակին հնչել են թեր և դեմ կարծիքներ: Բերենք դրանցից միայն մեկը: Երբ Արդարության և կրոնի նախարարության պաշտոնական հեռագիրը

¹ Անդ, էջ 343:

² «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ.», էջ 227-228:

³ Տե՛ս Աղաւնունի եպս. Մ., նշվ. աշխ., էջ 438:

հասնում է Երուսաղեմ և գուժում «կաթողիկոս-պատրիարք»-ի նոր կարգավիճակի մասին, Սահակ Բ Խապայանն անմիջապես շտապում է իր շնորհակալությունը հայտնել իշխանություններին՝ առանց տեղյակ լինելու նոր օրինագծի բովանդակությանը, քանի որ նրան դեռևս չէր տրվել ոչ մի մեկնաբանություն կամ բացատրություն այդ մասին: Բանն այն է, որ պաշտոնական հեռագիրը ստանալուց մի քանի օր հետո են միայն Երուսաղեմի տեղական իշխանությունները կաթողիկոսին փոխանցում «Կանոնագիր հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» խորագիրը կրող փաստաթուղթը¹:

Մեր եկեղեցու աչքի ընկնող գիտնական-եկեղեցականներից Մ. արք. Օրմանյանը, որպես դեպքերի անմիջական ականատես, հաստատում է, որ Սահակ Բ Խապայանն «իսկոյն իւր շնորհակալութիւնը կը հեռագրէ և առանց վարանման, առանց խորհրդակցութեան, առանց բացատրութիւն պահանջելու» հանձնառու է լինում իր նոր պաշտոնին²: Փաստորեն, ինչքան էլ Սսի կաթողիկոսության պատմության հմուտ գիտական Բաբկեն եպս. Կյուլեսերյանը և Բյուզանդ Եղիայանը աշխատում են ներկայացնել այնպես, որ իբր Սահակ կաթողիկոսը չի ցանկացել ստանձնել իր նոր պաշտոնը, այլ ուղղակի համաձայնվել է և համակերպվել հանուն հայ ժողովրդի սիրուն, Մաղաքիա արք. Օրմանյանի այս վկայությունը գալիս է հաստատելու հակառակը: Զփախելով անգամ Սահակ կաթողիկոսի դերակատարումը օրինագծի ընդունման գործում, նա մատնանշում է, որ. «...ծանր կասկածներ յայտնուած են նոյն ինքն Խապայեանի ալ այդ գործին մէջ դեր ունեցած ըլլալուն վրա, որոնք ծագած են մէկ քանի անգամ երկուքին առանձինն

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 371:

² Տե՛ս Օրմանեան Մ. արքեպս., Խոհր եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 342:

տեսակցութեանց վրայ տարածուած շշուկներէն... ստոյգ է, որ ոգ-
ւին կ'աշխատէր և ամէն միջոցներ կը գործածէր Երուսաղէմի թա-
փուր Աթոռը գրաւելու, որ երիտասարդութենէն ի վեր իր երազն
էր եղած, գուցէ աթոռներու ձուլման կէտը իւր նպատակին մէջ
յարակից պայման՝ սիրով ընդունած կ'ըլլայ»¹:

Արդունքում, Սահակ Բ Խապայանի փութկոտ շնորհակա-
լությունը գալիս է կասկածներ առաջացնելու նրա՝ այդ նոր պաշ-
տոնում նշանակվելու կապակցութեամբ իր ունեցած հավանական
մասնակցութեան մասին: Այս առիթով նա բավականին կծու, սա-
կայն իրավացի քննադատութեան է արժանանում Մ. Օրմանյանի
կողմից: Վերջինս նրան հանդիմանում է՝ նշելով, որ եթե նա նա-
խապես չսպասեց նոր պայմաններին ծանոթանալու համար, գոնե
զգուշ լինի, որ. «...լպրծուն գետնի վրայ չսահի, իւր անունը ատե-
լի չդարձնէ, ազգին մէջ վատ յիշատակ մը չթողու, ... և հոգ տանի,
որ եկեղեցական իրաւունքները և ազգային եկեղեցւոյ միութիւնը
չտուժեն...»²:

Բացի այդ, Սահակ կաթողիկոսը չի համբերում, թե երբ
պետք է մտնի պատրիարքարան և բազմի կաթողիկոսական գա-
հին: Մ. արք. Օրմանյանը պախարակում է նրա շտապողականութե-
յունը՝ պատճառաբանելով, որ պատրիարքարանը մաքրելու և
հարգարելու կարիք էր զգում, իսկ Աթոռ Բարձրանալն էլ պատշաճ
է, որ անցկացվի եկեղեցական արարողութեամբ:

Ի վերջո, եկեղեցական անհրաժեշտ միջոցառումների ար-
ժանավայել կատարումն իր վրա է վերցնում Մաղաքիա արք. Օր-
մանյանը, որն էլ 1916 թ. օգոստոսի 6-ին՝ կիրակնամուտի երեկո-
յան, հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»-ի ուղեկցութեամբ,
եկեղեցի է առաջնորդում կաթողիկոսին և եկեղեցական արարո-
ղութեամբ նրան նստեցնում թուրքերի կողմից նշանակված

¹ Անդ:

² Անդ, էջ 343:

«պատրիարք-կաթողիկոս»-ի աթոռին: Իսկ Մ. Օրմանյանն էլ հաջորդ օրը նորից քաշվում է Յորենաթաղում գտնվող Կիրակոս պատրիարքի կառուցած հարկաբաժինը, որտեղ նա ապրում էր՝ խուսափելով պաշտոնական որևէ միջամտությունից:

Սահակ Բ-ի՝ որպես «կաթողիկոս-պատրիարք»-ի առաջին հրամանը լինում է Երուսաղեմի ս. Հակոբ վանքի պատրիարքական աթոռը եկեղեցական դասից՝ ավագ խորանի առջևի մասից հանելը¹: Միայն լուսարարապետի խնդրանքով և անմիջական միջամտությամբ է հնարավոր լինում մի փոքրիկ աթոռ զետեղել դասում՝ Մաղաքիա սրբազանի համար²:

Թուրքական իշխանությունները չբավարարվելով Կ.Պոլսի պատրիարքության վերացման մասին որոշմամբ, Կ.Պոլսի պատրիարք Զավեն արք. Տեր-Նզիայանի պաշտոնանկության 7-րդ օրը, այսինքն՝ օգոստոսի 5-ին, նրա մոտ են ուղարկում մի ոստիկան և ոստիկանության տեսուչ Ահմետ բեյի անունից նրան հրավիրում ոստիկանատուն: Այնտեղ նրան տեղեկացնում են, որ. «...կառավարությունը յարմար չի տեսներ Զեր Պոլսի բնակությունը, ուստի պետք է քանի մը օր էն մեկնիք Պաղտատ Զեր հայրենիքը, ինքնաբերաբար երթալու ձեռով, առանց աղմուկի»³:

Արդյունքը լինում է այն, որ 1916 թ. օգոստոսի 10-ին ոստիկանությունը փակում է պատրիարքարանը⁴: Միաժամանակ, կանոնագրի 24-րդ հոդվածի համաձայն՝ Սահակ Բ խապայանին

¹Մինչև 1915 թ. հուլիս Երուսաղեմի միաբանությունում ձեռնադրված հոգևորականների թիվը հասնում էր 104-ի, որոնցից 45-ը վախճանվել էին, 12-ը միաբանությունից հրաժարվել էին, 13-ը հարաբերություններն ընդհատել էին: Մնացել էին 34 կուսակրոններ, որոնցից 1-ը՝ եպիսկոպոս, 22-ը՝ վարդապետ և 11-ը՝ արքեպ: Տե՛ս **Օրմանեան Մ. արքեպս.**, Հայկական Երուսաղեմ. Նկարագիր աթոռոց սրբոց Հակոբեանց, Երուսաղեմ, 1931, էջ 197-198:

² **Օրմանեան Մ. արքեպս.**, Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 344:

³ **Քէլէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 198:

⁴ Տե՛ս **Օհանջանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 118:

հանձնարարվում է նշանակել Կ.Պոլսի պատրիարքի փոխանորդ, որի պարտականությունները կաթողիկոսական 1916 թ. օգոստոսի 14-ի կոնդակով ստանձնում է Գաբրիել արք. Ճեհաննազյանը¹, որն էլ կրոնի տեսուչ Բեհա Բեյի հետ ժամանում է Կ.Պոլիս²։ Զավեն պատրիարքը շնորհավորելով նոր փոխանորդին, նրան է հանձնում պատրիարքարանի բանալիները և կնիքները, ցավ հայտնելով սակայն, որ «ո՛չ Ճեվահիրճեան եպիսկոպոսի եւ ո՛չ ալ պաշտոնէութեան կողմէ ցաւակցական բառ մը» չլսեց իր պաշտոնի դադարեցման և երկրից աքսորվելու առիթով³։ Ի վերջո, Զավեն պատրիարքը օգոստոսի 22-ին գաղտնի ոստիկան Հիդայեթի ուղեկցությամբ Կ.Պոլսից աքսորվում է նախ Հալեպ, ապա Բաղդադ⁴։ Կ.Պոլսում չեն մնում նաև Բեզազյան վարժարանում պատասպարված Արմաշի դպրեվանքի սաները՝ Երվանդ վրդ. Փերտահչյանի գլխավորությամբ, որոնք տեղափոխվում են Երուսաղեմ⁵։

Օգտագործելով «Կաթողիկոս-պատրիարք»-ի համար կազմված և գործադրության մեջ դրված նոր կանոնագիրը և անտեսելով իրենց իսկ կողմից նշանակված Սահակ Բ կաթողիկոսի հեղինակությունը, Արդարության և կրոնի նախարարությունը կանոնագրի տառին և ոգուն համաձայն 1916 թ. օգոստոսի 8/21-ին հրաման է արձակում նաև Երուսաղեմի պատրիարքության մասին, որով Երուսաղեմի գործերի կառավարիչ Մաղաքիա սրբազանն առանց պատճառի պարտավորվում էր երեք օրվա ընթացքում լքել Երուսաղեմը և հաստատվել Դամասկոսում⁶։ Իր «Խոհք

¹ Տե՛ս անդ, էջ 64։

² Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 369։

³ **Նդիպեան Բ .արք.**, նշվ. աշխ., էջ 200։

⁴ Տե՛ս **Նդիպեան Բ.**, նշվ. աշխ., էջ 64։

⁵ Տե՛ս անդ։

⁶ Տե՛ս անդ, էջ 63։

եւ խօսք»-ում Մ. Օրմանյանը տալիս է այս շրջանի դեպքերի մանրամասները, նշելով, որ. «Դիպուած մը տեղի չէր ունեցած, կազմակերպական փոփոխութիւնը շատ մօտ էր, ուրեմն կանխաւ կարգադրուած տնօրէնութիւն էր»¹:

Խնդրի առաջ կանգնած Սահակ կաթողիկոսը մի փոքր ուշացումով՝ օգոստոսի 24-ին, հեռագրով դիմում է Պաղեստինյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատար Ա. Զեմալ փաշային և խնդրում, որ նա թույլ տա Մ. Օրմանյանին մնալ Երուսաղեմում: Մ. Օրմանյանն էլ իր հերթին հեռագրում է Ներքին գործերի նախարար Մ. Մ. Թալեաթին և Ա. Զեմալին ու բացատրում, որ ինքը՝ «...գործէ քաշուած եւ միայն եկեղեցական ու գրական զբաղմանց մէջ փակուած, իմ սիրած առանձնական կեանքին նուիրուած եմ...»²: Արդյունքում, Ա. Զեմալն օգոստոսի 30-ի իր պատասխան հեռագրում ընդառաջում է Մ. Օրմանյանի՝ Երուսաղեմում մնալու խնդրանքը³:

Այս ամենից հետո Սահակ կաթողիկոսն անցնում է իր՝ «պատրիարք-կաթողիկոս»-ի բուն պարտականությունների կատարմանը: Նա կաթողիկոսական փոխանորդ է նշանակում Գյուտեպս. Մխիթարյանին⁴ և ձեռնամուխ լինում վանքի ֆինանսատնտեսական գործերի կարգավորմանը: Առանց միաբանության կարծիքը հաշվի առնելու նա դիմում է թուրքական իշխանություններին և իր կողմնակից հոգևորականներից մեկին՝ Ղևոնդ վրդ. Մագսուդյանին Բեյրութից տեղափոխում է Երուսաղեմ և նշանակում պատրիարք-կաթողիկոսի վարչական ու տնտեսական

¹ Օրմանեան Մ. արքեպս., Խոհր և խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 344:

² Անդ, էջ 345:

³ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 63:

⁴ Տե՛ս «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրքԴ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ.», էջ 227-231: Հմմտ.՝ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 281:

խորհրդատու: Ճիշտ է, այս նշանակման համար ոչ ոք չի համար-
 ձակվում հակառակվել կաթողիկոսին, սակայն պատասխանա-
 տու այդ պաշտոնում տարիներ առաջ դատապարտված հոգևորա-
 կանի նշանակումը՝ առանց նրա անցյալի դատապարտելի գործե-
 րը հաշվի առնելու, կարծում ենք, որ այնքան էլ արդարացված
 չէր¹: Այս հարցում իր անկողմնակալ վերաբերմունքն է արտահայ-
 տում նույնիսկ Բաբկեն աթոռակից - կաթողիկոս Կյուլենսերյանը,
 երբ նշում է, որ. «Սխալ էր Ղեւոնդ վարդապետի կրկին ելեւմտից
 Տեսչութեան կոշուիլը, սխալ էր անոր անիրաւ պահանջին գոհա-
 ցում տրուիլը...»²:

բ) Հոգևոր ժողովի (Սինոդի) հրավիրումը: Սահակ Բ Խապա-
 յանի երուսաղեմյան շրջանի կարևորագույն գործերից մեկը Հոգ-
 ևոր ժողովի (Սինոդի) ստեղծումն էր³: Կանոնագրի 6-րդ հոդվածի
 համաձայն՝ «կաթողիկոս-պատրիարքը ժողով է գումարում և ձեռ-

¹ Երուսաղեմի վանքի հաշվետվարների մեջ կար Ղեւոնդ վարդապետի անունով
 բացված երկու հաշիվ: Առաջինում նշված էին նրա Ղեւոնդ վրդ. Մագսուդյանի
 կողմից ապօրինաբար յուրացված գումարները, որոնք նա պարտավորվել էր հետ
 վերադարձնել վանքին, իսկ երկրորդում ներկայացված էին դրամական այն
 հաշիվները, որոնք գոյացել էին նրա կալվածքների հասույթներից, և որոնք նա
 իրավունք ուներ ստանալ միայն այն ժամանակ, երբ կվերադարձներ պարտքերը:
 Սակայն, երբ նա ստանձնեց իր նոր պաշտոնը, առանց նախկին պարտքերը
 մարելու, սկսում է գանձել իր հասանելիքը՝ վաճառելով վանքապատկան երկու-
 երեք եկամտաբեր կալվածքներ: Տե՛ս Դոկտ. Արզումանեան Զ. Ա. քհնյ.,
 Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, 1995, էջ
 138-139:

² Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 930:

³ Տե՛ս Զիլինկիրեան Ն. Եպիսկ., Արձագանք ազգ. զանազան անցուդարձերու. շարք
 մը լրագրական յօդուածներու եւ նամակներու, էջ 110:

նամուխ լինում Հոգևոր ժողովի կազմությանը, որը պետք է բաղկացած լիներ 12 եպիսկոպոսներից¹: Սակայն Գյուլտ եպս. Մխիթարյանը, Մաղաքիա եպս. Տերունյանը և Մեսրոպ եպս. Նարոյանը հրաժարվեցին մեկնել Երուսաղեմ և Հոգևոր ժողովը կազմվեց միայն ինը անդամներով²: Քանի որ եպիսկոպոսների մեծամասնությունն արդեն նահատակվել էին, նա ստեղծում է վեց անդամներից բաղկացած վարչական մի մարմին՝ վանքի գործերը կառավարելու համար: Վարչական մարմնի անդամներ են նշանակվում՝ 1. Ստեփանոս արք. Հովակիմյանը (Նիկոմիդիա), 2. Պետրոս եպս. Սարաճյանը (Հաճրն), 3. Կարապետ եպս. Մազլըմյանը (Պանտրմա), 4. Մովսես եպս. Ոսկերիչյանը (Անտիոք), 5. Գարեգին ծայր. վրդ. Խաչատուրյանը (Կոնիա), 6. Եղիշե եպս. Զիլինգիրյանը (Բաղեշ)³:

¹ Հոգևոր ժողովի անդամներն էին՝ 1. Սահակ Վեհափառ Խապայան (Կաթողիկոս Տանն Կիլիկիո), 2. Ստեփանոս արք. Հովակիմյան (Նիկոմիդիա), 3. Պետրոս եպս. Սարաճյան (Հաճրն), 4. Կարապետ եպս. Մազլըմյան (Պանտրմա-Պալքեսերի), 5. Մովսես եպս. Ոսկերիչյան (Անտիոք), 6. Գարեգին ծայր. վրդ. Խաչատուրյան (Կոնիա), 7. Եղիշե եպս. Զիլինգիրյան (Բաղեշ), 8. Գրիգորիա եպս. Պոյաճյան (Երուսաղեմի ս. Հակոբ վանքի միաբան), 9. Գյուլտ արք. Մխիթարյան (Կաթողիկոսի ատենադպիր), 10. Տրդատ եպս. Պալյան (Կեսարիայի նախկին առաջնորդ), 11. Մաղաքիա արք., Տերունյան (Բաղդատի նախկին առաջնորդ), 12. Մեսրոպ արք. Նարոյան, (Արմաշի վանահայր): Տե՛ս **Տէր Օրմանեան արք. Մ. Նախկին պատրիարք Թիւրքիոյ Հայոց**, Թիւրքահայ աղետը. Պատմական փաստաթուղթեր, Ա. Տեղեկագիր, Նոր ծանոթութիւններով եւ յաւելումներով հրատարակեց Հայկ Աճէմեան, Ս. Էջմիածին, 1919, էջ 12: Ըստ Մ. եպսկ. Աղալնունու Սինոդի մէջ էր մտնում նաև Դավիթ վրդ. Տերտերյանը (Երուսաղեմի ս. Հակոբ վանքի միաբան): Տե՛ս **Աղալնունի եպս. Մ.**, նշվ. աշխ., էջ 438:

² Տե՛ս **Եղիապեան Բ.**, նշվ. աշխ., էջ 64:

³ Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ.», էջ 229:

1916թ. հոկտեմբերի 17-ին՝ տեղի ունեցավ Հոգևոր ժողովի անդրանիկ նիստը: Ինչ վերաբերում է Խառը ժողովին, ապա հաջողվում է հաստատել տալ նրա աշխարհական նորանշանակ ութ անդամներին: Սակայն նրանցից միայն երկուսը՝ Հարություն Թերզյանը և Վարդան Փիրանյանն են մեկնում Երուսաղեմ և ժողովը չի կազմվում¹: Մի բան ակնհայտ էր, որ ժողովականներն այդքան էլ լուրջ չէին վերաբերվում Սինոդին: Բաբկեն Ա. Աթոռակից կաթողիկոսը վկայում է, որ «...ժողովականները քմծիծաղով մը ժողովի կ'երթային, գիտնալով, որ այս ամէնը խիստ առ ժամանակեայ է և ապօրինի»²:

Իր հերթին օսմանյան կառավարությունը, հակառակ այն բանին, որ ինքն էր հաստատել «կաթողիկոս-պատրիարք»-ի կանոնադրությունը, աշխատում էր ամեն կերպ խոչընդոտել կանոնադրության առանձին կետերը չեղարկելու համար: Օրինակ, երբ ընտրվում էին Հոգևոր և Խառը ժողովների անդամները, նրանց հաստատման համար ներկայացված դիմումները շատ հաճախ մերժվում էին պետության կողմից, որից էլ արհեստական բարդություններ էին առաջանում:

Կաթողիկոս-պատրիարքի մտահոգիչ խնդիրներից էր նաև հայ տարագիրների օգնության հարցը: Կարոտյալներին նպաստ բաշխելու նպատակով կաթողիկոսի կողմից հաջորդաբար բազմաթիվ դիմումներ են ուղարկվում Արդարության և կրոնի նախարարություն, ըստ որի՝ Նախարարների խորհուրդը որոշում է 2500 օսմանյան ոսկի գումար հատկացնել այդ նպատակով: Սակայն կաթողիկոս-պատրիարքը հաշվի առնելով Երուսաղեմի վանքի նյութական ծայրահեղ ծանր պայմանները, հատկացված գումարից 1500-ը առանձնացնում է վանքի առաջնահերթ կարիքները հոգալու համար և միայն 1000 օսմանյան ոսկին է տրամադրում

¹ Տե՛ս անդ, էջ 227-231:

² Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 949:

հայ տարագիրների օգնությունը: Բացի այդ, կաթողիկոսին հաջողվում է ևս 2000 ոսկու չափով գումար հայթայթել Երուսաղեմի ամբերիկյան հյուպատոսարանի միջոցով, որով փոքր-ինչ կարգավորվում է նպաստների բաշխման գործը՝ մինչև Սահակ Բ-ի Երուսաղեմից մեկնելը: Նշենք, որ նպաստների բաժանման ընթացքում առաջնությունը տրվում էր համեմատաբար ավելի հեռու աքսորված գաղթականներին, որոնք, ապրուստի որևէ միջոց չունենալով, մատնվել էին ծայրահեղ աղքատության և թշվառության:

Սահակ Բ խապայանը հուսահատ դիմումներ էր հղում դեպի աշխարհի տարբեր անկյուններ՝ հայ տարագրյալներին օգնելու հույսով, բայց նրա բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: Դժբախտաբար, առկա գումարների բացակայության և արտաքին կապերի խզման հետևանքով անկարելի դարձավ դրսից նպաստների ստացումը, որի հետևանքը եղավ այն, որ կաթողիկոսը չկարողացավ բավարարություն տալ օրնիբուն սովարացող և օգնություն հայցող գաղթականների սրտահույզ խնդրանքներին, և նա ստիպված է լինում սահմանապակվել իր հնարավորությունների սահմաններում:

Չնայած նրան, որ թուրքական կառավարությունը և թե անձամբ Ա. Զեմալ փաշան Սահակ խապայանին բազմաթիվ խոստումներ էին տվել արևմտահայերի գոյապահպանության առումով, այդուհանդերձ, դրանք մնում են չկատարված: Հայերի նկատմամբ նորից շարունակվում էին բռնությունները: Կաթողիկոս-պատրիարքը ստույգ տեղեկություններ ուներ, որ Սիրիայի և Անդրհորդանանի գյուղերում և քաղաքներում գտնվող տարագիր հայերը, պետության հատուկ հրամանով, ենթարկվում էին բռնի իսլամացման, իսկ Սալթիի կողմերում գտնվող քահանաները, ո-

րոնք չէին ցանկացել հավատափոխ լինել, ենթարկվել էին տան-
ջանքների և չարչարանքների¹։ Սահակ Խապայանը 1916 թ. կանո-
նագրի 2-րդ հոդվածի համաձայն մի ծավալուն բողոքագիր է ներ-
կայացնում Արդարության և կրոնի նախարարությանը՝ դրա մեջ
հիշատակելով նաև Ա. Զեմալ Փաշայի բերանացի խոստումները,
որ կառավարությունը թե՛ նյութական և թե՛ բարոյական տեսանկ-
յունից պարտավոր էր ամեն կերպ աջակցել հայ ժողովրդին։ Ար-
դարության և կրոնի նախարարության պատասխան նամակն ու-
ղարկվում է Ա. Զեմալ փաշայի անունից, որը նախօրոք իր մոտ՝
Դամասկոս էր հրավիրել կաթողիկոս-պատրիարքի վստահելի ան-
ձանցից մեկին՝ Գյուլտ եպիսկոպոսին։ Ա. Զեմալը մտերմաբար ըն-
դունելով կաթողիկոսի նվիրակին, նրան է փոխանցում իր նամա-
կը և հայտնում. «Ես խնդրոյն մարդասիրական տեսակետով կը
նայիմ, թողէք այս խեղճ ժողովուրդին օձիքը, մինչև պատերազմի
վերջաւորութիւնը ինքզինքը ապրեցնելու համար կ'ուզէ իսլամ ըլ-
լայ, կ'ուզէ հրեայ ըլլայ, կ'ուզէ կեաւուր ըլլայ, կ'ուզէ կապիկ ըլլայ,
նոյն իսկ էշու ձեւին մտնէ, բաւական է որ ինքզինքը ապրեցնէ,
հասկցար, գնա Կաթողիկոսիդ այսպէս ըսէ»²։

Հետագայում, երբ Ա. Զեմալը մեկնում է Երուսաղեմ, Սա-
հակ Բ Խապայանն այցելում է նրան և ցավ հայտնում, որ կառա-
վարությունն անհրաժեշտ աջակցություն չի ցուցաբերել կիլիկիա-
հայությունը, որին ի տրիտուր Ա. Զեմալը պատասխանում է. «-
Յարդ ինչ որ ըրած եմ ոչ թէ իբր ծովային նախարար և բանակի
հրամանատար ճէմալ փաշա ըրած եմ, այլ կաթողիկոսին անձնա-
կան բարեկամ ճէմալի հանգամանքով ըրած եմ...»³։ Ի դեպ, ոչ

¹ Տե՛ս Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939), «Հասկ», Անթիլիաս, 1939 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 148։

² Մանրամասնությունը տե՛ս Մխիթարեան Գ., Յուշեր և վերլիշումներ (1918-1935), Անթիլիաս, Լիբանան, 1937, էջ 74։

³ Անդ, էջ 76։

միայն այս, այլև ընդհանրապես կառավարությունն ուղղված կաթողիկոս-պատրիարքի բոլոր դիմումներն ու բողոքներն էլ այնքան լուրջ ուշադրության չէին արժանանում իշխանությունների կողմից:

գ) Կաթողիկոս-պատրիարքության Դամասկոս տեղափոխվելու հրամանը: Շուտով քաղաքական իրավիճակը փոխվեց ի նպաստ դաշնակիցների: 1917 թ. հոկտեմբերի վերջին անգլիական բանակը Սուեզի ջրանցքով առաջանում է դեպի Երուսաղեմ, գրավում Քեբրոնը և Հոպպեն, իսկ թուրքերը սկսում են աստիճանաբար նահանջել¹:

Թյրքանոթների որոտներն արդեն լսելի էին Երուսաղեմում, երբ թուրքական կառավարությունը 1917 թ. նոյեմբերի 6/19-ին կենտրոնից ստացած հրամանի համաձայն Երուսաղեմի հունական պատրիարք՝ Դամիանոսին, կաթողիկական պատրիարք՝ Գամասեին, նրանց սինոդական եպիսկոպոսներին, դպտիների արքեպիսկոպոս՝ Տիմոթեոսին, հրեաների ռաբոնապետին, ինչպես նաև Սահակ կաթողիկոսին, Հոգևոր ժողովի անդամներին, քաղաքի բոլոր հայ հոգևորականներին տեղեկացնում և պահանջում է, որ «ապահովութեան համար» Երուսաղեմից տեղափոխվեն Դամասկոս²: Ինչպես Եղիշե եպս. Զիլինկիրյանն է հիշում 1919 թ. հունիսի 5-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ուղղված իր զեկուցագիրը - նամակում. «...ի վերջ կոչս նոյեմբեր ամսոյ 1917 ամի հալածական եղեալ օսմանեանք առաջի յաղթա-

¹ Այս մասին տե՛ս **Dadoyan Seta B.**, *The Armenian Catholicosate from Cilicia to Antelias*, Antelias-Lebanon, 2003, p. 85.

² Տե՛ս **Աղաւնունի եպս. Մ.**, նշվ. աշխ., էջ 438:

պանծ բանակին Մեծին Բրիտանիոյ, ընդ իւրեանս տարին ի Դամասկոս զպատրիարքունս Երուսաղէմի, ընդ որս և զՏէր Սահակ Կաթողիկոս...»¹:

Այսպիսով, Սահակ Կաթողիկոսի պաշտոնավարութեան Երուսաղէմյան անփառունակ շրջանը տեւում է մինչև 1917 թ. նոյեմբերի 6-ը: Այդ ընթացքում նա իր կոնգակներում իրեն կոչում է «Յիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Սահակ Կաթողիկոս Հայոց Ընդհանուր Թիւրքիոյ եւ Պատրիարք Ս. Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ» և ստորագրում՝ «Կաթողիկոս-պատրիարք Սահակ»²: Թուրքական որոշումով նշանակված և 15 ամիս կյանք ունեցած «Կաթողիկոս-պատրիարք»-ի գործունեութեան գնահատականն ավարտուն կերպով ամփոփում է մեծն Մ. արք. Օրմանյանը, որը նշում է, որ. «...որոշմանց մէջ վարանոտ, յարաբերութեանց մէջ երկշոտ, ձեռնարկներու մէջ անգործ կեանք մըն էր զոր անցուց, Երուսաղէմի մէջ բաւականանալով և գոհունակութիւն զգալով, Երուսաղէմի ըղձացեալ Աթոռին տիրապետած, պատուոյ արտաքին նշաններով փառաւորուած...»³: Սահակ Բ Խապայանի կենսագիր Բաբկէն Կյուլեսերյան Աթոռակից Կաթողիկոսն ևս բավարար չի համարում Սահակ Կաթողիկոսի պաշտոնավարութեան այս շրջանը, նկատելով, որ. «Սահակ Կաթողիկոսը աչքառու, վանքին կամ ժողովուրդին օգտակար գործ մը չէ կատարած»⁴: Իր գահակալութեան Երուսաղէմյան շրջանի վերջում Սահակ Կաթողիկոսը զղջում է իր ստանձնած պաշտոնի համար, որովհետև ինքը մեծ հույսեր էր կապել կանոնագրի դրույթների իրագործման հետ, ըստ որի՝ ժողովուրդը

¹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք Դ, Սահակ Բ Խապայան Կաթողիկոս Կիլիկիո 1891 1940 թթ.», էջ 242:

² «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 371:

³ Օրմանեան Մ. արքեպս., հոգք և խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 348-349:

⁴ Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 954:

պիտի չհալածվեր, իսկ աղերսագրերին էլ պիտի ընթացք տրվեին, մինչդեռ այդ հույսերը չիրականացան, իսկ կանոնագիրն էլ ոչ մի էական փոփոխութուն չմտցրեց ո՛չ եկեղեցու, ո՛չ էլ ժողովրդի կյանքում:

Գլուխ III

ԿԻՒԼԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ 1917-1921 ԹԹ.

3.1. Կիւիկիո Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխութիւնը Երուսաղէմից Դամասկոս և Հալեպ (1917 թ. նոյեմբերի 6 – 1919 թ. գարուն)

ա) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Դամասկոս և Հալեպ: 1917 թ. նոյեմբերի 6/19 Սահակ Բ կաթողիկոսը և Մ. արք. Օրմանյան սրբազանը եպիսկոպոսաց դասի հետ միասին Երուսաղէմից տեղափոխվում են Շամ (Դամասկոս)¹: Բացի վարչական մարմնի անդամներից (Գյուտ եպս. Մխիթարյան, Դավիթ վրդ. Տերտերյան և Ղևոնդ վրդ. Մաքսուդյան)², որոնք պետք է մնային Երուսաղէմում, Դամասկոս են մեկնում Եղիշե եպս. Զիլինկիրյանը, Պետրոս եպս. Սարաճյանը, Կարապետ եպս. Մազլումյանը, Գրիգորիս վրդ. Բոյաջյանը, Մովսէս վրդ. Ոսկերիչյանը և Գարեգին վրդ. Խաչատուրյանը³: Նրանք անգլիական թնդանոթների արկերի տարափի տակ գիշերով մի կերպ հասնում են Նաբլուս, իսկ այնտեղից էլ գնացքով Դամասկոս՝ նույնիսկ մոռանալով իրենց հետ վերցնել վանքի թանկարժեք իրերը:

Դամասկոս տեղափոխվելուց հետո Սահակ կաթողիկոսի համար սկսվում է գործունեության մի նոր ժամանակաշրջան, երբ նա ավելի շատ զբաղված էր քաղաքականութեամբ, քան եկեղեցա-

¹ Տե՛ս «Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939)», «Հասկ», Անթիլիաս, 1939 թ., թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 148:

² Տե՛ս «Վահան Թէքէեան. նամականի», կազմեց, խմբագրեց եւ ծանոթագրեց՝ Աւետիս Գ. Սանճեան, Լոս-Անճելես, 1983, էջ 592:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2033. թ. 22-23:

կան-հոգևոր վերաշինության գործերով: Վաղ ժամանակներից Երուսաղեմի վանքը Դամասկոսում ուներ ս. Սարգիս վանական համալիրը՝ իր եկեղեցիով, ժամարար-տեսուչ վարդապետով և մի քանի վանքապատկան կալվածքներով: Դրանք տեսուչի տնօրինութ-յան ներքո էին, որի պաշտոնն այդ օրերին զբաղեցնում էր Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Արիստակես վրդ. Խաչատուրյանը: Կիլիկիո Աթոռի միաբանության անդամների ժամանումից հետո վանքի վերին հարկի սենյակները հատկացվում են Եղիշե եպս. Չիլինկիրյանին, Գրիգորիս վրդ. Բոյաջյանին և Մաղաքիա արք. Օրմանյանին, իսկ Սահակ Բ կաթողիկոսը Մովսես վրդ. Ոսկերիչյանի և Վարդան սարկավազ Գևորգյանի հետ հաստատվում է վանքի մոտակայքում գտնվող վանքապատկան մի շինության մեջ:

Տեսնելով կաթողիկոսի և նրա սինոդականների անմխիթար վիճակը, օսմանյան կառավարությունը 1917 թ. վերջերին ամսական պարենային նպաստ է սահմանում նրանց համար¹: Կաթողիկոսն իր կենցաղային ծախսերը հոգում էր պետությունից իրեն առանձնացված 10000 դահեկան գումարով, իսկ սինոդականները, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին պետք է ստանձներ իր ժամանակավոր կեցության հարցը, վաճառում են պետության տրամադրած իրենց հասանելիք ցորենը՝ յուրաքանչյուրը 12-ական օսմանյան ոսկի գումարով:

1918 թ. մարտի 2-ին օսմանյան իշխանությունները տեղեկանալով, որ բրիտանական զորքերը մոտենում են Դամասկոսին, և զգալով վերահաս վտանգը, զորակոչի անվան տակ, տեղահանության նպատակով վաղ առավոտից սկսում են քաղաքում

¹ Տե՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 957:

հանգրվանած 50 հազար հայերի¹, մասնավորապես՝ մինչև 45 տարեկան հայ տարագիր տղամարդկանց զինվորագրումը, նրանց զորանոցներ տեղափոխումը և տարհանումը: Ընդհանուր խառնաշփոթի պայմաններում սկսում են հավաքագրել նաև կանանց և պատանիներին, այս մասին ժողովուրդը լալահառաչ ահազանգում է կաթողիկոսին՝ խնդրելով իրենց ազատել սպասվող նոր աղետից: Այդ առիթով Պետրոս եպս. Սարաճյանը կաթողիկոսպատրիարքի անունից նամակ է գրում Դամասկոսի կուսակալ Թահսին բեյին²՝ պահանջելով ներկայացնել կատարվածի բացատրությունը: Վերջինս թյուրիմացություն համարելով կատարվածը, հրամայում է կանանց ու երեխաներին անմիջապես ազատ արձակել³: Ակնհայտ էր, որ Դամասկոսի և շրջակայքի հայ ժողովրդին վիճակված էր ճիվաղային կոտորածի այն ծրագիրը, որ բաժին էր հասել Դեր Զորի տարագիրներին, եթե իհարկե չլինեք Ավստրո-Հունգարիայի դեսպանի բուռն բողոքը հայերի ընդհանուր ձերբակալությունները և զինվորագրությունը դադարեցնելու վերաբերյալ⁴: Այդ օրերին և այդ առիթով Սահակ կաթողիկոսի որդեգրած փոքր-ինչ անտարբեր վերաբերմունքի մասին է խոսում Մաղաքիա արք. Օրմանյանը⁵: Սակայն իրականում «անտարբերություն» պատճառն այն էր, որ Սահակ կաթողիկոսը Սիրիայի

¹ Եղիշե արք. Զիլինկիրյանի 1916 թ. Դամասկոս կատարած այցի ժամանակ քաղաքում կար 20 հազ. հայ գաղթական, որոնց թիվը 1917 թ. արդեն հասել էր 30 հազ.-ի: Տե՛ս **Զիլինկիրեան Ծ. եպս.**, Նկարագրությունը Նրուսաղէմի-Հալեպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպվաց եւ անցքերու 1914-1918 թթ, էջ 29, 42:

² Թահսինը նախկինում եղել էր Վանի նահանգապետը:

³ Տե՛ս **Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, նշվ. աշխ., էջ 957:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 957-958:

⁵ «Նոր կազմակերպություն» ասելով՝ Սահակ իսպապյանը նկատի ուներ օսմանյան կառավարություն 1916 թ. հուլիսի 19-ին վավերացրած «Վանոնագրություն Հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության» վերնագիրը կրող փաստաթուղթը: Տե՛ս **Օրմանեան Մ. արք.**, *Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ*, էջ 354:

օսմանյան քաղաքական և զինվորական կառավարիչ Ա. Զեմալ փաշայի բացակայության ժամանակ հանդիպել էր նրա տեղակալ «Քյուչուք» Ա. Զեմալ փաշային¹ և շատ սառը ընդունելության արժանացել նրանից²։

1918 թ. մարտի 2-ի զինվորագրությունից և նոր կոտորածներից խուսափելու համար հայերը ընտանիքներով կամ մեկուսի գաղտագողի տեղափոխվում են Զեբել Դրուզ³։ Միաժամանակ, փոփոխություններ են տեղի ունենում նաև միաբանությունում։ Վախճանվում է Դամասկոսի վանքի տեսուչ Արիստակես վրդ. Խաչատուրյանը, նոր տեսուչ և Դամասկոսի թեմի առաջնորդ է նշանակվում Եղիշե եպս. Զիլինկիրյանը, իսկ Մաղաքիա արք. Օրմանյանը 1918 թ. մայիսի 8-ին Դամասկոսից տեղափոխվում է Կոստանդնուպոլիս⁴։

Այս ամենին հաջորդում է 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումը, որով նոր հույս է բացվում հայ ժողովրդի համար⁵։ Սահակ կաթողիկոսն այնքան է ուրախանում և ոգևորվում այդ իրադարձությամբ, որ այլևս իմաստ չի տեսնում Կիլիկիո կաթողիկոսության հետագա գոյության և պահպանման

¹ Իշխանությունները Սիրիայի կառավարիչ Զեմալ փաշայից տարբերակելու համար այս զինվորականին տվել էին «Քյուչուք»՝ «Փոքր» Զեմալ մականունը։

² Տե՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 958։

³ Սիրիայի հարավում՝ ներկայիս Հորդանանի սահմանին՝ հիմնականում դուրզի աղանդի հետևորդներով բնակեցված տարածքը, որը համապատասխանում է այսօրվա Սիրիայի Արաբական Հանրապետության ալ-Սուեյդայի եւ ալ-Կունեյտրայի նահանգների մեծ մասին։

⁴ Տե՛ս Զիլինկիրեան Ծ. եպս., Նկարագրովիւնք երուսաղէմի-Հալէպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպվաց եւ անցքերու 1914-1918 թթ, էջ 37, նաև Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 958։

⁵ Հայ եկեղեցու այս շրջանի պատմության վերաբերյալ տե՛ս Կերտող Ա., Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, Մայր Աթոռ ս. էջմիածին, 2018, էջ 264-273։

մեջ: Նրա այս մոտեցման մասին հետազայում տեղեկանում ենք 1919թ. ապրիլի 17-ին Երուսաղեմից Պողոս Նուբար փաշային գրած իր խոհերում, որտեղ նա հիացմունքով նշում է. «Անկախ եւ միացեալ Հայաստանն ողջունելու իղձն ու բաղձանքը, որ օրօրոցի մանուկէն մինչեւ գերեզմանամերձ ծերունին կ'ոգեւորէ եւ կը խանդավառէ, անշուշտ մօտ է իրականանալու. ինչո՞ւ Հայրապետութիւնն ալ չմիանայ, ի՞նչ պէտք կը մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ չէ թէ ներկայիս, անցեալի մէջ ալ չէ ունեցած միշոց իր հոգեւոր բարձրութեանը վայել եւ արժանաւոր դիրք պահպանելու»¹:

1918 թ. կեսերին արդեն բավականաչափ փոխվել էր օսմանյան կառավարութեան դիրքորոշումը և վերաբերմունքը հայերի և Կիլիկիո կաթողիկոսութեան հանդեպ: 1918 թ. հուլիսին սուլթան Մուհամմեդ V Ռեշիդի մահից հետո, նոր սուլթան Մուհամմեդ VI Վահդեդդինը «բաւական կորով ցոյց տուաւ»² և փորձեց սահմանափակել իթիհատի իշխանութիւնը կառավարութեան մէջ: Նա ռազմական նախարարի պաշտոնից հեռացրեց էնվերին և բանակի ընդհանուր հրամանատարութիւնը կենտրոնացրեց իր ձեռքում: Ահա այսպիսի իրադրութեան պայմաններում էր, որ Ահմեդ Ռիզան խորհրդարանում ձայն բարձրացրեց ի նպաստ հայերի, որով կառավարութիւնը «ընդհանուր ներում» շնորհեց հայ մտավորականներին ու հոգևորականներին³:

Մինչ ժողովուրդը դավեր էր նյութում և զազրախոսում կաթողիկոսի հասցեին, իսկ Սահակ Բ Խապայանն ու սինոդականներն էլ օր օրի անհամբեր սպասում էին բրիտանական զորքերի գալստին, համատարած խուճապ է սկսվում Դամասկոսում

¹ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 1891-1940 թթ.», էջ 235:

² Տէ՛ս Զաւէն արքեպս., նշվ. աշխ., էջ 241:

³ Տէ՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 65:

գտնվող օսմանյան բանակի մեջ: Լուրեր էին շրջանառվում, որ այդ բանակը Պաղեստինի Թուրքարմ ավանի մոտ պարտություն էր կրել բրիտանացիներից, իսկ Արևելյան լեգեոնի հայ կամավորներն էլ իրենց հերթին 1918 թ. սեպտեմբերի 19-ին Արարայի ճակատամարտում ջախջախիչ հարված էին հասցրել թշնամուն: Թուրքերն ու գերմանացիները Դամասկոսից փախչում են Ռայակ: Սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում բարոյալքված թուրքական «Յըլդըրըմ» զորամիավորման կրած մի շարք պարտություններից հետո անգլո-ֆրանսիական զորքերը 1918 թ. հոկտեմբերի 1-ին գրավում են Դամասկոսը, հոկտեմբերի 6-ին՝ Բեյրութը, իսկ հոկտեմբերի 26-ին՝ Հալեպը, որով վտանգ է ստեղծվում բուն պատերազմական գործողությունները Թուրքիայի տարածք տեղափոխելու համար¹: Անթիլիասի կաթողիկոսական արխիվի փաստաթղթերից մեկը փաստում է, որ երբ բրիտանական զորքերը թուրքերից գրավում են Դամասկոսը, Սահակ Բ-ն Եգիպտոսի Հայոց առաջնորդ Թորգոմ եպս.-ին ուղղված իր նամակում իր հիացմունքն է արտահայտում կատարվածի վերաբերյալ և նշում, որ «փառք նախախնամութեանը, երկրին ցեցը անյատացաւ...»²:

1918 թ. սեպտեմբերի 30-ին Դամասկոսի կառավարչական պալատում Սահակ Բ խապայանը ազգային-հոգևոր մյուս առաջնորդների հետ միասին ողջագուրվում է անգլիական զորքերի կազմում գտնվող արաբական ազատարար բանակի հրամանատար էմիր Ֆեյսալ բըն Հուսեյնի հետ³, որն անկեղծանալով խոստովանում է, որ. «Երկուքնիս ալ ուրախ ենք, երկուքնիս ալ շնորհաւորութեան արժանի ենք, ես ալ ի սրտանց կ'ուրախացնեմ Ձեզ

¹ Տե՛ս Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 74:

² Թաշճեան Վ., Դամասկոսէն Հաճըն. Հաճնոյ հերոսամարտի 90 ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ, կազմեց և խմբագրեց Դոկտոր. Անդրանիկ Տազէսեան, Պէյրութ, 2013., էջ 49:

³ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 65:

եւ կը շնորհաւորեմ Ձեր եւ ժողովուրդին ազատութիւնը»¹։ Իսկ Սահակ կաթողիկոսն էլ պատասխանում է. «Գոհութիւն Աստուծոյ, վերջապէս փրկուեցանք, ես ալ ազատեցայ սա պիտակ տիտղոսէն, կաթողիկոս-պատրիարք, այն ալ՝ Ընդհանուր Թուրքիոյ Հայոց։ Ուրկի՞ց յղացան այս հակազգային եւ շարամիտ գաղափարը։ Փա՛ռք Տիրոջ, ազատուեցանք թէ՛ կեղծ տիտղոսներէ եւ թէ՛ իրենց-մէ. ես միայն «Կիլիկիոյ կաթողիկոս» եմ»²։

Իրոք, մեծ էր ուրախությունը արաբական զորքերի կողմից Դամասկոսի ազատագրումից հետո։ Դեպքերի ականատես Լևոն Նորաշխարհյանը հիշում է, որ. «Վերապրող հայությունը գեհեակական քառսեն ազատված, սկսած էր լայն շունչ մը առնել»³։

Անգլո-արաբական զորքերի՝ Դամասկոսը գրավելուց մի քանի օր անց Դամասկոսի վանքի տեսուչ և թեմի առաջնորդ Եղիշե եպս. Զիլինկիրյանը հրաժարական է տալիս՝ Երուսաղեմ տեղափոխվելու և պատրիարքական ընտրություններին մասնակցելու ակնկալիքով։ Սահակ Բ Խապայանը 1918 թ. հոկտեմբերի 8-ին Դամասկոսի նոր առաջնորդ է նշանակում Պետրոս եպս. Սարաճյանին, որը մինչև 1919 թ. հոկտեմբերի 8-ը պաշտոնավարելուց հետո հետ է վերադառնում Հաճըն⁴։

բ) Գաղթականների օգնության կազմակերպումը։ Միրիայում գոյութուն ունեին գաղթականների կենտրոնացման և փոխադրության երկու մեծ կենտրոններ՝ Հալեպում և Դամասկոսում։ Միայն Դամասկոսում՝ չհաշված տեղի 30.000 հայ բնակչությանը,

¹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 1891-1940 թթ.», էջ 960։

² «Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939)», «Հասկ» ամսագիր, Անթիլիաս-Լիբանան, 1939, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 149։

³ Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921 թթ. (Հուշեր), Երևան, 1984, էջ 133։

⁴ Տէ՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 960։

կար 20.000 տարագիր, որոնց մեծ մասը Կիլիկիայից էին¹։ Պեյրու-թի, Զահլեի, Համայի, Հոմսի, Սելիմիեի, Ճսրը-Շուղուրի և Դամասկոսի շրջակայ գյուղերի հետ միասին, հայ գաղթականության թիվն անցնում էր 35 հազարից²։ Կային նաև 1500 երկսեռ որբեր³։ Բ. Եղիայանը հիշում է, որ Դամասկոսում գաղթականները մեծ մասամբ տեղավորուած էին ս. Սարգիս եկեղեցու հարակից վանական ու դպրոցական շենքերի և վազըֆ (բարեգործական-մասնավոր նպատակով առանձնացված հողային նվերը - վ. Հ.) կոչվող կալուածների մեջ⁴, իսկ Սահակ Բ Խապայանը տեղեկացնում է, որ նրանք ապրում էին վրանների տակ՝ «տակերնին փսիաթի կտոր մը չունենալով»⁵։ Բրիտանացիների և ֆրանսիացիների օժանդակությամբ ստեղծվեց վրանային ճամբար, հիմնվեց օգնության կոմիտե, որբանոց, չափահաս աղջիկների ապաստարան, բաժանվեց սնունդ և դրամ⁶։

Փաստագրական որոշ մանրամասնությունների մասին տեղեկանում ենք Պետրոս եպս. Սարաճյանի կողմից 1918 թ. հոկտեմբերի 30-ին Եգիպտոսի առաջնորդ Տ. Թորգոմ եպս.-ին գրած նամակից, որտեղ Սրբազան հայրը տալիս է այդ օրերի նկարագրությունը։ Հստ նրա՝ կաթողիկոսը Հոգևոր ժողովի մի խումբ անդամների հետ այդ ժամանակ Դամասկոսում էր, ուր գաղթականների թիվը հասնում էր 20.000-ի, որոնց ֆրանսիական կառավարությունը պիտի ներգաղթեցներ իրենց հայրենիք⁷։

Գաղթականության օժանդակելու գործին առաջինն արձագանքում է Կահիրեի հայությունը։ Այդ մասին մենք իմանում

¹ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 79։

² ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թ.1-2։

³ Երեցեան Տ., Որբերու բոյնը 1915-1921, Սալիպէ-Հալէպ, 1934, էջ 4։

⁴ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 79։

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2046, թ. 3։

⁶ Տե՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 961։

⁷ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 79, նաև Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 410-416։

ենք Դամասկոսում գտնվող Սահակ կաթողիկոսին ուղղված Եգիպտոսի ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովի 1918 թ. նոյեմբերի 2-ի նամակից¹: Նույն օրը Սահակ Բ-ին համանման նամակ է հղում նաև Եգիպտոսի Հայոց առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակյանը՝ ներկայացնելով հայ տարագիրների անօգնական վիճակը²:

Շուտով գավառական նախկին ժողովը վերակազմավորելով իր աշխատանքները, որոշում է Հալեպի առաջնորդական նոր փոխանորդ խաչատուր քհն. Պողիկյանի նախագահությամբ ստեղծել տեղի հայ գաղթականների անմիջական կարիքները հոգացող մի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր ոչ միայն հայ լուսավորչական, այլև հայ կաթողիկ և բողոքական հարանվանությունների կարոտյալների խնդիրներով: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ս. Խապայանին ուղղված Խ. քհն. Պողիկյանի 1918 թ. նոյեմբերի 8-ի և 14-ի նամակներից³: Հանձնաժողովը բաղկացած էր 15 հոգուց, որոնցից 2-ը՝ հայ կաթողիկ, 3-ը՝ հայ բողոքական և 10-ը՝ Հալեպի, Մարաշի, Կ.Պոլսի, Գոնիայի, Տիգրանակերտի, Կարիւնի, Սսի և Ադանայի հայրենակցական միություններից: Հանձնաժողովը ստեղծում է նաև «Հարաբերական գործոց հանձնախումբ»՝ գաղթականների արձանագրման համար⁴:

Որոշակի աշխատանքներից հետո արդեն 1918 թ. դեկտեմբերին տեղ հասավ առաջին օգնությունը՝ 1750 եգիպտական ոսկի, 2500 եգիպտական ոսկի արժողությամբ 6 հակ սպիտակեղեն և զգեստներ, որը Սահակ Բ Խապայանի խոստովանությամբ՝ «Յաղթական բանակի մուտքէն աւելի, որ ամէն ահ ու սարսափ փարատեց, տեղէդ գալիք լիառատ նպաստի յոյսը առ հասարակ

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 80:

² ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թ. 1-2:

³ Տե՛ս անդ:

⁴ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 80-81:

ամէնքն ալ գօտեպնդեց»¹։ Որոշվում է նաև տեղական իշխանութ-
յունների արտոնությամբ 1200 եգիպտական ոսկի վարկով 200
մահճակալով ժամանակավոր հիվանդանոց բացել Հալեպում։

Սահակ կաթողիկոսի վավերացումով 1918 թ. դեկտեմբերի
12-ին Հալեպում ստեղծվում է նաև «Հայ ազգային միությունը»՝
հայ հարանվանությունների երեք ներկայացուցիչներով, իսկ դեկ-
տեմբերի 17-ին վերակազմվում է «Գաղթականական հանձնաժո-
ղովը», որը մեծապես օգնում է հայ կարոտյալներին²։ Այդ մասին
Հալեպի առաջնորդական նախկին փոխանորդ Հարություն ավագ
քահանա Եսայանը 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հալեպից գրում է
Դամասկոս՝ Սահակ Խապայանին, որ. «... 25-30.000 հայ գաղթա-
կանութիւնը ազատ շունչ մ'առնել սկսած է շնորհիւ արդարասէր
Արաբ Կառավարութեան»³։

Հալեպի տարագիրներին օգնելու համար կաթողիկոսի ա-
նունով գումար է ուղարկվում նաև Կ. Պոլսից⁴։ Դամասկոսում
գտնված ժամանակ ներեկեղեցական կյանքի աչքառու իրադար-
ձություններից մեկն էլ Սահակ Բ Խապայանի դեմ տեղի հայութ-
յան ներսում հասունացված փոքրիկ խլրտումն էր՝ կապված նրա
կաթողիկոսական տիտղոսի հետ։ Ճիշտ է, Սահակ Բ-ն հաճախ էր
խոստովանում, որ ինքը կրում էր «Կիլիկիո կաթողիկոս» տիտղո-
սը, սակայն նրան հաճախ կոչում էին «Ամենայն հայոց կաթողի-
կոս», որն առաջ էր բերում ժողովրդի իրավացի դժգոհությունը,
քանի որ անվանակոչության նման ձևը դիտվում էր իբրև 1916թ.

¹ ԿԱԱԱ, հ. 14, ց. 1, գ. 28, թ.2։

² Տե՛ս **Կէպէնլեան Ս.**, Կիլիկեան հայ դէմքեր, «Պայքար». հանդէս ազգային, գրական
եւ տնտեսական, Պոսթոն, 1931, սեպտեմբեր, էջ 33-34։

³ Տե՛ս անդ։

⁴ Տե՛ս **Բրայս Դերկոմս Զ.**, Անգլիական կառավարութեան Կապոյտ գիրքը Հայոց Մեծ
Եղեռնի մասին (1915-1916), Թեհրան, 2012, էջ 56։

հուլիսի 19-ի կանոնադրության հետևանքով ազգային սահմանադրության դեմ ուղղված «բռնաբարոմի» արդյունք¹:

գ) Մուղրոսի զինադադարը և Կիլիկիայի հետագա ճակատագիրը: Այսպիսին էր իրավիճակը, երբ 1918 թ. հոկտեմբերի 30-ին էգեյան ծովի լեմնոս կղզու Մուղրոս նավահանգստում խարիսիս ձգած անգլիական «Ագամեմոնոն» հածանավի վրա զինադադարի պայմանագիր է կնքվում դաշնակից պետությունների և Օսմանյան կայսրության միջև, որով վերջ է դրվում ինչպես պատերազմական գործողություններին, այնպես էլ Օսմանյան կայսրությանը²: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում զինադադարի այն պայմանները, որոնք անմիջականորեն առնչվում են Կիլիկիայի հետագա ճակատագրին: Զինադադարի 7-րդ հոդվածը դաշնակիցներին իրավունք էր վերապահում գրավելու Օսմանյան կայսրության ցանկացած վայր, եթե կստեղծվեր անվտանգության սպառնացող իրավիճակ: 10-րդ հոդվածով դաշնակիցները պետք է գրավեին Տավրոսի փակուղու համակարգը³, իսկ 16-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Կիլիկիայից⁴:

Արդեն 1918 թ. նոյեմբերի 2-ին անգլիական զորքերը Միջագետքում գրավեցին Մոսուլի շրջանը, ինչպես նաև Միջերկրական ծովի կարևորագույն նավահանգիստներից մեկը՝ Ալեքսանդրետը: 1918 թ. նոյեմբերի 8-ին ուժասպառ եղած և պարտված Թուրքիան անձնատուր է լինում և հանձնվում հաղթողների ողոր-

¹ Կենճեան Ա., Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964, էջ 160-161:

² Մանրամասները տե՛ս Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 201-205:

³ Տե՛ս Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 75:

⁴ Տե՛ս “Дипломатический словарь в трех томах”, т. 2, Москва, 1961, с. 57, նաև “Хрестоматия по истории международных отношений”, Москва, 1963, с. 351:

մոլթյանը: Անգլիական հաղթանակած զորքերն օգտագործելով իրենց ռազմական գերակշռությունը՝ Սուեզից շարժվում են դեպի Իրաք և Սիրիա¹: Հիշարժան են այս շրջանում Սահակ Բ Խապայանի Դամասկոսից Փարիզ՝ Ֆրանսիայի վարչապետին, ինչպես նաև բրիտանական բանակի հրամանատարությունն ուղղված հեռագրերը: Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին ուղղված 1918 թ. նոյեմբերի 13-ի շնորհավորական հեռագրում նա մասնավորապես նշում էր, «Մարդկության վերջնական հաղթանակին հասնելու համար դաշնակիցների թափած մեծ ջանքը անսահման ուրախությամբ է լցնում մեր սիրտը: Հայ ազգը, որ այդ ընդհանուր ուրախությունների մասն է կազմում, շտապում է միանալու այն սրտագին շնորհավորանքներին և փայլուն հերոսության համար այն բարձր հիացմունքին, որ դաշնակիցներն են փաստում: Իմ ժողովուրդը շտապում է ձգտել ամենասուրբ առաքելության՝ ազատության»: Իսկ բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատարությունն ուղղված հեռագրում ասվում էր, «Որպես Թուրքիայից արտագաղթածների հոգևոր առաջնորդ՝ ամբողջ սրտով և ջերմորեն շնորհավորում եմ Ձեր փառապանծ բանակի հաղթական մուտքը Սիրիայի մայրաքաղաք: Աղոթում եմ, որ նրանք բացեն քաղաքակրթության համար նոր դարաշրջան այս դրախտանման երկրի համար, որն անպաշտպան և ճնշված մնաց երկար դարեր»²:

1918 թ. նոյեմբերի 21-ին Դամասկոսում Սահակ Բ Խապայանը հանդիպում է ունենում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի խորհրդական Մայք Սայքսի հետ, որը կաթողիկոսին հորդորում է հայկական «արդար դատի» համար հնարավո-

¹ Տե՛ս Վաչէ Ա., Ինչպէս կորսնցուցինք Կիլիկիան. հերոսամարտներ Այնթապ, Հաճըն, Մարաշ, Տէօրթ-Նոյ, Պէլուս, 1971, էջ 8:

² Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 65-66:

րինս շատ «աղմուկ յարուցանել համաձայնական պետութիւնները հեռագրական դիմումներով»¹։

Մուղրոսի զինադադարի համաձայն՝ 1918 թ. նոյեմբերի 28-ին դաշնակից ուժերի գլխավոր հրամանատարությունը թուրքական իշխանություններից պահանջում է դատարկել Կիլիկիան, որից հետո 1918 թ. դեկտեմբերին անգլիական զորքերը մտան Մերսին ու Ադանա, իսկ 1919 թ. հունվարին գրավեցին Ուրֆան, Մարաշը և Այնթապը։ Այս ամենը կատարվեց Սաջս-Պիկոյի համաձայնագրի խախտմամբ, քանի որ համաձայնագրով Կիլիկիան տրվում էր Ֆրանսիային²։

1918 թ. դեկտեմբերին անգլո-ֆրանսիական զորքերի և թուրքական կառավարության միջև ստորագրվում է մի նոր փաստաթուղթ՝ Մուղրոսի զինադադարի գաղտնի հավելվածը³, որով Կիլիկիայի կառավարման վերահսկողությունը հանձնվում էր ֆրանսիական զինվորականությանը, որը, սակայն, պիտի ենթարկվեր անգլիական զենեռալ էդմոնդ Ալենբիին՝ որպես Մերձավոր Արևելքում գործող դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարի⁴։ Հատկանշական է, որ երբ Սահակ Բ կաթողիկոսը հյուրընկալում է է. Ալենբիին, վերջինս նրան պատասխանում է, որ. «Ուրախ եմ, որ այսօր ձեր երկրին մէջ հիւր եմ»⁵։

¹ Կենճեան Ա., նշվ. աշխ., էջ 166։

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Զ.Ս. Կիրակոսյանի խմբագրութամբ, էջ 393։

³ Ըստ գնդապետ է. Բրեմոնի՝ զինադադարի հավելվածը ստորագրվել է 1919 թ. փետրվարի 20-ին։ Տե՛ս, Bremond E., *La Cilicie en 1919-1920*, Paris, 1921, p. 9։

⁴ Տե՛ս Кемаль М., *Путь новой Турции 1919-1927*, т.1 - Первые шаги национального-освободительного движения 1919, Москва, 1929, с. XXIX։

⁵ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1919 թ. փետրուար 1, թիւ 1485։

1918 թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեոնի զորամասերն առաջին անգամ մտան Կիլիկիա¹, իսկ 1918 թ. դեկտեմբերի 25-ին ֆրանսիական կառավարության թիվ 92189/11 հրամանով ֆրանսիացի զնդապետ է. Բրեմոնը նշանակվեց «Հյուսիսային գոտու» (Ադանայի վիլայեթ՝ բացի Սելեֆքեի կազայից)՝ «Հայաստանի կառավարիչ», և 1919 թ. հունվարի 23-ին վեց սպաների ուղեկցությամբ ժամանեց Հայֆա²։ Հիշյալ գոտուց արևելք ընկած տարածքները՝ Մարաշը, Այնթապը, Ուրֆան և Հալեպը, կազմում էին առանձին մի շրջան և դրվում անգլիական «Հեծյալ անապատային կորպուսի» («Desert Mounted Corps») վարչական վերահսկողության տակ»³։

Հետաքրքրական է և զարմանալի, որ է. Ալենբիք գրավոր հրահանգ տվեց Բրեմոնին, որ նա Կիլիկիան կառավարի իբրև՝ «սուլթանի իշխանության ենթակա երկիր, օսմանյան պաշտոնյաներու միջոցով»⁴։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, Սահակ Բ-ն 1919 թ. հունվարի 8-ին նամակով դիմում է գեներալ Ալենբիքին և առաջարկում՝ ա. Կիլիկիայի խաղաղ զարգացումն ապահովելու համար զինաթափել տարածքի մահմեդական բնակչությանը, բ. կանխել հայերի շրջանում թուրքերի կողմից կազմակերպվող խուճապային տրամադրությունների տարածումը, գ. պաշտոններ

¹ Տե՛ս Պողոսեան Ա., Թրքահայ սպայի մը օրագիրը, հ. Բ, Փարիզ, 1947, էջ 134, նաև Վիրաբյան Վ., Պողոսյան Ա., Եփրիկյան Ա., Հայկական զինուժը 1914-1920 թթ., Երևան, 2020, էջ 175-176։ Լեգեոնի մասին ավելի հանգամանորեն տես Պողոսյան Ա. Ա., Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.։ Հայկական (Արևելյան) լեգեոնը, Երևան, 2023, էջ 173-338։

² Այս շրջանի պատմության մասին տե՛ս Պրեմոն է., Կիլիկիա 1919-1920 շրջանին, Պոստոն, 1921, էջ 13-47, 49-135։

³ Redan P., *La Cilicie et le problème ottoman. Préface par René Pinon*, Paris, 1921, p. 76-75, նաև Bremond E., նշվ. աշխ., p. 8-9։

⁴ Դզմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրն անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), էջ 209։

չտրամադրել 1915 թ. հայկական կոտորածների կազմակերպիչներին և համախոհներին, դ. վերացնել բանկային դեպոզիտներում պահվող տարագրված հայերի գույքի կալանքները¹:

դ) Կ.Պոլսի ու Եռուսաղեմի պատրիարքությունների և Կիլիկիո կաթողիկոսության վերահաստատումը: Մուգրոսի զինադադարից հետո Սահակ Բ Խապայանի մտահոգություններից մեկը Կ. Պոլսի և Եռուսաղեմի Հայոց պատրիարքությունների ինքնուրույն իրավակարգի վերահաստատումն էր, որը պարտադրվել էր Օսմանյան պետության կողմից 1916 թ. նվիրապետական չորս աթոռների միացմամբ: Հասել էր ժամանակը, որ Կիլիկիան նորից պետք է դառնար կաթողիկոսական նստավայր և ձեռք բերեր իր անկախությունը և երբեմնի փառքը: Դամասկոսի ազատագրումից անմիջապես հետո կաթողիկոսը հրահանգել էր Կ.Պոլսի պատրիարքի փոխանորդ Գաբրիել եպս. Ճեահիրճյանին զբաղվել Ազգային սահմանադրության վերականգնման խնդրով, քանի որ օսմանյան կառավարությանը 1918 թ. հոկտեմբերի 18-ին արտոնագիր էր տրամադրել 1916թ. հուլիսի 19-ի «Կանոնագրով» կասեցված Արևմտահայերի ազգային սահմանադրությունը վերահաստատելու համար²: Արդյունքում, վերականգնում է դուկտ. Գ. Դավիթյանի՝ պատրիարքական նախկին խափանված վարչության գործունեությունը, որն էլ իբրև սահմանադրությամբ ընտրված մարմին իր կողմից պատրիարքական տեղապահ է նշանակում Մեսրոպ եպս. Նարոյանին: 1918թ. հոկտեմբերի 31-ին Կ.Պոլսի նորընծա տեղապահը և պատրիարքական վարչությունը իշխանություններից պահանջում են նաև աքսորված նախկին պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի վերադարձը Կ.Պոլիս³:

¹ Տե՛ս ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ. 9981, III բաժին, թ.1-3:

² Տե՛ս Զաւէն արքեպս., նշվ. աշխ., էջ 338:

³ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 84:

Նոր իրադրություն պայմաններում Բ. Դուռը 1918 թ. նոյեմբերի 20-ին հրապարակում է մի նոր օրենք, որով օրինականացվում էր 1863 թ. մարտի 17-ի Արևմտահայերի ազգային սահմանադրության վերահաստատումը: Նոր օրենքի համաձայն, որը բաղկացած էր հինգ հոդվածներից, կասեցվում էր Հայ կաթողիկոս-պատրիարքության 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագիրը, որի փոխարեն վերահաստատվում էր արևմտահայերի 1863 թ. մարտի 17-ի Ազգային սահմանադրությունը, չեղարկվում էին Հայ կաթողիկոս-պատրիարքության 1917 թ. հունվարի 24-ի «բերաթ»-ները, և դրա փոխարեն վերահաստատվում էին Սսի Հայոց կաթողիկոսին և Կ.Պոլսի պատրիարքին վերաբերող նախկին որոշումները¹:

Սակայն մի փոքր այլ էր վիճակը Կիլիկիո կաթողիկոսի համար: Վերջինս նախ մի կողմից պետք է ամրագրեր Երուսաղեմի պատրիարքական աթոռի անկախությունը՝ նոր իշխանությունների հետ հարաբերությունների հաստատման օրինականացումով, իսկ մյուս կողմից վերահաստատեր կաթողիկոսական իր աթոռը Կիլիկիայում՝ նոր իշխանությունների և Փարիզի Հայ ազգային պատվիրակության հետ իրավական դիրքերի և հարաբերությունների ճշտումով: Թերևս այս էր պատճառներից մեկը, որ Կաթողիկոսական աթոռը Կիլիկիայում վերահաստատվեց մեկ տարի ուշացումով: Այս ճանապարհին Ս. Խապայանի վրա դրված կարևոր խնդիրներից մեկը կաթողիկոսությանը Երուսաղեմի Հայոց պատրիարքության իրավունքների փոխանցման հարցն էր²:

¹ Տե՛ս «Լիբանանի Հայոց անձնական իրաւունքը», Անթիլիաս- Լիբանան, 1956, էջ 42:

² 1910 թ. վախճանվել էր Երուսաղեմի վերջին պատրիարք 93-ամյա Հարություն արք. Վեհապետյանը, որը աթոռակալել էր 21 տարի: 1910 թթ. Երուսաղեմի պատրիարքական աթոռը մնացել էր թափուր: Վանքի ներքին հաշվապահական և միաբանական խնդիրներով զբաղվում էին Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը և Ազգային կենտրոնական վաչությունը: Վերջինը Արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատումից ի վեր իր վրա էր վերցրել Երուսաղեմի Հայոց պատրիարքի ընտրության և վարչական հսկողության պատասխանատվությունը:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերին, երբ անգլիական զորքերը Սուեզից մտնելով Միջերկրական ծով գրավեցին Պաղեստինի հարավային շրջանները և Երուսաղեմը, Սահակ Բ-ի անունով ստեղծված մարմինը կորցրեց իր իրավական հեղինակությունը, և բրիտանական իշխանությունների ու մասնավորապես Երուսաղեմի անգլիացի առաջին կառավարիչ՝ գեներալ Սթորսի համաձայնությամբ և բարյացակամությամբ ստեղծվեց վարչական նոր ժողով՝ Եղիշե եպսկ. Զիլինկիրյանի նախագահությամբ՝ մինչև նոր պատերազմի ընտրությունները¹։ Սահակ Բ խապայանն իր այդ մտադրության մասին ծանուցել էր Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը և Փարիզի Ազգային պատվիրակությանը։

Սակայն, երբ նա վերադառնում է Երուսաղեմ՝ իր իշխանությունը փոխանցելու համար, բախվում է որոշակի դժվարությունների։ Բանն այն էր, որ անգլիական իշխանությունների կող-

1914 թ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը Կ.Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ Երուսաղեմի Հայոց պատրիարքի ընտրության հարցը լուծելու համար Երուսաղեմ է ուղարկում Կ.Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանին և Վահան Թեքեյանին։ Սակայն վերահաս պատերազմը առկա վիճակի մեջ է թողնում հարցի քննությունը։ Վ. Թեքեյանը վերադառնում է Կահիրե, իսկ Մ. արք. Օրմանյանը մնում է վանքի մեջ իբրև ընթացիկ գործերի վերահսկող՝ մինչև 1916 թ. օգոստոսի 9/16-ը, երբ նոր կանոնադրությամբ «կաթողիկոս-պատրիարք» կրկնակի տիտղոսով Երուսաղեմ է փոխադրվում Սահակ Բ խապայանը։ 1917 թ. նոյեմբերի 9/16-ին Օսմանյան կառավարության հրահանգով «ապահովության» համար Ս. խապայանը Երուսաղեմից տեղափոխվում է Դամասկոս՝ պատրիարքության գործերը թողնելով «տնօրենների ժողով»-ին՝ Գյուտ եպիսկոպոսի նախագահությամբ։ Տե՛ս **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 85-86։

¹ Միայն 1921 թ. սեպտեմբերի 5-ին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը 68 ժողովականների մասնակցությամբ և Զավեն պատրիարքի նախագահությամբ 62 կողմով Եղիշե արք. Դուրյանին պետք է ընտրեր Երուսաղեմի հայոց պատրիարք։ Տե՛ս **Դուշակեան արք. Թ.**, Եղիշե պատրիարք Դուրեան, Դուրեան մատենաշար, թիւ 1, Երուսաղեմ, 1932, էջ 275։

մից հովանավորվող որոշ ուժեր փափագում էին, որ իշխանութ-
յան փոխանցումն իրականացվեր ոչ թե զուտ վանական իշխա-
նությանը, այլ աշխարհականներից բաղկացած խառը հանձ-
նախմբին: Այդպես էր կամենում նաև Երուսաղեմի անգլիական
կառավարիչը՝ գեներալ Սթորսը: Չնայած կաթողիկոսը միաբա-
նությանը կոչ էր անում խուսանավել առճակատումից, սակայն
վանքի լուսարարապետն իր համակիրներով համաձայնվում է աշ-
խարհիկ խառը հանձնախմբի ստեղծմանը: Այդ մասին տեղեկութ-
յուններ են պահպանվել Փարիզ՝ Պոդոս Նուբար փաշային ուղղ-
ված Ս. Խապայանի 1919 թ. ապրիլի 19-ի նամակում¹:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 6/19 Սահակ Բ կաթողիկոսը
և Մ. արք. Օրմանյան սրբազանը եպիսկոպոսաց դասի հետ միա-
սին Երուսաղեմից տեղափոխվում են Դամասկոս: 1918 թ. սեպ-
տեմբերի 30-ին Դամասկոսի կառավարչական պալատում Սահակ
Բ Խապայանը ազգային-հոգևոր մյուս առաջնորդների հետ միա-
սին հանդիպում է անգլիական բանակի կազմում գտնվող արա-
բական ազատարար բանակի հրամանատար էմիր Ֆեյսալ բըն
Հուսեյնի հետ: Մուղրոսի զինադադարից հետո Սահակ Բ Խապա-
յանի մտահոգություններից մեկը Երուսաղեմի Հայոց պատրիար-
քության ինքնուրույն իրավակարգի վերահաստատումն էր: Օս-
մանյան կառավարությունը 1918 թ. հոկտեմբերի 18-ին արտոնա-
գիր էր տրամադրել 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագրով» կասեց-
ված Արևմտահայերի ազգային սահմանադրությունը վերահաս-
տատելու մասին, իսկ 1918թ. նոյեմբերի 20-ի օրենքով օրինակա-
նացվեց Արևմտահայերի ազգային սահմանադրությունը, և կա-
սեցվեց 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագիրը: 1918 թ. դեկտեմբերին
անգլո-ֆրանսիական զորքերի և թուրքական կառավարության
միջև ստորագրվում է մի նոր փաստաթուղթ՝ Մուղրոսի զինադա-

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 87:

դարի գաղտնի հավելվածը, որով Կիլիկիայի կառավարման վերահսկողությունը հանձնվում էր ֆրանսիական զինվորականութ-
յանը, որը, սակայն, պիտի ենթարկվեր անգլիական գեներալ էդ-
մոնդ Ալենբերին: 1918 թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեո-
նի զորամասերն առաջին անգամ մտան Կիլիկիա, իսկ 1918 թ.
դեկտեմբերի 25-ին ֆրանսիական կառավարություն թիվ 92189/11
հրամանով է. Բրեմոնը նշանակվեց «Հայաստանի կառավարիչ»:

3.2. Հայ ազգաբնակչության վերադարձի կազմակերպումը Կիլի- կիա և Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը

ա) Բնակչության Կիլիկիա վերադարձի կազմակերպումը: Հա-
լեպի ազատագրումից հետո՝ 1918 թ. նոյեմբերի վերջերին, Սահակ
Բ Խապայանը վերադառնում է Ադանա, ուր իջևանում է Սարգիս
Պազալյանի տանը: Սակայն երկու շաբաթ մնալուց հետո նա նո-
րից հետ է վերադառնում Հալեպ, Դամասկոս և Երուսաղեմ՝ բնակ-
չության ներգաղթը կազմակերպելու նպատակով:

Այն բանից հետո, երբ 1919 թ. փետրվարի 1-ին է. Բրեմոնը
ժամանում է Ադանա և անցնում իր պարտականությունների կա-
տարմանը՝ որպես «դաշնակիցների կողմից գրավված թշնամի
տարածքների կառավարիչ»¹, Սիրիայում և Կիլիկիայում ֆրան-
սիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոն Սիրիայում և Միջա-
գետքում գտնվող հայ տարագիր փախստականներին կոչ է անում
վերադառնալ Կիլիկիա²: Դադթականների վերադարձի համար

¹ Brémond E., *La Cilicie en 1919-1920*, Paris, 1921, p. 8.

² Stéu Paillarés M., *Le Kémalisme devant les Alliés*, Paris, 1922, p. 188.

մեծ հույսեր էին ներշնչում հատկապես Ֆրանսիայի հանրապետության նախագահ՝ Ռ. Պուանկարիեի¹ և Ֆրանսիացի զորավար Գուրոնի հայտարարություններն ու խոստումները²։ Նշենք նաև, որ Մուղրոսի զինադադարի 6-րդ կետի համաձայն՝ անգլիական բանակի եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը պարտավորվում էր հայրենիք ուղարկել բոլոր ցանկացող հայերին³։

Ֆրանսիական և բրիտանական զորքերի հովանավորության ներքո գտնվող Կիլիկիան աստիճանաբար դառնում է Օսմանյան կայսրության այն միակ վայրը, որտեղ հայերը կարող էին զերծ մնալ կոտորածների վտանգից, որտեղ կերաշխավորվեր նաև նրանց ֆիզիկական անվտանգությունը։ Ժամանակավոր խաղաղությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծում հայ ժողովրդի մնացորդացի համար Կիլիկիա վերադառնալու ակնկալիքով։ Այդ էր պատճառը, որ Մուղրոսի զինադադարից հետո բազմաթիվ հայեր խումբ առ խումբ վերադառնում էին Կիլիկիա՝ իրենց քարուքանդ օջախները վերաշինելու նպատակով։ Ավելի քան 150 հազար հայեր⁴, որոնք «ականատեսին վրայ թողլով անդրաշխարհէն վերադարձող յարուցեալներու տպաւորութիւնը»⁵ 1919 թ. փետրվար-մարտին ներգաղթում են Կիլիկիա⁶։ Խոսելով ստեղծված իրավիճակի և տուն վերադարձող հայերի խանդավառության մասին՝ Ա. Կենճյանը գրում է. «Հոգեբանական այս ընդհանուր հիփնոզեն հմայված կիլիկեցի տարագիր հայությունը՝

¹ Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրուս, 1964, էջ 210։

² Կենճեան Ա., Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան աթիւր, Պէյրուս, 1958, էջ 280։

³ Տե՛ս Кемаль М., նշվ. աշխ., Դ.1, Ը. 121.

⁴ Տե՛ս Thorossian H., *Historie de l'Arménie et du peuple arménien*, Paris, 1957, p. 153, նաև Jean-Pierre Alem, *l'Arménie*, Paris, 1962, p. 66։

⁵ Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 564։

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, գ.132, թ.338։

շատ հասկանալի էր ուրեմն, որ ուզեր թևեր առնել թռչելու համար դեպի Կիլիկիա, ուր պիտի ապրիլ ազատ ու ինքնավար...»¹։ Բայց ինչպես է եղել խոստովանում. «1919-ի առաջին կեսն ընդունակ էր այդպիսի տրամադրություններ ներշնչել ամենքին։ Համաշխարհային բարերարությունների գունագեղ ամիսներ էին դրանք։ Ինչեր և ինչեր չէին խոստանում հաղթողները և ինչեր չէին սպասում նրանցից։ Եկել էր ուրեմն հատուցման օրը, երբ մարդիկ պիտի նստեին թուրքահայի արյունը գնահատեին ու ստանային նրա փոխարժեքը։ Հրաշք էր այս մանավանդ Կիլիկիայի հայության համար...։ Ինչ կարող էր, ուրեմն, լինել կիլիկիահայը, իր ակնկալած բոլոր բարեբախտությունների Ֆրանսիայի վերաբերմամբ, բացի պաշտողից, սքանչողից»²։

Բնակչության ներգաղթը Կիլիկիա իրականացվում էր ֆրանսիական իշխանության ֆինանսական միջոցներով։ Այն հսկում և իրականացնում էին հիմնականում ֆրանսիական բանակի սպաները՝ Հայ ազգային միությունների հետ համատեղ երկու ճանապարհով՝ ցամաքային՝ Դամասկոս-Հալեպ-Ադանա և Ռաս-էլ-Այն-Հալեպ-Ադանա գծով, և ծովային՝ դեպի Բեյրութ-Մերսին-Ադանա և Իսկենտերուն³։

Նման պայմաններում դարձյալ ծագում էր այն հիմնական հարցը, թե ո՞վ պետք է ստանձներ հայության վերադարձի և օգնության այդ ծանր, բայց հայրենանվեր աշխատանքը։ Ճիշտ է, 1919 թ. Կիլիկիա գաղթած հայերի խնամակալության գործը

¹ Կենճեան Ա., նշվ. աշխ., էջ 6-7։

² Լեօ, Թուրքահայ լեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ 1935, էջ 210-211։

³ Տե՛ս Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 961։

ստանձնել էր ֆրանսիական ներգաղթի բյուրոն՝ իր անվանը կցելով «Խնամատար Հայոց» անունը¹, սակայն կասկածից վեր էր, որ ներգաղթի կազմակերպման աշխատանքները մեծամասամբ կարող էր գլուխ բերել միայն Կիլիկիո կաթողիկոսությունը, որն այս անգամ, բարեբախտաբար, մենակ չէր այդ գործում²: Վերջինիս իր օգտաշատությամբ, բարենպաստ մասնակցությամբ և մատուցած ծառայություններով օժանդակում էին ինչպես հայկական, այնպես էլ օտար նպաստամատույց կազմակերպությունները, ազգային-վարչական սահմանադրական ժողովները, որոնք ևս իրենց վրա էին վերցրել երկրամասի քաղաքական, թաղական, կրթական և հասարակական գործերը, «Հայ ազգային միություն»-ը, որը բաղկացած էր բոլոր հարանվանությունների ներկայացուցիչներից, Փարիզի Հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանը, որը հանդիսանում էր Ֆրանսիայի և Հայաստանի միջև հարաբերությունների միջնորդը և դաշնակից պետությունների որոշ քաղաքական ու զինվորական կառույցները: Սահակ Բ Խապայանը Կիլիկիա ներգաղթող հայ ազգաբնակչությանը օգնություն կազմակերպելու և «կաթողիկոս-պատրիարք» տիտղոսի պաշտոնական գործերը կարգավորելու և վերջնականապես Կիլիկիա վերադառնալու նպատակով³ 1919 թ. փետրվարի 20-ին ուղևորություն իրականացրեց դեպի Կահիրե⁴:

1919 թ. մարտի 7-ին Սիս է ժամանում ֆրանսիացի զինվորական կառավարիչ հարյուրապետ Թայյարտան: Նրան ուղեկցում էին ֆրանսիական բանակի սպա Երվանդ Թերլեմեզյանը,

¹ «Յուշամատեան Սուրիահայ օգնութեան Խաչի 1919-2009», խմբագիր Անի Ֆիշենկճեան, Հայէպ, 2010, էջ 27:

² «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական», աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959, էջ 1085:

³ Տէ՛ս Բաբգէն Ա. Աթողիկոս կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, նշվ. աշխ., էջ 961:

⁴ Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 375:

դոկտ. Էմանուել Պալյանը, թարգման Կարապետ Պալյանը և մի խումբ ֆրանսիացի զինվորներ։ Մայրավանքում տեղի ունեցած հանդիպման ժամանակ զինվորական կառավարիչը ներկայացնելով իր առաքելության նպատակը, հորդորում է. «... ֆրանսական կառավարութեան արդար դրօշին տակ յետ այսու ազատ ու խաղաղ ապրելու բաղձալուրովինը, յորդորելով եղբայրաբար վարուիլ Իսլամ տարրերու հետ և համբերել աւելի բաղձալուր օրեր ապրելու համար»¹։

Հաջորդ օրը՝ մարտի 8-ին, ֆրանսիացի կառավարչի հրամանով Կաթողիկոսության վեհարանի մեջ ընտրվեց 9 անդամներից բաղկացած տարագիրների օգնության Սսի Ազգային միությունը՝ ատենապետությամբ Միսակ Ազիբյանի, իսկ մարտի 9-ին Ազգային միությանը ենթակա Հայ երիտասարդական միությունը։

1919 թ. փետրվար-մարտ ամիսներից սկսած՝ ֆրանսիական զորքերի հրամանատարությունը պահանջում է, որ բրիտանացիները Կիլիկիայում իրենց տեղը զիջեն ֆրանսիական զորքերին։ Միայն այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիան ստացավ Ֆրանսիայի համաձայնությունն իրեն տրամադրելու Մոսուլը, 1919 թ. մայիսի 22-ին փարիզյան համաձայնությամբ երկու պետությունները վերջապես համաձայնության են գալիս, որով Անգլիային էին անցնում Պաղեստինն ու Իրաքը, իսկ Ֆրանսիային՝ Սիրիան ու Կիլիկիան։ Ֆրանսիան հնարավորություն էր ստանում իր զորքերը մաս-մաս փոխադրել Կիլիկիա²։ Սակայն բրիտանական զորքերի հեռացումը միանգամից տեղի չունեցավ, այն ձգձգվում է մինչև 1919 թ. հոկտեմբերի վերջերը, որից հետո սկսվում է ֆրանսիական բանակի կողմից Կիլիկիայի ամբողջական գրավումը։

¹ Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 566։

² Տե՛ս Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 129։

Հուլիսի 14-ին առավել մեծ շուքով նշվեց Ֆրանսիական հեղափոխության ազգային տոնը: Տեղի ունեցած զորանցքից, ձիարշավից և մրցումներից հետո բազմությունը շարժվեց դեպի Մայրավանք, որի վրա պարզված էր Հայաստանի դրոշը: Ավագ խորանի վրա ծածանվեցին Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի դրոշները և հայկական եռագույնը: Հայ դրոշի կնքահայրության համար կազմակերպվեց աճուրդ, որի ժամանակ ներկաները՝ հարուստ թե աղքատ, մասնակցեցին դրամական նվիրատվությանը: Աճուրդին հաջորդեց Մայրավանքի զանգերի ղողանջը, որից հետո բազմությունը բարձրացավ Մայրավանքի տանիքը, որտեղ հնչեց «Դարձեալ փայլեց Սիսի վերեւ ազատութեան դրօշակ» երգը, որով «Մայրավանքը կը սփռէր ազատութեան աւետիսը»¹:

Արդեն 1919 թ. վերջերին իրենց բնիկ գյուղերն ու ավանները վերադարձան շուրջ 155650 հայեր, որոնցից՝ Հաճնից՝ 8000, Սսից՝ 8500, Հասան-Բեյլիից և շրջակայքից՝ 1500, Տեորթ-Նոլից՝ 12000, Օսմանիեից, Պահլեից և շրջակայքից՝ 1600, Միսիսից և շրջակայքից՝ 1500, Աբդողլուից՝ 1500, Նաճարլուից՝ 1000, Ինճիրլիքից՝ 1250, Տարսոնից՝ 15000, Մերսինից՝ 15000, Զեյթունից՝ 1800, Մարաշից և շրջակայքից՝ 25000, Այնթապից և շրջակայքից՝ 22000, Ադանայից՝ 40000 հոգի²:

Կիլիկիա վերադարձած հայերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ, Ադանայում՝ 60 հազ., Հաճնում՝ 8 հազ., Հասան-Բեյլիում՝ 1000, Դյորթ-Նոլում՝ 12.000, Օսմանիեում և շրջակայքում՝ 1000, Միսիսում՝ 1200-1500, Աբդողլուում՝ 1000, Նաջարլիում՝ 1000, Ինճիրլիքում՝ 1200, Տարսոնում՝ 3-4000, Մերսինում՝ 2-3000³: Սսի Ազգային միության գիվանի տեղեկությունների համաձայն՝

¹ Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 567-568:

² Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 83:

³ Տե՛ս Bremond E., նշվ. աշխ., Բ.11-12:

միայն Սիս են ներգաղթել 451 ընտանիք կամ 1816 հոգի¹։ Բացի այդ, 50.000-ից ավելի հայեր հաստատվել էին Մարաշում, Զեյթունում, Այնթապում և շրջակա գյուղերում²։ Ինչպես երևում է, ամենամեծ ներգաղթը կազմակերպվել էր դեպի Ադանա, Մարաշ և Այնթապ, իսկ ամենաքիչը դեպի Նաճարը։

Ադանայում կային նաև տասնյակ հազարավոր հայեր՝ հիմնականում ոչ կիլիկեցիներ, որոնք օրվա հացին կարոտ մի կերպ իրենց գոյությունն էին պահպանում Ադանայի փողոցներում։ Այդ է փաստում Սահակ կաթողիկոս Խապայանի 1919 թ. դեկտեմբերի 29-ի նամակն ուղղված Գևորգ Ե կաթողիկոսին, որտեղ նա նշում է. «Ավելի քան հիսուն հազար հոգի, ընդհանրապես այրիներ և որբեր Ադանայի նահանգին մեջ խռնված՝ ձմեռ եղանակին կապրին վրաններում տակ, տակերնին փսիաթի կտոր մը չունենալով, իսկ իրենց ծննդավայրը գտնվողները ամեն օր կը մեռնին և կը գերեզմանվին, որովհետև թուրքին յաթաղանը իրենց կողին և սուրը իրենց գլխին վրա առկախ կը տեսնեն»³։

1919 թ. հունիսին Ադանա է գալիս հնչակյան աչքի ընկնող գործիչ Միհրան Տամատյանը՝ որպես ամբողջական Հայաստանի պատվիրակության լիազոր-ներկայացուցիչ։ Այդ առթիվ Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը հատուկ գրություններ առաքեցին Ժորժ Պիկոյին, գեներալ Ալենբերին, գնդապետ Բրեմոնին, Հայ ազգային միությանը և Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսին⁴։ 1919 թվականի ամռանը Ժորժ Պիկոյին փոխարինեց գեներալ Գուրոն, որը որպես «Սիրիայի ու Կիլիկիայի բարձր կոմիսար և արևելյան բանակի հրամանատար» վարում էր բացահայտ թուրքոֆիլ քաղաքականություն։

¹ Տե՛ս Քէլեշեան Մ., նշվ. աշխ., էջ 564։

² Տե՛ս, Du Véou Paul, *La passion de la Cilicie*, 1919-1922, Paris, 1954, p. 91

³ ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ.2046, թ.4։

⁴ Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, Ուոթրթաուն, 1965, էջ 240։

Մ. Տամատյանը օգտակար աշխատանք կատարեց Ազգային միությունների գործունեությանը նոր լիցք հաղորդելու գործում: Պահպանվել է իր իսկ կողմից կազմված «Կիլիկյան Ազգային միության վերակազմության նախագիծ» ուշագրավ փաստաթուղթը, որտեղ սահմանվում են Ազգային միությունների աշխատանքների շրջանակները, պարտականություններն ու իրավունքները: Մի կողմ թողնելով բուն նախագծի մյուս կետերի վերլուծությունը, որը մեր հետաքրքրությունների շրջանակից դուրս է, նշենք միայն, որ նախագծի երրորդ կետով նախատեսվում էր, որ, «Ադանայի Կենտրոնական Ազգային Միության մեջ աթոռու ձայն պիտի ունենան Կիլիկիո վեհ. Կաթողիկոսը, անձամբ կամ իր ներկայացուցիչով և Ամբողջական Հայաստանի Պատվիրակը», իսկ 12-րդ կետում ընդգծվում էր, որ ազգային, կրոնական կազմակերպությունների և Ազգային միությունների գործունեության ընթացքում խաչաձևումները կանխելու նպատակով՝ «...Ազգային Միություններուն վերապահված պիտի մնա զուտ ազգային-քաղաքական և դիվանագիտական գործերու հարաբերությունները վարելու կոչումը և իրավունքը»¹:

Այսպիսով, Կիլիկիան դառնում էր ապահով, հուսատու և հայաշատ մի երկրամաս, որտեղ կյանքը նախկինի պես սկսում էր աշխուժանալ, և մեծանում էր հավատը ապագայի նկատմամբ:

բ) Սահակ Բ հապայանի Կիլիկիա վերադառնալու խոչընդոտները: 1919 թ. ապրիլին Ս. հապայանը տեղափոխվում է Ադանա², իսկ 1919 թ. հունիսին 15 օրով մեկնում է Սիս: Սակայն տեսնելով, որ կաթողիկոսարանը ավերված վիճակում էր, նա նորից հետ է վերադառնում Ադանա:

Սահակ Բ կաթողիկոսի համար հուսալքում պատճառող

¹ «Հասկ», Անթիլիաս, 1950, թիւ 7-8, էջ 210:

² Տե՛ս «Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 - 8 նոյեմբեր 1939)», «Հասկ» ամսագիր, Անթիլիաս-Լիբանան, 1939, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 149:

հրատապ մյուս խնդիրը Կիլիկիա վերադառնալու ճանապարհին ազգային շրջանակների կողմից հարուցված դժվարություններն էին և վերապահ կեցվածքը: Բանն այն է, որ Սահակ Բ Խապայանը Փրանսիական իշխանությունների և ժողովրդի կողմից բազմաթիվ հրավերներ էր ստացել Սիս վերադառնալու և իր պատմական Աթոռը ստանձնելու համար: Սակայն բուն Հայաստանի և արտասահմանի նորակազմ իշխանությունները վերապահումով էին վերաբերվում այդ հարցին և նույնիսկ բանակցություններ էին վարում Կիլիկիո կաթողիկոսության գործունեությունը օրենսդրորեն սահմանափակելու համար:

Միաժամանակ, կաթողիկոսը զգում էր, որ Կիլիկիայում դեռ իշխում էր հայաջինջ նկարագրով հին թուրքական հոգեբանությունը, որի հետ միաժամանակ սիրաբանում էին անգլոֆրանսիական իշխանավորները¹: Բանն այն է, որ իբրև երկրի քաղաքական ներքին վարչական ուժ տակավին գործուն դերակատարություն ուներ թուրքական իշխանությունը՝ իրեն ենթակա քաղաքապետարաններով, ոստիկանությամբ, ժանդարմներով և թղթատարությամբ²: Հակառակ Մուղրոսի զինադադարի պայմանների, թուրքական զորքը ոչ թե հեռացել էր Կիլիկիայից, այլ ցրվել տարբեր շրջաններում՝ թաքցնելով իրենց զենքի մեծ մասը: Այս ամենի մասին Ս. Խապայանը տեղեկացնում է Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին՝ 1919 թ. ապրիլի 17-ի իր նամակում, ուր մասնավորապես նշում էր, որ «Կիլիկիայէն գացող-եկողներ կ'ըսեն մեզ, որ Ձեր ներկայութիւնն ի Կիլիկիա անհրաժեշտութիւն է: Ձենք գիտե՛ր թէ ի՛նչ պիտի ըլլայ Կիլիկիայի վերջնական բախտը, բայց գիտենք թէ հայաջինջ գործող ու ծրագրողները դեռ կան ու կը մնան... Ատանայի ջարդին, բարձրաբարբառ ըսին հայակեր բորենիները: Ի՞նչ պէտք կայ այսքան

¹ Տե՛ս Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 410:

² Տե՛ս Շղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 91-92:

խողխողումներու ու կրակներու, Կաթողիկոսը եթէ վերցնենք մէջ-տեղէն՝ բաւական էր...: Հիմա, որ Կաթողիկոսը մեծագույն «խա-յինն» է իր տրուած բողոք-հեռագիրներով՝ տարագրութեան դէմ, ի՞նչպէս կարող է երթալ հոն, ուր միլիոններ տրամադրուած են վերապրող հայերը բնաջնջելու համար: Թող ջնջուինք եւ մենք, ե-թէ մնացողները օր ու արեւ պիտի տեսնեն: Նաեւ, երթամ ի՞նչ ը-նելու, երբ այլազան «միութիւններ» կ'աշխատին առիթ ու միջոց չտալու որեւէ հոգեւորականի իր պարտքը կատարելու... Երթամ, օտարին առջեւ մեր արժանապատուութեան սնանկութի՞ւնը ցու-ցադրելու... Ձեմ փափաքի Երուսաղէմ ալ մնալ, գոնէ առժամա-պէս, ուր մարդիկ, աւելի ճիշդը՝ մեր ձեռքով ու ջանքով յառաջ ե-կած մարդիկ, հիները ճանչնալու եւ յարգելու տարրական քաղա-քավարութենէ զուրկ են... Անկախ եւ միացեալ Հայաստան մը ող-ջունելու իղձն ու բաղձանքը, որ օրօրոցի մանուկներէն մինչեւ գե-րեզմանամերձ ծերունին կ'ոգեւորէ, անշուշտ մօտ է իրականանա-լու: Ինչո՞ւ Հայրապետութիւնն ալ չմիանայ, ի՞նչ պէտք կը մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան... Ո՛չ Ձեր Վսեմութիւնը, ո՛չ այլ ոք թող չկասկածին թէ նոր պառակտումներու առիթ պիտի ըլլան միակ եւ անկեղծ փափաքս է համրուած օրերս անցընել՝ աղօթե-լով եւ օրհնելով Հայրենիքի ու Եկեղեցւոյ նուիրապետութեան միութիւնը ձեռք բերող անձերն ու մարմինները...¹:

Սահակ Բ Խապայանին ուղղված 1919 թ. հուլիսի 10-ի իր պատասխան նամակում Պողոս Նուբարը, որը հասկանալի պատ-ճառներով իր համակրանքը չէր թաքցնում Մայր Աթոռ ս. Էջմիած-նի կաթողիկոսության հանդեպ, չկարեւորելով Կիլիկիոյ կաթողիկո-սի վերահաստատումը Սիսում, կարծում էր, որ նպատակահար-մար էր Սահակ Բ-ի Երուսաղեմում մնալը: Այդ մասին նա նշում էր. «... Այժմ որ Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքն իր Աթոռն վերադարձած եւ

¹ Անդ, էջ 88:

հոն Ազգային Կեդրոնական Վարչութիւնը դարձեալ կազմակերպութիւն մը ստացած է, Ազգային Պատգամաւորութիւնը իր պարտքը համարած է Ս. Աթոռոյն գործերուն վերին հսկողութեամբ զբաղելու գործն վերադարձնել Կ. Պոլսոյ Ազգային Վարչութեան, որուն կը պատկանի այդ հսկողութիւնը ըստ օրինի. եւ ըստ այնմ Երուսաղէմէն մեզ ղրկուած վաւերագրերն ալ յանձնուած են Կ. Պոլսոյ Պատրիարքարանին... Արդարեւ մեր տարաբախտ Ազգին ընդհանրական անօրինակ աղէտէն՝ իր լիովի բաժինը ունեցաւ նաեւ թէ՛ Ս. Աթոռը Երուսաղէմի եւ թէ՛ Ձեր Ս. Օծութիւնն անձնապէս, որուն հանդէպ այնքան յարգանք եւ համակրութիւն ունեցած ենք (ընդգծումը մերն է՝ Վ. Հ.): Ուրախ ենք, որ ...լաւագոյն օրեր սկսած են արդէն Երուսաղէմի Ս. Աթոռին համար, որուն համար աշխատած էք այնքան եւ իրաւամբ այժմ եւս առարկայ է Ձեր հայրական հոգածութեան: Ձեզ հետ եւ մենք կը մաղթենք սրտագին, որ վերջ գտնեն մեր տառապեալ ժողովրդեան շարշարանքներն եւ ընդհուպ իրենց սիրեցեալ հայրենիքին մէջ սկսին ազատ, ապահով եւ անգորր կեանք մը»¹:

Էջմիածնում կաթողիկոսութեան կենտրոնացման մտայնութիւնն ազդում է Փարիզի Ազգային պատվիրակութեան և Կիլիկիայում նրա ներկայացուցիչ մարմինների հետ Սսի կաթողիկոսութեան հետագա հարաբերութիւնների վրա: Այդ մասին իր մտահոգութիւնն է արտահայտում Սահակ Բ Խապայանը Հալեպ՝ Մուշեղ արք. Սերոբյանին ուղղված 1919 թ. հուլիսի 23-ի նամակում, ուր մասնավորապէս նշվում է. «Երթանք Կիլիկիա...: Սակայն, Ազգային Պատուիրակութիւնը, որուն երկիցս գրած էի, եւ այնուհետեւ հեռագրած ալ՝ թէ ժողովուրդը մեր վերադարձին կը սպասէ, սակայն Ձեր պատասխանին կը սպասեմ, ոչ մէկուն չպատասխանեց: Ի՞նչ է այս խորհրդաւոր լռութեան պատճառը... Իմ

¹ Անդ:

մեկնութիւնս մէկ եւ որոշ է, պէտք չեն տեսներ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան...: Բարեաւ վայելեն փափաքողները, այդ վայելքը բաժնեկցելու համար մեր Աթոռի տկարացումէն օգտուիլ ուզող օտար՝ աթոռաբաղձներու հետ...: Գէորգ Հինգերորդ, որուն հետ կը բանակցի Ազգային Պատուիակութիւնը, եւ Պր. Մ. Տամատեան բաւական չեն Կիլիկիան կառավարելու... Գաղղիական Իշխանութիւնք կ'ըսեն, որ Կիլիկիոյ ժողովուրդը անձկանօք կը սպասէ մեր վերադարձին: Բայց Ազգին բախտն ու ճակատագիրը իրենց ձեռքին բռնողները այսօր խորին լուսթեան մէջ թաղուած են...: Գուցէ պատիժ մի է մեզ համար, որ Կիլիկիոյ ժողովուրդին գոնէ կէսը յաջողեցանք փրկել, գոնէ Պոլսոյ եւ Զմիւռնիոյ Հայութեան տարագրութիւնը յետ մնաց՝ մեզ պարտադրուած պատրիարքութեամբ զոր իբր կրկնակ լուծ կրեցինք յօժարակամ, եւ գոնէ Նրուսաղէմի վանքը փրկուեցաւ աւարէ եւ աւերէ՝ մեր արթնապահակ ներկայութեամբ...: Այսպիսի անքաւելի ոճիրները ո՛չ թէ արհամարհանքի պատիժ, կախաղանն ալ չի կրնար մաքրել: Ահա պատճառը, Ձեր եւ ժողովուրդի հրաւերներուն արգեամբ չպատասխանելուս»¹:

Այդուհանդերձ, Պողոս Նուբարի անկեղծ փափագն էր, որ պեսզի Սահակ Բ կաթողիկոսը վերադառնար Կիլիկիա: Նա այդ մասին շտապում է տեղեկացնել կաթողիկոսին 1919 թ. հուլիսի 26-ի իր նամակում, ուր մասնավորապես գրում է. «...Ազգային Պատուիրակութիւնս ի նկատի ունենալով Կիլիկիոյ շրջանին մէջ հետզհետէ աւելցող հայ ժողովուրդին բարոյական եւ հոգեկան պահանջները եւ անոնց գոհացում տալու անհրաժեշտութիւնը, նկատելով միւս կողմէն, որ ներկայիս սոյն շրջանը գրաւող օտար զինուորական եւ քաղաքական իշխանութեանց աչքին առջեւ մեր ազգայնոց վարած կենցաղը, իրենց ընտանեկան եւ ընկերային

¹ Անդ, էջ 89:

կեանքի առօրեայ արտայայտութիւններովը, մեծապէս պէտք ունի եկեղեցական բարձր իշխանութեան մը հսկողութեանն ու ուղղումներուն, Նկատելով որ Զերդ Ս. Օծութեան ներկայութիւնն իր Աթոռին վրայ՝ թէ՛ այս եւ թէ՛ ազգային վաղեմի իրաւանց եւ աւանդութեանց մեր հայրենիքին այդ անբաժանելի մասին վրայ պահպանման տեսակէտէն չափազանց կարեւոր է եւ փափաքելի, իր վերջին նիստին մէջ որոշեց խնդրել Զեր Ս. Օծութէնէն որ բարեհաճիք, Զեր հօտը անգլուխ շթողելու համար, ըստ կարելոյն շուտ վերադառնալ Կիլիկիա եւ վարել Զեր բարձր պաշտօնը: Պատուիրակութիւնս գոհութեամբ տեղեկացած է թէ վերջերս շնորհիւ գրաւող իշխանութեանց ձեռք առած աւելի կորովի միջոցներուն, ապահովութիւնը հաստատուած է Կիլիկիոյ բաւական ընդարձակ մէկ մասին մէջ, ինչ որ անատարակոյս անհրաժեշտ է եւ պիտի օգնէ Զեր հայրական իշխանութեան կիրարկութեանը համար...»¹:

Այս նամակից երկու ամիս անց Սահակ Բ կաթողիկոսը «Սիրիայի եւ Հայաստանի Փրանսիական բարձր կոմիսարութեան» գիտութեամբ եւ Փրանսիական «HACHE» նաւով Բեյրութից մեկնում է Ադանա: Կազմակերպված պաշտօնական ընդունելութեանը ներկա են լինում Կիլիկիայի ընդհանուր կառավարիչ Բրեմոնը եւ հայ ազգային գործիչները: Այդ մասին մենք իմանում ենք Պետրոսեայ. Սարաճյանին ուղղված Սահակ կաթողիկոսի 1919 թ. սեպտեմբերի 20-ի Փրանսերեն լեզվով գրված նամակից, որտեղ կարդում ենք. «Զերդ Վեհափառ Հայրապետին ի գիտություն ընդունելով 1919 թվականի օգոստոսի 18-ի Նրա նամակի ստացումը, ես պատիվ ունեմ, որ ուրախութեամբ կընդունեմ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռ Նրա վերադարձի լուրը: Կիլիկիայի բնակչութիւնը եւ հայ հոգեւորականութիւնը, ինչպէս նաեւ Փրանսիական իշխանութիւնները, որոնք ապահովում են այս երկրի կառավարումը,

¹ Անդ, էջ 90-91:

մեծ ցանկություն ունեն իրենց մեջ տեսնել Սրբազանի տեղը:Վեհափառ Հայրապետը կարող է ձեզ վստահեցնել, որ իր զբաղեցրած բարձր պաշտոնին համահունչ ժողովրդական ու հանդիսավոր ընդունելություն է տրվելու նրան, որին եռանդով կմասնակցեն գնդապետ Բրեմոնը և այլ սպաները:Խնդրում եմ Վեհափառ Հայրապետին հաղորդել իմ բարձրագույն և հարգանքով հարգանքի հավաստիքը»¹:

Այդ մասին է տեղեկացնում նաև Սահակ Բ Խապայանն իր ընդհանուր փոխանորդ՝ Պետրոս եպ. Սարաճյանին ուղղված 1919թ. սեպտեմբերի 20-ի նամակում, ուր մանրամասնում է, որ «Ատանա հասանք երեկոյեան ժամը 10-ին: Խուռն բազմութիւն հաւաքուած էր: Ընդհանուր կառավարիչ գնդապետ Պռեմոն ներկայ էր իր զինուորական ու քաղաքական պաշտօնեաներով: Թուրք Կառավարութիւնն ալ ներկայացուցիչ ղրկած էր Մէքթուպճին: Ասոնց ամէնը վրաս այնքան տպաւորութիւն չըրին, որքան ժողովուրդի ուրախ վիճակը: Զարմանալի է ժողովուրդը. այս ցոյցերէն բաւականութիւն կը զգայ: Շնորհակալութիւն Զեր հիւրասիրութեանց համար»²:

Ադանա հասնելուն պես առաջիկա կիրակի օրը Սահակ Բ Խապայանը ելույթ է ունենում Արարայի ճակատամարտում զոհված նահատակների հոգու հանգստության և հուշարձանի բացման առիթով նշելով, որ «Անունը սգահանդէս, բայց այս բեմը ես փառահանդէս կ'անուանեմ: Ինչու՞ այս սեւ հորիզոնէն չակնկալենք յոյսի արշալոյսնր, քանի որ դարերով ընկճուած Հայութեան մարտական ապշեցուցիչ խոյանքին, Արարայի բուռ մը հայ հերոսներու յուշարձանն է այս: Հայութեան կեանքի մէջ փառքի այս դրուագը ո՛չ առաջինն է եւ ոչ վերջինը պիտի ըլլայ: Ունեցանք

¹ Տե՛ս անդ, էջ 91:

² Անդ:

Տիգրաններ, որոնց բանակները բովանդակ Փոքր Ասիան ոտնատակելով միսուեցան մինչեւ մեծն Անտիոքի սիրտը... Քրիստոնէութեան շրջանին, ունեցանք Մուշեղներ ու Վարդաններ, որոնք հայ ցեղի պահպանութիւնը ըմբռնեցին Հայաստանեայց Եկեղեցւոյ դրոշմին տակ եւ Աւարայրի մէջ գոհուեցան իրենց ազգանուէր ընկերներով... Եւ նոյն այդ Վարդանի ոգին է որ կը յառնէ այսօր... Բիւրիցս փառք ձեզ քաջք Արարատայ որ եկաք հանգչելու այժմ Արարայի կուրծքին: Հայրենիքի սէրէն զատ՝ այս անօրինակ քաջութիւնը չունի գաղտնիքի ուրիշ հանգոյց մը: Հայրենիքի սէրը դարերէ ի վեր ամէն հայու մէջ կ'եռար, մերթ կը պոռթկար ու կը մարէր կատաղի թշնամիներէն, բայց Արարայի հիասքանչ պոռթկումը պատեհութեան կամ պատրոյգի պէտք ունէ... Նոր Վարդաններ հիմնեցին Արարայի նոր սրբարանը: Դարուց ի վեր դարս խնկաբոյր օրհնութիւն ձեր հանգչող հոգիներուն. դարուց ի դարս երախտագիտութիւն Ֆրանսական մեծ Ազգին, որ հայ անձնուէրներուն դեցազնական փառքի արժանանալու պատեհութիւն տուաւ...»¹:

3.3. Ազգային վերաշինության գործընթացը Կիլիկիայում և հայ եկեղեցու դերակատարումը

Սահակ «տառապակիր» կաթողիկոսը խորապէս համոզված էր, որ համաձայնական պետությունների արտաքին քաղաքական ուղղվածությունը հայանպաստ էր, ուստի նա Կիլիկիայի հայությունը հորդորում էր սիրով, կարգապահությամբ և անվերապահորեն ենթարկվել ֆրանսիական իշխանության բոլոր հրամաններին: Ըստ Հ. Ղազարոսյանի՝ նման վերաբերմունքը նա հա-

¹ Անդ, էջ 93:

մարում էր ազգային վերակազմության և հայրենիքի վերաշինության վճռական գործոն¹:

1919 թ. հոկտեմբերի 7-ի իր կոնգակում, Եղեռնի և տարագրության սարսափները նկարագրելուց հետո, Կիլիկիո հայրապետը մեծ հույսերով ոգևորված կոչ է անում արևմտահայությանը և մասնավորապես կիլիկիահայության վերապրած բեկորներին² լծվելու խաղաղ աշխատանքի, վերաշինելու իրենց ավերված տները, վերակառուցելու խոնարհված եկեղեցիները, հիմնելու նոր կրթական հաստատություններ, զարկ տալու գյուղատնտեսությանը և արհեստներին, և որ ամենակարևորն է՝ համախմբվելու կաթողիկոսության շուրջը՝ իբրև Հայ առաքելական եկեղեցու բացարձակ մեծամասնության ներկայացուցչական աթոռ³: Համաձայն Արևմտահայերի ազգային սահմանադրության՝ նրա տնօրինության տակ էին գտնվում Ազգային ժողովների ստեղծման և վավերացման գործը, ինչպես նաև ազգային ձեռնարկների ի պաշտոնե ղեկավարումը, որովհետև Կիլիկիան, օսմանյան օրենսդրության համաձայն, պահում էր իր ներքին վարչաձևը, իսկ այդ օրենսդրության մի մասը Ազգային սահմանադրությունն էր: Անսալով կաթողիկոսի հորդորներին՝ սկսվում է հայ ժողովրդի վերազարթոնքը:

¹ Տե՛ս **Ղազարոսյան Հ.**, Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի ազգասիրական գործունեությունը և կիլիկիահայությունը, «Էջմիածին», 1990 թ., մայիս-հունիս-հուլիս, թիվ Ե-Զ-Ե, էջ 93:

² Տե՛ս **Արզումանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 410: Կիլիկիահայության տեղահանության և հարկադրական գաղթի անուրանալի մի փաստ է Սահակ Բ խապայանի համանուն բովանդակությամբ նամակն ուղղված Ամենայն հայոց Գեորգ Ե Կաթողիկոսին: Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Ս, Սահակ Բ խապայան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ», էջ 249-252:

³ Տե՛ս «Տառապակիր կաթողիկոսը» (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939), «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, 1939, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 149-150:

Կաթողիկոսի առաջին գործը Ազգային վարչական ժողովների վերակազմությունն էր, որոնք իրենց վրա էին վերցրել Կիլիկիայի քաղաքական, հասարակական, թաղային և կրթական գործերի կազմակերպումը: Սաի կաթողիկոսանիստ աթոռի պահպանության և կալվածքների կառավարման համար Սահակ Բ Խապայանը նախ նշանակում է վանական պատասխանատուներ՝ Եղիշե եպս. Կարոյեանի գլխավորությամբ: Նա Կիլիկիայի յուրաքանչյուր քաղաքում նշանակում է ազգային առաջնորդական փոխանորդ, մինչև որ կազմվեին սահմանադրական ժողովներ, և յուրաքանչյուր շրջան ընտրեր իր առաջնորդին: Կաթողիկոսը կազմում, վավերացնում և կյանքի է կոչում Ազգային քաղաքական և Կրոնական ժողովները, որոնք իրենց հերթին ազգային գործերի բարվոք լուծման համար կազմում են թաղական և տնտեսական խորհուրդներ:

II) Սահակ Բ Խապայանի կարևոր գործերից մեկը Ազգային առաջնորդարանների հեռավոր գավառների և արտասահմանի հետ ընդարձակ թղթակցությունների օգնությամբ կապի պահպանումն էր՝ եկեղեցական բազում խնդիրներին գոհացում կամ ուղղություն տալու պատրաստակամությամբ: Նա միշտ սկզբունքային էր Հայ առաքելական եկեղեցու ավանդույթների պահպանման և եկեղեցու բարեկարգման աշխատանքներում: Նա անզիջում էր այն հոգևորականների նկատմամբ, ովքեր հանդես էին բերում թեմական անջատողական տրամադրություններ: Այսպես, երբ նա տեղեկանում է, որ մութ ուժերի կողմից Ալեքսանդրետի դպրոցներից մեկն իրեն «անկախ» է հռչակել Կիլիկիո կաթողիկոսության ազգային-եկեղեցական առաջնորդական իշխանությունից և ցանկանում է մտնել Կ.Պոլսի Հայոց պատրիարքության իրավասության ներքո, 1919 թ. նոյեմբերի 5-ին անմիջապես նամակ է հղում Ալեքսանդրետի ավագ քհն. Տ. Գրիգոր Մինասյանին

և կանխում դպրոցի անջատման նկրտումները¹։ Իսկ նույն քահանային ուղղված 1920 թ. դեկտեմբերի 23-ի մեկ այլ նամակում Սահակ Բ Խապայանն ավելի կոշտ ձևով է հանդիմանում նրան՝ ասելով, որ. «Կը լսենք որ ըստ դարաւոր սովորութեան Կիլիկիոյ Կաթողիկոսի անուան յիշատակութիւնը դադրեցուած է եկեղեցւոյ մէջ ...Բացատրութիւնը փութացուցէք, որ եթէ ստոյգ է՝ եկեղեցական ականդութեան ի պատշաճութիւն հարկ եղածը տնօրինենք...»²։

Սահակ Բ-ի օրոք վերանորոգվեցին և վերաբացվեցին բազմաթիվ եկեղեցիներ³։

III) Սահակ Բ Խապայանը գործնական հարաբերություններ է հաստատում Ազգային միության և Միասնական Հայաստանի պատվիրակության⁴, ինչպես նաև միջհարանվանական և միջկրոնական ներկայացուցչությունների հետ։ Բացի այդ, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում նաև արտաքին հարաբերությունների խնդիրներին, որտեղ կաթողիկոսին հաջողվում է լուծել գործնական այնպիսի հարցեր, որոնք չէին կարողանում զուլիս բերել ինչպես անգլիական և ֆրանսիական պետությունների, այնպես էլ Հայ ազգային պատվիրակության պաշտոնյաներն առանձին-առանձին վերցրած։ Սահակ Բ Խապայանը մշտական հարաբերություններ էր պահպանում ինչպես Կիլիկիայի ֆրանսիական իշխանության, Բեյրութում հաստատված Սիրիայի և Կիլիկիայի ֆրանսիական բարձր կոմիսարության և քաղաքային իշխանությունների, այնպես էլ այլ երկրների արտաքին պետական

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 94։

² Անդ։

³ Տե՛ս Սաղըրեան Ս., Կիսադարեան յուշամատեան (1895-1945), ուղեւորութիւն մը Արգէնոսէն Տաւրոս, Փարիզ, 1948, էջ 300։

⁴ Խոսքը՝ Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբարի միասնական պատվիրակության մասին է։ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 92-93։

այրերի ու զինվորականություն հետ: Այսպես, դեռևս 1918 թ. սեպտեմբերի 30-ին Դամասկոսի ազատագրման ժամանակ Արաբիայի Ֆեյսալ բըն Հուսեյին թագավորի հետ հանդիպման ժամանակ Սահակ Բ Խապայանը նրան խնդրել էր հոգատար վերաբերմունք ցուցաբերել արաբական աշխարհում ապաստանած հայ գաղթականների նկատմամբ: Արդյունքը լինում է այն, որ Ֆեյսալի եղբայրը՝ Արաբիայի թագավոր Շերիֆ Հուսեյինը իր հայրական հովանավորության տակ էր վերցրել հայ ժողովրդին և ժամանակավոր հրամանագիր էր հրապարակել, որով արաբ ժողովրդին կոչ էր անում հայերին ընդունել որպես իրենց եղբայրներ¹:

Դրանից մեկ տարի անց Սահակ Բ կաթողիկոսը իմանալով, որ արաբական կառավարությունը ցանկանում էր զորակոչի ենթարկել նաև Դամասկոսի և Հալեպի հայերին, 1920 թ. փետրվարի 7-ի իր նամակով դիմում է Ֆեյսալ թագավորին՝ խնդրելով առժամանակ առկախել հայերի նկատմամբ զորակոչի ծրագիրը, մինչև որ միջազգային վեհաժողովներում վերջնականապես որոշվի հայերին և արաբներին տրվելիք իրավական կարգավիճակը: Նամակում նա մասնավորապես նշում էր, որ. «Վստահ ըլլալով Ձեր բարեացակամ սիրտին մէջ ամրացած հայասէր զգացումին ու ջերմ վերաբերումին...կը խնդրեմ որ հաճիք հրամայել զինուորագրութեան յետաձգումը սիւրիաբնակ բոլոր հայերուն, մինչեւ վերջնական վճիռը Վեհաժողովին եւ երկու անկախ կառավարութեանց որոշումը եւ համաձայնութիւնը հպատակութեան եւ յարակից խնդիրներու մասին...»²:

Սահակ Բ պարբերաբար կապի մեջ էր Ֆրանսիայի պետական, դիվանագիտական և ռազմական այրերի հետ: 1919 թ. մարտի 12-ին Սահակ Բ-ին ուղղված իր նամակում Ֆրանսիայի վարչա-

¹ Տե՛ս **Շղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 95:

² Անդ, էջ 95-96:

պետ և արտաքին գործերի նախարար Ա. Բրիանը, որը որոշ ժամանակ անց աճուրդի էր հանելու կիլիկիահայություն բազմահազար հայերի անմեղ արյունը, գրում էր. «Ձերդ Սրբությունը կարող է վստահ լինել և հավատացած, որ դաշնակից պետությունների համահաճությամբ, այս միևնույն զգացմունքներով կը ձեռնարկեն նա հայ ժողովրդին ընձեռելու օրինական հատուցումներ, երբ հանգամանքներն այդ ներելու լինեն»¹:

Սահակ Բ Խապայանը 1920 թ. հունվարի 2-ին դիմելով ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ իր երախտագիտությունն է հայտնում «Near East Relief» գաղթականական կազմակերպության մարդասիրական մեծ առաքելության համար: Այդ առիթով նա նշում է. «Խաչուած Հայութեան երախտագիտական հառաչանքն է զոր կը համարձակիմ հաղորդել՝ խաղաղասիրութեան առաքեալ Նախագահին միջոցով՝ Ամերիկայի գերազանցապէս մարդասէր զաւակաց... Տարագրութեան ու մահուան հինգ տարիներուն մէջ բիւրաւոր հայ մարտիրոսներու արեան ձայնը ցնցեց ամերիկացւոց հոգիներն ու սիրտերը: Անդրատլանտեան Քրիստոնէական Եկեղեցին իր բովանդակ ուխտով զինուորեցաւ մահուան դէմ, եւ զուարթառատ նպաստներու հեղեղով խեղդեց մահը... Փրկարար եղան Ամերիկայի նպաստից ցօղերը՝ անպատեններու մէջ ոգորող Հայութեան...»²:

IV) 1919 թ. առաջին կեսի Կիլիկիո կաթողիկոսության և տեղի հայկական կազմակերպությունների կարևորագույն ձեռնարկումներից մեկը որբերի և այրի կանանց հավաքագրումն էր: 1920 թ. հունիսին Կիլիկիայում ապաստան էր գտել մոտ 1725 որբ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 745, թ. 39:

² Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 94-95:

երեխա (որից 1045-ը՝ Ադանայում, 1030-ը՝ Մերսինում, 650-ը՝ Դյորթ-Յոլում)¹, որոնք ըստ ճակատագրի բաժանվում էին 3 խմբի²: Պատերազմի չորս տարիների ընթացքում որբերը մեծացել էին, դարձել պատանիներ ու երիտասարդներ և շարունակում էին սփռված մնալ թուրքերի, արաբների, քրդերի մոտ, ոմանք իբրև ծառա, ոմանք որպես որդեգիր, իսկ չափահաս աղջիկներն էլ իբրև կին: Որբահավաքության գործը դարձավ ազգապահպանության հրամայականը, որին մեծապես օժանդակեցին անգլիական, ֆրանսիական իշխանությունները, ամերիկյան «Near East Relief» կազմակերպությունը³ և անտարակույս Կիլիկիո կաթողի-

¹ Տե՛ս Զապել Եսայանի նամակները Կիլիկիայից, ԲՀԱ, 1968 թ. թիվ 2 (20), էջ 54:

² Առաջին խմբի մեջ էին մտնում Տրապիզոնի և Խարբերդի որբերը: Թուրքական իշխանությունները բացառություն չհամարելով այդ շրջանների որբերին, չափահաս բնակչությանը կոտորելուց հետո հաշվեհարդար են տեսնում նաև նրանց հետ՝ գրեթե բոլորին խեղդամահ անելով Սև ծովում և Եփրատի ջրերում: Այդ մասին տե՛ս Հարությունյան Հ., Մեծ Եղեռնի տարիներին հայ մանուկների նկատմամբ կիրառված բռնությունները, «Էջմիածին», 2015 թ. ապրիլ, էջ 44-55: Մյուս նահանգներում իշխանությունները թույլատրել էին, որպեսզի որբացած երկսեռ հայ մանուկները որդեգրվեին թուրքական ընտանիքներում, կամ էլ հավաքագրվեին թուրքական որբանոցներում՝ նրանց որպես «թուրք» մեծացնելու համար: Թուրքական խնամքի ներքո առաջացած այդպիսի երկսեռ որբանոցները կային Մերդինում, Ուրֆայում, Դիարբեքիրում, Կեսարիայում, Հալեպում, Լիբանանում և այլուր: Նշանավոր էր հատկապես Լիբանանի Անթուրայի որբանոցը, որտեղ հանգրվանել էին 3500 որբեր: Կային նաև հազարավոր որբեր և այլրիներ, որոնք անհատապես պատսպարվել էին թուրքերի, արաբների կամ քրդերի մոտ: Պատճառն այն էր, որ նրանց մայրերը չկարողանալով դիմակայել տարագրության դժվարություններին և ելնելով իրենց երեխաների կյանքը փրկելու նկատառումներից, նրանց կամովին հանձնել էին օտարների խնամքին, որոնցից շատերը հայ որբերին՝ որպես «հօտ արջառի» վաճառել էին տարբեր մարդկանց: Տե՛ս **Նդիպեան Բ.**, նշվ. աշխ., էջ 97:

³ Հատուկ հիշատակության է արժանի նաև «Near East Relief» (Մերձավոր Արևելքի նպաստամատույց) կազմակերպության հայասեր և շնորհաշատ գործը, քանի որ այդ ժամանակ նրա հոգածությանն էր հանձնված 130 հազ. հայ որբուկների

կոստությունը: Հայ որբերին ընդունելու համար Կիլիկիո կաթողիկոսի և ազգային գործիչ Ռ.Հերյանի հայրենանվեր գործունեության արդյունքում Կիլիկիայի բազմաթիվ քաղաքներում և ավաններում, այդ թվում՝ Ադանայում, Սիսում, Հաճընում, Դեռթ-Յուլում, Օսմանիեում, Հարունիեում, Տարսոսում, Մերսինում, Մարաշում և Այնթապում բացվեցին որբանոցներ: Միայն Սիսում հանգրվանեցին Դամասկոսից և այլ վայրերից հավաքագրված՝ որբերը՝ Լեոն Փափազյանի տնօրինությամբ¹: Գնդապետ Բրեմոնի վկայությամբ որոշակի աշխատանքներից հետո կիլիկյան որբանոցներում հավաքագրվեցին ավելի քան 10.000 որբեր, որոնց ընդհանուր հոգածությունը դրված էր գնդապետ Գլոզկարդի վրա²:

Նույն գնդապետ Բրեմոնի հաղորդմամբ՝ 1920 թ. հոկտեմբերին հարց առաջացավ Կիլիկիա տեղափոխել նաև Հալեպում հավաքված շուրջ 2000 որբերի³, ինչպես նաև Բելրութում և արևելյան մի շարք քաղաքներում գետեղված որբացած բազմաթիվ հայ զավակների, սակայն դժվարությունների պատճառով այն չիրականացավ⁴:

Եթե ի մի բերենք որբահավաքման գործընթացի վերաբերյալ մեզ հասած ամբողջական տեղեկությունները, ապա կունենանք, որ 1919-1921 թթ. հայկական խնամատարության տակ Կիլիկիայում գործում էր 41 որբանոց՝ 17930 աշակերտներով և 318 ուսուցչական կազմով⁵:

ճակատագիրը: Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս «Հետքերով Որբերի» Հայոց, Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի մարդասիրական առաքելությունը ըստ Ռոկֆելերի արխիվային կենտրոնի լուսանկարների, Երևան, 2013:

¹ Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 564:

² Տե՛ս **Bremond E.**, նշվ. աշխ., Բ.12:

³ Տե՛ս անդ:

⁴ Այս մասին տե՛ս **Թորոսյան Շ.**, նշվ. աշխ., էջ 94:

⁵ Մանրամասները տե՛ս **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 99:

V) Հաջորդ գործը լինում է ազգային վարժարանների վերաբացումը, ուսումնական աշխատանքներն իրենց բնականոն հունի մեջ դնելը, երեխաների դաստիարակության և կրթության հարցերը: Դպրոցաշինության ստեղծման դժվարին ճանապարհին կաթողիկոսի կոչով ձեռնամուխ եղան հայկական դպրոցների և որբանոցների ստեղծմանը: Աղքատության և տառապանքի պայմաններում ապրող կիրիկիահայերի ավագ սերնդի մեծ մասը անձանոթ էր հայոց այբուբենին, քանզի թուրքը «պարտադրած էր իր լեզուն, արգելած էր մերը...»¹: Թուրքախոս հայերը, չնայած նյութական ծանր պայմաններին, գերադասում էին իրենց երեխաներին ուղարկել կաթողիկոսի հովանավորության ներքո նոր ստեղծվող հայկական դպրոցները:

Չնայած առկա բոլոր դժվարություններին, 1919 թ. աշնանից Կիրիկիայում սկսում են գործել մի շարք դպրոցներ: Պատկերացում կազմելու համար ուսումնական ոլորտում այդ օրերին կատարված շնորհակալ աշխատանքի մասին, նշենք, որ միայն Ադանայում 1919-1921 թթ. գործում էր 15 վարժարան՝ 3297 աշակերտով և 121 ուսուցչական կազմով, որն ուներ հետևյալ պատկերը.

Հ/Հ	Դպրոցի անվանում և թիվը	Դպրոցների Քանակ	Աշակերտների քանակ	Տնօրենների քանակ	Ուսուցիչների քանակ
Հայոց Առաքելական Եկեղեցի					
1	Աբգարյան	2	1110	4	35
2	Աշխենյան	2	303	2	14
3	Հռիփսիմյան	1	92	1	5
4	Արամյան	1	300	1	9
5	Խրիմյան	1	110	1	6

¹ Թորանեան Թ., Մարաշի Ազգ. Մեսրոպեան կեդր. երկսեռ վարժարանը 65 տարի հայ սերունդներու ծառայութեան մէջ, Հալէպ, 1988, էջ 18: Վերաբացված դպրոցների ցանկը տե՛ս նաև հավելված 1-ի աղյուսակ 6-ում:

6	Նոր Թաղ	1	250	1	12
Հնդհանուր՝		8			
Երկրորդական վարժարաններ					
1	Կիրիկյան Կեդր.	1	120	1	8
2	Կիրիկյան Երկրոզն.	1	76	1	5
3	Հայ Ավետարա- նական դպրոց- ներ	3	524	4	14
4	Հայ Կաթոլիկ դպրոցներ	2	430	3	13
Հնդհանուր՝		15	3297	19	121
Բաղդատություն					
1	Միսիոներական դպրոցներ	6	711	5	43
2	Այլ քրիստոնյա համայնքների դպրոցներ	6	655	4	20
3	Թուրքական դպրոցներ	6	687	6	49
Հնդհանուր՝		18	2053	15	112
Հնդհ. գումարը՝		33	5350	34	233 ¹

Միաժամանակ, կաթողիկոսը հետաքրքրություն է ցուցաբերում հայկական դպրոցների և որբանոցների վիճակի բարելավման ուղղությամբ, քանի որ պակասում էին դպրոցական աշխատանքի կազմակերպման տարրական պայմանները: Նա հանդես է գալիս հայ որբերի իրավունքների պաշտպանությամբ և հոգատարություն ցուցաբերում նրանց ապագայի նկատմամբ: Այսպես, Կիպրոսում հավաքված հայ որբերի հայեցի և կրոնական դաս-

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 653-666, 684-706: Մանրամասները տե՛ս հավելված 1-ի աղյուսակ 6-ում:

տիարակութեան կազմակերպման համար կաթողիկոսը թղթակցում է «Լորտ Մէլըրզ Քոնդ»-ի ներկայացուցիչներին և Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ: Այդ մասին նա տեղեկացնում է Նիկոսիա՝ Պետրոս արք. Սարաճյանին¹:

Սահակ Բ Խապայանը Ադանայից Կահիրե՝ ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովին ուղղված 1921 թ. ապրիլի 18-ի իր նամակում առաջարկում էր դպրոցների աշակերտ-աշակերտուհիների համար կազմակերպել արհեստանոցներ, որտեղ նրանք հնարավորութիւն կունենային իրենց ապրուստը հայթայթելու համար գործնական արհեստներ սովորել²: Իսկ 1921 թ. մայիսի 20-ի նամակում նա նույն վարչութեանը հիշեցնում էր չափահաս որբերի «ինքնաբաւ դառնալու միջոցները»: Կաթողիկոսն առաջարկում էր գոնե փորձի համար ընտրել հասուն աղջիկների մի խումբ և ղեկավար հսկողութեան ներքո նրանց ուղարկել Ամերիկա, որտեղ նրանք աստիճանաբար կտեղավորվեն զանազան հաստատութիւններում և ընտելանալով տեղական սովորութիւններին ու լեզվին՝ կամոսնանային երիտասարդ տղաների հետ³:

1921 թ. հունիսի 1-ին Ադանայի աղջիկների ամերիկյան քոլեջի շրջանավարտների հանդեսին արտասանած իր ելույթում Սահակ Բ Խապայանը կոչ անելով ազգային-կրոնական հանդուրժողականութեան և համերաշխութեան, ուսումը համարում էր «կրթական, կրօնական, աւելի ճիշդ՝ աստուածային սիրոյ քաղցրահամ եւ անոշաբոյր պտուղն», իսկ երկինքը՝ երկրին, մարդուն՝ Աստծու հետ և ազգերին իրար կապող ոսկի շղթան համարում էր սերը, նշելով, որ. «Սիրե՛լ սորվեցէք, սէ՛ր շնչեցէք ու սիրո՛վ շաղեցէք ձեր ուսումն ու կրթութիւնը, այն ատեն դուք ամուր ընտանեկան կեանքի հիմնադիրներ պիտի ըլլաք եւ պիտի տաք առողջ եւ

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 101:

² Տե՛ս անդ, էջ 100-101:

³ Տե՛ս անդ, էջ 101:

ամուր սերունդը որուն պէտք ունին Ազգը եւ Եկեղեցին»¹։

VII) Սահակ Բ պաշքարում է նաև ազգային վարկի և Հայ եկեղեցու հեղինակության բարձրացման համար, հայ հանձնապատան մամուլի մեջ առկա գաղտնի կամ բացահայտ հակաեկեղեցական հրապարակագրությունների դեմ։ Այդ առիթով նա Ադանայից ՄԴՀԿ Վարչության Հալեպի մասնաճյուղին ուղղված 1921 թ. հունիսի 28-ի իր թիվ 243/142 նամակում գրում էր. «...Եկեղեցական գործերը որք դարեր է լ վեր հոգեւորականութեան վրայ ծանրացած են, անոնց օգտակար կիրառութիւնը դիւրացնելու՝ ամէն հայ անհատի պարտաւորութիւնն է... Կիլիկեան Աթոռին կոչուելէս 20 տարիներէ ի վեր, մանաւանդ վերջին սա վեց արցունքի, արիւնի, կրակի ու սովի ու տարագրութեանց տարիներուն, կառավարեցինք եւ պահպանել յաջողեցանք ո՛չ միայն Կիլիկիոյ եկեղեցիները, նաեւ սահմանադրական մարմինները... Մենք մեր այս ուղղութենէն վնաս չտեսնելէ զատ, Կիլիկիոյ Հայութեան եթէ ոչ մեծամասնութիւնը, գոնէ կիսուն ֆիզիքական գոյութիւնը պահպանելու յաջողութիւնը ունեցանք տեսա՞ն օգնականութեամբ, եւ երբ ուրիշ ոչ ոք կը համարձակէր մեզի օգնական կանգնելու՝ յաշս կառավարութեան իրենց անձը «չվտանգելու» վախով, մենք գործերը վարեցինք յաճախ միմիայն քահանայ փոխանորդներով, որոնք անձնուիրաբար ամէն վտանգի դէմ քալեցին, մինչեւ իսկ քաղաքական ու առողջապահական խնամատարութեանց գործին մէջ նետուելով... Եթէ մեր եկեղեցականներու զոհաբեր անձնաւորութեան ապացոյցը չէ անոնց բանտէ բանտ, քաղաքէ քաղաք հալածուիլն ու մահապարտութեան դատապարտուիլը, գոնէ անոնց այսօրուան կարօտ եւ օրը օրին ապրուստով իսկ ազգին գլուխը կանգնիլը քաջութիւնը կը ցուցնէ եկեղեցական դասին անշահախնդրութիւնը... Եւ այսօր... աւելի քան երբեք պէտք

¹ Անդ, էջ 102։

ունին եկեղեցական գործոց անդորր ու խաղաղ կառավարութեան...ազգովին ունեցած առանձնաշնորհնիս անվթար պահպանելու համար...»¹։

Այսպիսով, իրականացված որոշակի ձեռնարկումների արդյունքում Կիլիկիո կաթողիկոսությունը դառնում է ազգային կենտրոնական մի հաստատություն, որը հովանավորում էր գաղթականների տեղավորումը, քաղաքային կյանքի կազմակերպումը, ազգային կալվածների մատակարարումը, ընտանեկան և ժառանգական խնդիրների պաշտոնականացումը, կրթական ու մշակութային գործունեության հսկողությունը։ Այս ամենն, ինչ խոսք, ոգևորում և հուսադրում էին շորսամյա տարագրությունից վերադարձող կիլիկիահայերին, շուրջում նրանց ազգային զգացմունքները։ Ժիշտ է, իրականությունը դեռ թուրքական էր, պետական վարչությունը դեռ թուրք պաշտոնյաների ձեռքին էր, բայց ամենագլխավորն այն էր, որ Կիլիկիան մաքրվել էր թուրքական զորքերից և գրավվել էր Ֆրանսիացիների կողմից, որոնց մի մասը կազմում էր հայկական լեգեոնը՝ հայ քաղաքական ապագայի այն ամուր նեցուկը, որի վրա, կարծում էին, թե պիտի կառուցվեր ոչ միայն Կիլիկիայի, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանի բախտը։ Թվում էր, թե այլևս անցել էր վտանգը, և ինչ կոտորած կամ աղետ եղել էր պատերազմի տարիներին, պիտի վերածվեր մի անցանկալի ու դառը հիշողության։ Այսքանն էլ բավական էր, որ ազատության ու հայրենիքի կարոտով տոգորված հայը հավատ ընծայեր և ապավիներ Կիլիկիայում «ասպետական» Ֆրանսիայի ներկայությանն ու պաշտպանությանը և վերադառնար իր հայրենի օջախը։ Սակայն ապագան հերքեց նման լավատեսությունը, երբ թվացող հրաշքը վերածվեց աղետի։

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 102։

3.4. Իրադրությունը Կիլիկիայում 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին: Սահակ Բ Խապայանի ուղևորությունը Ֆրանսիա, Իտալիա և Մեծ Բրիտանիա

ա) Սահակ Բ կաթողիկոսի ուղևորությունը Ֆրանսիա: Դրուժյունը Կիլիկիայում սրվեց հատկապես 1919 թ. աշնանը, երբ Ֆրանսիական ու անգլիական կառավարությունների միջև 1919 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով Կիլիկիայում և «արևելյան տարածքներում»՝ Այնթապում, Ուրֆայում, Բիրեջիկում անգլիական 36 հազ. զորքերին փոխարինեցին Ֆրանսիական զորամիավորումները¹, որոնք, ցավոք, առաջին իսկ օրվանից չկարողացան դառնալ կացության տերն իրենց որդեգրած տատամսող և անվճռական քաղաքականության պատճառով:

Դրան հաջորդեց 1919 թ. դեկտեմբերի 5-ին Մ. Քեմալի և Սիրիայի ու Հայաստանի Ֆրանսիական բարձր կոմիսար Ժորժ Պիկոյի միջև Սվազում ստորագրված պայմանագիրը, ըստ որի՝ Ֆրանսիան պարտավորվում էր ոչ միայն անհապաղ թողնել Կիլիկիան և այն առանց որևէ պայմանի վերադարձնել Թուրքիային, այլև պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ընդդեմ Անգլիայի, Իտալիայի և Հունաստանի: Դրա փոխարեն Թուրքիան Ֆրանսիային խոստանում էր տնտեսական մենաշնորհներ²:

Ելնելով ընձեռված հնարավորությունից՝ քեմալական Թուրքիան որոշեց 1919 թ. աշնանը պատերազմ սկսել Հայոց Կիլիկիայի դեմ: Նման ընտրությունը պայմանավորված էր առաջին հերթին այն մտավախությամբ, որ Կիլիկիայում բարենպաստ

¹ Տե՛ս Picon J, *Le partage du Proche-Orient*, Paris, 1938, p. 200.

² Տե՛ս Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (պատմական ակնարկ), առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 25:

պայմաններ էին ստեղծվել երկրորդ հայկական պետության կազմավորման համար: Պատահական չէր, որ Մ. Քեմալը նշում էր, որ իր հիմնական նպատակներից մեկն էր հայկական բանակի և պետության ունչացումը, որը թարախապալարի նման դեռևս մնացել էր «մեր երկրի մարմնի վրա»¹: Հաջողության հասնելու համար նա օգտագործում է կրոնական սկզբունքը՝ ատելություն և թշնամանք բորբոքելով մահմեդական ազգաբնակչության մեջ: Խոսելով քեմալական շարժման մասին՝ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված 1919 թ. դեկտեմբերի 29-ի իր նամակում նշում էր, որ. «Թրքական նոր կուսակցություն կազմված է նոր անունով՝ միլլի, ազգայնական, բայց հին հոգով և խմորով: Առերևույթ կենտրոնական իշխանության ընդդեմ, իսկապես անկե կը հրահանգվի, թերևս համաձայնականներու մեկեն կամ մյուսեն»²:

1920-ական թվականների քեմալական արշավանքները եկան փշրելու հայերի լավատեսությունը և ստիպեցին կիլիկիահայերին դեմ հանդիման կանգնելու այդ վտանգին և վերստին լքելու իրենց նորաշեն հայրենիքը: Կիլիկիայի քաղաքներից առաջին զորը դառնում է Մարաշը, որի հայկական թաղերի վրա թուրքերի առաջին հարձակումը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 21-ին:

Խորհելու, խոսելու և գործելու մեջ իր խոհեմությամբ աչքի ընկնող Սահակ Բ կաթողիկոսը, որը ազդված էր Մարաշի դեպքերից, ներկայանալով գնդ. Բրեմոնին՝ ահազանգում էր, որ. «Պարոն

¹ Кемаль М., Путь Новой Турции 1919-1927, т.3 - Интервенция союзников, греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921, М., 1934, с.314.

² Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ. 2046, թ. 4:

Գնդապետ, Կարմիր սուլթանի օրերը կ'ապրինք»¹։ Սակայն Ֆրանսիական իշխանությունների թուրքոֆիլ քաղաքականության պատճառով Մարաշում չհաջողվեց կազմակերպել ուժեղ ինքնապաշտպանություն²։ Մուշեղ արք-ը 1920 թ. մարտի 2-ին իր տեղեկագրի մեջ նշում է, որ քեմալականների կողմից կազմակերպված և Ֆրանսիական իշխանությունների թողտվությանմբ իրականացված 21-օրյա կոտորածներից հետո Մարաշում ապրող 29.091 հայերից ողջ էին մնացել միայն 10.000-ը³, որոնք մազապուրծ լինելով հաստատվում են Ադանա, Տարսոն, Մերսին քաղաքներում։

Սահակ կաթողիկոսը շատ ծանր է տանում Մարաշի 15.000 հայ ազգաբնակչության կոտորածը և այս առիթով գրում է, որ. «Մարաշի ահռելի աղէտը ո՛չ հանգիստ, ո՛չ կերակուր ուտելու ժամանակ, ո՛չ գիշերային քուն թողուց»⁴։

Հաշվի առնելով ստեղծված ողբալի իրավիճակը և քեմալականների կողմից այս անգամ Հաճընի պաշարումը՝ Սահակ Բ Խապայանը, որը ծանոթ էր կացությանը և մեծ հեղինակություն ուներ արտասահմանում, ցանկություն է հայտնում անմիջապես և անաղմուկ մեկնել Եվրոպա, մասնավորապես Ֆրանսիա՝ «իր ժողովուրդին կեանքը ապահովել»⁵ և իշխանություններին խնդրել, որ կանխեն հայկական հետագա կոտորածները, որոնք կարող էին անդառնալի հետևանքներ ունենալ ողջ կիլիկիահայության

¹ **Կէպէլէնեան Ա.**, Կրիկեան հայ դէմքեր (գինադագարի շրջանին), «Պալքար» հանդէս ազգային, գրական եւ տնտեսական, Պոսթոն, 1931 թ. սեպտեմբեր, էջ 35։

² **Տէ՛ս Էֆենդիեւա Н.З.**, Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919-1921 гг.), Баку, 1966, с. 115։

³ Տէ՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Դ, Սահակ Բ Խապայեան, կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 274-275։

⁴ **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972, էջ 117։

⁵ **Աղանունի եպս. Մ.**, նշվ. աշխ., էջ 438։

համար¹։ Իսկ թե ինչու՞ հենց Ֆրանսիա, քանի որ Ֆրանսիայում էր գտնվում կիլիկյան թնշուկի բանալին։ Թեև կիլիկիահայություն համար պահն անցած էր, սակայն դեռևս հույս կար, որ ֆրանսիական 154-րդ զորաբաժնի հրամանատար, գեներալ Տյուֆինոն և «հակակշռի պետ»² Բրեմոնը չէին ընդունում ֆրանսիական կառավարության որոշումը։ Այնպես, որ Սահակ Բ-ի ուղևորությունը Ֆրանսիա կարող էր օգտակար լինել։

Իր ուղևորության մասին Սահակ Բ խապայանը տեղեկացնում է կիլիկիահայ ազգային գործիչ Վահան Խուպեսերյանին և առաջարկում է նրան ուղեկցել իրեն՝ որպես թարգմանիչ և օգնական։ Լինելով կիլիկիայի ֆրանսիական պաշտոնյա, Վ. Խուպեսերյանը Մարաշի դեպքերի ժամանակ հրաշքով փրկվել էր կոտորածներից և հրաժարվելով ձեպել բերեքեթի նահանգի իր պաշտոնից, տեղափոխվել էր Ադանա։ Բայց քանի որ ֆրանսիական կառավարությունը չէր ընդունել նրա հրաժարականը, Վ. Խուպեսերյանին արտոնվում է դառնալ կաթողիկոսի պատվիրակության անդամ՝ որպես ֆրանսիական պաշտոնյա և թարգմանիչ³։

¹ Տե՛ս «Սինոն» հայ ամսագիր. կրոնական, գրական, բանասիրական, երուսաղեմ, 1929, փետրուար-մարտ, թիւ 2-3, էջ 76։

² Ֆրանսիական կառավարության հատուկ հանձնակատար, որը զբաղվում էր կիլիկիայում ֆրանսիական հեղափոխության գաղափարների տեղայնացմամբ և հայերի, մյուս քրիստոնյաների ու մահմեդականների իրավունքների համահարթեցմամբ։

³ Տե՛ս Խուպեսերեան Վ. Լ., Օրագրութիւն ուղևորութեան յԵւրոպա Սահակ Բ. Կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալէպ, 1928, էջ ե-զ։ Ճանապարհորդության ժամանակ Վ. Խուպեսերյանի կազմած օրագրությունը հանդիսանում է Սահակ Բ Կաթողիկոսի արտասահմանյան ուղևորության մասին պահպանված ամենակարևոր սկզբնաղբյուրը։ Հետագայում Վ. Խուպեսերյանն իր մոր հետ Դամասկոսից Բեյրութ գնալու ժամանակ էլ Համե կայարանում զոհվում է ավտովթարից և «Լացաւ Կաթողիկոսը մահոյ հայրական սիրով, ինչպէս Դավիթ ողբաց Աբիսողոմի մահը»։ Տե՛ս Խուպեսերեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ Ե։

Սահակ Բ Խապայանի եվրոպական ուղևորությունը սկսեց 1920 թ. մարտի 13-ին և արդեն մարտի 15-ին Բեյրութում՝ Ֆրանսիական Բարձր կոմիսարության պալատում, վեհափառին մեծ ընդունելություն ցույց տվեցին գեներալ Կուրոն, ծովակալ Լը Պոն, բարձրաստիճան սպաներ, հայ և կաթոլիկ հոգևոր ներկայացուցիչները: Գեներալ Կուրոյի այն հարցին, թե ինչո՞ւ և ի՞նչ նպատակներով է կաթոլիկոսը մեկնում Եվրոպա, Սահակ Բ պատասխանում է. «Կ'երթամ Ձեր վսեմութեան օգնություն խնդրելու Կեդր. Կառավարություն...Կիլիկիոյ ամբողջ Հայութիւնը իր համակրանքն ու սէրը կեդրոնացուցած է Ֆրանսայի վրայ և իր ապահովությունը անկէ կը սպասէ...»¹:

Տեսակցությունից հետո Սահակ Բ «Պաթավիա» նավով Բեյրութից ուղևորվեց Ֆրանսիա և 8 օր նավարկելուց հետո՝ մարտի 23-ին հասավ Մարսել²: Ոտք դնելով Ֆրանսիական հողի վրա՝ Սահակ Բ Խապայանը շտապեց հեռագիր ուղղել Ֆրանսիայի հանրապետության նախագահին հետևյալ բովանդակությամբ. «Այսօր երջանկութիւնն ունեցայ Ֆրանս. ազատ հողին վրայ ոտք դնել. ի դիմաց Կիլիկիոյ Հայութեան կ'ողջունեմ յանձին Ձեր մեծն Ֆրանսան...»³:

Կաթոլիկոսը մարտի 25-ին ժամանեց Փարիզ և հանդիպումներ ունեցավ նախ Վոամշապուհ ծ. վրդ.-ի, Ֆրանսիայում հաստատված Ազգային պատվիրակության անդամներ՝ Մ. Պապաջանյանի, Վ. Թեքեյանի, դոկտ. Հ. Նևրուզյանի, ադանացի իրավաբան Զ. Պզտիկյանի և հայ գաղութի ներկայացուցիչների, ապա Ֆրանսիայի նախագահի հատուկ դեսպան և նախագահության քարտուղար Լուի Հերմիթի և վարչապետի արևելյան գործերի

¹ Խուպէսէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 3:

² Տե՛ս անդ, էջ 4:

³ Անդ, էջ 5:

դիվանապետ Պարթևոնի հետ: Նախքան վարչապետի հետ հանդիպելը, Սահակ Բ Թեոփ քննարկումներ ունեցավ Մ. Պապաշանյանի և դոկտ. Հ. Նևրուզյան հետ¹:

Մարտի 31-ին վեհափառը Վ. Խուպեսերյանի և Զ. Պզտիկյանի ուղեկցությամբ «Քե-դ'Օրսեում»² հանդիպում ունեցավ Ֆրանսիայի վարչապետ Միլլրանի հետ, որին ներկայացրեց մի հուշագիր Հաճընի դեպքերի և Կիլիկիայի հետագա ճակատագրի վերաբերյալ³: Իր հերթին վարչապետը հավաստիացրեց, որ, «Ինչ որ պէտք է պիտի ընէ Ֆրանսան ո՛չ միայն ներկան ապահովելու, այլև ապագայ զարգացման և զօրաւոր Հայաստան մը կազմելու համար»⁴:

Հանդիպման վերջում վարչապետը Սահակ Բ կաթողիկոսին խորհուրդ տվեց հանդիպել նաև Ֆրանսիայի նախագահի հետ: Ապրիլի 1-ի երեկոյան, նախապես տեղի ունեցած պայմանավորվածության համաձայն, Սահակ Բ Խապայանը Փարիզի էլիզեի (Շլիսեյան) պալատում Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության հայազգի պաշտոնյա Նշան Գալըպչյանի ուղեկցությամբ և կազմակերպված զինվորական պատիվներով հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Պոլ Տեշանելի հետ: Ներկայացնելով Կիլիկիայի կացությունը, կաթողիկոսը նախագահին առաջարկեց է՛լ ավելի մեծ եռանդով պաշտպանել Հայոց դատը, որին Տեղանելը պատասխանեց. «Ինքզինքս երջանիկ կը զգամ Հայ Ազգին Կաթողիկոսին ներկայութիւնը վայելելու... Հայերուն կրած տառապանքը և յանուն արդարութեան դաշնակիցներու կողքին ըրած զոհողութիւններն ալ ծանօթ են մեզ. մանաւանդ Մարաշի

¹ Տե՛ս անդ, էջ 6:

² «Քե-դ'Օրսե»-ն Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունն էր:

³ Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 552-554:

⁴ Խուպէսէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 7:

վերջին աղէտը բոլոր Ֆրանսացիները խորին վշտով համակեց...»¹։ Սահակ Բ Խապայանի այն հարցադրմանը, որ Կիլիկիայի պաշտպանության համար առաջնային պետք է դարձնել Ֆրանսահայկական զինակցությունը, Տեղանելը հավաստիացրեց, որ. «Ֆրանսա երբէք չը պիտի թերանայ Հայերու հանդէպ իր պարտուց մէջ և կարելին պիտի ընէ յօգուտ և յապահովութիւն Հայերու»²։ Այն, որ Ֆրանսիական կառավարությունը արտաքուստ բարյացակամ էր տրամադրված հայերի նկատմամբ, իմանում ենք Մ. Տամատյանին ուղղված Վ. Թեքէյանի, դոկտ. Հ. Նևրուզի և Ա. Չոպանյանի 1920 թ. ապրիլի 15-ի նամակից, ուր նշվում է, որ Ֆրանսիական կառավարությունը քանիցս հավաստիացրել էր Ազգային պատվիրակությանը, Սահակ Բ Խապայանին և Զավեն պատրիարքին, որ բոլոր միջոցները ձեռք էր առել հայերի իրավունքները պաշտպանելու համար³։ Սակայն Ֆրանսիայի նախագահի համոզմամբ՝ հարցերի լուծման լավագույն տարբերակը դիվանագիտությունն էր։ Արդեն Հաճընի դեպքերի ժամանակներից Ֆրանսիան կատարել էր իր արտաքին քաղաքական կողմնորոշումը Կիլիկիայի հարցում, որի անմիջական արձագանքը գտնում ենք Ֆրանսիական «Տան» թերթի 1920 թ. փետրվարի 15-ի համարում⁴։

Նույն օրը երեկոյան կաթողիկոսը կարևոր հանդիպում ունեցավ Լոնդոնից Փարիզ ժամանած Ա. Չոպանյանի հետ, որն առաջարկեց դիմել Ֆրանսիական կառավարությանը՝ Անդրանիկին որպես փորձառու, վստահություն և համակրություն վայելող գործակարի Կիլիկիա հրավիրելու, ինքնապաշտպանության գործը

¹ Անդ, էջ 9-10։

² Անդ, էջ 10։

³ Տե՛ս «Վահան Թէքէեանէն մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ», հաւաքեց եւ ծանօթագրեց դոկտ. Վաչէ Ազարեան, Պէյրուի, 1987, էջ 207։

⁴ Տե՛ս Paillarés M., նշվ. աշխ., Բ. 127։

կազմակերպելու և Ֆրանսիային ռազմական ծառայություն մատուցելու համար: Ապրիլի 2-ին Սահակ Բ Խապայանը Քե-դ 'Օրսեում հանդիպում ունեցավ արտաքին գործերի դիվանապետ (նախարար) Պարժթոնի հետ, որին ներկայացրեց Անդրանիկի հարցը: Սակայն ֆրանսիացի պաշտոնյան պատասխանեց, որ իր երկրի նպատակն է՝ «Քաղաքակիրթ եւ ինքնագիտակից կառավարութիւն մը կազմել, թուրք դրօշակը պահել Կիլիկիոյ մէջ իւրաքանչիւր ցեղի եւ ազգի առանձնաշնորհումով»¹: Միակ բանը, որ ֆրանսիական պաշտոնյան կաթողիկոսին խոստացավ՝ օդանավով Հաճընին օգնություն հասցնելն էր:

Ի դեպ, Հաճընի հերոսամարտի այդ սրտաճմլիկ օրերին Սահակ Բ Խապայանի գործունեությունը զուգընթաց Ադանայի թեմի առաջնորդ Պետրոս եպս. Սարաճյանն իր հերթին, Կիպրոսից կոչով դիմում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարություններին, որ օգնեն հաճընցիներին և կանխեն կոտորածները՝ միաժամանակ դատապարտելով արևմտյան տերությունների ցուցաբերած անտարբերությունը հայերի նկատմամբ²:

Նշենք, որ Հաճընի դեպքերին համահունչ ֆրանսիական կառավարության մեջ և խորհրդարանում ձևավորվել էր երկու հակադիր հոսանք, որոնցից մեկը պահանջում էր հրաժարվել Կիլիկիայից և Սիրիայից՝ փոխարինելով այն մեկ այլ տարածքով, իսկ մյուս մասը կողմ էր Կիլիկիայում Ֆրանսիայի ներկայությունը, սակայն հայկական ինքնավարության մասին խոսք անգամ չի-

¹ Խուպէսէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 11:

² Տե՛ս «Յուշամատեան նուիրուած Հաճնոյ հերոսամարտի 75-ամեակին», պատրաստեց Կարպիս Գուլումճեան, էջ 44:

ներ չէր կարող, քանի որ ֆրանսիացիները կարծում էին, որ Կիլիկիայի բոլոր ժողովուրդների իրավունքները պետք է հարգվեն¹։

Փարիզում Սահակ Բ խապայանը հանդիպումներ ունեցավ նաև Ֆրանսիայի մշակույթի նախարարի և Ռազմական նախարարության դիվանապետ, գեներալ Բենենի, Փարիզի արքեպիսկոպոս Ամեթիի, Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսի հետ՝ ներկայացնելով իր Ֆրանսիա ժամանելու պատճառները, Կիլիկիայի գրավման ժամանակներից ի վեր տեղի ունեցած քաղաքական և զինվորական անցուղարձեքը, Մարաշի գրավումը, թույլ տրված քաղաքական և զինվորական սխալները, հույների վիճակը Կիլիկիայում և կոչ արեց իրենց զորավոր ձայնը բարձրացնելու «մարդկութեան թմրած խիղճը արթնացնելու համար»²։ Վենիզելոսի այն պատասխանին, որ. «Ես փոքրիկ տէրութեան (խոսքը՝ Հունաստանի մասին է - Վ. Հ.) մը ներկայացուցիչն եմ, ինձմէ հզորագոյնները կան», կաթողիկոսը հակադարձում է և պատասխանում. «...թէեւ փոքր, մեզ համար մեծագոյնը ըրիք արդարասիրութենէ թելադրուած։ Մեծն ու հզորագոյնը արդարութիւնն է, պաշտպանեցէք արդարութիւնը»³։ Է. Վենիզելիոսը վստահություն էր հայտնում, որ արևելքում խաղաղության կարելի էր հասնել միայն հայերի և հույների հզորացման ճանապարհով, և որ անհրաժեշտության ու դաշնակիցների համաձայնության դեպքում Զմյուռնիայում գտնվող հունական 100 հազ. բանակը կարող էր փոխադրվել Կիլիկիա։

Ապրիլի 9-ին Լոնդոնի վեհաժողովի ավարտից հետո Փարիզ վերադարձավ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, որն այցելեց Սահակ Բ-ին։ Ինչպես Վ. Խուպեսեռյանն է

¹ Տե՛ս «Վահան Թէքէեանէն մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ», էջ 209։

² Խուպէսէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 16-17։

³ Անդ, էջ 17։

հիշում՝ Հայ դատի համար անհավատ, համեստ, անձնագոհ և ազնվականի օրինակելի տիպար հանդիսացող պատկառելի ծերունին անիրազեկ լինելով Հայաստանի իրական կացությանը և երկրին սպառնացող վտանգը «թուղթի վրայ գծուած սահմաններով կը գոհանար»¹։ Միաժամանակ նա կաթողիկոսին տեղեկացնում է, որ Հայաստանի խնդիրը մինչև սեպտեմբեր հետաձգվել էր։

Ապրիլի 13-15-ը Սահակ Բ կաթողիկոսը մասնավոր և կարևոր հանդիպումներ ունեցավ հայ հասարակական-քաղաքական անվանի դեմքերի՝ Լոնդոնից վերադարձած Կ. Պոլսի պատրիարքի, Գր. Ժ. վրդ. Պալաքյանի, Հ. Նևրուզի, Առաքել Բեյի, Գ. Նորատունկյանի հետ, իսկ ապրիլի 18-ին ազգային գործիչների ուղեկցությամբ այցելում է նաև Սեն-Տընի՝ Կիլիկիայի վերջին գահակալ Լևոն VI-ի շիրիմին²։

Ապրիլի 15-ին վեհափառը հանդիպեց Ֆրանսիայի ռազմական նախարար Անդրե Լըֆերի հետ, որը Կիլիկիայի կորուստը համարելով Ֆրանսիայի պատիվը, այնուամենայնիվ անընդունելի էր համարում Կիլիկիա ֆրանսիական նոր գործ ուղարկելը և կողմ էր խնդիրը դիվանագիտական ճանապարհով լուծելուն³։

Նշենք, որ Արևելյան խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով մեծ տերությունները Լոնդոնի կոնֆերանսից հետո նախատեսում էին նոր՝ երրորդ կոնֆերանս հրավիրել, այս անգամ Սան-Ռեմոյում։ Սահակ Բ խապայանը ցանկանում էր մեկնել Սան-Ռեմո և վեհաժողովին ներկայացնել Կիլիկիայի հայության բաղձանքները։ Սակայն Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարութունը նպատակահարմար չգտավ վեհափառի ներկայությունը վեհաժողովում։ Դրա փոխարեն կաթողիկոսը Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի հետ Սան-Ռեմո ուղարկեց Ադանայի հոգևոր

¹ Անդ, էջ 16։

² Տե՛ս Աղանունի եպս. Մ., նշվ. աշխ., էջ 439։

³ Տե՛ս Խուպչեքեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 21։

և աշխարհիկ ներկայացուցիչների բողոքագիրը Կիլիկիան քեմա-
լականներին թողնելու քաղաքականության դեմ¹։

Շուտով Փարիզում եղած ժամանակ կաթողիկոսին պարզ
դարձավ, որ Ֆրանսիացիները սկսել էին աստիճանաբար հետ
քաշվել Կիլիկիայից, իսկ Այնթապում սկիզբ էին առել խժդժութ-
յուններ։ Ելնելով ծայրահեղ ծանր իրավիճակից՝ Ադանայի հոգևոր
ներկայացուցիչները դիմում են Սան-Ռեմոյի վեհաժողովին՝
խնդրելով քրիստոնյաներին այլ վայր տեղափոխել։ Բացի այդ,
անգլիական և ֆրանսիական թերթերից պարզ դարձավ, որ Ադա-
նայի հայությունը դատարկվում է։ Խուճապ առաջացնող լրատ-
վությունը ստուգելու նպատակով կաթողիկոսի պատվիրակութ-
յունը հանդիպեց Արտաքին գործերի նախարարության Արևելյան
գործերի դիվանապետ Պարթևոնի հետ, որը մի կողմից հերքեց Կի-
լիկիան դատարկելու մասին տեղեկատվությունը, իսկ մյուս կող-
մից կաթողիկոսին ականջալուր դարձրեց Սան-Ռեմոյի որոշումն
այն մասին, որ Ջիհան գետին արևմուտք ընկած տարածքները,
այդ թվում՝ Ադանան, Տարսոնը, Մերսինը, Սիսը հանձնվում էին
թուրքերին՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները
պաշտպանելու պայմանով²։ Ինքը՝ կաթողիկոսը, դեմ էր կիլիկիա-
հայությանն այլ վայր տեղափոխելու մահաբույր գաղափարին և
միշտ կրկնում էր, որ. «Եթե մեռնիլ պէտք է, մեր հայրենի հողին
վրայ մեռնինք»³։

բ) Սահակ Բ Խապայանը Վենետիկում։ Օգտվելով արտա-
սահմանյան ճամփորդության ընձեռած հնարավորությունից և
ցանկանալով իրականացնել իր վաղեմի փափագը, Սահակ Բ Խա-
պայանը 1920 թ. մայիսի 4-ին դուրս գալով Փարիզից՝ մայիսի 6-ին

¹ Տե՛ս անդ, էջ 22-24։

² Տե՛ս անդ, էջ 30։

³ Անդ։

ուղևորվում է նախ Վենետիկ, ապա նույն օրը ուխտի է գնում ս. Ղազար՝ «հայ գրականութեան և մտավորականության վառարանը»՝ իր հայրապետական ողջունն ու օրհնությունը հաղորդելու կղզու միաբանությանը։ Կաթողիկոսի ուղևորությունը տևեց ընդամենը մեկ օր, որի ընթացքում նա ս. Ղազարում հանդիպումներ ունեցավ ինչպես տեղի հոգևորականության, այնպես էլ որբերի հետ։ Սահակ Բ-ն կղզու միաբաններին ներկայացնում է Կիլիկիայի շուրջ ստեղծված քաղաքական իրավիճակը և այն թուրքերից զերծ պահելու ճարահատյալ ձգտումները, քանի որ, ինչպես վեհափառն էր խոստովանում. «Եւրոպացիները՝ ընդունայն խօսքերով՝ խաբեցին մեր տերութիւնը»¹։ Նա այցելեց և ծնրադիր համբուրեց եկեղեցում գտնվող Մխիթար Սեբաստացու դամբարանը, այցելեց վանքի գերեզմանատուն և հարգանքի տուրք մատուցեց Մ. Զամչյանի, Դ. Ալիշանի գերեզմաններին։ Նա եղավ միաբանության թանգարանում, ուր մասնավոր հետաքրքրությամբ զննեց Գր. Լուսավորչի, Հ. Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի, Ս. Երկանյանի, Է. Շահինի նկարները։ Ապա եղավ գրատանը, ձեռագրատանը և տպարանում² և իր պատվին կազմակերպված հրաժեշտին ճաշին լուսանկարվեց միաբանների հետ³։ Հետդարձի ճանապարհին Վենետիկում կաթողիկոսն այցելում է ս. Մարկոսի տաճար, լինում է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում և հանդիպում վարժարանի տեսուչ հ. Վարդան Հացունու հետ։ Ի վերջո, Պադուայի, Լիսորայի, Միլանի և Շվեյցարիայի վրայով պատվիրակությունը մայիսի 13-ին վերադարձավ Փարիզ⁴։

¹ Այտընեան Գ., Սահակ Բ կաթող. Կիլիկիոյ. Վեհափառի օրը ի ս. Ղազար, «Բազմավէպ», Վենետիկ-Սուրբ Ղազար, 1920 թ., յուլիս, էջ 213։

² Տե՛ս Խոսեփէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 33-34։

³ Տե՛ս Այտընեան Գ., Սահակ Բ կաթող. Կիլիկիոյ. Վեհափառի օրը ի ս. Ղազար, «Բազմավէպ», Վենետիկ-Սուրբ Ղազար, 1920 թ., յուլիս, էջ 215։

⁴ Տե՛ս անդ, էջ 216։

Փարիզ հասնելուն պես պարզ դարձավ, որ կացությունը Հաճընում, Ադանայում և Այնթապում է՛լ ավելի է վատթարացել: Իրավիճակից դուրս գալու ելք գտնելու նպատակով նույն օրը Ազգային պատվիրակությունը բացառիկ ժողով գումարեց, որին ներկա էին ինչպես Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը, այնպես էլ Սահակ Բ Խապայանը և Կ. Պոլսի պատրիարքը: Կաթողիկոսին մտահոգում էր Սան-Ռեմոյի 1920 թ. մայիսի 18-ի որոշումը, ըստ որի՝ Կիլիկիան բաժանվում էր երկու մասի՝ Սիրիային սահմանակից շրջանները և Լեոնային Կիլիկիան անցնում էին Ֆրանսիային, իսկ ստվար հայկական բնակչություն ունեցող Դաշտային Կիլիկիան թողնվում էր Թուրքիային: Այս առիթով նա բողոքագրեր ուղարկեց դաշնակից պետությունների ղեկավարներին և մասնավորապես Մեծ Բրիտանիայի վարչապետին՝ կոչ անելով չեղարկել այդ անարդարությունը¹:

Ֆրանսիական կառավարության տմարդի և երկերեսանի քաղաքականությունն առաջ բերեց նաև հայ հոգևորականության դժգոհությունը: Ադանայի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբյանը հասկանալով Ֆրանսիայի արտաքին քաղաքական խաբկանքները կիլիկիահայությունյան նկատմամբ քննադատում է Ֆրանսիացի գնդապետ՝ «Հայաստանի կառավարիչ» Բրեմոնի վարած հակահայկական քաղաքականությունը, և այդ ամենի արդյունքը լինում է այն, որ Արևելքի Ֆրանսիական Վզորաբաժնի պատերազմական դատարանը 1920 թ. ապրիլի 23-ին մեղադրանք է առաջադրում Մ. արք. Սերոբյանին՝ չարագործության, պայթուցիկ նյութեր և զենք պահելու կասկածանքով: Այդ առիթով Մուշեղ սրբազանը մայիսի

¹ Տե՛ս ԳԱԹ-ի արխիվ, ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ. 9979, III բաժին, թ. 1-3, նաև «Ատանայի հայոց պատմություն», էջ 554-555:

13-ի նամակով իր բողոքն է հայտնում Ֆրանսիայի հանրապետության նախագահ Պոլ Տեշանելին¹:

գ) Սահակ Բ Խապայանի կառնառե այցելությունը Լոնդոն և Մանչեստր: Լոնդոնի և Մանչեստրի հայկական գաղութները փափագում էին հանդիպել Սահակ Բ Խապայանին, որի համար իրենց հոգևոր առաջնորդների միջոցով գրավոր հրավերներ ուղղեցին կաթողիկոսին: Իրականում, Սահակ Բ-ն Մեծ Բրիտանիայում որևէ քաղաքական նպատակ չուներ, քանի որ Ազգային պատվիրակությունը քանիցս ծանուցել էր, որ Կիլիկիայի հարցով հարկավոր էր դիմել հիմնականում Ֆրանսիային: Սակայն օգտվելով առիթից՝ նա ցանկանում էր Անգլիայում հանդիպել մի շարք հայասեր անձնավորությունների, այդ թվում՝ Զեյմա Բրայսի, Գլադստոնի որդու և Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ:

1920 թ. մայիսի 20-ին Սահակ Բ-ն Վ. Խուպեսերյանի, Գր. ծ. վրդ. Պալաքյանի և Զաքարիա Պզտիկյանի ուղեկցությամբ մեկնեց Լոնդոն: Լոնդոնում եղած օրերին՝ մինչև հունիսի 10-ը, կաթողիկոսը առանձին և մասնավոր հանդիպումներ ունեցավ բազմաթիվ մարդկանց հետ: Մասնավորապես, հանդիպեց Լոնդոնի տեղեկատու դիվանի պետ Մալքումի, նրա քարտուղար Ա. Սաֆրաստյանի, հայ եկեղեցու հոգաբարձության նորընտիր անդամներ՝ Ներսես Կյուպենկյանի, Միհրան Կյուտենյանի, Արմենակ Քեհյանի, Մանչեստրի հոգևոր առաջնորդ Աբել վրդ.-ի, Կ.Պոլսի անգլիական դեսպանատան երբեմնի երեց Ֆ. Տըկլասի և այլոց հետ²: Սակայն կաթողիկոսի նախապես ծրագրված շատ հանդիպումներ ի չիք դարձան, քանի որ Զեյմա Բրայսը մեկնել էր Իսպանիա, իսկ անգլիական եկեղեցու հոգևորականներն էլ Յորք՝ տեղի

¹ Տե՛ս Սերոբեան Մ. արքեպս., Բողոքս ֆրանսական հանրապետության նախագահին, Իզմիր, 1920, էջ 1-15:

² Տե՛ս Խուպեսերյան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 54:

եպիսկոպոսի ձեռնադրությանը մասնակցելու համար: Այդուհանդերձ, մայիսի 31-ին անգլիական պառլամենտի հայասեր պատգամավոր Ուիլհելմի միջնորդությամբ Սահակ Բ-ն Գր. ծ. վրդ. Պալաքյանի և Տիրացույանի ուղեկցությամբ հանդիպում ունեցավ Արտաքին գործերի նախարարության խորհրդական Համաֆերտինի և նախարարության ասիական գործերով զբաղվող պաշտոնյայի հետ, որոնց իր խորին շնորհակալությունը հայտնեց Առաջին աշխարհամարտի տարիներին հայ տարագիրներին և գաղթականներին Մեծ Բրիտանիայի ցուցաբերած նյութական և բարոյական աջակցության համար: Միաժամանակ, նա անգլիական բարձրաստիճան պաշտոնյայի միջոցով Լիոյդ Ջորջին փոխանցեց մի գրություն՝ արտահայտելով իր դժկամությունը Կիլիկիայի երկու մասի բաժանելու հարցում Սան-Ռեմոյի վեհաժողովի ընդունած որոշման դեմ:

Հունիսի 10-ին Սահակ Բ-ն Լոնդոնից վերադարձավ Փարիզ, որտեղ շուտով պարզ դարձավ, որ Ֆրանսիայի Արևելյան խնդրի (Պաղեստին և Մոսուլ) և մասնավորապես Կիլիկիայի վերաբերյալ Սան-Ռեմոյի պայմանավորվածության հարցում ձևավորվել էր ընդդիմություն, որի ղեկավարն էր Արտաքին գործերի նախարարության հանձնաժողովի անդամ, նախկին վարչապետ և արագորձնախարար Ա. Բրիանը, որը թե՛ մամուլում և թե՛ խորհրդարանում հանդես էր գալիս Սալքս-Պիկոյի համաձայնագրի պաշտպանությամբ: Միաժամանակ, «Տյունլիքս» ընկերությունը, որն ուներ ազդեցիկ անդամներ, բողոքագրեր էր պատրաստում Կիլիկիայի, Մոսուլի և Պաղեստինի հարցում Ֆրանսիայի զիջողական քաղաքականության մասին: Օգտվելով առիթից՝ կաթողիկոսի պատվիրակությունը երկու հիշատակագիր պատրաստեց և բա-

ժանեց խորհրդարանականներին: Հարցն այն աստիճան արդիական դարձավ, որ կառավարությունը պարտավորվեց այն խորհրդարանական հանձնաժողովի քննարկման նյութ դարձնել¹:

Հունիսի 20-ին Սահակ Բ-ին է այցելում իր հայասիրական տրամադրություններով աչքի ընկնող Ֆրանսիայի նախկին վարչապետ Դընիս Կոշեն, որը կաթողիկոսից տեղեկություններ է խնդրում Կիլիկիայի վերջին իրադարձությունների և նախատեսվող իրադարձությունների մասին: Նախկին վարչապետը ցավ էր ապրում, որ ի հեճուկս վերջին իրադարձությունների, իր վարչապետության օրոք 1918 թ. կնքված համաձայնագիրը դրական լուծումներ էր առաջ քաշում արևելյան հարցի կապակցությամբ: Դընիս Կոշեի միջնորդությամբ Սահակ Բ-ն հունիսի 23-ին նախատեսում է հանդիպում ունենալ Բրիանի հետ, որը 1916 թ. կնքել էր Սալքս-Պիկոյի համաձայնագիրը: Սակայն նախքան այս հանդիպումը նույն օրը կաթողիկոսը բավականին արդյունավետ հանդիպում է ունենում խորհրդարանի պատգամավոր Քեսթեր-Լընայնի հետ, որը քաջածանոթ լինելով կացությանը², վստահեցնում է, որ Ֆրանսիան, որն իր վրա էր կրում ծանր պարտավորություններ, առանց երաշխիքների չէր թողնի Կիլիկիան: Կաթողիկոսն էլ հաշվի առնելով Այնթապի և Հաճընի հայության ինքնապաշտպանական կորուվը, առաջարկում է Ֆրանսիական հովանու ներքո ստեղծել հայկական կամավորական գնդեր՝ Անդրանիկի հրամանատարությամբ: Սակայն Քեստեր-Լընայը պատասխանում է, որ.

¹ Տե՛ս **Խուպէսէրեան Վ. Լ.**, նշվ. աշխ., էջ 61:

² Սահակ Բ-ին ուղղված Այնթապի կաթողիկոսական փոխանորդ Ներսես Թավուզճյանի հունիսի 1-ի նամակից պարզ էր դարձել Ռոբեր Տըքեի և Մ. Քեմալի միջև կնքված 20-օրյա զինադադարի մասին, ըստ որի՝ Այնթապը հանձնվում էր Թուրքիային: Տե՛ս **Կեսար Ա.**, Այնթապի գոյամարտը, Պոսթըն, Մէս., 1945, էջ 55-194:

«Թերեւս կառավարութիւնը կը զգուշանայ առիթ չը տալու Թուրքերուն նոր գրգռումի և ջարդի»¹։

Հունիսի 23-ին Բրիտանի հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին Վ. Խուպեսերյանը և Զ. Պզտիկյանը, Սահակ Բ-ն ներկայացնում է Կիլիկիայի հետ կապված բոլոր մանրամասնութիւնները, քրիստոնյաներին սպառնացող վտանգը և Ֆրանսիայի համար Կիլիկիայից հեռանալու նյութական և բարոյական վնասները։ Նա խնդրում է, որ, «Պաշտպանէք Կիլիկիոյ դատը յօգուտ Ֆրանս, և հայկական շահերուն»², քանի որ Կիլիկիայի ազգաբնակչութիւնը վայելում էր Ֆրանսիայի քաղաքակրթական ներկայութիւնը և հովանավորութիւնը և պետք է մտներ նրա մանդատի ենթակայութեան տակ։ Երկկողմ հանդիպման արդյունքը լինում է այն, որ Բրիտանը պարտավորվում է հարցը բարձրացնել խորհրդարանում՝ մինչև վերջնական որոշում կայացնելը։ Միաժամանակ, խնդրի կարևորութիւնը և հրատապութիւնը մատնանշելու համար և հաշվի առնելով կաթողիկոսի հեղինակութիւնը, երկու կողմերը պայմանավորվում են, որ Կիլիկիայի խնդիրը խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովին անձամբ ներկայացնի Սահակ Բ-ն։ Սակայն, ցավոք, արտաքին գործերի հանձնաժողովն այդ հնարավորութիւնը չի ընձեռում կաթողիկոսին, քանի որ Ֆրանսիացի պաշտոնյաների մեղրածորան հավաստիացումները սոսկ դիվանագիտական խաղեր էին։ Նրանք խոստանում էին կի-

¹ Խուպեսերեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 63։

² Անդ, էջ 66։

լիկիահայույթյան մասին ելույթներ ունենալ և նույնիսկ՝ «Կիլիկիոյ մէջ հիմնել ինքնավար պետութիւն մը, ուր հայ ժողովրդի ազգային բաղձանքները գոհացում պիտի ստանան»¹։

Ֆրանսիական պետական այրերից հիասթափված Սահակ Բ-ի պատվիրակութունը որոշում է հեռանալ Ֆրանսիայից և հետ վերադառնալ Կիլիկիա, սակայն հունիսի 24-ին հրաժեշտի կապակցությամբ Արտաքին գործերի նախարարութիւնում վերջին տեսակցութիւնն է անցկացնում արտգործնախարար Կամերերի հետ՝ իր շնորհակալութիւնը հայտնելով Ֆրանսիական կառավարութեան տված հավաստիքների համար և ցանկութիւն հայտնում, որ Ֆրանսիայի ներկայութիւնը Կիլիկիայում տեական լինի, քանի որ, «Հայոց սէրն առ Ֆրանսա անկեղծ է եւ Արեւելքի մէջ միակ տարրն է, որ իր շահը Ֆրանսայի շահէն չի բաժներ եւ նախանձախնդիր է Ֆրանս պատուոյն»²։

Հունիսի 27-ին վեհափառին է այցելում նաև Այնթապի և Ուրֆայի շրջանում ֆրանսիական զորքերի հրամանատար Գոլոնել Նորմանը, որն արժեքավոր տեղեկութիւններ է ներկայացնում քաղաքական շրջանակներում տիրող մտայնութեան մասին³։

Ավարտելով իր աշխատանքները, Սահակ Բ-ն հուլիսի 1-ին Փարիզից մեկնեց Մարսել, այնտեղից Ալեքսանդրիա, Պորտ Սալիդ և Բեյրութի վրայով նոյեմբերի 1-ին հետ վերադարձավ Ադանա։

¹ **Վեհապետեան Թ.**, Լուսարձակ մեր անցեալ եւ ներկայ հանրային կյանքին վրայ, ներածական 5-րդ գիրքին. Յաւելեալ լրացուցիչ բաժինով, ընդհ. խորհրդածութեան առիթ մեր հոգեւոր իշխան. եւ ազգ. Մարմիններուն, Պէյրութ, 1993 թ., էջ 85։

² **Խուպէսէրեան Վ. Լ.**, նշվ. աշխ., էջ 72։

³ Տե՛ս անդ, էջ 77։

Եթե ամփոփելու լինեք Սահակ Բ-ի կատարած եվրոպական ուղևորության արդյունքները, ապա կարող ենք ասել, որ Սահակ Բ խապայանը Ստեփանոս Ե Սալմաստեցուց (1545-1567), Միքայել Ա Սեբաստացուց (1567-1576), Հակոբ Դ Զուղայեցուց (1655-1680) և Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկից (1893-1907) հետո հինգերորդ կաթողիկոսն էր, որ հայկական հարցի քննարկման համար հասնում էր Եվրոպա։ Սակայն առատ խոստումներից և ձևական հարգանքի արժանանալուց բացի, նա ուրիշ ոչ մի բան չի ստանում և դառնում է «անպատիւ քաղաքականութեան, սուտի եւ կեղծիքի զոհ...»¹։ Ֆրանսիացի բարձրաստիճան այրերն այդ ամենն անում էին զուտ իրենց հեղինակության բարձրացման համար։ «Սիոն» ամսագիրը նկատում է. «... պազշոտ դիւանագիտութիւնը և զոհուած արդարութիւնը դէմդիմաց կուգան ալեւոր Հայրապետին գործունէութեան գիծին վրա, նոր յուսախաբութիւններու կսկիծները արթնացնելով անոր ներսը»²։

Կ. Պոլսի Զավեն պատրիարքը փորձում է միտումնաւորություն և անտարբերություն տեսնել կաթողիկոսի եվրոպական ուղևորության մեջ և կարծում է, որ խապայանը Ֆրանսիա մեկնեց Ֆրանսիական իշխանությունների անմիջական թելադրանքով, քանի որ կաթողիկոսը՝ «Ֆրանսացիներու դէմ քալլ առնել չէր ուզեր»։ Զավեն պատրիարքը քննադատում է նաև ազգային պատասխանատվության նկատմամբ ամենայն անտարբերությամբ իրականացված Սահակ Բ-ի վենետիկյան ճամփորդությունը, որն ի կատար ածվեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայում իրավիճակը խառն էր։ Իսկ թե կաթողիկոսն ինչո՞ւ մեկ-

¹ Արզումանեան Զ., դոկտ. ա. քնյ., Տ.Տ.Սահակ Բ. խապայեան. կաթողիկոսին վերջին այցն ու Կիլիկիոյ ճակատագիրը 1920-1921, «Պաշար» շաբաթաթերթ, բացառիկ թիւ, 2020թ. օգոստոսի 16, թիւ 33 (188), էջ 34։

² «Սիոն» հայ ամսագիր, Երուսաղէմ, 1929 թ. հունուար, թիւ 1, էջ 76։

նեց Լոնդոն և Մանչեստր՝ ըստ Զավեն պատրիարքի, ոչ ոքի հայտնի չէր: Դեռ ավելին, նա Անգլիայում իշխանություններին դիմումներ չներկայացրեց, որովհետև մտավախություն¹, որ այն ֆրանսիական իշխանությունների կողմից հավանության չէր արժանանա: Միաժամանակ, Զավեն արք. մատնանշում է, որ Սահակ Բ Խապայանն ընդհանրապես իր արտասահմանյան հանդիպումները չի համակարգել Հայոց ազգային պատվիրակության և հատկապես Պողոս Նուբարի ու Գաբրիել Նորատունկյանի հետ, և որ ինքն իրեն լիազորել էր որպես «Կիլիկիոյ Հայոց ներկայացուցիչ»²:

Մինչև Սահակ Բ կաթողիկոսը եվրոպայում էր, կնքվում են Լոնդոնի՝ 1920թ. մարտի 19-ի, Սան Ռեմոյի՝ 1920 թ. մայիսի 18-ի և Սևրի՝ 1920 թ. օգոստոսի 10-ի պայմանագրերը, իսկ 1920 թ. օգոստոսի 4-ին հռչակվում է Կիլիկիայի անկախությունը: Այդ առիթով Սահակ Բ-ն 1920 թ. օգոստոսի 11-ին հեռագրում է գեներալ Կուրոյին՝ շնորհակալություն և երախտագիտություն հայտնելու, միաժամանակ գեներալի տրամադրությունը շոշափելու համար³: Սակայն Բեյրութից Մ. Տամատյանին ուղղված 1920 թ. օգոստոսի 22-ի իր նամակում Սահակ կաթողիկոսն արգեն իր խոր հիասթափությունն է արտահայտում ֆրանսիական պետության պահվածքից և նշում, որ եթե. «Անձնապէս զոհուելով կը դարմանուի այդ ցաւը, պատրաստ եմ. եթէ կան ուրիշ միջոցներ, պէտք չէ խնայենք. միայն ժողովուրդը փրկուի, առանց ժողովուրդի ո՛չ ընտանիք, ո՛չ սրբազան օճախ եւ ո՛չ Հայրենիք կայ...»⁴: Նա Ֆրանսիայի վարած խուսանավող քաղաքականությունից նմանատիպ հիասթափություն է արտահայտում նաև 1921 թ. հուլիսի 2-ին Ադանայից Ա. Զոպանյանին գրած նամակում⁵:

¹ Զաւէն արքեպս., նշվ. աշխ., էջ 365-370:

² Տե՛ս Խոպէսէրեան Վ. Լ., նշվ. աշխ., էջ 97:

³ «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 556:

⁴ Տե՛ս ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Ա. Զոպանյան, գ 3027, 1 բաժին, թ. 2:

դ) Կիլիկիայի հայաթափումը և կաթողիկոսության տեղափոխումը Լիբանան: 1920թ. նոյեմբերի 1-ին Սահակ Բ Խապայանը ութ ամսյա ուղևորությունից հետո ձեռնունայն հետ վերադարձավ Ադանա և այնտեղ մնաց մինչև 1921թ. դեկտեմբեր: Այդ ընթացքում Սիսը, Այնթապը և Պոզանդին արդեն դատարկվել էին¹:

1920թ. աշնանը՝ Հաճընի հերոսամարտի օրերին Փարիզում՝ Ֆրանսիայի վարչապետ Միլրանի հետ առանձին հանդիպում է ունենում նաև Կ. Պոլսի նախկին պատրիարք Զավեն Եղիայանը, որն ակնկալում էր Ֆրանսիական պետության օգնությունը: Սակայն վարչապետը պատրիարքին հավաստիացնում է, որ Կիլիկիայում վիճակը կայունացնելու համար Ֆրանսիային հարկավոր էր այնտեղ ունենալ 100 հազ. բանակ, որի հնարավորությունը նա չուներ²: Այս ամենը կաթողիկոսին բերում են այն համոզման, որ ինչպես արևելահայությունը, այնպես էլ արևմտահայությունը, գտնվելով մեծ տերությունների խարդախ հակասությունների կիզակետում, դառնում է նրանց շահերի բախման զոհ: Չնայած Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությունը բազմիցս դիմել էր Ֆրանսիական իշխանություններին և դաշնակից երկրներին Կիլիկիայի ժողովրդի պաշտպանության համար, սակայն Լոնդոնի կոնֆերանսից և Կիլիկիայում ծավալված ճակատագրական իրադարձություններից հետո վիճակը կտրուկ փոխվել էր: Երկրամասի հայ ազգաբնակչության մեծամասնությունը հանդես եկավ թուրքական վարչակարգի վերահաստատման դեմ, քանի որ ստեղծված անկայունությունը և Ֆրանսիական զորքերի սպասվող տարհանումն ազդում էր ժողովրդի տնտեսական և հոգեբանական վիճակի վրա և պատճառ էր դարձել արտագաղթի: Հաշվի առնելով այդ ամենը Սահակ Բ-ն ստիպված 1921թ. մարտի 19-ին դիմում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ա. Բրիանին՝

¹ Տե՛ս Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 282:

² Տե՛ս Լէօ, նշվ. աշխ., էջ 223:

Կիրիկիայի հայ ազգաբնակչությանն ապահով վայրեր տեղափոխելու և նրա շարժական ու աշարժ գույքը պաշտպանելու համար¹։

Այսպիսին էր կիրիկիահայության հուսախաբ վիճակը, երբ 1921թ. հոկտեմբերի 20-ին՝ մոտավոր զուգադիպությամբ Մուդրոսի զինադադարի ճիշտ երրորդ տարեկիցին, Ֆրանսիայի և Թուրքիայի ներկայացուցիչներ Ֆրանկլին Բուլոնի և Յուսուֆ Թեմալի միջև Անկարայում կնքվեց պայմանագիր, համաձայն որի Կիրիկիան անցնում էր քեմալական կառավարության ենթակայության ներքո։ Սկսվում է հայ բնակչության համատարած խուճապը և բոլորի խնդիրն է դառնում օր առաջ հեռանալ Կիրիկիայից։

Հայերի արտագաղթը կանխելու մտադրությամբ 1921թ. նոյեմբերի 23-ին Ադանա են ժամանում Ֆրանկլին Բուլոնը, գնդապետ Կիտլան և Անկարայի կառավարության երկու ներկայացուցիչներ։ Սակայն Սահակ Բ նշում է, որ երբ նրանք ժամանեցին Ադանա, քաղաքի 45-50.000 հայերից մնացել էր հազիվ 1000 հոգի՝ մեծ մասամբ պաշտոնյաներ։ Սահակ կաթողիկոսը մինչև վերջ մնում է Ադանայում՝ իր ներկայությամբ քաջություն և վստահություն ներշնչելու կիրիկիահայերին, սակայն ժողովուրդն այլևս ուշադրություն չի դարձնում այդ հանգամանքին։ Սահակ Բ հապայանք Ադանայից վերջնականապես հեռանում է 1921թ. նոյեմբերի 25-ին, երբ ինչպես ինքն է նշում «ո՛չ քահանա, ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց և ո՛չ ժողովուրդ մնացած էր»²։ Ֆրանսիական զորքերի դուրս գալուց հետո՝ 1921թ. դեկտեմբերից մինչև 1922թ. հունվարի 4-ը իրենց պապենական հողերից ընդմիշտ հեռացան 44.800 հա-

¹ Տե՛ս ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ 9980, III բաժին, թ. 3։

² Թոփուզյան Հ՝, ի., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1968, էջ 165։

յեր, որոնցից շուրջ 40.000-ը հանգրվանեցին Լիբանանում, մնացածները՝ Սիրիայում, Հունաստանում և Եգիպտոսում¹։ Կիլիկիայի դատարկումից հետո Սահակ Խապայանն իրեն կոչեց «Սահակ Բ Կաթողիկոս աւերակաց»² և երկար բանակցություններից հետո ֆրանսիական կառավարությունը 1924թ. նրան ճանաչեց իբրև Սիրիայի հայության գերագույն հովվապետ։

Այսպիսով, երբ դեռ ընդամենը 2-3 տարի առաջ Սահակ կաթողիկոսը և ողջ հայ ժողովուրդը երազում էին Կիլիկիան տեսնել ազատ և անկախ, իսկ Կաթողիկոսական աթոռն էլ՝ Սիսում հաստատված, 1920-1921թթ. ամեն ինչ շուտ եկավ գլխիվայր և Կիլիկիան մեկընդմիշտ հայազրկվեց։ Այս բոլոր աղետների պատճառը Սահակ կաթողիկոսը համարում էր հայ քաղաքական գործիչների սխալ դիվանագիտությունը, որոնք չկարողացան տեսնել վերահաս վտանգը։ Նա սրտի ցավով հայտարարում էր, որ. «Ազգովին սխալեցանք, կամ անցեալի փորձառութիւն զմեզ զգլխեց. անկեղծ սրտով հաւատացինք՝ թէ դաշնակիցները յաղթական մեր երազած ազատութիւնը բերին...»³։ Հրանտ Գանգրունին Կիլիկիայի աղետի համար մեղադրում է ինչպես Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, քեմալական Թուրքիայի իշխանություններին, այնպես էլ հայ քաղաքական կուսակցություններին։ Նա, միաժամանակ, մեղադրանք է հնչեցնում նաև Սահակ կաթողիկոսի հասցեին, նշելով, որ. «Կիլիկիոյ աղէտին մէջ դեր մը ունե՞ր Խապայեան Կաթողիկոսը իր միամտութեամբ...»⁴, սակայն իր հարցը թողնում է անավարտ։

¹ Ղազարոսյան Հ., Տանն Կիլիկիո կաթողոսիկոս Սահակ Բ-ի ազգասիրական գործունեությունը և կիլիկիայացությունը, «Նշմիածին», 1990թ., մայիս-հունիս-հուլիս, թիվ Ե-Զ-է, էջ 102։

² Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 375։

³ Եղիաեան Բ., նշվ. աշխ., էջ 126։

⁴ Գանգրունի Հ., Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէյրութ, 1999, էջ 59։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ախատության մեջ ներկայացված պատմա-
կեղեցագիտական փաստերի ընդհանուր շարադրանքը՝ փորձել
ենք կատարել մի շարք եզրահանգումներ:

1. Քրիստոնեական կանոնական կանոնների համաձայն՝
Կիրիկիայի պատմաաշխարհագրական տարածքը պատմականո-
րեն մտնում էր և առ այսօր էլ Եդեսիա ու Մարդին քաղաքների
հետ միասին շարունակում է մնալ Անտիոքի Ուղղափառ եկեղեցու
կանոնական իշխանության ներքո: Մոտ 300 տարի՝ 1149-1441 թթ.
Կիրիկիան դարձավ Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական
հանգրվանը, իսկ 1293-1441 թթ. Հայոց կաթողիկոսական աթոռի
կենտրոն հռչակվեց Սիսը: 1441 թ. սկսած Սսի աթոռը դադարեց
ընդհանրական լինելուց և դարձավ առանձին մի կաթողիկոսութ-
յուն, որն իր նշանակությամբ, եկեղեցավարչական ընդգրկումով,
տարածքային-թեմական բաժանումներով ու իրավասությամբ
համարվում էր երկրորդային Հայոց Հայրապետության՝ Մայր Ա-
թոռ ս. Էջմիածնի նկատմամբ: Ժամանակի ընթացքում այն կա-
րողացավ պահպանել Հայ եկեղեցու դարավոր ավանդույթները՝
նպաստելով վերջինիս ինքնուրույնությանն ու անկախացմանը:
Ըստ տարբեր հաշվարկների՝ XX դարասկզբին Կիրիկիո կաթողի-
կոսությունն ուներ 12-23 եկեղեցական թեմ, իսկ Սսի սրբավայրե-
րի թիվն անցնում էր երեք տասնյակից:

2. 1894 թ. նոյեմբերի 8-ին Սսի Մկրտիչ Ա (Մարաշցի)
Քեյֆսիզյան կաթողիկոսի մահից հետո, Կիրիկիո հայրապետա-
կան աթոռը շուրջ ութ տարի՝ 1894-1902 թթ. մնաց թափուր, որն էլ
առիթմ դարձավ զանազան վեճերի ու ապօրինի ձեռնադրույթուն-
ների համար: Օգտագործելով Կաթողիկոսական աթոռի շուրջ
ստեղծված ժամանակավոր անիշխանությունը, օսմանյան կառա-

վարությունը որոշեց միջամտել կաթողիկոսական ընտրություններին և առաջադրել իր թեկնածուին, որը խորացրեց տարաձայնությունները հայ ազգային և հոգևոր գործիչների միջև: Առաջացած խնդիրները կարծես թե իրենց լուծումը ստացան միայն 1902 թ. հոկտեմբերի 12-ին Ադանայի ս. Աստվածածին եկեղեցում Մովսես եպս. Քեոմյուրճյանի նախագահությամբ գումարված Ընտրական ժողովի արդյունքում, որի ժամանակ 62 պատվիրակները միաձայն Կիլիկիո Հայոց Կաթողիկոս են ընտրում 53-ամյա Սահակ եպս. Խապայանին, որով վերջ է դրվում Կիլիկիո աթոռի տազնապին: Սահակ Բ կաթողիկոսը Կիլիկիո կաթողիկոսների մեջ ամենաերկար ապրած (90 տարի) և ամենաերկար գահակալած (37 տարի) կաթողիկոսն է:

3. Սահակ Բ կաթողիկոսի կաթողիկոսական գահակալման ամբողջ ժամանակաշրջանը առանձնանում է մեծ դժվարություններով, որոնց հաղթահարման համար պահանջվեցին ոչ միայն գերմարդկային ճիգեր, այլև բանիմաց համբերատարություն և քաղաքական հեռատեսություն: Բավականին ծանր և անհուսալի էին հատկապես հովվապետի կառավարման առաջին հինգ-վեց տարիները: Մայրավանքը ժամանակի ընթացքում մեծ պարտքեր էր կուտակել, աղքատացել էր և բավարար միջոցներ չուներ ստեղծված վիճակից դուրս գալու համար: Ստանձնելով Կաթողիկոսական աթոռը՝ Սահակ Բ Խապայանը ձեռնամուխ եղավ իր առջև ծառացած դժվարին և անհետաձգելի խնդիրների լուծմանը: Նա սկզբից ևեթ առանձնահատուկ ուշադրություն դարձրեց Մայրավանքի վերականգնման, Սսի միաբանության հեղինակության բարձրացման, թեմական գործերի կարգավորման և Ազգային սահմանադրական ժողովները վերակազմելու խնդիրներին: Տնտեսական խնդիրներից պակաս կարևոր չէր նաև Սսի Աթոռի միաբանների հոգևոր-կրթական պատրաստվածության և Սսի Դպրեվանքի գոյատևման հարցը:

4. Սահակ Բ կաթողիկոսը սուլթան Աբդուլ-Համիդ II-ի հետ հանդիպելու նպատակով 1904 թ. սեպտեմբերի 14-ին ուղևորվեց Կ. Պոլիս: Իր ուղևորության ընթացքում նա այցելություններ է կատարում նաև դեպի թեմեր՝ լինելով Հաճընում, Զեյթունում, Մարաշում, Այնթապում, Իսկենտերունում, իսկ հետդարձի ճանապարհին նաև Իզմիրում, Մերսինում, Ադանայում, Հալեպում, Մալաթիայում, Տևրիկում, Կարիսում, Եօզդատում, իր ծննդավայր Խարբերդում:

5. Կիլիկիայի կաթողիկոսության բարեկարգության գործում վճռորոշ նշանակություն ունեին նորընտիր կաթողիկոսի հարաբերությունները Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների հետ: Հայտնի է, որ երկար ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի և Կիլիկիո կաթողիկոս Մկրտիչ Քեյֆսիզյանի օրոք, երկու աթոռների միջև գոյություն ուներ գոյություն: Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար կաթողիկոսի օրոք այդ անհամաձայնությունը պաշտոնապես վերացվեց: Սահակ Բ Խապայանի անձնական հատկանիշներն ու նրա ծավալած հեռատես գործունեությունը ժամանակակիցների շրջանում հույս էին ներշնչում Էջմիածնի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, և այդ հույսերը լիապես արդարացան նրա անձնվեր գործելակերպով: Սակայն Սահակ Բ կաթողիկոսի աթոռակալման առաջին շրջանում այնքան էլ դյուրին չէին հարաբերությունները Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների հետ:

6. Կիլիկիո կաթողիկոսությունը Կիլիկիայի 1909 թ. դեպքերի ժամանակ մեծ դժվարությամբ մաքառեց և վերապրեց կոտորածների, բռնությունների ու հալածանքների ահասարսուռ մի ժամանակաշրջան, որն ամեն քայլափոխի ուղեկցվում էր մահմեդական անհանդուրժողականության և կրոնական մոլեռանդությ-

յան բացահայտ դրսևորումներով: Սաի կաթողիկոսությունը Ադանայի կոտորածից հետո շուրջ հինգ տարի անց միայն կարողացավ մասամբ ոտքի կանգնել և զարկ տալ բարենորոգչական և շինարարական որոշ աշխատանքներին: Սակայն վրա հասած Առաջին աշխարհամարտը գահավեժ փոխում է դեպքերի հետագա ընթացքը:

7. Սահակ կաթողիկոսի պաշտոնավարման պատերազմական շրջանը լի է դժբախտությունների, կոտորածների և տարագրությամբ սրտաճմլիկ դրվագներով: Առաջին աշխարհամարտի տարիներին ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս երկրամասերը, Կիլիկիան ևս զերծ չմնաց կատարվող բռնություններից: Այդ ամենի անմիջական արդյունքը եղավ Զեյթունի և մյուս վայրերի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնաճնշումների և տեղահանության ցեղասպանության քաղաքականությունը, որը դրսևորվեց նաև Կիլիկիո կաթողիկոսության նկատմամբ: 1915 թ. ապրիլի 30-ին իշխանությունների կարգադրությամբ խուզարկվեց և թալանվեց Մայրավանքի տարածքը: Իշխանություններին ուղղված իր բազմաթիվ բողոք-նամակներով Սահակ Բ-ն փորձեց կանխել բռնաճնշումները: Մինչ այդ, նա միամտաբար հավատում էր, որ կատարվող հանցագործությունները սոսկ տեղական պաշտոնյաների ոճիրներն էին, և նա հույս ուներ, որ թուրքական կառավարությունը հեշտությամբ վերջ կտար դրանց: Առաջին աշխարհամարտի տարիներին Սահակ Բ-ի գործունեության մաս են կազմում նաև նրա դիվանագիտական կարողությունները: Այդ է վկայում 66-ամյա կաթողիկոսի 1915 թ. հունիսի 30-ի նամակն ուղղված Կ.Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմին:

8. 1915 թ. հոկտեմբերի 31-ին Սահակ Բ խապայանը Իդլիբից աքսորվեց Երուսաղեմ, իսկ Եղիշե արք. Կարոյանը 1916 թ.

հունիսի 16-ին իշխանությունների հատուկ թույլտվությամբ վերադարձավ Սիս՝ տեր կանգնելու վանքի կալվածքներին։ Այդ շրջանի կարևորագույն գործերից մեկը Երուսաղեմում 12 եպիսկոպոսներից բաղկացած Հոգևոր ժողովի (Սինոդի) ստեղծումն էր։ Սահակ Բ կաթողիկոսի գահակալության երուսաղեմյան անփառունակ շրջանը տևում է մինչև 1917 թ. նոյեմբերի 6-ը։

9. Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության դեմ կատարված ոճրագործություններից ամենասարսափելին թերևս «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծն էր, որը թվագրված է 2 հունիս 1334 թ. («19 հուլիսի / 1 օգոստոսի 1916 թ.»)-ի՝ ստորագրված Մեմեդ Բեշատի կողմից և հաստատված թուրքական կառավարության ղեկավար անձանց ստորագրություններով։ Կանոնագիրը բաղկացած էր առաջաբանից, 3 գլուխներից և 39 հոդվածներից։ Դրա հիմնական նպատակը արևմտահայոց հոգևոր իրավակարգի ձևախեղումն էր։ Ըստ կանոնագրի՝ Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, Երուսաղեմի ու Կ.Պոլսի պատրիարքությունները միավորվում էին մեկ ընդհանուր միավորի՝ «Կաթողիկոս-Պատրիարք Թիւրքիոյ Հայոց»-ի՝ որպէս օսմանյան հայերի հոգևոր առաջնորդի ղեկավարության ներքո։ Հայոց կաթողիկոսի տիտղոսն ու աստիճանը համապատասխանեցվում էր հունական ուղղափառ եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին։ Սահակ Բ խապայանը ստիպված էր իրեն կոչել «Սահակ սրբազնագույն կաթողիկոս Հայոց Թուրքիո և պատրիարք Ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսո»։ «Կաթողիկոս-պատրիարք»-ի նստավայր էր դառնում Երուսաղեմի Հայոց վանքը։ Չեղարկվում էր 1863 թ. Ազգային սահմանադրությունը, դադարում էին գործել Կ.Պոլսի պատրիարքությունը, հայոց Ազգային մեծ ժողովը, Ազգային կենտրոնական վարչությունը, ազգային գավառական, տնտեսական, ուսումնական և

այլ խորհուրդները, իսկ արևմտահայության ազգային գործունեությունը սահմանափակվում էր եկեղեցականների կողմից կատարվող զուտ ծիսական արարողություններով: Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքն իրավունք էր ստանում եպիսկոպոսներ ձեռնադրել Օսմանյան Թուրքիայում և դառնում էր անկախ, սակայն եպիսկոպոսներն ու քահանաները կարող էին ցանկացած պահի կառավարության կողմից հեռացվել պաշտոնից: Բոլոր դպրոցները դրվում էին Կրթության նախարարության անմիջական վերահսկողության տակ: Այս ծրագրի հետին, բայց ակնհայտ նպատակը արևմտահայության և ռուսական ազդեցության գոտում գտնվող էջմիածնի կաթողիկոսության իրավական և վարչական հաստատությունների հետ կապերի խզումն էր, քանի որ կաթողիկոս-պատրիարքը և նրան ենթական եպիսկոպոսներն այսուհետև անկախ էին դառնում էջմիածնից և հայ քաղաքական կուսակցություններից:

10. 1917 թ. նոյեմբերի 6/19-ին թուրքական կառավարության պետական հրամանով որոշվում է կաթողիկոս-պատրիարքին, Հոգևոր Ժողովի անդամներին, քաղաքի բոլոր հայ հոգևորականներին, ինչպես նաև Երուսաղեմի հույն և լատին պատրիարքության գահակալներին, նրանց սինոդական եպիսկոպոսներին, ղաթիկների եպիսկոպոսին և հրեաների ռաբոնապետին Երուսաղեմից փոխադրել Դամասկոս: 1918թ. սեպտեմբերի 30-ին Դամասկոսի կառավարչական պալատում Սահակ Բ Խապալյանը ազգային-հոգևոր մյուս առաջնորդների հետ հանդիպում է անգլիական գործերի կազմում գտնվող արաբական ազատարար բանակի հրամանատար էմիր Ֆեյսալ բըն Հուսեյնի, իսկ 1918 թ. նոյեմբերի 21-ին՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի խորհրդական Մայք Սայքսի հետ:

11. Մուղրոսի զինադադարի համաձայն՝ 1918 թ. նոյեմբերի 28-ին դաշնակից ուժերի գլխավոր հրամանատարությունը

Թուրքական իշխանություններից պահանջում է դատարկել Կիլիկիան, որից հետո 1918 թ. դեկտեմբերին անգլո-ֆրանսիական զորքերի և Թուրքական կառավարության միջև ստորագրվում է մի նոր փաստաթուղթ՝ Մուդրոսի զինադադարի գաղտնի հավելվածը, որով Կիլիկիայի կառավարման վերահսկողությունը հանձնվում էր ֆրանսիական զինվորականությանը, որը, սակայն, պիտի ենթարկվեր անգլիական զենքերալ էդմոնդ Ալենբիին: 1918 թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեոնի զորամասերն առաջին անգամ մտան Կիլիկիա, իսկ 1918 թ. դեկտեմբերի 25-ին ֆրանսիական կառավարության թիվ 92189/11 հրամանով է. Բրեմոնը նշանակվեց «Հայաստանի կառավարիչ»: Հիշարժան են այս շրջանում Սահակ Բ Խապայանի Դամասկոսից Փարիզ՝ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին, ինչպես նաև բրիտանական բանակի հրամանատարությունն ուղղված շնորհավորական հեռագրերը:

11. Մուդրոսի զինադադարից հետո Սահակ Բ Խապայանի մտահոգություններից մեկը Կիլիկիո կաթողիկոսության և Երուսաղեմի Հայոց պատրիարքության ինքնուրույն իրավակարգի վերահաստատումն էր, որը պարտադրվել էր Օսմանյան պետության կողմից 1916 թ. նվիրապետական չորս աթոռների միացմամբ: 1918 թ. նոյեմբերի 20-ին Բ. Դուռը հրապարակում է մի նոր օրենք, որով վերանում էր Հայ կաթողիկոս-պատրիարքության 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագիրը, վերահաստատվում էր Արևմտահայերի 1863 թ. մարտի 17-ի սահմանադրությունը, չեղարկվում էին Հայ կաթողիկոս-պատրիարքության «բերաթ»-ները, և դրա փոխարեն վերահաստատվում էին Սսի Հայոց կաթողիկոսությանը և Կ.Պոլսի պատրիարքությանը վերաբերող նախկին որոշումները:

12. 1919 թ. սկսվում է բնակչության ներգաղթը Կիլիկիա: Ներգաղթի կազմակերպման աշխատանքները մեծամասամբ հավակարգում էր Կիլիկիո կաթողիկոսությունը՝ իբրև Հայ առաքելական եկեղեցու բացարձակ մեծամասնության ներկայացուցչական

աթոռ: Սահակ Բ Խապայանի մասնակցությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնցով վերականգնվեց եկեղեցու խախտված իրավունքը, վերակառուցվեցին եկեղեցիները, վերակազմվեցին Ազգային վարչական ժողովները, վերականգնվեցին Ազգային առաջնորդարանների և հեռավոր գավառների ու արտասահմանի միջև խախտված եկեղեցական հարաբերությունները, մշտական կապ հաստատվեց միջհարանվանական և միջկրոնական ներկայացուցչությունների հետ, կազմակերպվեց որբերի և այրի կանանց հավաքագրումը, վերաբացվեցին ազգային վարժարանները, բնականոն հունի մեջ դրվեցին երեխաների դաստիարակության և կրթության հարցերը:

13. Ֆրանսիական ու անգլիական կառավարությունների միջև 1919 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով Կիլիկիայում անգլիական զորքերին փոխարինեցին Ֆրանսիական զորամիավորումները: Դրան հաջորդեց 1919 թ. դեկտեմբերի 5-ին Մ. Քեմալի և Ֆրանսիական բարձր կոմիսար Ժորժ Պիկոյի միջև Սվազում ստորագրված պայմանագիրը, ըստ որի՝ Ֆրանսիան պարտավորվում էր ոչ միայն անհապաղ թողնել Կիլիկիան և այն առանց որևէ պայմանի վերադարձնել Թուրքիային, այլև պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ընդդեմ Անգլիայի, Իտալիայի և Հունաստանի: Ելնելով ընձեռված հնարավորությունից՝ քեմալական Թուրքիան որոշեց 1919 թ. աշնանը պատերազմ սկսել Հայոց Կիլիկիայի դեմ, որի առաջին զոհը դարձավ Մարաշի հայ ազգաբնակչությունը: Հաշվի առնելով ստեղծված ողբալի իրավիճակը և քեմալականների կողմից Հաճընի պաշարումը՝ Սահակ Բ Խապայանը, որը ծանոթ էր կացությանը և մեծ հեղինակություն ուներ արտասահմանում, ցանկություն է հայտնում անմիջապես և անաղմուկ մեկնել Եվրոպա, մասնավորապես՝ Ֆրանսիա և իշխանություններին խնդրել,

որ կանխեն հայկական հետագա կոտորածները: Սահակ Բ Խապայանի եվրոպական ուղևորությունը սկսվեց 1920 թ. մարտի 13-ին և տևեց մինչև 1920 թ. նոյեմբերի 1-ը: Կաթողիկոսը մարտի 25-ին ժամանելով Փարիզ՝ հանդիպումներ ունեցավ նախ հայ հասարակական-քաղաքական գործիչների, ապա Ֆրանսիայի նախագահի հատուկ դեսպան և նախագահության քարտուղար Լուի Հերմիթի, վարչապետի արևելյան գործերի դիվանապետ Պարժթոնի, Ֆրանսիայի վարչապետ Միլրանի, նախագահ Պոլ Տեշանելի, Մշակույթի նախարարի, Ռազմական նախարարության դիվանապետ՝ գեներալ Բենենի, Փարիզի արքեպիսկոպոս՝ Ամեթիի, Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսի և այլոց հետ: Սահակ Բ Խապայանը 1920 թ. մայիսի 6-ին ուղևորվում է նաև Վենետիկ և ս.Ղազար, իսկ 1920 թ. մայիսի 20-ին նա Վ. Խուպեսեյանի, Գր. ծ. վրդ. Պալաքյանի և Զաքարիա Պղտիկյանի ուղեկցությամբ մեկնում է Լոնդոն, ուր հանդիպումներ է ունենում Լոնդոնի տեղեկատու դիվանի պետ Մալքումի, նրա քարտուղար Ա. Սաֆրաստյանի և հայ եկեղեցու հոգաբարձության անդամների հետ: Սահակ Բ Խապայանը Ստեփանոս Ե Սալմաստեցուց, Միքայել Ա Սեբաստացուց, Հակոբ Դ Զուղայեցուց և Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկից հետո հինգերորդ կաթողիկոսն էր, որ հայկական հարցի քննարկման համար հասնում էր եվրոպա:

14. 1921 թ. հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի և Թուրքիայի ներկայացուցիչների միջև Անկարայում կնքվեց պայմանագիր, համաձայն որի՝ Կիլիկիան անցնում էր քեմալական կառավարության ենթակայության ներքո: Սկսվում է հայ բնակչության համատարած խուճապը, և բոլորի խնդիրն է դառնում օր առաջ հեռանալ Կիլիկիայից: Այս բոլոր աղետների պատճառը Սահակ կաթողիկոսը համարում էր հայ քաղաքական գործիչների սխալ դիվանագիտությունը: Ի վերջո, Սահակ Բ Խապայանը Ադանայից վերջ-

նականապես հեռանում է 1921 թ. նոյեմբերի 25-ին՝ հաստատվելով Սիրիրայում և Լիբանանում: Այդ ամենից հետո նա իրեն կոչում է «Սահակ Բ Կաթողիկոս ավերակաց»:

АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ КИЛИКИИ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ 1902-1921 гг.

АРУТЮНЯН ВААГН АВETISOVИЧ

РЕЗЮМЕ

Данная монография посвящена изучению истории армянского католикосата Киликии в 1902-1921 гг. Структурно диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложения.

Во введении обосновывается актуальность темы монографии, предмет исследования, цели, задачи, хронологические рамки, методологическая основа, научная новизна, представлена практическая значимость проделанной работы, дан анализ использованных источников литературы, описана структура диссертации и её содержание.

Первая глава монографии “Борьба за католикосат Сис. Первый период интронизации Саака II (Егегци) Хапаяна (1902-1914)” состоит из шести подглав, в которых представлен краткий обзор предыстории Киликийского католикосата и епархиальных подразделений католикосата в начале XX века, а дальше представлено уже внутреннее нестабильное состояние Киликийского католикосата, споры вокруг католикосата в 1894-1902 гг. Подробно упоминается также избрание Саака II Хапаяна католикосом, его хиротония и важные религиозно-церковные события, происходившие в Сисе в первый период его правления, 1902-1914 гг.

Вторая глава монографии “Киликийский католикосат во время Геноцида армян и переезд престола католикоса в Иерусалим” состоит из трех подглав. На основании глубокого исследования богатого историко-церковного материала проанализирован важнейший вопрос о репрессиях и депортациях армянского населения Киликии в 1914-1915 гг. Представлена борьба за выживание Киликийского Католикосата в годы Геноцида армян, подробно проанализированы основные положения «Устава Армянского Католикосата и Патриархата» османского правительства от 19 июля 1916 г. и иерусалимский период правления «Католикос-Патриарха» Киликии Саака II Хапаяна. В целом подглавы охватывают период с 31 октября 1915 года по 6 ноября 1917 года.

Третья глава монографии “Скитания Киликийского Католикосата с 1917 по 1921 гг.” состоит из четырех подглав. Была сделана ссылка на историю католикосата Сиса в 1917-1921 гг., рассматриваются такие ключевые вопросы, как переезд Киликийского Католикосата из Иерусалима в Дамаск и Алеппо, роль церкви в национальном восстановлении Киликии, деятельность Католикоса Саака II Хапаяна, а так же Зарубежные поездки католикоса в 1920 году в Европу: Франция, Италия, Великобритания и окончательное переезд католикосата в Ливан.

В заключении обобщены основные выводы и результаты монографии.

THE ARMENIAN CATHOLICOSATE OF CILICIA IN THE CONTEXT OF NATIONAL-POLITICAL PROCESSES DURING THE YEAR OF 1902-1921

HARUTYUNYAN VAHAGN AVETIS

SUMMARY

The monograph is dedicated to the study of the history of the Catholicosate of Cilicia in 1902-1921. Structurally, the dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references and an appendix.

The introduction presents the relevance of the dissertation topic, the subject of research, goals, objectives, chronological framework, methodological basis and scientific novelty. The introduction substantiates the topicality of the dissertation topic, research subject, goals, objectives, chronological framework, methodological basis, scientific novelty, the practical significance of the work done, the analysis of the sources used - literature, the structure of the dissertation - the content.

The first chapter of the monograph titles "Struggle for the Catholicosate of Sis. The first period of Sahak II (Yeghegtsi) Khapayan's enthronement (1902-1914)" which consists of 6 sub-chapters. To start with a brief overview of the prehistory of the Catholicosate of Cilicia and the diocesan divisions of the Catholicosate in the early twentieth century are presented. Furthermore, internal unstable state of the Catholicosate of Cilicia in 1894-1902 and the disputes over the Catholicosate are introduced. Detailed reference are also made to the election of

Sahak II Khapayan as a Catholicos, his consecration and the important religious-ecclesiastical events that took place in Sis in the first period of his reign, 1902-1914.

The second chapter of the monograph titled "The Catholicosate of Cilicia during the Armenian Genocide and the Relocation of the Catholicosate to Jerusalem" consists of three sub-chapters. With the successful circulation of abundant historical and ecclesiastical material, the most important issue of the repressions and deportations of the Armenian population of Cilicia in 1914-1915 was analyzed. The struggle for the survival of the Catholicosate of Cilicia during the years of the Armenian Genocide was presented, the main provisions of the Ottoman Government's July 19, 1916 "Charter of the Armenian Catholicosate and Patriarchate" were analyzed in depth and the Jerusalem period of the "Catholicos-Patriarch" of Cilicia Sahak II Khapayan was introduced. Overall the chapter covers the period from October 31, 1915 to November 6, 1917.

The third chapter of the monograph titled "Creeps of the Catholicosate of Cilicia in 1917-1921", consists of four sub-chapters. Reference was made to the history of the Catholicosate of Sis in 1917-1921, discussing key issues such as the relocation of the Catholicosate of Cilicia from Jerusalem to Damascus, the role of the church in the national reconstruction of Cilicia, activities of Catholicos Sahak II Khapayan, Sahak II Khapayan's 1920 Foreign travel to Europe: France, Italy, Great Britain and the final relocation of the Catholicosate to Lebanon. The main conclusions of the dissertation are summarized in the conclusions section.

In conclusion, the main conclusions and results of the monograph are summarized.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Արխիվային վավերագրեր

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

- 1.1. ՀԱԱ, ֆ. 57, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ց. 1, գ. 355:
- 1.2. ՀԱԱ, ֆ. 57, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ց. 2, գ. 14, գ. 87, 92, 107, 668, 668, 745, 1202, 1820, 1821, 1824, 1824, 1850, 2033, 2046:
- 1.3. ՀԱԱ, ֆ. 57, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ց. 5, գ. 14:
- 1.4. ՀԱԱ, ֆ. 200, Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն, գ. 132:
- 1.5. ՀԱԱ, ֆ. 205, Հայաստանի առաջին հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարարություն, ց. 1, գ. 780:
- 1.6. ՀԱԱ, ֆ. 503, Զավարյան Հակոբ - հասարակական քաղաքական գործիչ, ց. 1, գ. 131:

Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (ԳԱԹ-ի արխիվ)

- 1.7. ֆ. Զ. Եսայան, գ. 233, 234:
- 1.8. ֆ. Թ. Ազատյան, գ. 159:
- 1.9. ֆ. Վ. Մալեգյան, գ. 283բ, 283դ, . 283զ, 479ա, 479գ:
- 1.10. ֆ. Ա. Չոպանյան, I բաժին, գ. 3027, 6553, III բաժին, գ. 9979, 9980, 9981:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

- 1.11. Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 11, վավ. 190:
- 1.12. Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 13, վավ. 403(168):
- 1.13. Կաթողիկոսական դիվան, թղթ. 14, վավ. 532:
- 1.14. Կաթողիկոսական դիվան, թղթ. 240 ա, վավ. 75:

Կահիրեի ազգային առաջնորդարանի արխիվ (ԿԱԱԱ)

1.15. հ. 14, ց. 1, գ. 3, 28:

Архив внешней политики Российской империи (АВПРИ) (Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվ)

1.16. ֆ. Канцелярия МИД, оп.470, г.1900, д.27.

1.17. ֆ. 149 Турецкий стол, оп. 502/2, д. 1002.

1.18. ֆ. 151 Политархив, 1916г., оп. 482, д. 3509.

Bibliothèque Nubar de l'UGAB (Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվ)

1.19. գ. 000012, 000013, 000015, 000016, 000017.

2) Մատենագիրներ

2.1. **Հեթում Պատմիչ**, Պատմութիւն Թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, ի ձեռն հ.Մկրտիչ աթոռակալ վարդապետի Ավգերեան, ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, յամին 1951 ՌՆ, 91 էջ:

2.2. **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական Գրող», 1986, 616 էջ:

3) Տպագիր սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ հայերեն

3.1. Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Հակոբ Պապիկեանի, օսմանեան երեսփոխան Էտիրների, Կ. Պոլիս, «Կիլիկիա գրատուն», 1919, 48 էջ:

3.2. Բրայս Դերկոմս Զ., Անգլիական կառավարութեան Կապոյտ գիրքը Հայոց Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Թեհրան, Հայոց

- ցեղասպանության հարիւրամեակի մատենաշար 2, 2012, 106 էջ:
- 3.3. Գերմանյան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր I, հրատարակությունը և ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից Վալենտինա Մինայանի, Երևան, «Հայաստան», 2006, 391 էջ:
- 3.4. Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինայանի, Երևան, «Հայաստան», 2006, 415 էջ:
- 3.5. Գուստ Վ. (Հր.), Հայերի ցեղասպանությունը 1915-1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերը, Երևան, «Հայագիտակ», 2005, 487 էջ:
- 3.6. Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հատոր Ա 1913-1917, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց՝ Արամայիս Բալոյանը, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակություն, 2008, 252 էջ:
- 3.7. Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915, Պէյրութ, տպ. «Հրազդան», 1927, 207 էջ:
- 3.8. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972, 811 էջ:

- 3.9. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1991, 758 էջ:
- 3.10. Հրամանաւ Տ. Տ. Սահակայ Սրբազնագոյն կաթողիկոսի Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքի Ա. Երուսաղէմի և Կ.Պոլսոյ, Երուսաղէմ, ա. տ., 1917, 1 էջ:
- 3.11. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, հատոր Ա. (1914-1917), Երևան, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան», 2018, 672 էջ:
- 3.12. Պելլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր I, Երևան, «Հայաստան», 2005, 484 էջ:
- 3.13. Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ., կազմեց Սանդրո Բեհրույան, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 1997, 587 էջ:
- 3.14. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907թթ.), հատորը կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհրույանը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2000, 704 էջ:
- 3.15. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910թթ.), գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրո Բեհրույանը, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2001, 972 էջ:
- 3.16. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ, Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1866-1882), փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, կազմեց Սանդրո Բեհրույանը, Երևան, «Մուղնի» հրատարակչություն, 2004, 1021 էջ:

- 3.17. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բեիբուլեան, Երեւան, «Մուլնի» հրատարակչություն, 2007, 871 էջ:
- 3.18. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԲ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989), փաստաթղթերի և նյութերի ժողովածու (նվիրվում է ծննդյան 100- ամյակին), կազմեց Սանդրո Բեիբուլեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2004, 816 էջ:
- 3.19. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գեորգ Ե Վշտալի Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բեիբուլեան, Երեւան, «Մուլնի» հրատարակչություն, 2005, 711 էջ:
- 3.20. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԷ. Գետրգեան ճեմարան, թանգարան, «Արարատ» ամսագիր, փաստաթղթերի ժողովածու (Ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի), կազմեց՝ Գոհար Ավագեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2018, 528 էջ:
- 3.21. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԻԲ. Մկրտիչ Ա Խրիմեան կաթողիկոս Ամենայն Հայոց (1892-1907), մաս Բ, փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նյութերի), կազմող՝ Գոհար Ավագյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2020, 789 էջ:
- 3.22. Տաշեան վ. Յ. հ., Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վավերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1921, 241 էջ:

- 3.23. Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1997, 238 էջ:
- 3.24. Օրմանեան Տէր Մ. արք., նախկին պատրիարք Թիւրքիոյ Հայոց, Թիւքահայ աղետը. Պատմական փաստաթուղթեր, Ա. Տեղեկագիր, Նոր ծանոթութիւններով եւ յաւելումներով հրատարակեց Հայկ Աճէմեան, Ս. Էջմիածին, տպ. Մայր Աթոռի, 1919, 48 էջ:

ռուսերեն

- 3.25. Геноцид армян в Османской империи, Сборник документов и материалов под редакцией М.Г. Нерсисяна, Ереван, «Айастан», 1982, 685 с.
- 3.26. Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарий, том 1, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю.Г. Барсегов, Москва, «Гардарики», 2002, 816 с.
- 3.27. Германские источники о геноциде армян. Сборник дипломатических документов и материалов под редакцией профессора С.С. Степаняна, т. 1, Ереван, «Айастан», 1991, 381 с.
- 3.28. Хрестоматия по истории международных отношений, М., «Высшая школа», 1963, 416 с.

4) Հուշեր

- 4.1. Աղէտէն վերապրողներ, 1915. Աղէտ և վերածնունդ, Փարիզ, տպագր. «Արարս», 1952, 480 էջ:

- 4.2. Աղէտի աշխարհ. իրական վէպ Աստղլու գիղէն (Ատանա): Երկու քոյր Վարդէ եւ Շուշան եւ Քիպար Հիսէյինի որդիք Մուհամմէտ եւ Իսմայէլ, Պուէնոս Այրէս, տպ. «Սիփան», 1947, 20 էջ:
- 4.3. Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները, Կ. Պոլիս, «Օ. Արզուման», 1919, 350 էջ:
- 4.4. Աւագեան Ա. Վեր., Վկայագրութիւն. Հաւատքի ծառայական ճանապարհորդութեան մը Հասանալէյլիէն (Կիլիկիա) Սառնիա (Գանատա), Պէյրութ, ա. հ., 2010, 408 էջ:
- 4.5. Աշճեան Յ. Հ. Վեր., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (պատմութեան համար), Նիւ Եորք, «Կոչնակ» տպարան, 1950, 308 էջ:
- 4.6. Գիբոնս Հելեն Դավենպորտ, Տարսոնի կարմիր գորգերը. մի կնոջ հուշերը 1909 թվականի հայկական կոտորածների մասին, Երևան, «Տիր» հրատարակչություն, 2015, 200 էջ:
- 4.7. Եսայեան Զ., Աւերակներուն մէջ. (վկայագրութիւն), Ստանպուլ, «Արաս», 2010, 351 էջ:
- 4.8. Եսայան Զ., Նամակներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1977, 418 էջ:
- 4.9. Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշեր. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1947, 424 էջ:
- 4.10. Թէրզեան Յ. Յ., Կիլիկիոյ աղէտը (պատկերագարդ). Ականատեսի նկարագրութիւններ, վաւերաթուղթեր, պաշտօնական տեղեկագիրներ եւ թղթակցութիւններ, վիճակագրութիւններ եւ այլն կարեւոր պատկերներով, Ա.հատոր, Կ.Պոլիս, տպ. «Յ. Ասատուրեան եւ որդիք», 1912, 160 էջ:
- 4.11. Լոյս. Նորգիր, Կիլիկիան պատմավէպ, Աղեքսանդրիա, ա. հ., 1938, 108 էջ:

- 4.12. Խուպեսերեան Վ. Լ., Օրագրութիւն ուղեւորութեան յԵրուսա Սահակ Բ կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալեպ, տպ. «Արաքս», 1928, 219 էջ:
- 4.13. Կենճեան Ա., Հալաճականի յուշեր 1914-1918, Պէյրութ, տպ. «Արարատ», 1964, 204 էջ:
- 4.14. Ճեպեճեան Ռ. Ա. Տոքտ., Ինքնակենսագրութիւն. յուշեր եւ գործունէութիւններ, Հալեպ, տպ. «Ասֆահանի», 1999, 518 էջ:
- 4.15. Ճոլլյան Հ., Ստվերում մնացած կյանք, Երևան, «Հայաստան», 1991, 82 էջ:
- 4.16. Մխիթարեան Գ., Յուշեր և վերյիշումներ (1918-1935), Անթիլիաս-Լիբանան, տպարան Դպրեւանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1937, 125 էջ:
- 4.17. Նորաշխարհյան Լ. Ն., Զեյթունը 1914-1921թթ. (Հուշեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1984, 272 էջ:
- 4.18. Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Պէյրութ, հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, 1965, 1115 էջ:
- 4.19. Զազմագճեան Գ. Յ., Հաւատքի զօրութիւնը. Կիլիկիոյ հայկական կեանքէն, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1949, 65 էջ:
- 4.20. Զիլինկիրեան Ե. եպիսկ., Նկարագրութիւնք Երուսաղէմի-Հալէպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, Երուսաղէմ, Ա. Հ., 1927, 71 էջ:
- 4.21. Պօղոսեան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը, հ. Բ, Paris, «imp. H. Turabian», 1947, 212 էջ:
- 4.22. Սաղըրեան Ս., Կիսադարեան յուշամատեան (1895-1945). ուղեւորութիւն մը Արգէնսէն Տաւրոս, Փարիզ, տպ. «Մաթիկեան», 1948, 380 էջ:
- 4.23. Սերոբեան Մ., Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս), Պէյրութ, տպարան «Ազդակ», 1932, 301 էջ:
- 4.24. Սիմոնյան Ե. Ա., Իմ գողգոթաս, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1960, 50 էջ:

- 4.25. Սվազյան, Վ. Գ., Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, «Գիտություն», 2011, 880 էջ:
- 4.26. Սվազյան Վ. Գ., Մուսա լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, «Գիտություն», 2015, 240 էջ:
- 4.27. Վեր Կեօրկիզեան Ա. Ա., Անմոռանալի յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն. Ազգային դէմքերու եւ դէպքերու կապակցութեամբ, Պէյրուս, «Զարթօնք», 1967, 503 էջ:
- 4.28. Ցեղասպանութենէն վերապրող Հաճընի հպարտ զաւակ Ասատուր Զալեանի յուշերը, Լոս Անջելես, «Ասպարեզ», 2015, 193 էջ:
- 4.29. Քասունի Ե. հ., Հանդիպումներ ճանապարհին. դէմքեր, դէպքեր, վայրեր (ծանօթագրութիւններ), Պէյրուս, 2010:
- 4.30. Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղեմ, տպ. «Սրբոց Յակօբեանց», 1929, 503 էջ:

5) Ուսումնասիրություններ

հայերեն

- 5.1. Ազգային խնամատարութիւն. ընդհանուր տեղեկագիր առաջին վեցամսեայ 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919, Կ.Պոլիս, տպ. «Մ. Յովակիմեան», 1920, 512 էջ:
- 5.2. Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (պատմական ակնարկ), առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, տպ. «Յ. Թիւապեան», 1937, 74 էջ:
- 5.3. Ալիշան վ.Ղ.հ.Մ., Այրարատ. քնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ - ս.Ղազար, ՏՅԶԲ=1890=ՌՅԼԹ, 590 էջ:
- 5.4. Ալիշան վ.Ղ.հ.Մ., Հայապատում. պատմիչք եւ պատմութիւն հայոց, Վենետիկի վանս ս. Ղազարու, ՌՅԾԱ-1901, 650 էջ:

- 5.5. Ալիշան վ.Ղ.հ.Մ., Սիսուն. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ - Ս. Ղազար, յուխտեն Մ-խիթարեան, ՌՅԼԵ-1885, 592 էջ:
- 5.6. Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, «Հայաստան» գրատուն 1920, 329 էջ:
- 5.7. Աղազարյան Մ., Դէպի անհայրենիք պետութիւն !! Սիսի վերջին աթոռակալը եւ իր մեղապարտ գաւառականը, Լիբանանահայ գաւառականի ընտրութեանց առթիւ, Պէյրութ, ա. հ., 1926, 147 էջ:
- 5.8. Աղանունի եպիսկոպոս Մ., Միաբանք եւ այցելութիւն Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, տպ. «ս. Յակոբեանց», 560 էջ:
- 5.9. Անասյան Հ.Ս., XVIIդարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. պատմական հետազոտություն, Երևան, ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակություն, 1961, 442 էջ:
- 5.10. Անդրէասեան Տ., Զէյթունի տարագրութիւնը եւ Սուլտիոյ ապստամբութիւնը, Հալէպ, տպ. «Գոլեն», 1935, 118 էջ:
- 5.11. Անտոնեան Ա., Մեծ ոճիրը. հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշան, Պօսթըն, տպարան «Պահակ»-ի 1921, 304 էջ:
- 5.12. Աճառեան Հ., Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915թ.), նոր-Նախիջևան, տպ. «Ս. Յ. Աւագեան», 1915, 79 էջ:
- 5.13. Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրութիւնում 1914-1923թթ., Երևան, «Նաիրի», 2013, 252 էջ:
- 5.14. Ատանայի եղեռնը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան Էտիրների), Ֆրանսիս տը Պրէսանսէի յառաջաբանով, հայացուց՝ Յակոբ Սարգիսեանի, Կ. Պոլիս, տպագր. «Կ.-Արծազանգ»-ի, 1919, 48 էջ:

- 5.15. Ատանայի հայոց պատմություն. պատմագրական եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական, խմբագրեց՝ Բիւզանդ. Եղիայեան, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, 1063 էջ:
- 5.16. Ատանայի վկաները եւ սուրբ Ստեփանոս վկայարանը, խմբագրութեամբ և առաջաբանը՝ Տ. Վարուժան Հերկէլեանի, 1909, Լառնագա, 159 էջ:
- 5.17. Ատոսիտիս Ա., Հայերը եւ երիտասարդ թուրքերը: Կիլիկիոյ կոտորածները, հ. Ա, Հալէպ, տպ. «Արեւելք», 2009, 168 էջ:
- 5.18. Արզումանյան Ա., Արիւմիւրքից վերածնունդ, Երևան, «Հայաստան», 1973, 582 էջ:
- 5.19. Արզումանեան Զ. Ա. քինյ., Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, ա. հ., 1995:
- 5.20. Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2015, 583 էջ:
- 5.21. Աքչամ Թ., Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուժացում, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 296 էջ:
- 5.22. Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, 775 էջ:
- 5.23. Գանգրունի Հ., Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէյրութ, «Doniquian preres», 1999, 199 էջ:
- 5.24. Գասպարյան Ռ., Կիլիկահայությունը 20-րդ դարի սկզբին, Երևան, «Հայագիտակ» 1999, 53 էջ:
- 5.25. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921թ.), Երևան, «Գիտություն», 2005, 246 էջ:
- 5.26. Գուշակեան արք. Թ., Եղիշե պատրիարք Դուրեան, «Դուրեան մատենաշար, թիւ 1», Երուսաղեմ, 1932, 327 էջ:

- 5.27. Դանիելեան եպսկ. Ն. (Սսական վարդ.), Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, «գրատուն Հ. Գըլճեան», 1912, 74 էջ:
- 5.28. Դիանա Աղաբեկ Աբգար, կեանքը եւ գործունէութիւնը, Նոր Զուղա, «Լուսակն», 2011, 112 էջ:
- 5.29. Դոլուխանյան Ա., Եվրոպացի հայագետներ, III, Վիկտոր Լանգլուան հայագետ, «Լուսակն», Երևան, 2003, 118 էջ:
- 5.30. Դկտր. Ոսկեան Հ. Խ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957,
- 5.31. Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, 948 էջ:
- 5.32. Եղիայեան Բ., Կիլիկիոյ Հայոց թագաւորութեան երեք դարերը, Երեւան, 1994, 144 էջ:
- 5.33. Զեյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, Զեյթունի հայրենակցական միութիւն Մոնտեվիդէո, 1960, 1150 էջ:
- 5.34. Երէցեան Տ., Որբերու բոյնը 1915-1921, Սալիպէ-Հալէպ, տպ. «Անի Ա. Էքմէքճեան», 1934, 20 էջ:
- 5.35. Զուլպյան Մ.Կ., Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, 1966, 263 էջ:
- 5.36. Թաթուլեան Գ., Անթեղուած գաղտնիքներ, Պէյրութ, «Ատլաս», 1967, 47 էջ:
- 5.37. Թերզեան Յ. Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, տպագր. «Զարեհ Ն. Պէրպէրեան», 1909, 48 էջ:
- 5.38. Թերզեան Ս., Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Աթենք, տպ. «Պարթենոն», 1937, 496 էջ:
- 5.39. Թեքեյան Ա., Դրագներ ապրիլյան եղեռնէն, Պեհեսնի հայութեան գողգոթան (1914-1918), Պէյրութ, 1957, 223 էջ:
- 5.40. Թորոսյան Շ. Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920թթ., Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակություն, 1987, ԵՊՀ, 261 էջ:

- 5.41. Թովուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1968:
- 5.42. Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, 396 էջ:
- 5.43. Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսությամբ), Պէյրուֆ, տպ. «Սեւան», 1964, 326 էջ:
- 5.44. Իզմիրլեան եպս. Մ., Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Սիս ու Աղթամար, ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2008, 431 էջ:
- 5.45. Ինճիճեան վրդ. Ղ. հ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ, և Ամէրիկոյ, մասն առաջին, Ասիա, հատոր Ա, ի Վէներտիկ, ի վանս սքն Ղազարու, 1806 ի թուին ոմծե, 424 էջ:
- 5.46. Լեօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Փարիզ, տպագրութիւն «Պահրի Եղբարց», 1935, 262 էջ:
- 5.47. Լիբանանի Հայոց անձնական իրաւունքը, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1956, 228 էջ:
- 5.48. Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, 472 էջ:
- 5.49. Լեօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Փարիզ, տպագրութիւն «Պահրի Եղբարց», 1935, էջ 223:
- 5.50. Խապայեան Ս. Գ., Համառօտ աշխարհագրութիւն բնական, քաղաքական, ուսումնական, Յերուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակովբեանց, 1874, 365 էջ:
- 5.51. Խապայեան Ս. Վ., Նոր դասագիրք Տիեզերագրութեան, Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Ս. Աթոռոյս Սրբոց Յակովբեանց, 1884, 255 էջ:

- 5.52. Խապայեան Ս. Վ., Բնական պատմութիւն, Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակովբեանց, 1888, 383 էջ:
- 5.53. Խապայեան Ս. Վ., Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց ընկերովի իրաւանց արարողութեանց եւ սովորութեանց ի տնօրինական ս. Տեղիս, Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակովբեանց, 1880, 126 էջ:
- 5.54. Խապայէնց վ. Ս., Պատմութիւն Հին Կտակարանի, Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ սրբոյ Յակովբեանց, 1879, 304 էջ:
- 5.55. Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական, աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, ա.հ., 1959, 1051 էջ:
- 5.56. Կայգեր Հ., համահեղինակներ՝ Լյութեր և Նենսի Էսքիջյաններ, Դէյր Էզ- Զորի խաչուղիներում. Մահ, վերապրում և ընդհատակյա մարդասիրական դիմադրություն Հալեպում 1915-1917թթ., Երևան, Ամերիկայի հայ աւետարանչական ընկերության հայկական մասնաճյուղ, 2015, 118 էջ:
- 5.57. Կենճեան Ա., Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան աքթը, Պէյրութ, 1958, տպ. «Արարատ», 325 էջ:
- 5.58. Կեսար Ա., Այնթապի գոյամարտը, Պոսթըն, Մէս., տպ. «Հայրենիք»-ի, 1945, 195 էջ:
- 5.59. Կերտող Ս., Հայ Առաքելական եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություն, 2003, 344 էջ:
- 5.60. Կերտող Ս., Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություն, 2018, 368 էջ:

- 5.61. Կիլեսերեան Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, տպ. Դպրեանոց կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1939, 1446 էջ:
- 5.62. Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914թ.), Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2014, 400 էջ:
- 5.63. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. - 1914թ.), գիրք առաջին, Երևան, «Հայաստան», 1982, 356 էջ:
- 5.64. Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. «Ի Լիբերմանի», 1896, 400 էջ:
- 5.65. Կիլեսերեան Բ., Հայ=Կիպրոս. Հայ գաղութը եւ ս.Մակար, Անթիլիաս-Լիբանան, տպ.Դպրեանոց կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1936, 16 էջ:
- 5.66. Հակոբյան Պ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակություն, 2003, 492 էջ:
- 5.67. Համբարյան Ա.Ս., Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, «Գիտելիք», 1990, 86 էջ:
- 5.68. Հայ Եղեռնը. իմ վկայութիւններս, թուրքերէն բնագրէն թարգմանեց Արշակ Ս. Շալճեան, Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1925, 104 էջ:
- 5.69. Հացունի վ. Վ. հ., Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ, Վենետիկ-ս.Ղազար, ա. հ., 1930, 201 էջ:
- 5.70. Հետքերով Որբերի Հայոց, Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի մարդասիրական առաքելությունը ըստ Ռոկֆելերի արխիվային կենտրոնի լուսանկարների, Երևան, Նարեկացի արվեստի միություն, 2013, 153 էջ:

- 5.71. Հովհաննիսյան Ա., Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, հեղինակային հրատարակություն, 2018, 218 էջ:
- 5.72. Հովհաննիսյան Է.Գ., Կիարոսի թեմի վերակազմությունը և կիարահայությունը (1920-1940թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան., Երևան, հեղ. հրատ., 2021, 151 էջ:
- 5.73. Հրանդ ծ. վարդապետ, Օսմանեան պետութիւնը եւ հայ. եկեղեցիի անկախութիւնը, յաւելուած Կ. Պատրիարքարանի կանոնագիրը, Կ. Պոլիս, «տպագրութիւն Յ. Ասատուրեան եւ որդի», 1917, 80 էջ:
- 5.74. Ղազարեան Հ. Գ., Յեղասպան թուրքը, Պէյրութ, «Համազգային» հայ մշակութային ընկերութիւն, 1968, 424 էջ:
- 5.75. Մարտիրոսյան Հ., Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919թթ., գիրք Ա, Երևան, «Զանգակ-97» 2016, 244 էջ:
- 5.76. Մելքոնեան եպս. Փ., Յօղումներ եւ ուսումնասիրութիւններ,Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2006, 656 էջ:
- 5.77. Մխիթարեան Խ., Համառօտ պատմութիւն Երուսաղէմի եւ ստորագրութիւն սրբազան տեղեաց, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեան, 1867, 245 էջ:
- 5.78. Մուշեղ եպիսկոպոս. Առաջնորդ Հայոց Ատանայի եւ միացեալ վիճակաց, Հովիւին խրատները ուղղուած Ատանայի ու ամբողջ թեմական ժողովուրդին, Կ. Պոլիս, տպ. «Ազգ»-ի Հ. Մատթեոսեան, 1908, 187 էջ:
- 5.79. Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, տպ. «Ազգ»-ի, 1910, 64 էջ:
- 5.80. Մովսիսեան վրդ. Յ., Հայաստանեայց ատաքելական ս. Եկեղեցւոյ պատմութիւն, ս.Էջմիածին, 2008, 381:
- 5.81. Յուշամատեան Մեծ Եղեռնի, Պէյրութ, տպ.Ատլաս, հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, 1965, 1115 էջ:

- 5.82. Յուշամատեան նուիրում Հաճնոյ հերոսամարտի 75-ամեակին, պատրաստեց Կարպիս Գույումճեան, Աթենք, 1995:
- 5.83. Յուշամատեան Սուրիահայ օգնութեան Խաչի 1919-2009, խմբագիր Անի Ֆիշենկճեան, Հալէպ, 2010, 440 էջ:
- 5.84. Շահխաթունեանց Յ., Ստորագութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, հրատարակութեան պատրաստեց Ա. Տեր-Ստեփանյանը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ ս.Էջմիածնի հրատարակություն, 2014, 560 էջ:
- 5.85. Ոսկերիչեան Ե. Ա., Սուրիական ալպոմ (գրական բաժինով), Հալէպ, տպ. «Արարա», 1929, 180 էջ:
- 5.86. Չազմագճեան Գ. Յ., Տէր, զի բացցին աչք մեր, Կիպրոս, , տպ. «Սեւան», 1957, 16 էջ:
- 5.87. Չամչեանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչեւ 1784 թվականը), Գ հատոր, Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1984, 896 էջ:
- 5.88. Չիլինկիրեան Եպիսկ. Ե., Արծագանք ազգ. զանազան անցուդարձերու. շարք մը լրագրական յօդուածներու եւ նամակներու, Երուսաղեմ, տպ. «Յակոբեանց», 1925, 302 էջ:
- 5.89. Չիլինկիրեան Ե., Արծագանք Բ. Վերյուշեր անցեալէն եւ ազգ. զանազան անցուդարձերու 1900-1918, Պէյրութ, տպագրութիւն «Ուզունեան, Քեահեանեան եւ Տէր Հովհաննէսեան», 1927, 88 էջ:
- 5.90. Պալաքեան Գ. ծ. վրդ., Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեռլինէն դէպի Տէր - Զօր, Ա հատոր, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1922, 429 էջ:
- 5.91. Պապայեան Ե., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Գ, Լոս-Անջելէս, տպ. «Սենթրըլ Թայփսթրինկ» ընկերութիւն, 1994թ., 1151 էջ:
- 5.92. Պարթեայան Ա., Կիլիկիեան արհաւիրքը, Կ.Պոլիս, գրատուն «Նշան Պապիկեան», 1909, 216 էջ:

- 5.93. Պողարեան Գ., Յեղասպան թուրքը. Վկայութիւններ քաղուած՝ հրաշքով փրկուածներու զրոյցներէն, Պէյրութ, ա. հ., 1973, 208 էջ:
- 5.94. Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, Հաճընի հայրենակցական վերաշինութեան միութեան կենտրոնական վարչութիւն, 1942, 857 էջ:
- 5.95. Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը 1409-1921թթ., Երևան, «Հայաստան», 1969, 458 էջ:
- 5.96. Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, «Հայաստան», 1988թ., 480 էջ:
- 5.97. Պողոսյան Ս. Ա., Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.: Հայկական (Արևելյան) լեգեոնը, Երևան, «Քոփի փրինթ», 2023, 372 էջ:
- 5.98. Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, Ուոթըրթաուն, տպ. «Պայքարի», 1965, 415 էջ:
- 5.99. Պրեմձն Է., Կիլիկիա 1919-1920 շրջանին, Պոստոն, տպարան «Պահակի», 1921, 135 էջ:
- 5.100. Սահակ եպիսկոպոս եւ Մեսրոպ վարդապետ, Բաղդատութիւն տպագիր Սոկրատի եւ Երուսաղէմի ձեռագրի, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1897, 15 էջ:
- 5.101. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970, 326 էջ:
- 5.102. Սաալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս.Նշանեան, հ. Ա, Երուսաղէմ, տպ. «ս. Հակոբեանց», 1931, 688 էջ:
- 5.103. Սարաֆեան Գ. Ա., Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1953, 1088 էջ:
- 5.104. Սերոբեան Մ. արքեպիսկոպոս, Բողոքս ֆրանսական հանրապետութեան նախագահին, Իզմիր, ա. տ., 1920, 15 էջ:

- 5.105. Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով. վերլուծումներ հայկական հարցին շուրջ, Գահիրե, տպ. «Նոր Աստղ», 1948, 383 էջ:
- 5.106. Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ, 2009, 529 էջ:
- 5.107. Սիրունի Հ. Ա., Գարեգին պատրիարք Խաչատուրեան: Մենագրություն, Ստանպոլ, «Արաս», 2003, 191 էջ:
- 5.108. Ստեփանյան Ս., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1998, 51 էջ:
- 5.109. Վահան Թեքեան. նամականի, կազմեց, խմբագրեց եւ ծանոթագրեց՝ Աւետիս Գ. Սանճեան, Լոս-Անճելես, հրատարակություն Թեքեան մշակութային միության, 1983, 711 էջ:
- 5.110. Վահան Թեքեանէն մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ, հաւաքեց եւ ծանոթագրեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, տպ. «Այթափրես», 1987, 386 էջ:
- 5.111. Վաչէ Ա., Ինչպէս կորսնցուցինք Կիլիկիան. հերոսամարտներ Այնթապ, Հաճըն, Մարաշ, Տէօրթ-Եոլ, Պէյրութ, տպարան «Սեւան», 1971, 47 էջ:
- 5.112. Վեհապետեան Թ., Լուսարձակ մեր անցեալ եւ ներկայ հանրային կյանքին վրայ, Ներածական 5-րդ գիրքին. Յաւելեալ լրացուցիչ բաժինով, Ընդհ. խորհրդածութեան առիթ մեր հոգեւոր իշխան. եւ ազգ. մարմիններուն, Պէյրութ, «Ատլաս», 1993թ., 96 էջ:
- 5.113. Վիրաբյան Վ., Պողոսյան Ս., Եփրիկյան Ա., Հայկական զինուժը 1914-1920թթ., Երևան, «Լուսակն» հրատարակչություն, 2020, 716 էջ:
- 5.114. Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մեր-

- ծավոր Արևելքում և Անդրկովկասում, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ.Օ. Սահակյանի, Երևան, «Գիտություն», 2008, 121 էջ:
- 5.115. Տելլենեան Հ., Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի. քնական, քաղաքական և տնտեսական, Հալէպ, տպագր. Ա. Ռէր Սահակեան, 1933, 68 էջ:
- 5.116. Տէր Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա. տեղագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1966, 324 էջ:
- 5.117. Տօնապետեան Պ., Ձայն տառապելոց, Փարիզ, տպ. Հ. Բ. Թյորպպեան, 1922, 500 էջ:
- 5.118. Րիֆաթ Մ. Զ., Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իրթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, «ԿՓՀ» 1990, 330 էջ:
- 5.119. Քասունի Ե.Ս.վեր., Լուսաշաւիղ. պատմութիւն Հայ ավետարանական շարժման 1846-1946, Պէյրութ, Լիբանան, տպագր. «Շնորհօքեան», 1947, 603 էջ:
- 5.120. Քելէշեան Մ., Սիս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, տպարան Հայ Ճեմարանի, 1949, 771 էջ:
- 5.121. Քիրքճեան Վ. Մ., Հայկական Կիլիկիա. Ուսումնասիրութիւն մը Կիլիկիոյ Հայկ. թագաւորութեան վրայ, «պանծալի Այաս», Ալեքսանդրեդ, Նիւ Եորք, «Կոչնակ»-ի հրատարակչական ընկերութիւն, 1919, 77 էջ:
- 5.122. Օրմանյան Մ. արք., նախկին պատրիարք, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կոստանդնուպոլիս, հրատարակութիւն Վ. և Հ. Տէր-Ներսէսեան, 1912, 3375 էջ:

- 5.123. Օրմանեան Մ. եպիսկոպոս, առաջնորդ Կարնոյ, Աթոռ Հայաստանեայց, Վաղարշապատ, ի տպարան սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1886≈ՌՅԼԵ, Մայր Աթոռու. Էջմիածնի տպարան, 1972, 87 էջ:
- 5.124. Օրմանեան Մ. արք., Դիտողագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին զննութիւնն ու լուսաբանութիւնը, Երուսաղէմ, տպ. Առաք. Աթոռոյ ս. Յակոբեանց, 1915թ., 48 էջ:
- 5.125. Օրմանեան Մ. արքեպս., Հայկական Երուսաղէմ. նկարագիր աթոռոյ սրբոյ Հակոբեանց, Երուսաղէմ, տպ. «ս. Յակոբեանց», 1931, 207 էջ:
- 5.126. Օրմանեան Մ. արք. նախկին պատրիարք, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, հրատ. Տեր-Ներսիսեան, 1911, 272 էջ:

ռուսերն

- 5.127. Авакян А., Геноцид 1915г.: Механизмы принятия и исполнения решений, Ереван, «Гитутюн», 1999, 110 с.
- 5.128. Записки Джемаль Паши 1913-1919, Тифлис, Издание Закрайкома РКП(б), 1923, 240 с.
- 5.129. Ефендиева Н. З., Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919-1921 гг.), Баку, Издательство Академии наук Азербайджанской ССР, 1966, 158 с.
- 5.130. Кемаль М., Путь Новой Турции 1919-1927, т.1 - Первые шаги национального-освободительного движения 1919, Москва, Государственное издательство литиздат Н.К.И.Д., 1929, 480с., т.3 - Интервенция союзников, греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921, М., Государственное социально-экономическое издательство, 1934, 459 с.

- 5.131. Очерк С. З., Аданские черные дни, Баку, изд. Х. А. Вермишева, 1909. 44 с.

անգլերեն

- 5.132. Aram I, Catholicos Of Cilicia, The Armenian Church. An Introduction to Armenian Christianity, Antelias – Lebanon, Armenian Catholicosate of Cilicia, 2017, 244 p.
- 5.133. Dadoyan Seta B., The Armenian Catholicosate from Cilicia to Antelias, Antelias-Lebanon, 2003, 116 p.
- 5.134. Duckett F. Turkish Atrocities. The Yong Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909, Yerevan, 2009, 146 p.
- 5.135. Rev. Joseph K. Greene D. D., Leavening the Levant, Boston, New-York, Chicago, 1916, 353 p.
- 5.136. Sanjian A. K., The Armenian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1965, 371 p.
- 5.137. The catholicosate of Cilicia. A brief historical survey, Antelias, S. n., 1995 32 p.
- 5.138. The catholicosate of Cilicia. Her place and status in the Armenian church, Antelias, Lebanon, Publ. of the catholicosate of Cilicia, [1961], 39 p.

ֆրանսերեն

- 5.139. Baghdjian K. K., La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens-- dits "abandonnés", Montréal, Québec, 1987, 319 p.
- 5.140. Du Véou Paul, La passion de la Cilicie, 1919-1922, Paris, "Nouvelle edition revue", 1954, 451 p.
- 5.141. Brémond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921, 76 p.

- 5.142. Մ^{գր} Mouchegh [Serobian], Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents, Alexandrie, 1909, 95 p.
- 5.143. Մգր. Mouchegh, « À la veille des nouveaux massacres arméniens », La Revue, Paris, 15 août 1910. (զիրքը չեմ գտել)
- 5.144. Paillarés M., Le Kémalisme devant les Alliés, Paris, 1922, 362p.
- 5.145. Picon J, Le partage du Proche-Orient, Paris, 1938, 382p.
- 5.146. Thorossian H., Histoire de l'Arménie et du peuple arménien, Paris, 1957, 240p.
- 5.147. Redan P., La Cilicie et le problème ottoman. Préface par René Pinon, Paris, 1921, 144p.
- 5.148. Jean-Pierre Alem, L'Arménie, Paris, 1962, 127p.

թուրքերեն

- 5.149. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, 785 s.
- 5.150. Arikoğlu Damar, Hâtıralarım : Millî Mücadele : Çukurova'da Fransız işgali ve kanlı savaşlar, Birinci Büyük Millet Meclisi, yurtta çeşitli isyanlar, Yunanlıların denize dökülmesi, Atatürk'ten hâtıralar, resimler, vesikalar, Tan Gazetesi ve Matbaası, İstanbul, 1961, 374 s.
- 5.151. Danişmend İ.H., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt TAKIM, Cilt 4, İstanbul, 1947, 722s.

6) Գիտական հոդվածներ և ժողովածուներ

հայերեն

- 6.1. Այտընեան Գ., Սահակ Բ կաթող. Կիլիկիոյ. Վեհափառի օրը ի ս. Ղազար, «Բազմավէպ», Վենետիկ-Սուրբ Ղազար, 1920 թ., յովիս:
- 6.2. Ավագյան Գ., Կիլիկիայի հայության 1909թ. կոտորածների արձագանքները, «Վէմ» համահայկական հանդես, 2009թ., թիվ 1(26), ապրիլ-հունիս, էջ 173-182:

- 6.3. «Արաքս». պատկերազարդ հանդես, ս. Պետերբուրգ, 1887, գիրք Ա, նոյեմբեր, էջ 83-87, 185 էջ:
- 6.4. Արզումանեան Զ., դոկտ. ա. քիմյ., Տ.Տ.Սահակ Բ. Խապայեան. կաթողիկոսին վերջին այցն ու Կիլիկիոյ ճակատագիրը 1920-1921, «Պայքար» շաբաթաթերթ, բացառիկ թիւ, 2020թ. օգոստոսի 16, թիվ 33 (188), էջ 34:
- 6.5. Գասպարյան Ռ., Ադանայի 1909թ. կոտորածները, Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, Պատմության ինստիտուտ, 2013, էջ 33-51, 344 էջ:
- 6.6. Գասպարյան Ռ., Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունների հարցի շուրջ, Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, Պատմության ինստիտուտ 2013, էջ 160-176, 344 էջ:
- 6.7. Գասպարյան Ռ., Հայերի ցեղասպանությունը Կիլիկիայում 1915-1916թթ. «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1993թ., թիվ 1 (584) հունվար-մարտ, էջ 41-52:
- 6.8. Զապել Եսայանի նամակները Կիլիկիայից, ԲՀԱ, 1968թ. թիվ 2 (20), էջ 47-53:
- 6.9. Թաշճեան Վ., Դամասկոսէն Հաճըն. Հաճնոյ հերոսամարտի 90 ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ, կազմեց և խմբագրեց Դոկտոր. Անդրանիկ Տազէսեան, Պէյրուի, հրատարակութիւն Հաճընոյ Հայրենակցական միութեան, 2013, 227 էջ:
- 6.10. Թորոսյան Շ., Կիլիկիայի հայությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ԲԵՀ, 1968, թիվ 3, էջ 210-218:
- 6.11. Խառատյան Ա., Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, «ՊԲՀ», 2009թ., թիվ 1, էջ 3-14:
- 6.12. Կէպէնլեան Ս., Կիլիկեան հայ դէմքեր, «Պայքար». հանդէս ազգային, գրական եւ տնտեսական, Պոսթոն, 1931, սեպտեմբեր, էջ 30-38:

- 6.13. Հակոբյան Ն. Ս., Համիդյան կոտորածները և կիլիկիահայությունը 1895-1896թթ., «Յեղասպանագիտական հանդես», տարի 6, 2018թ. թիվ 2, էջ 9-23:
- 6.14. Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909թ. հայկական կոտորածները, «ՊԲՀ» 1988, թիվ 4:
- 6.15. Հարությունյան Հ., Մեծ Եղեռնի տարիներին հայ մանուկների նկատմամբ կիրառված բռնությունները, «Էջմիածին», 2015թ., թիվ 4, ապրիլ, էջ 44-55:
- 6.16. Ղազարոսյան Հ., Տանն Կիլիկիո կաթողոսիկոս Սահակ Բ-ի ազգասիրական գործունեությունը և կիլիկիայայությունը, «Էջմիածին», 1990թ., թիվ Դ, ապրիլ, էջ 56-60, թիվ Ե-Զ-Է, մայիս-հունիս-հուլիս, էջ 93-102:
- 6.17. Ղալթախչյան Տ. Ս., Ադանայի 1909 թ. կոտորածների առաջին արձագանքները արևմտահայ մամուլում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2015, թիվ 1, էջ 3-13:
- 6.18. Ճևահիրճյան Մ., Ամենայն հայոց կաթողիկոսի զինանշանը Հռոմկլա բերդում, «Պայքար», 1997թ., թիվ 2, էջ 41-47:
- 6.19. Մարտիրոսյան Հ. Հ., Կիլիկիայի 1909 թվականի ապրիլի հայկական կոտորածը և երիտասարդ թուրքերի պատասխանատվության հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», V, Թուրքիա, էջ 297-318:
- 6.20. Մինասեան Մ., Անտիպ փաստաթուղթեր 1909ի Անտիոքի հայոց կոտորածին մասին, Բ, «Յեղասպանագիտական հանդես», Երևան 2017, տարի 5, թիվ 2, էջ 48-67:
- 6.21. Մինասեան Մ. Ա., Բերիոյ (Հալէպի) Ազգային առաջնորդարանի գործունէութիւնը Հայոց Յեղասպանութեան տարիներուն (1915-1918), «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923թթ.», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 8-9, 2019, Երևան, «Ոսկան Երևանցի» տպագրատուն-հրատարակչություն, 2020, 440 էջ:

- 6.22. Մուրադյան Հ., Մուսա լեռան դյուցազնամարտը, ԲԵՀ, 1974, թիվ 1 (22), էջ 110-120:
- 6.23. Պարսամյան Ա., Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիթուրքական քաղաքականությունը (1915-1918թթ.), «Ցեղասպանագիտական հանդես» 6, Երևան, 2018, թիվ 1, էջ 71-104:
- 6.24. Պողոսյան Հ. Մ., Առաջին համաշխարհային պատերազմը և Զեյթունի բնակչության տեղահանությունը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1968թ., թիվ 6 (301), հունիս, էջ 29-47:
- 6.25. Սիրունի Հ. Ճ., Օրմանյան և իր ժամանակը, Էջմիածին, 1961թ., Թ., սեպտեմբեր:
- 6.26. Սոյլ վանքը. երեք արձանագրությունք, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1901թ., թիւ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 305-311:
- 6.27. Սրմաքէշխանլեան (Երուխան), Փոքր Ասիոյ մէջէն. նորավէպեր - յօդուածներ, Իսթանպուլ, 2015, 200 էջ:
- 6.28. Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ (պատմական համառոտ ակնարկ), Առանձնատիպ «Էջմիածին» ամսագրի (1959, NN Ը-Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և 1960թ. NN Բ, Գ, Մայր ԱթոռՍուրբ Էջմիածին, 1960:
- 6.29. Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 – 8 նոյեմբեր 1939), «Հասկ», Անթիլիաս-Բեյրութ, 1939թ., նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 146:

ռուսերեն

- 6.30. Блохин В., Между православием и англиканством: Роль религиозно-политического фактора в судьбе киликийских армян-эмигрантов в 1909-1910 гг., ԲՀԱ, 2011թ., թիվ 2 (118), с. 140-143.

- 6.31. Чичуров И. С., Панченко К. А. и др., Антиохская Православная Церковь (Антиохский Патриархат), Православная энциклопедия, Том 2 , Москва, 2001, 752 с.

անգլերեն և ֆրանսերեն

- 6.32. Kaiser H., Resisting Genocide: The Aleppo relief network 1915-1918 հոդվածը «Հայերի փրկության գործը Մերձավր Արևելքում 1915-1923թթ.», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 8-9, 2019, Երևան, «Ոսկան Երևանցի» տպագրատուն-հրատարակչություն, 2020, 440 էջ:
- 6.33. Comte R. de Gontaut-Biron, Comment la France s'est installée en Syrie (1918-1919), Paris, 1923, 73-75p.

7) Հանրագիտարաններ

- 7.1. Հայկական սփյուռք հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2003, 732 էջ:
- 7.2. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1979, 719 էջ:
- 7.3. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 10, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1984, 736 էջ:
- 7.4. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, 1076 էջ:

8) Բառարաններ

- 8.1. Հանրագիտակ բառարան բաղկացած երկու հատորից, հատոր I, Ա-Ն, կազմեց Համբարձում Առաքելյան, Թիֆլիս, տպարան ԷՊՕԽԱ, 1915, 2280 էջ:

- 8.2. Дипломатический словарь в трех томах, т. 2, Москва, 1961, 504 с.
- 8.3. Redhouse Yeni. Türkçe-İngilizce sözlük, New redhouse.Turkish-English dictionary, Istanbul, 1968, 1292 s.

9) Պարբերական մամուլ

- 9.1. «Արարատ» պաշտոնական ամսագիր Հայրապետական աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, ՌՅԼԴ - 1885թ., 1907թ.-ՌՅԾԶ, տարի Խ, 1908թ.-ՌՅԾԶ, տարի ԽԱ:
- 9.2. «Արեւելեան մամուլ», Իզմիր, 1903 թ., 1909 թ.:
- 9.3. «Բազմավէպ», Վենետիկ, 1919 թ.:
- 9.4. «Բանասէր», Պարիս, 1902 թ.:
- 9.5. Բիւզանդիոն, 1908 թ., 1909 թ., 1910 թ., 1911 թ., 1912 թ., 1913 թ., 1914 թ.:
- 9.6. «Զարթօնք», Պէյրութ, 1940 թ., 1952 թ.:
- 9.7. «Կիլիկիա», Ադանա, 1919 թ.:
- 9.8. «Հասկ», Անթիլիաս, 1950 թ.:
- 9.9. «Հայ ծայն», Հալէպ, 1919 թ.:
- 9.10. «Հորիզոն», Թիֆլիս, 1910 թ.:
- 9.11. «Մշակ», Թիֆլիս, 1908 թ.:
- 9.12. «Պայքար» շաբաթաթերթ, բացառիկ թիւ 33 (188), Երեւան, 2020թ.:
- 9.13. «Սիոն» հայ ամսագիր. կրոնական,գրական, բանասիրական, Երուսաղէմ,1928թ., 1929 թ., 1930 թ., 1936 թ.:
- 9.14. «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1919թ.:
- 9.15. «Տարազ», Թիֆլիս, 1909թ.:

10) Համացանցային նյութեր

- 10.1. Թաներ Արչամ, Դա ցեղասպանություն է պարոն վարչապետ, <https://akunq.net/am/?p=20598>:

11) Ատենախոսություններ

- 11.1. Մանվելյան Ս. Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի գործունեությունը 1912-1922 թթ., Ատենախոսություն, Է. 00.01, «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2019:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Աղյուսակ 1

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԸ					
Հ/Հ	Կաթողիկոսական կալվածքներ	Քանակը	Շինությունների տարածքը. մետր քառ.	Դաշտերի տարածքը. «Դյոնիում»	Արժեքը օսմ. ոսկով
1.	Սիս	60	1.315.500	10.361	16.752.000
2.	Ադանա	2	500	-	1.200.000
3.	Մարաշ	20	2.280	22	416.500
4.	Ջիհան	4	500	-	75.000
Ընդհանուր գումարը՝		86	1.318.780	10.383	18.443.500 ¹

¹ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 880:

Աղյուսակ 2

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ		
Հ/Հ	ԹԵՄԵՐ	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿ
ԿԻԼԻԿԻԱ		
1.	Սիս (իր գյուղերով)	10.000
2.	Ատանա (այդ թվում՝ Մերսին, Տարսոն և այլն)	30.000
3.	Հաճըն (իր գյուղերով)	24.000
4.	Հայլեռ (Գյավուր դաղ՝ իր գյուղերով)	12.000
5.	Այնթապ	13.000
6.	Մարաշ (իր գյուղերով)	13.000
7.	Զեյթուն	20.000
8.	Ֆոնուզ	12.000
Ընդհանուր՝		134.000
ՓՈՔՐ ԱՍԻԱ		
9.	Կյուրին (իր գիւղերով)	9.000
10.	Տարենտե	3.000
11.	Տևրիկ	10.000
12.	Մանճըլլըզ	16.000
13.	Մալաթիա	14.000
14.	Ադիաման	6.000
15.	Յոզղատ	35.000
Ընդհանուր՝		93.000
ՍԻՐԻԱ		
16.	Հալեպ (այդ թվում՝ Քիլիս քաղաքը և շրջակայքը)	5.000
17.	Անտիոք (Բեյլան, Ալեքսանդրետ)	7.000
Ընդամենը՝		12.000
18.	Հայ բողոքականներ, հայ կաթոլիկներ և անգլիկան եկեղեցու հետևորդներ	21.000
Ընդհանուր գումարը՝		260.000 ²

² Տե՛ս «Արաքս». պատկերազարդ. հանդես, ս. Պետերբուրգ, 1887, գիրք Ա, նյութեր, էջ 84-85:

Աղյուսակ 3

ԿԻԼԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԵՐՆ ԸՍՏ Մ.ՔԵԼԵՇԵԱՆԻ		
Հ/Հ	Քաղաքներ	Ընդհանուր նկարագրություն
1.	Սիս (Գոզան)	Կաթողիկոսանիստ քաղաք, որի մեջ էին մտնում քաղաքի 7 թաղերը և Գոզանի սանջակը: Այն ուներ 10000 հայ առաքելական, 700 բողոքական բնակիչ և 7 եկեղեցի:
2.	Ադանա	Արքեպիսկոպոսական քաղաք, որի մեջ էին մտնում քաղաքի 162 թաղերը և Ադանայի, Մերսինի, Իջիլի սանջակները: Այն ուներ 30000 հայ առաքելական, 1000 կաթոլիկ, 500 բողոքական բնակիչ և 12 եկեղեցի ³ :
3.	Հաճըն	Եպիսկոպոսանիստ քաղաք, որի մեջ էին մտնում քաղաքի 5 թաղերը և Հաճընի Գազանի շրջանը: Այն ուներ 20000 հայ առաքելական, 1000 կաթոլիկ, 700 բողոքական բնակիչ և 8 եկեղեցի:
4.	Փայաս (Բերեքթթթ)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին մտնում քաղաքի 25 թաղերը, Պերեքթթ դաղի սանջակը (Դյորթ-Յոլ, Օսմանիե, Ամանոս և այլն): Այն ուներ 11000 հայ առաքելական բնակիչ և 11 եկեղեցի:
5.	Հալեպը (Բերիա)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին մտնում քաղաքի 17 թաղերը և Հալեպի, Ալեքսանդրետի և Պելլանի կազանները: Այն ուներ 15000 հայ առաքելական, 5000 կաթոլիկ, 2000 բողոքական բնակիչ և 8 եկեղեցի:
6.	Մարաշ (Գերմանիկ)	Արքեպիսկոպոսական վիճակ, որի մեջ էին մտնում քաղաքի 35 թաղերը և Մարաշի, Ալբիստանի, Բազարճագի կազանները: Այն ուներ 30000 հայ առաքելական, 4000 կաթոլիկ, 3500 բողոքական բնակիչ և 24 եկեղեցի:
7.	Չեյթունը (Ուլնիա)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 18 թաղերը և Չեյթունի, Անտերունի կազանները: Այն ուներ 20000

³ Ըստ Ադանայի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանի տվյալների՝ Ադանայի թեմն ուներ 36152 հայ առաքելական, 1775՝ հայ-կաթոլիկ, և 2969՝ հայ-բողոքական բնակիչ: Տե՛ս **Մուշեղ եպիսկոպոս. Առաջնորդ Հայոց Ատանայի եւ միացեալ վիճակաց**, Հովիվին խրատները ուղղուած Ատանայի ու ամբողջ թեմական ժողովուրդին, Կ. Պոլիս, 1908, էջ 172-174:

		հայ առաքելական, 500 կաթոլիկ և 500 բողոքական բնակիչ և 14 եկեղեցի:
8.	Ֆոնուզը	Վանական թեմ, որի մեջ մտնում էին քաղաքի 6 թաղերը և Ֆոնուզի նահիեն: Այն ուներ 7000 հայ առաքելական բնակիչ և 10 եկեղեցի:
9.	Այնթապ	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 4 թաղերը, Այնթապի և Քիլիսի կազաները: Այն ուներ 30000 հայ առաքելական, 1000 կաթոլիկ և 4000 բողոքական բնակիչ և 6 եկեղեցի:
10.	Անտիոք (Անթեքա=Ան թաքիա)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 16 թաղերը և Այնթաքիայի, Շուլուրի, Սահիունի կազաները: Այն ուներ 1200 հայ առաքելական, 200 կաթոլիկ, 1500 բողոքական բնակիչ և 9 եկեղեցի:
11.	Մալաթիա (Մելիտինե)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 42 թաղերը և Մալաթիայի սանջակը: Այն ուներ 20000 հայ առաքելական, 2000 կաթոլիկ, 1000 բողոքական բնակիչ և 23 եկեղեցի:
12.	Եոզղատ (Եոզղատ)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 46 թաղերը և Եոզղատի սանջակը: Այն ուներ 40000 հայ առաքելական, 1000 բողոքական բնակիչ և 43 եկեղեցի:
13.	Կյուրին (Քյուրին)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 11 թաղերը, Կյուրինի և Ղանդալի կազաները: Այն ուներ 17000 հայ առաքելական, 500 կաթոլիկ և 1000 բողոքական բնակիչ և 26 եկեղեցի:
14.	Տևրիկ (Տեփրիկե)	Եպիսկոպոսական վիճակ, որի մեջ մտնում էին քաղաքի 11 թաղերը և Տևրիկի կազան: Այն ուներ 11000 հայ առաքելական, 300 բողոքական բնակիչ և 19 եկեղեցի:
15.	Տարանտիա (Տարենտե)	Վանական թեմ, որի մեջ մտնում էին քաղաքի երկու թաղերը և Տարենտեի կազան: Այն ուներ 7000 հայ առաքելական բնակիչ և 4 եկեղեցի:

Աղյուսակ 4

ԿԻԼԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԵՐՆ ԸՍՏ Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆԻ						
Հ/Հ	Քաղաք և շրջակայք	Թաղ	Եկեղեցի	Բնակչություն		
				Հայ առաքելական	Կաթոլիկ	Բողոքական
1.	Ադանա	12	8	30.000	750	250
2.	Մերսին, Տարսոն	4	3	20.000	250	150
3.	Սիս	10	7	9.000	-	500
4.	Հաճըն	5	8	20.000	1.000	700
5.	Փայաս (Դյորթ-Յոլ)	25	11	11.000	-	-
6.	Իսկենտերուն , Բեյլան	17	8	15.000	5.000	2.000
7.	Մարաշ, Ալպսթ, Փազարճըզ	35	25	30.000	4000	3.500
8.	Զեյթուն, Էնտերուն	18	14	20.000	500	500
9.	Ֆոնուզ	6	10	7.000	-	-
10.	Այնթապ, Քիլիս	4	6	30.000	1.000	4.000
11.	Անտիոք, Սուետիա	16	9	12.000	2.000	1.500
12.	Մալաթիա	42	23	20.000	2.000	1.000
13.	Յոզղատ	46	43	40.000	-	1.000
14.	Կյուրիկ	11	26	17.000	500	1000
15.	Տևրիկ	14	19	11.000	-	300
16.	Տերենտե	2	4	7.000	-	-
Ընդհանուր գումարը՝		267	224	299.000	17.000	16.400

Աղյուսակ 5

ՍՍԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻՆ		
Հ/Հ	Եկեղեցիներ	Ընդհանուր նկարագրություն
1.	Հին Վանք	Այն ուներ մի քանի անուններ, որոնցից մեկն ըստ Ստ. Օրբելյանի կոչվում էր Գլխաբաց ⁴ , որը XX դ. սկզբին հայտնի էր Հին կաթողիկոսարան անունով ⁵ : 1292թ. Հռոմկլայի գրավումից և Ստեփանոս կաթողիկոսի գերությունից հետո այստեղ 1294թ. կաթողիկոս դարձավ Գրիգոր Անավազեցին (Հերում II-ի օրոք): 1734թ. Ղուկաս կաթողիկոս Աջապահյան Օսմանյան վեզիրի թույլտվությամբ այն վերանորոգեց և վերանվանեց ս. Աստվածածին եկեղեցի: Այնտեղ տարին մեկ անգամ «Յղութին Ս. Աստուածածնի ի յԱննայե» տոնին մատուցվում էր հանդիսավոր պատարագ, որից հետո բաժանվում էր մատաղ ⁶ : Հին վանքը կոչվում էր նաև ս. Նշան, քանի որ այնտեղ էին պահվում Կիլիկիայի նշանավոր աջերը և խաչերը: 1810թ. Կիրակոս Ա-ի օրոք կաթողիկոսարանը տեղափոխվեց արքայական պալատի մոտ, որտեղ գտնվող ս. Սուփիայի եկեղեցին վերանորոգվեց և վերանվանվեց ս. Գրիգոր Լուսավորիչ և դարձավ հայրապետանոց: Ի տարբերություն Հին վանքի, այն կոչվում էր Նոր Վանք, կամ ս. Երրորդություն՝ շնորհիվ փառավոր խաչակալի ⁷ :
2.	ս. Աննա եկեղեցին	Գտնվում էր Հին Վանքի մոտ՝ սպիտակ մարմարով կառուցված ⁸ :

⁴ Այն գլխաբաց էր կոչվում իր գմբեթի պատուհանների պատճառով: Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, էջ 347, 351:

⁵ Տե՛ս **Օրմանեան Մ. արք.**, **Նախկին պատրիարք**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, էջ 1719:

⁶ Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 164:

⁷ Տե՛ս անդ, էջ 164:

⁸ Սփ կաթողիկոսության միաբան Եղիշե եպիսկոպոս Կարոյանը ս. Աննան նույնականացնում է Չանլըզի հետ, որը կառուցվել էր ս. Սուփիայի տեղում և XX

3.	ս. Էջմիածին կամ Կաթողիկե եկեղեցի	Իրականում այդ անունով առանձին եկեղեցի չկար: Այն Նոր Վանքի խորանի ծախակողմյան մատուռն էր, որը կառուցվել էր Կոնստանդին Պալի որդի Վասակի կողմից ⁹ և որտեղ իրենց քառասունքն էին անցնում նորընծա քահանաները: Լոհման Էդնստը նշում է, որ մատուռը զարդարված էր Կիլիկիայի տարբեր Սսից, Լամբրոնից, Մոպսուեստից, Անավարզայից բերված բազմաթիվ պատկերներով, երեք արձանագրություններով և մանրանկարչական զարդերով ¹⁰ :
4.	ս. Աստվածածին	Եռախորան և պարսպապատ եկեղեցի էր, որը հավանաբար կառուցվել էր Լևոն Բ-ի կողմից, որտեղ էլ նա թաղվել էր: Առաջին անգամ նորոգվել է 1852 թ., իսկ երկրորդ անգամ 1907 թ. ¹¹ Ժողովրդական հանգանակությամբ: Մինչև 1915 թ. եկեղեցու մեջ պահպանվում էր մարմարե մի քառապյուն (20 սմ տրամագծով և 250 սմ բարձրությամբ), որը երաժշտության ժամանակ պառկեցնում էին գետնին, և ըստ ավանդության՝ անձրև էր տեղում ¹¹ : Հետագայում եկեղեցին ծառայում էր որպես իգական վարժարան:
5.	ս. Մարիամի, Մարիանեի կամ ս. Կույսի եկեղեցի	Կառուցվել է հավանաբար Զաբել թագուհու կողմից գեղեցիկ մի վայրում, որովհետև «ի հարաւ նայի յէջմիածին և ընդ արեւելս ի Ս. Սոֆի»: Ըստ ավանդության՝ Զաբելը բաղնիքից վերադառնալու ժամանակ դիվահարվում է և խորունկ հավատքով բացականչում՝ «Օգնեա ինձ Ս. Մարին»: Նա նույն վայրկյանին բժշկվում է և նույն տեղում կառուցում է եկեղեցի, որի վրա եղել է ս.Կույսի պատկերը, վիշապը և կառուցման թվականը: Բացի այդ, նա նշանակում է քահանա, որի հաջորդները՝ Ստեփեկանց

դարասկզբին պահպանվել էր ընդամենը երկու սյուն: Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 164:

⁹ Տե՛ս **Ալիշան վ. Ղ. հ.Մ.**, Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 223:

¹⁰ Տե՛ս Սսոյ վանքը. երեք արձանագրութիւնք, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1901թ., թիւ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 306:

¹¹ Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 166:

		սերունդը հասան մինչև 1634-1635 թթ. ¹² : Եկեղեցին կործանվել է երկրաշարժից:
6.	ս. Սոփիա	Սսի մայր եկեղեցին էր, որը կառուցվել էր Հեթում Ա-ի կողմից 1226 թ. Հուստինիանոս I կայսեր կողմից Կ.Պոլսում կառուցված Այա Սոփիայի նմանությամբ և հատակագծով ¹³ : Հեթում պատմիչն այն կոչում է «Սագաշեն» ¹⁴ , իսկ Վահրամ Բաբունին՝ «Հրաշագեղ»: 1266թ. եկեղեցին հրկիզվել և ապա նորոգվել է: Կիրակոս Ա-ն ս. Սոփիայի հարևանությամբ կառուցում է Մայրավանքը: XX դարասկզբին այն ավերակ էր, և մնացել էին տաճարի երկու անկյունները (20 մ. բարձրությամբ և 5-6 մ. Հաստությամբ), որը ոմանց պատկերացմամբ արքայական պալատի բեկորներն էին, իսկ նոր եկեղեցին՝ «Չանլը (Չանլըզ) Քիլիսեն» կառուցվել էր նախկին ս. Սոփիայի տեղում:
7.	ս. Սարգիս	Սսի հին եկեղեցիներից մեկն է, որը կառուցվել էր Հեթում Ա-ի օրոք և ուներ կլմինդրաձաձկ փայտաշեն առաստաղ: Ս. Սարգսի տոնին մատուցվում էր պատարագ և մատաղ էր բաժանվում: Վանքին կից գործում էր արական և իգական դպրոց: Եկեղեցու տարածքում էին թաղված Կիլիկիո նշանավոր ազգային գործիչներ՝ Ֆերմանյանները և Նալբանդյանները ¹⁵ :
8.	ս. Հռիփսիմեն կամ ս.Կոյսի եկեղեցի	Տեղը հայտնի չէր, սակայն այն հիշատակվում է 1269 թ. արձաթե մասնատուփի մի հիշատակարանում:
9.	ս. Հակոբ	Ավերակ եկեղեցի էր, որը կանգուն էր մինչև 1914 թ.: Գտնվել է Սիսի կամրջին ծախակողմյան հատվածում, բերդի ստորոտում: Այստեղ 1270 թ. գրվել է Ավետարան: Երուսաղեմ ուխտի մեկնողները պարտադիր կանգ էին առնում եկեղեցում՝ աղոթելու:

¹² Տե՛ս Ալիշան հ.Ղ. վ. Մ., Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 223:

¹³ Տե՛ս անդ., էջ 222:

¹⁴ Հեթում պատմիչ, Թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, ի ձեռն հ.Մկրտիչ արթուակալ վարդապետի Ավգերեան, ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, յամին 1951 Ռ-Ն, էջ 87:

¹⁵ Տե՛ս Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 167:

10.	ս. Հոգի կամ Հոգին Սուրբ	Տեղը հայտնի չէ:
11.	ս. Նշան	-
12.	Ջորավարաց եկեղեցի	Գտնվում էր բերդի հարավային պարսպի վրա՝ նախատեսված բերդի բնակչության կամ զինվորների համար:
13.	ս. Սիմեոն	Խորանաձև ավերակ եկեղեցի էր, որը գտնվում էր քաղաքից դուրս և հայտնի էր Չամուրտան քիլիսե անվամբ: Եկեղեցին վերանորոգվել է 1280 թ. Լևոն Գ-ի օրոք, իսկ Տիրատուր քահանան այստեղ մանրուսում է գրել:
14.	ս. Նիկողայոս	Ավերակ մատուռ էր, որը հիշատակվում է 1374 թ. Ձորավանքի ս. Նշանի և Վանկո ս. Նշանի հետ: Ջրօրհնեք կատարելու ժամանակ ժողովուրդը նախ այնտեղ էր աղոթում, իսկ հետո՝ գետեզերքի բարձրադիր ժայռի վրա՝ «Գըզլար Օյնաղը» կոչվող վայրում:
15.	ս. Ստեփանոս	Գտնվում էր քաղաքից դուրս: Կիսավեր խորանով մի մատուռ էր, որ կառուցվել էր Սմբատ Գունդստաբլի կողմից: Կարծիք կար, որ այնտեղ էր գտնվել գանձարանը ¹⁶ :
16.	ս. Մերկերիոս	Քաղաքից դուրս միախորան ավերակ եկեղեցի էր, որտեղ աղոթելու էին գնում ավագ ուրբաթ օրը:
17.	ս. Պողոս-Պետրոս	Պարսպապատ միախորան մատուռ էր քաղաքի կենտրոնում: Պողոս-Պետրոսի տոնախմբության օրը մատուցվում էր պատարագ և մատաղ էր բաժանվում:
18.	ս. Մինաս	Կանոնավոր խորանով և պարսպապատած եկեղեցի էր, որ գտնվում էր Մայրավանքի մոտ և համարվում էր սսեցիների սիրելի մատուռներից մեկը: Հնուց ի վեր եկեղեցու տարածքը նախատեսված էր որպես երեխաների գերեզմանոց, որի համար էլ յուրաքանչյուր շաբաթ օր կատարվում էր զոհաբերություն և մատաղ: ս. Մինասի տոնին մատուցվում էր պատարագ, իսկ Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը, որ կոչվում էր «հատիկների շաբաթ». վերջին 5-6 ամսվա ընթացքում ամուսնացած նորահարսները թուրքական «զարի» (սև գլխաշոր – Վ. Հ.) փոխարեն հարսանեկան սպիտակ «զարով» պարուրված

¹⁶ Տե՛ս Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 168:

		գալիս էին ուխտի: Բացի այդ, ս. Մինասը կորսված իրեղենները «գտնող» սուրբն էր ¹⁷ :
19.	Սըվասը (ս. Վասիլ?)	Մայրավանքի մոտ գտնվող ավերակ եկեղեցի էր՝ իր հունարեն արձանագրությամբ: Ստեցիները կարծում էին, որ այն հունական վանք էր, իսկ Ղ. Ալիշանը կարծում է, որ այն կառուցվել էր Լևոն Բ-ի կողմից, որը XVII դ. կեսերին ավերվել էր ¹⁸ :
20.	Սյուլլոք (Saint Lus?)	Եղել է լատինական եկեղեցի ս. Ղուկաս անունով: Սակայն ենթադրվում էր, որ այն եղել էր հայկական եկեղեցի ս. Կարապետ անունով:
21.	Հայր Աբրահամ	Կես խորանով ուխտատեղի էր, որի մասին պատմական և ավանդական տեղեկություններ չեն պահպանվել: Շրջակա թուրքերը պատմում էին, որ երազում հաճախ էին տեսնվում եկեղեցու սրբի հետ ¹⁹ :
22.	ս. Աթանագինես	Գտնվելու վայրն անհայտ էր: Ենթադրվում է, որ այն Սսի 1342 թ. եկեղեցական ժողովի մեջ հիշատակված «Saneta Etennacine» եկեղեցին է, որը Մ. Չամչյանի կարծիքով՝ կառուցել է Հեթումը և կոչվել է Հեթումաշեն ²⁰ :
23.	Մայր Եկեղեցի	Գտնվելու վայրն անձանոթ էր: Կառուցվել է Կոստանդին Պալիեֆի որդի Վասիլի կողմից:
24.	ս. Բարսեղ	Գտնվելու վայրն անձանոթ է: Կառուցվել է Լևոն Բ-ի կողմից, սակայն ի թիվս այլ եկեղեցիների ավարտվել է XVII դ. կեսերին:
25.	Հանդիպակաց ժամ (Ամաճքը ժամ)	Անանուն քարայր-մատուռը գտնվել է Սսի արևելքում, մի բլրի գագաթին: Մեծ Պահքի առաջին հինգշաբթի օրը ստեցիները այնտեղ մոմ էին վառում, աղոթում և ճաշակում ագապե ²¹ :
26.	ս. Դավիթ Աստվածահայր	Գտնվելու վայրն անհայտ է: Հայտնի է միայն այն, որ այնտեղ 1291 թ. գտնվել է Ավետարան՝ գրված ոմն Միքայելի կողմից:

¹⁷ Տե՛ս Նոյն տեղում:

¹⁸ Տե՛ս **Ալիշան հ. Ղ. հ. Մ.**, Սիսուան. համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 224:

¹⁹ Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 168:

²⁰ Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252:

²¹ Տե՛ս **Քելեշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 169:

27.	ս. Հովհաննես	Գտնվելու վայրն անձանոթ է, սակայն հայտնի է, որ մինչև XVI դ. այդտեղ են պահվել կաթողիկոսության չորս Աջերը (Գր. Լուսավորչի, Սեդրետրոսի, Նիկողայոս Աքանչելագործի և Պարսամ Ճգնավորի):
28.	Չեորթին Ժամ	Գտնվել է քաղաքի փողը աշտարակի մոտ քարայրում:
29.	ս. Գևորգ (Արքայակաղին վանքը)	Այստեղ է գրվել Հովհաննու Ավետարանի մեկնության թարգմանությունը (1180 թ.) և Ն. Լամբրոնացու խորհրդածությունները (1165 թ.): Այս վանքում է թաղվել Գր. Մուսաբեկյանը:
30.	Դրազարկ	Սսի թեմի արքեպիսկոպոսական և արքայական կալվածքն էր և աթոռանիստը: Դրազարկը եղել է Կիլիկիայի ամենահին վանքը (1105 թ.), որը կոչվել է Փոսի կամ Ավագ վանք : Այն կոչվում էր ս.Աստվածածին կամ Փոսի անապատ և իր հեղինակությամբ երկրորդն էր Սսից հետո, իսկ նրա արքեպիսկոպոսները արքայական քարտուղարներն էին : Դրազարկի տեղի մասին ստույգ նկարագրություն չկա, միայն Ղ. Ինճիճյանն է որոշ ստուգությամբ գրում. «Դրազարկ անապատ եկեղեցի յանտառախիտ ճորամիջի, հեռի ի Սոյ իբրև միօրեայ, յարեմտեան կողմն նորա, իսկ յԱնաարգայ իբրեւ երկօրեայ, անցանէ առա նովաւ և առու. երևին անդէն նաև աւերակքը ինչ նախնի հոչակաւոր մենաստանին... Լինի ի Դրազարկ ուրկումիլ գունտվ դեղին և կաղին առատ, որպէս և ի Սիս» : Թորոս Ա-ն ԺԲ դարի սկզբին նորոգել է վանքը Գևորգ Մեղրիկ Վասպուրականցու (1045-1114) և Կիրակոս Գիտնականի օժանդակությամբ և հետագայում վերածել Ռուբինյան հարստության արքունի դամբարանի և ուսումնական կենտրոնի: Գևորգ Մեղրիկն ու Կիրակոս Գիտնականը, որոնք եղել են Գրիգոր Վկայասերի աշակերտներն ու գործակիցները Դրազարկում ծավալել են մատենագիտական գործունեություն, հավաքել ճգնավորական խստակեցությամբ միաբանություն և մշակել վանական կանոնադրություն: Դրազարկ վանքը հաճախ հիշվում է անապատ, ճգնավորանոց, ինչպես նաև մեծ, սուրբ, հրեշտակաբնակ, ականավոր, հոչակավոր, գերահոչակ: Գևորգ Մեղրիկն ու Կիրակոս Գիտնականը թաղվել են Դրազարկում, որի պատճառով էլ վանքը կոչվել է «գերեզմանատուն սուրբ Վարդապետացն»: Այստեղ են թաղվել

		նաև մի շարք իշխաններ, թագավորներ, հայրապետներ և վարդապետներ: Հայրապետներից այնտեղ են թաղված Գրիգոր Տղան (1173-1193), Գրիգոր Քարավեժը (1193-1194), Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսը (1203-1221), Սսի արքեպիսկոպոս Բարսեղը (Հեթում Բ-ի եղբայրը՝ 1275), Կոստանդին Ա Բարձրաբերդցին՝ (1264), Կոստանդին Դ Լամբրոնացին (1323-1326), իշխաններից՝ Թորոս Ա. (1129), Թորոս Բ. (1169), Թորոս Գ. (1299), Ռուբեն Բ (Լևոն Բ-ի եղբայրը՝ 1186), թագավորներից՝ Հեթում Ա (նույն ինքը՝ Մակար վրդ.՝ 1270), Զաքեյ թագուհին, Ստեփանեն (Հեթում Բ-ի որդին), Ալինսի զորավարը (Օշինի եղբայրը՝ 1317), Օշինը (1320), Անիի թուրք Ամիրայի որդին Փաղունը (1130 թ., որն ընդունել էր քրիստոնեություն և 15 տարի ճգնավորական կյանք էր վարել Դրազարկում) և ուրիշներ : Մեզ անհայտ է թեմի և վանքի հիմնադրման թվականը: Ամենայն հավանականությամբ թեմը ստեղծվել է ԺԲ դարի սկզբին, իսկ վանքը գոյություն է ունեցել ավելի վաղ, որովհետև Թորոս Ա. նորոգել է այն և ոչ թե կառուցել: Առաջին հիշատակությունը Գևորգ Մեղրիկի մասին է (1113 թ.)՝ որպես Սսի և Դրազարկի առաջնորդ : Վերջին հիշատակությունը թեմի և առաջնորդի վերաբերյալ 1375 թվականին է, որտեղ հիշվում է Բարսեղը, որն այդ թվականին մահացել է :
--	--	--

Աղյուսակ 6

Հ/Հ	Դպրոցի անվանումը և թիվը	Դպրոցների քանակ	Աշակերտների քանակ	Տնօրենների քանակ	Ուսուցիչների քանակ
Հայ Առաքելական Եկեղեցի					
1.	Աբգարյան	2	1110	4	35
2.	Աշխենյան	2	303	2	14
3.	Հռիփսիմյան	1	92	1	5
4.	Արամյան	1	300	1	9
5.	Խրիմյան	1	110	1	6
6.	Նոր Թաղ	1	250	1	12
Ընդհանուր՝		8			
Երկրորդական վարժարաններ					
1.	Կիլիկյան Կեղորոնական	1	120	1	8
2.	Կիլիկյան Երկրորային	1	76	1	5
3.	Հայ ավետարանական դպրոցներ	3	524	4	14
4.	Հայ կաթոլիկ դպրոցներ	2	430	3	13
Ընդհանուր՝		15	3297	19	121
Բաղդատություն					
1.	Միսիոներական դպրոցներ	6	711	5	43
2.	Այլ քրիստոնյա համայնքների դպրոցներ	6	655	4	20
3.	Թուրքական դպրոցներ	6	687	6	49
Ընդհանուր՝		18	2053	15	112
Ընդհ. Գումարը՝		33	5350	34	233 ²²

²² Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն», էջ 653-666, 684-706:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Աթոռ Կիլիկո կաթողիկոսների ²³		
Հ/Հ	Կաթողիկոսներ	Աթոռակալման տարեթվեր
4.	Կարապետ Եվդոկացի	1447-1477
5.	Ստեփանոս Սարաճորեցի	1478-1488
6.	Հովհաննես Անտիոքացի	1488-1515
7.	Հովհաննես Թլկուրանցի Բանաստեղծ	1515-1525
8.	Հովհաննես Քիլիսցի Կայծակ	1525-1539
9.	Սիմոն Ուլնեցի	1539-1545
10.	Ղազար Ուլնեցի	1545-1547
11.	Թորոս Սսեցի Մայսենց	1548-1553
12.	Խաչատուր Ձորիկ	1553-1560
13.	Խաչիկ Ուլնեցի Երաժիշտ	1560-1584
14.	Ազարիա Ջուղայեցի	1584-1602
15.	Տիրատուր գիտնական ու Հովհաննես	1588-1602
16.	Պետրոս Կարկառեցի	1602-1609
17.	Հովհաննես Այնթապցի Բարեբարո Պատմագիր	1609-1622
18.	Մինաս Կարնեցի	1622-1636
19.	Ներսես Սեբաստացի կամ Արևելցի	1636-1643
20.	Թորոս Սսեցի	1643-1658
21.	Խաչատուր Սեբաստացի	1658-1663
22.	Գրիգոր Ադանացի Պիծակ	1663-1669
23.	Դավիթ Բերիացի կամ Կատակոեցի	1669-1673
24.	Սահակ Մեխանենճի	1673-1683
25.	Աթոռը թափուր	8 տարի
26.	Աստուածատուր Սասունցի Նարին	1691-1694
27.	Մատթեոս Կեսարացի Սարը	1694-1701
28.	Պետրոս Բերիացի	1701-1705
29.	Հովհան Հաճնցի	1705-1721
30.	Գրիգոր Կեսարացի Ուղուրլու	1721-1726
31.	Հովհաննես Հաճնցի Տեր Ադամ	1726-1730

²³ Ըստ «1903, Ընդարձակ օրացոց Ս. Փրկչեան հիանդանոցի հայոց. տոմար, զանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ»-ի, էջ 238-240:

32.	Ղուկաս Աջապահյանց	1730-1734
33.	Միքայել Աջապահյանց	1734-1758
34.	Գաբրիել Աջապահյանց	1758-1770
35.	Եփրեմ Աջապահյանց Պատմագիր	1771-1785
36.	Թորոս Աջապահյանց	1785-1796
37.	Կիրակոս Աջապահյանց Մեծ	1796-1825
38.	Եփրեմ Աջապահյանց	1825 - 1837
39.	Միքայել Սեւցի	1833-1853
40.	Կիրակոս Աջապահյանց	1853-1866
41.	Շփոթության պատճառով աթոռը թափուր մնաց 5 տարի	
42.	Մկրտիչ Քեյֆսիզյան Մարաշցի	1871-1894
43.	Աթոռը թափուր մնաց 8 տարի և երկու ընտրությունները մնացին ապարդյուն	

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Գավազանագիրք Կիլիկիո կաթողիկոսության²⁴		
Ա. Ընդհանուր կաթողիկոսներ		
Հ/Հ	Կաթողիկոսներ	Աթոռակալման տարեթվեր
1.	Գրիգոր Բ. Վկայասեր, Արեգի վանք	1066-1105
2.	Բարսեղ Անեցի, Շուղր	1105-1113
3.	Գրիգոր Պահլավունի, Ծովք և Հոռմկլա	1113-1166
4.	Ներսես Շնորհալի, Հոռմկլա	1166-1173
5.	Գրիգոր Դ. Տգա Պահլավունի, Հոռմկլա	1173-1193
6.	Գրիգոր Ե. Քարավեժ, Հոռմկլա	1193-1194
7.	Գրիգոր Զ. Ապիրատ, Հոռմկլա	1194-1203
8.	Հովհաննես Մեծաբարո, Հոռմկլա	1203-1221
9.	Կոստանդին Ա. Բարձրբերդցի, Հոռմկլա	1221-1267
10.	Հակոբ Ա. Կլայեցի, Հոռմկլա	1268-1286
11.	Կոստանդին Բ. Կառուկեցի, Հոռմկլա	1286-1289
12.	Ստեփաննոս Հոռմկլայեցի, Հոռմկլա	1290-1292
13.	Գրիգոր Է. Անավարզեցի, Սիս	1293-1307
14.	Կոստանդին Գ. Կեսարացի, Սիս	1307-1322
15.	Կոստանդին Դ. Լամբորնացի, Սիս	1322-1326
16.	Հակոբ Բ. Սսեցի, Սիս	1326-1341
17.	Մխիթար Գոնեցի, Սիս	1341-1355
18.	Մեսրոպ Արտազեցի, Սիս	1360-1372
19.	Կոստանդին Ե. Սսեցի, Սիս	1372-1374
20.	Պողոս Ա. Անեցի, Սիս	1374-1382
21.	Թեոդորոս Բ. Կիլիկեցի, Սիս	1382-1392
22.	Կարապետ Ա. Կեղեցի, Սիս	1393-1404
23.	Հակոբ Գ. Սսեցի, Սիս	1404-1411
24.	Գրիգոր Ը. Խանձողատ, Սիս	1411-1418
25.	Պողոս Գ. Գառնեցի, Սիս	1418-1430
26.	Կոստանդին Զ. Վահկացի, Սիս	1430-1439
Բ. Մասնավոր կաթողիկոսներ		
1.	Գրիգոր Մուսաբեկյանց	1441-1450
2.	Կարապետ Եվդոկիացի	1446-1477

²⁴ Ըստ Մ. Քելեշյանի, նշվ աշխ., էջ 237-238:

3.	Ստեփանոս Սարաճորեցի	1475-1483
4.	Հովհաննես Անտիոքացի	1483-1488
5.	Հովհաննես Թլկուրանցի	1489-1525
6.	Հովհաննես Գ. Քիլիսեցի (Կայծակ)	1525-1539
7.	Սիմոն Զեյթունցի (Ուլնեցի)	1539-1545
8.	Ղազար Զեյթունցի (Ուլնեցի)	1545-1547
9.	Թորոս Սիսեցի (Մայսենց)	1548-1553
10.	Զախատուր Ձորիկ	1553-1558/60
11.	Խաչատուր Բ. Զեյթունցի (Ուլնեցի)	1560-1584
12.	Ազարիա Ա. Զուղայեցի	1584-1601/02
13.	Պետրոս Ա. Կարկառեցի	1602-1608/09
14.	Հովհաննես Այնթապցի (Բարեբարո), Աթոռակից	1602-1621/22
15.	Մինաս Կարնեցի	1621-1632
16.	Սիմեոն Բ. Սեբաստացի	1633-1648
17.	Ներսես Սեբաստացի	1648-1654
18.	Թորոս Բ. Սեբաստացի	1654-1657
19.	Խաչատուր Սեբաստացի	1657-1677
20.	Սահակ Ա. (Մելիսանեցի)	1677-1683
21.	Ազարիա Բ. Կարկառեցի	1683-1686
22.	Գրիգոր Բ. Աղանացի	1686-1695
23.	Աստվածատուր Սասունցի	1695-1703
24.	Մատթեոս Կեսարացի	1703-1705
25.	Հովհաննես Հաճընցի	1705-1721
26.	Գրիգոր Գ. Կեսարացի	1721-1729
27.	Հովհաննես Զ. Հաճընցի	1729-1731
28.	Ղուկաս Սիսեցի Աջապահյան	1731-1737
29.	Միքայել Ա. Աջապահյան	1737-1758
30.	Գաբրիել Աջապահյան	1758-1770
31.	Եփրեմ Ա. Աջապահյան	1771-1784
32.	Թորոս Գ. Աջապահյան	1784-1796
33.	Կիրակոս Մեծ Աջապահյան	1797-1822
34.	Եփրեմ Բ. Աջապահյան	1823-1833
35.	Միքայել Բ. Աջապահյան	1833-1855
36.	Կիրակոս Բ. Աջապահյան	1855-1866
37.	Մկրտիչ Քեյֆսիզյան	1871-1894
38.	Սահակ Բ. Խապայան	1902-1939
39.	Բաբգեն Ա. Աթոռակից	1931-1936

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսներ ²⁵		
Հ/Հ	Կաթողիկոսներ	Աթոռակալման տարեթվեր
1.	Տ. Գրիգոր Ա. Մուսաբեկյանց	1441-1450/51?
2.	Տ. Կարապետ Ա. Եվդոկացի	1446-1477
3.	Տ. Ստեփաննոս Ա. Սարաձորցի	1477-1488
4.	Տ. Հովհաննես Ա. Անտիոքցի	1488-1489
5.	Տ. Հովհաննես Բ. Թվկուրանցի	1489-1525
6.	Տ. Հովհաննես Գ. Քիլիսցի (Կայծակն, Կայծառ)	1525-1539
7.	Տ. Սիմեոն Ա. Զեթունցի	1539-1545
8.	Տ. Ղազար Ա. Զեթունցի	1545-1547
9.	Տ. Թորոս Ա. Սսեցի (Մայսեց)	1548-1550
10.	Տ. Խաչատուր Ա. Չորիկ	1551-1560
11.	Տ. Խաչատուր Բ. Զեթունցի (Խաչիկ Ուլնեցի, Երաժիշտ)	1560-1584
12.	Տ. Ազարիա Ա. Զուղայեցի	1584-1601
13.	Տ. Հովհաննես Ա. Այնթապցի	1601-1621
14.	Տ. Մինաս Ա. Սսեցի (Կարնեցի, Քացախ)	1621-1632
15.	Տ. Սիմեոն Բ. Սեբաստացի	1633-1648
16.	Տ. Ներսես Ա. Սեբաստացի	1648-1654
17.	Տ. Թորոս Բ. Սեբաստացի	1655-1657
18.	Տ. Խաչատուր Գ. Սեբաստացի (Մինտերճի)	1657-1674
19.	Տ. Սահակ Ա. Քիլիսցի (Մելխանեճի)	1674-1686
20.	Տ. Գրիգոր Ա. Աղանացի (Պիծակն, Բ. Կյուլեսեբյանի մոտ՝ Գրիգոր Բ. Աղանացի)	1686-1693
21.	Տ. Աստվածատուր Ա. Սասունցի (Նարին)	1693-1694
22.	Տ. Մատթեոս Ա. Կեսարացի (Սարի)	1694-1705
23.	Տ. Հովհաննես Ե. Հաճընցի	1705-1721

²⁵ Ըստ **3. վարդապետ Մովսիսեանի**, Հայաստանեայց առաքելական ս. Եկեղեցւոյ պատմութիւն, ս.Էջմիածին, 2008, էջ 399-400:

24.	Տ. Գրիգոր Բ. Կեսարացի (Ուղուրլու, Բ. Կյուլեսերյանի մոտ՝ Գրիգոր Գ. Կեսարացի)	1721-1729
25.	Տ. Հովհաննես Զ. Հաճընցի (Տեր Ադամ)	1729-1733
26.	Տ. Ղուկաս Ա. Աջապահյան (Աջապահ, Աջապան, Սսեցի)	1733-1737
27.	Տ. Միքայել Ա. Աջապահյան (Սսեցի)	1737-1758
28.	Տ. Գաբրիել Ա. Աջապահյան (Սսեցի)	1758-1770
29.	Տ. Եփրեմ Ա. Աջապահյան (Սսեցի)	1771-1784
30.	Թեոդորոս Ա. Աջապահյան (Սսեցի, այլ ցանկերում՝ Թորոս Գ.)	1784-1796
31.	Տ. Կիրակոս Ա. Աջապահյան (Սսեցի, Մեծն, Մեծագործ)	1797-1822
32.	Տ. Եփրեմ Բ. Աջապահյան (Սսեցի, Տեր-Մանվելյան)	1823-1831
33.	Տ. Միքայել Բ. Աջապահյան (Սսեցի, Ղուկասյան)	1832-1855
34.	Տ. Կիրակոս Բ. Աջապահյան (Սսեցի)	1855-1865
35.	Տ. Մկրտիչ Ա. Քեյֆսիզյան (Մարաշցի)	1871-1894

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Կիլիկիո կաթողիկոսներ ²⁶		
Հ/Հ	Կաթողիկոսներ	Աթոռակալման տարեթվեր
1.	Գրիգոր Մուսաբեկեան	1439-1446
2.	Կարապետ Եղոկացի	1446-1478
3.	Ստեփանոս Սարաձորեցի	1476-1483
4.	Յովհաննէս Ա. Անտիոքցի	1488-1489
5.	Յովհաննէս Բ. Թլկուրացի	1480-1525
6.	Յովհաննէս Գ. Քիլիսցի. Կայծակն	1525-1539
7.	Սիմէոն Զէյթունցի	1539-1545
8.	Ղազար Զէյթունցի	1545-1547
9.	Թորոս Ա. Սսեցի	1548-1550
10.	Խաչատուր Ա. Ջորիկ	1550-1560
11.	Խաչատուր Բ. Զէյթունցի	1560-1584
12.	Ազարիա Ջուղայեցի	1584-1601
13.	Յովհաննէս Դ.Անթէպցի	1602-1621
14.	Պետրոս Ա. Կարկառեցի (աթոռակից)	1601-1608
15.	Մինաս Քացախ Սսեցի	1621-1632
16.	Սիմէոն Բ. Սեբաստացի	1633-1648
17.	Ներսէս Սեբաստացի	1648-1654
18.	Թորոս Բ. Սեբաստացի	1654-1657
19.	Խաչատուր Գ. Գաղատացի (Մինտէրճի)	1657-1674
20.	Սահակ Ա. Քիլիսցի Մէլիսանէճի	1674-1686
21.	Գրիգոր Բ. Ատանացի (Պիճակն)	1686-1693
22.	Աստուածատուր Սասունցի (Նարին)	1693-1696
23.	Մատթէոս Կեսարացի (Սարի)	1693-1705
24.	Յովհաննէս Ե. Հաճինցի	1705-1721
36.	Պետրոս Բ. Բերիացի (աթոռակից)	1708-1710
37.	Գրիգոր Գ. Կեսարացի (ուլուրլու)	1721-1729
38.	Յովհաննէս Զ. Հաճինցի (տէր Աղամ)	1729-1733

²⁶ Ըստ տոքսո. **3. Տէր Ղազարեանի**, Հայկական Կիլիկիա տեղագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1966, էջ 300-301:

Աջապահյաններ		
1.	Ղուկաս Աջապահեան	1733-1737
2.	Միքայել Աջապահեան	1737-1758
3.	Գաբրիել Աջապահեան	1758-1770
4.	Եփրեմ Աջապահեան	1771-1784
5.	Թէոդորոս Աջապահեան	1784-1796
6.	Կիրակոս Աջապահեան մեծն	1797-1822
7.	Եփրեմ Բ. Աջապահեան	1823-1831
8.	Միքայել Բ. Աջապահեան	1832-1855
9.	Կիրակոս Բ. Աջապահեան	1855-1865
Տեղապահութեան Շրջան (1865-1871)		
1.	Մկրտիչ Քելֆսիզեան Մարաշցի	1871-1891
2.	Կիրակոս Եպիսկոպոս Բէքմէշեան Տեղապահ	1894-1902
3.	Սահակ Բ. Խապայեան Եղեգցի	1902-1939
4.	Բաբգէն Կիլէսերեան (աթոռակից)	1931-1936
5.	Պետրոս Գ. Սարաճեան	1940-1940
6.	Գարեգին Ա. Յովսէփեան	1943-1952
7.	Զարեհ Ա. Փայապեան	956-1963
8.	Խորէն Ա. Բարոյեան	1963-?

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վիճակները ²⁷		
Հ/Հ	ՍԻՍ	
1.	Կաթողիկոսական տեղապահ	Տ. Կիրակոս եպս. Բեքմեզյան
2.	Կրոնական ժողով	-
3.	Քաղաքական ժողով	-
4.	Եկեղեցիներ	Սիս՝ Ս. Սոփիա – Ֆեքե – Յերեպագան
5.	Նպաստընկալ վարժարաններ	Ֆեքե - Յերեպագան գյուղեր
ԱԴԱՆԱ – ԲԵՐԵՔԵԹ		
1.	Առաջնորդական փոխանորդ	Տ. Գրիգոր քին. Ներկարարյան
2.	Կրոնական ժողով	-
3.	Քաղաքական ժողով	-
4.	Եկեղեցիներ	Ադանա՝ Ս. Ստեփանոս, Ս. Աստվածածին, Տարսոն՝ Ս. Աստվածածին, Մերսին՝ Ս. Լուսավորիչ, Միսիս – Գոզուլուզ – Շեյխմուրազ՝ Ս. Գևորգ: Ընդամենը՝ 23 եկեղեցի:
5.	Նպաստընկալ վարժարաններ	Էքպեզ ու Ֆասլ գյուղեր:
ՀԱՃԸՆ		
1.	Առաջնորդական փոխանորդ	Տ. Վահան քին. Մանուկյան
2.	Կրոնական ժողով	-
3.	Քաղաքական ժողով	-
4.	Եկեղեցիներ	Հաճըն՝ Ս. Աստվածածին, Ս. Գևորգ, Ս. Թորոս, Շառտերե՝ Ս. Նշան, Քյոսեղեր, Սողանլը, Եայլաճը, Ղարսավլան, Բումլու՝ Ս. Լուսավորիչ: Ընդամենը՝ 6 եկեղեցի:
5.	Վանքեր	Ս. Հակոբ Մծբնա Հայրապետ
ՀԱԼԵՊՊԻՍՔԵՆԴԵՐՈՒՆ-ՔԻԼԻՍ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Մեսրոպ ավագ քին. Աճեմյան:

²⁷ Ըստ «1903, Ընդարձակ օրացոց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց. տոմար, զանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ», էջ 352-358:

2.	Կրոնական ժողով	Մարկոս քին., Հակոբ քին. Ա. Հովհաննիսյան, Ղևոնդ քին. Տ. Նահապետյան:
3.	Քաղաքական ժողով	Հակոբ Գույումճյան, Ավետիս Գարաճյան, Ղազարոս Ստեփանյան, Պողոս Պապիկյան, Հովհաննես Թովքյան, Աբգար Միրաքյան, Հակոբ Պարսամյան:
4.	Եկեղեցիներ	Հալեպ՝ Ս. Քառասուն Մանուկ, Ս. Աստվածածին, Քիլիս՝ Ս. Հովհաննես Կարապետ, Պելան, Գրորգխան, Աթրգ, Իսքենտերուն՝ Ս. Լուսավորիչ, Ղնիէ (Ճեսը Շղուր)՝ Ս. Կիպրիանոս, Յագուպիե՝ Ս. Թորոս, Քեսաբ, Որֆալիե, Կոզի, Մեշթե, Ճեսը Շղուր: Ընդամենը՝ 8 եկեղեցի:
ԱՅՆԹԱՊ		
1.	Առաջնորդական փոխանորդ.	Կարապետ քին Կյուլուգյան
2.	Քաղաքական ժողով	Արմենակ Նազարեթյան, Ավետիս Միրիջանյան, Գալուստ Ղազարոսյան, Գրիգոր Լեյլեկյան, Կարապետ Յաղազյան, Կարապետ Նազարեթյան, Հրանտ Սիվլահյան, Սմբատ Տեմիրճյան, Փիլիպոս Սարգսյան
3.	Եկեղեցիներ	Այնթապ՝ Ս. Աստվածածին, Օրուկ (Արըլ) գյուղ՝ Ս. Աստվածածին: Ընդամենը՝ 8 եկեղեցի
ԱՆԹԱՔԻԱ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Թադեոս վրդ. Եկավյան
2.	Եկեղեցիներ	Անթաքիա՝ Ս. Աստվածածին, Պեթիաս՝ Ս. Մելիտոս, Հաջի հաբիր՝ Ս. Աստվածածին, Յողուն օլուգ՝ Ս. Աստվածածին, Խարբեյ վազըֆ՝ Ս. Փրկիչ, Քեպուսիե՝ Նորաշեն, Քեսաբ՝ Ս. Աստվածածին, Գալատուրան՝ Ս. Աստվածածին, Յագուպիե՝ Ս. Աստվածածին, Արամո՝ Ս. Աստվածածին, Ղըմեմիե՝ Ս. Տիրամայր, Էքիզուլուգ, Քեորքուր, Չինարճըգ, Ներքի, Սև աղբյուր Արֆալը, Պաղճղազ: Ընդամենը՝ 13 եկեղեցի

ՄԱՐԱՇ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Հովհաննես ավագ քին. Կարծապետյան
2.	Եկեղեցիներ	Մարաշ՝ Ս. Քառասուն Մանուկ, Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ, Ս. Գևորգ, Ս. Աստվածածին, Ս. Սարգիս, Սարղլար, Գըզըլ-Աղաճ, Ֆընտգճախ՝ Ս. Աստվածածին
ԶԵՅԹՈՒՆ-ՖՈՒՌՆՈՒՉ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Կարապետ ավագ քին. Երկանյան
2.	Եկեղեցիներ	Զեյթուն՝ Ս. Լուսավորիչ, Ս. Աստվածածին, Ս. Հակոբ, Ս. Հովհաննես, Ս. Սարգիս – Ալաբաշ՝ Ս. Կարապետ, Մխալ՝ Ս. Սարգիս – Ալախտան՝ Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Եարփուզ, Էլենճե՝ Ս. Աստվածածին, Ֆոնուզ, Կեղքսու, Թաշլուզ՝ Ս. Գևորգ, Բունար՝ Ս. Ստեփանոս, Տերե քոյ, Տեօնկե՝ Ս. Աստվածածին, Տեյիրմեն տերե, Ենիճե Գալե Չյուրիգոզ, Եղիաօպասը: Ընդամենը՝ 30 եկեղեցի
3.	Վանորայք -	Զեյթունի՝ Ս. Փրկիչ, Ս. Աստվածածին, Ֆոնուզի՝ Ս. Կարապետ
4.	Նպաստընկալ վարժարաններ -	Զեյթունի չոր թաղեր, Ալաբաշ, Ալախտան, Եարբուզ, Ֆոնուզ, Կեղքսու, Թաշլուզ, Քիրեճրունար, Տերեքեօ, Տեօնկե, Տեյիրմենդերե, Ենիճե գալե, Չյուրյուք գոզ, Եղիա օպասը
ՄԱԼԱԹԻԱ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Խաչատուր վրդ. Տեր -Ղազարյան
2.	Եկեղեցիներ	Մալաթիա՝ Ս. Աստվածածին, Ս. Հարություն, Ս. Երրորդություն, Օրտուզ՝ Ս. Փրկիչ, Էսկի՝ Ս. Ստեփանոս, Ջրմուխտի՝ Ս. Էջմիածին, Մուշվկա՝ Ս. Աստվածածին, Հեքիմ խան՝ Ս. Աստվածածին, Հյուսնի Մանսուր՝ Ս. Աստվածածին, Պեհեսնի՝ Ս. Փրկիչ, Քյախտա՝ Ս. Գևորգ և այլն: Ընդամենը՝ 20 եկեղեցի:
3.	Վանորյք	Ս. Փրկիչ, Ս. Լուսավորիչ, Ս. Անարծաթ բժիշկ

4.	Նպաստընկալ վարժարաններ	Հյուսնի Մանսուր, Պեհեսնի, Իյուլպիչ
ՅՈՂՂԱՏ		
1.	Առաջնորդական փոխանորդ	Տ. Ղևոնդ վրդ. Թուրսարգսյան
2.	Քաղաքական ժողով	Եփրեմ Ասլանյան, Գասպար Բաբազյան, Արամ Արամյան, Կարապետ Աբրահամյան, Հակոբջան Փափազյան, Ռեմզի Գույումջյան, Գալուստ Անիազյան, Օնիկ Աճեմյան, Միսաք Կևեբյան, Մաթեոս Եսայան, Ռուբեն Բերբերյան
3.	Եկեղեցիներ -	Յոզկատ՝ Ս. Աստվածածին, Սարայ՝ Ս. Աստվածածին, Մազար օղլու՝ Ս. Աստվածածին, Ինճիրլի՝ Ս. Աստվածածին, Գարապըղ՝ Ս. Լուսավորիչ, Սաչը՝ Ս. Աստվածածին, Քետիլեր՝ Ս. Գևորգ, Սաաթը՝ Ս. Աստվածածին, Գում Գույու՝ Ս. Աստվածածին, Էլենճե՝ Ս. Աստվածածին, Քելլեր՝ Ս. Աստվածածին, Պրուն Գչլա՝ Ս. Աստվածածին, Չագմագ՝ Ս. Աստվածածին, Պողազլայան՝ Ս. Մինաս, Կյովեճի՝ Ս. Հակոբ, Ուզունլու՝ Ս. Աստվածածին, Չաթաք՝ Ս. Աստվածածին - Գարահալլի՝ Ս. Հակոբ - Կյուրտե՝ Ս. Աստվածածին, Պելեորեն՝ Ս. Գևորգ, Իյտելի՝ Ս. Փրկիչ, Րում-տիկին՝ Ս. Աստվածածին, Չոխրատան՝ Ս. Թեոդորոս, Ֆախրալու՝ Ս. Աստվածածին, Յուրնեճ՝ Ս. Աստվածածին, Մենթեշե՝ Ս. Աստվածածին, Չաթ՝ Ս. Թորոս, Տելի Համզա՝ Ս. Նիկողոս, Գարա Չայիր՝ Ս. Աստվածածին, Գարա Յագուլ՝ Ս. Հակոբ, Թերզիլի՝ Ս. Թեոդորոս, Պեպեք՝ Ս. Աստվածածին, Ագտաղմաղեն՝ Ս. Աստվածածին, Բեռիրենք՝ Ս. Հակոբ, Չորում՝ Ս. Գևորգ, Սունկուրլու՝ Ս. Աստվածածին: Ընդամենը՝ 43 եկեղեցի:
ԿՅՈՒՐԻՆ ՄԱՆՃԸԼԸԳ		
1.	Առաջնորդական տեղապահ	Տ. Հակոբ վրդ. Քյոնիվյան
2.	Առաջնորդական փոխանորդ	Տ. Ադղե քին. Մանուկյան

3.	Կրոնական ժողով.	Եսու քին. Վարդապետյան, Մկրտիչ քին. Թովապյան, Սահակ քին. Յաղության, Օնեսիմոս քին.:
4.	Քաղաքական ժողով	Մկրտիչ Տեր - Նահապետյան, Հակոբ Խրտիկյան, Մանասեր Կրոզյան, Կյուրեղ Արզոնյան, Հակոբ Աղդապյան, Սարգիս Աֆատյան, Աբգար Ռահմազյան:
5.	Եկեղեցիներ	Կյուրին՝ Մայր եկեղեցի - Ձախճոր՝ Ս. Փրկիչ - Շուղով՝ Ս. Հակոբ - Էօրեն թաղ՝ Ս. Գևորգ - Գարահիսար՝ Ս. Սարգիս: Ընդամենը՝ 25 եկեղեցի, վանք՝ 1:
6.	Նպաստընկալ Վարժարան.	Գարահիսար գյուղ
ՏԵՎՐԻԿ		
1.	Առաջնորդական փոխանորդ.	Գրիգոր քին. Զարդարյան
2.	Եկեղեցիներ	Տևվրիկ՝ Ս. Աստվածածին, Ս. Երրորդություն, Խոռոնավիլ՝ Ս. Լուսավորիչ, Կասմա՝ Ս. Աստվածածին, Զմմարա՝ Ս. Երրորդություն, Աշուշեն՝ Ս. Թագավոր, Օտուր՝ Ս. Թովմաս, Կյուրեսին՝ Ս. Կարապետ, Արմու թաղ՝ Ս. Գևորգ, Մըրվանա՝ Ս. Աստվածածին, Բարդամ՝ Ս. Աստվածածին, Սինջան՝ Ս. Գևորգ, Բալանկա՝ Ս. Գևորգ: Ընդամենը՝ 14 եկեղեցի, 2 վանք:
3.	Նպաստընկալ վարժարաններ	Սինճան, Միրվանա, Ս. Հակոբ, Արմութաղ
ՏԱՐԵՆՏԵ		
1.	Առաջնորդական փոխանորդ.	Ղևոնդ ավագ քին. Մուրադյան
2.	Թաղական խորհուրդ.	Խաչեր Թաթարյան, Մկրտիչ Դուրյան
3.	Եկեղեցիներ	Տարենտե՝ Ս. Երրորդություն, Ս. Աստվածածին, Աշուտի՝ Ս. Աստվածածին: Ընդամենը՝ 6 եկեղեցի:
4.	Վանք	Ս. Հակոբ
5.	Նպաստընկալ վարժարաններ	քաղաք և Աշուտի գյուղ

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբանությունը

1. Կարապետ եպս. Քեչեճյան (1836-1904) – Մկրտիչ կաթողիկոս Քեյֆսիզյանի շրջանում Ջեյթունի առաջնորդն էր: Եղել է Ջեյթունի ապստամբության կազմակերպիչներից մեկը: Ապստամբության ավարտից հետո Սմբատ Բյուրատի և Ղևոնդ քին. Ճենանյանի հետ բանտարկվել է Կ.Պոլսում, սակայն պատրիարքարանի միջնորդությամբ ազատ է արձակվել:
2. Սրապիոն եպս. Սապունճյան (Սսեցի) (1835-1875) – Եղել է Քեօսե Քեյիշյանի ընտանիքից և Մալաթիայի առաջնորդը:
3. Սահակ եպս. Մկրտիչյան (Երզնկացի) – Սրապիոն եպս. Սապունճյանի մահից հետո 1875թ. նշանակվել է Մալաթիայի առաջնորդ: Մկրտիչ կաթողիկոսի հետ ունեցած հակասությունների պատճառով 2 ամսով փիլոնագրկվել է:
4. Մեսրոպ եպս. Մարաշցի – 1860-ական թվականներին եղել է Սսի միաբան, Անտիոքի և Այնթապի առաջնորդը:
5. Գյուտ եպս. Մխիթարյան (1877-1940) – Եղել է Սահակ կաթողիկոս Խապայանի քարտուղարը, իսկ հետագայում Խարբերդի առաջնորդը: 1922թ. հրաժարվել է կուսակրոնությունից և ամուսնացել:
6. Գարեգին եպս. Խաչատուրյան, Պոլսոցի (1880 -?) – Եղել է Սսի Ժառանգավորացի տեսուչը: Պաշտոնավարել է Սիսում, Մարաշում, Արմաշում, Արաբկիրում, Գոնիայում, Երուսաղեմում, Տրապիզոնում, Բաղդադում, Կ.Պոլսում, Կալիֆորնիայում: 1945թ. հունիսին եղել է Էջմիածնի եկեղեցական համագումարի պատգամավոր և «Արարատ» հայագիտական ամսագրի խմբագիրը:

7. Մուշեղ եպս. Սերոբյան (1669-?) – 1905թ. դարձել է Ադանայի, իսկ 1906թ. Արաբկիրի առաջնորդը: Եղել է ազատամիտ հոգևորական, խիզախ հրապարակախոս: 1928թ. հրաժարվել է կուսակրոնությունից: Նրա գրչին են պատկանում մի շարք աշխատություններ, ինչպես՝ «Դրուագներ Ս. Գրոց պատմութենէն» (Պոլիս, 1904), «Կրօնի դասեր. քրիստոնէական եկեղեցւոյ վարդապետութիւնը» (Պոլիս, 1910), «Մանչեսդրի հայ գաղութը» (Պոսթըն, 1911), «Հայկական մղձաւանջը. քննական վերլուծումներ» (Պոսթըն, 1916), «Մտքի թափառումներ» (Իզմիր, 1921), «Դիտումներ եւ դատումներ. էջեր օրագրէս» (Պէյրութ, 1932), «Հայկական հարցը եւ անոր փուլերը» (Պէյրութ, 1937), «Բարեկարգութիւն հայ ազգային եկեղեցիի» (Պէյրութ, 1938):
8. Խաղ արք. Աջապահյան Սսեցի (1883-?) – 1910-1913թթ. վարել է վանքի մատակարարի պաշտոնը: 1914թ. որպէս նվիրակ գործուղվել է Յոզղատի թեմ, որտեղ պատրաստել է թեմի 45 գյուղերի վիճակագրությունը: 1915թ. սեպտեմբերի 13-ին վանքի միաբանության հետ տեղափոխվել է Հալեպ՝ իր հետ տանելով Կիլիկիո աթոռի թանկարժեք անոթներն ու սպասքերը: Նույն թվականին տեղափոխվել է Երուսաղեմ: Տեսչական պաշտոնով 1916-1922 թթ. մեկնել է Բեյրութ, որտեղ վերականգնել է քանդված ս.Նշան եկեղեցին: 1923թ. նշանակվում է Հալեպի կաթողիկոսական փոխանորդ, իսկ 1933թ. ստանձնում է Անտիոքի թեմի առաջնորդի պաշտոնը: 1939թ. Ալեքսանդրետի սանջակը թուրքերին հանձնելուց հետո, նա եկեղեցական սպասքները և զանգակները տեղափոխեց Անթիլիաս: 1941թ. ապրիլի 10-ին մասնակցել է Էջմիածնում կազմակերպված ձախողված կաթողիկոսական ընտրությւնը: Կիլիկիո կաթողիկոսի տեղապահ Եղիշե արք. Կարոյանի մահից հետո 1943թ. մարտի 7-ին նշանակվել է կաթողիկոսական տե-

ղապահ, իսկ 1945թ.՝ Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդ: Նախագահել է «Սիս-Մատյանի» հրատարակչական կենտրոնական վարչությունը:

9. Եփրեմ արք. Ասըլյան (Տոհմունի) (1880-1946) – պաշտոնավարել է Սիսի Ազգային և Ժառանգավորաց վարժարաններում: 1919թ. եղել է Սիսի Ազգային միության նախագահը: 1920-1923 թթ. հովվական պաշտոն է վարել Հունաստանում: 1923-1929 թթ. եղել է Լիբանանի կաթողիկոսական փոխանորդը, 1924-1925թթ.՝ Հալեպի առաջնորդական տեղապահը, 1929-1933 թթ.՝ Լավողիկեի, իսկ 1933թ.-ից՝ Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդը: Հունաստանում բացել է եկեղեցիներ և վարժարաններ, Լիբանանում 4 եկեղեցի և 13 վարժարան, Լավողիկեում՝ 4 եկեղեցի և 8 վարժարան, Հալեպում՝ 4 վարժարան, Դամասկոսում՝ 3 մատուփ և 5 վարժարան, 1945թ. հուլիսին որպես պատգամավոր Էջմիածնում մասնակցել է Գևորգ Զ կաթողիկոսի ընտրությանը:
10. Հակոբ ծ.վրդ. Կեոնյուլիյան (Սսեցի) (1827-1911) – Շուրջ 25 տարի առաջնորդական պաշտոններ է վարել Կյուրինում, Մանճրլըում, Հաճընում, Յոզղատում, որտեղ բարվոքել է դպրոցական կյանքը:
11. Օհան վրդ. Աջապահյան (Ճիվճիվ) (1827 -?)
12. Սահակ վրդ. Չոլաքյան (1840-1907) – Եղել է Իսկենտերունի առաջնորդը և Ադանայի առաջնորդական տեղապահը:
13. Ադամ վրդ. Տեր-Գրիգորյան (1824-1894) – Եղել է շուշտակ վարդապետ, Գոգան Օղլուների դատավորը:
14. Խաչատուր վրդ. Տեր-Ղազարյան (Մարաշցի) (1848-1940) – Եղել է Յոզղատի և Մանճրլիսի թեմերի պատվիրակը, նորոգել է Չորումի եկեղեցին: Քաղաքական գործունեության համար բանտարկվել է:
15. Ղևոնդ վրդ. Թուրսարգիսյան (1870-1909) – Եղել է Յոզղատի կաթողիկոսական փոխանորդը:

16. Բարսեղ վրդ. Մանկրյան (1844-1916) – Եղել է շուշտակ վարդապետ:
17. Մեսրոպ վրդ. Ամատունի (1857-1939) – Եղել է շուշտակ վարդապետ, Աղանայի Աբգարյան վարժարանի տնօրենը, Էվերեկի և Վահկայի հոգևոր հովիվը:
18. Կիրակոս վրդ. Գյոքյան Ճգպաստ (1845 -?) – Եղել է Հովհաննես եպս. Գազանճյանին ինքնակոչ կաթողիկոսության մղողը: Ի վերջո կարգազուրկ է եղել:
19. Միքայել վրդ. Աճապահյան (1881-1909) – Եղել է Միսիսի կաթողիկոսի փոխանորդը: Նահատակվել է Աղանայի 1909թ. ջարդերի ժամանակ:
20. Մկրտիչ վրդ. Փափագյան (1867-1909) – Եղել է Մկրտիչ կաթողիկոսի գավազանակիրը և Զիհանի կաթողիկոսի փոխանորդը: Հետագայում կարգազուրկ է եղել և սպանվել Զիհանի 1909թ. կոտորածի ժամանակ:
21. Կիրակոս վրդ. Մարգարյան (Սեբաստացի) (? - 1921) – Սահակ Բ Խապայանին ուղեկցել է մինչև Երուսաղեմ:
22. Վաղարշակ վրդ. Պողոսյան (Արշակունի) (1877 -?) – Աղանայի կոտորածների ժամանակ Զեյթունի առաջնորդն էր: 1915թ. տարագրվեց և ի վերջո որպես կամավոր մտավ Հայկական լեգեոնի մեջ: 1918թ. կարգաթող է եղել:
23. Գրիգոր ծ. վրդ. Աբարտյան (1835 -?)
24. Եղյա վրդ. Դերձակյան (1845 -?)
25. Դավիթ Սաղպազարյան (1822 -?)
26. Եղիշե Գալֆայան (1851 -?)
27. Մկրտիչ արք. Վեհապետյան (Գաղատացի) (1842 -?)
28. Աբրահամ եպս. Մամիկոնյան (Մալկարացի) (1835 -?)
29. Պետրոս արք. Մելքոնյան
30. Եղիշե արք. Կարոյան (1873-1943) – Եղել է Եոզղատի պատվիրակը, Հալեպի տեղապահը: Դասավանդել է Ժառանգավորա-

ցում և Ջանշյանի որբանոցում: Իբրև մյուռոնաբաշխ, ուղարկվել է Կյուրին, Տևրիկ և Յոզղատ: 1909թ. հովվական այցելությոն է կատարել Ֆրնուզում և Ջեյթունում: Նշանակվել է Սսի կաթողիկոսական փոխանորդը և «Մեջլիսի իդարեի»: 1915թ. արքայիցի է Հալեպ, իսկ հետո Երուսաղեմ և 8 ամիս հետո Ա. Ա. Ջեմալի հրամանով հետ է վերադարձել և ստանձնել Սսի վանքի կալվածքները: 1921թ. տեղափոխվել է Կիպրոս և վարել գաղթականների հոգևոր պաշտոնը: 1929թ. դարձել է կաթողիկոսական փոխանորդ, իսկ 1940թ. նշանակվել է կաթողիկոսական ընդհանուր տեղապահ:

31. Խորեն եպս. Դիմաքսյան (1864-1915) – Եղել է Մերսինի առաջնորդական փոխանորդը, Կյուրինի առաջնորդը: 1915թ. նահատակվել է Կյուրինի մոտ:
32. Նիկողոս եպս. Կյուլեսենյան (1820-1880) – Եղել է Մարաշի առաջնորդը: 1866թ. ինքնընտիր կաթողիկոս է օծվել Հարությոն եպս. Աջապահյանի (մահմեդ.՝ Էմին էֆ.) կողմից: Թուրքական կառավարության կողմից 1871թ. արքայիցի է Արմաշ, ուր մնացել է մինչև 1876թ., որից հետո հրաժարվել է կաթողիկոսական տիտղոսից և դարձել Ադանայի առաջնորդը: Նրա մասնավոր ջանքերով Ջեյթունից բերվել էր Ռուսաստանից Ջեյթուն նվեր եկաժ Սիսի վանքի քաղցրահունչ զանգակներից մեկը:
33. Նիկողայոս եպս. Դավիթյան (Խորխոռունի) (1833-1911) – Իր քաջագործությունների համար կոչվել է «Ֆրնուզի առյուծ», իսկ թուրքերի կողմից՝ «Դելի մահրասա»: Ջեյթունի 1879թ. ապստամբությանը մասնակցելու համար դատապարտվել է մահվան, սակայն ազատ է արձակվել Ներսես պատրիարք վարժապետյանի միջնորդությամբ: 1890-1894թթ. բանտարկվել է Հալեպի, իսկ 1895թ.՝ Բողրոմի բերդում: 1895թ. Ջեյթունի ապստամբությանը մասնակցելու համար նորից է դատապարտվել մահվան և նորից է ազատ արձակվել:

34. Գաբրիել եպս. Գասարճյան (? - 1860-ական թվ.)
35. Ներսես եպս. Դանիելյան (1868-1915) – Եղել է Ալեքսանդրետի առաջնորդը: Զեյթունի 1895թ. ապստամբությունից հետո 7 ամիս բանտարկվել է Հալեպում և քսորվել Դամասկոս: Վերադառնալուց հետո դարձել է Մ. Օրմանյան պատրիարքի քարտուղարը: 1907թ. վերադարձել է Սիս, սակայն 1909թ. վերջին Մարաշի և Էրզինի պատերազմական դատարանի կողմից դատապարտվել է որպես Մուշեղ եպ. գործակից: 1910թ. վերադարձել է Ադանայի, իսկ 1914թ.՝ Եոզղատի առաջնորդը: Զոհվել է 1915թ. Եոզղատի սպանդի ժամանակ:
36. Բաբգեն եպս. Կյուլեսերյան Այնթապցի (1868 -), եղել է Այնթապի Վարդանյան կրթարանի ընթացավարտ և Արմաշի Դպրեվանքի շրջանավարտ: Ձեռնադրվելուց հետո 1895թ. նշանակվել է Յենի գյուղի քարոզիչ, 1896թ.՝ Ազգային պատրիարքարանի քարտուղար, 1897-1899թթ.՝ Ջանիկի առաջնորդ, 1899-1900թթ.՝ Մուշի առաջնորդ, 1900-1907թթ.՝ Ղալաթիայի ս.Լուսավորիչ եկեղեցու քարոզիչ և մատենադարանապետ: Եղել է Արմաշի Դպրեվանքի վանահայր և վերատեսուչ (1907-1909թթ.), Գաղատիայի առաջնորդ (1909թ.): 1910թ. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ 1913-1914թթ. նշանակվել է Ամերիկայի առաջնորդական տեղապահ: 1923թ. այցելել է Երուսաղեմի ս. Հակոբի վանք, հետո՝ Եվրոպա, Եգիպտոս, Սիրիա: 1925թ. դարձել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանին կից գործող Գյուլբենկյան ընծայարանի եկեղեցու պատմության և ս.Գրքի ներածության դասախոս: 1927թ. նշանակվել է «Սիոն» ամսագրի խմբագիր: Հրատարակել է՝ «Կիլիկիա» (Տիփսիս, 1896), «Ժողովուրդին Տօնացոյցը» (1901, Կ.Պոլիս), «Միւնաճաթ» (1904, Պոլիս), «Կոլոտ Յովհաննես Պատրիարք» (1904, Վիեննա), «Ծովք» (1904, Վիեննա), «Քարոզներ» (1904, Պոլիս), «Լոյս Կրօնական շաբաթաերթ»

(1905-1906, Կ.Պոլիս), «Ուսումնասիրութիւն Եղիշե Պատմագրին վրայ» (1908, Վիէննա), «Պատմաճեան Գրիգոր պատրիարքի յիշատակարանը» (1908, Փարիզ), «Տաւրոս շաքաթաթերթ» (1918-19, Պոսթոն), «Քաջն Վարդան» (1920, Պոսթոն), «Հայաստանեայց Եկեղեցի տետրակը» (1924, Պոսթոն):

37. Գարեգին եպս. Խաչատուրյան, Պոլսեցի (1880 -) կրթական, քարոզչական և առաջնորդական պաշտոններ է վարել Արմաշում (1901-1902թթ.), Սիսում (1906թ.), Մարաշում (1907թ.), Արաբկիրում, Գոնիայում, Տրապիզոնում, Բաղդադում և Կ.Պոլսում: 1915թ. տարագրվել է Երուսաղեմի ս.Հակոբի վանք, ուր 1916-1917թթ. Ժառանգավորաց վարժարանում զբաղվել է ուսուցչական գործունեությամբ և ընտրվել Սինոդի անդամ: 1918թ. Սահակ Բ Խապայանի և այլ հոգևորականների հետ Երուսաղեմից տեղափոխվել է Դամասկոս, իսկ հետո՝ Կ.Պոլիս: Որոշ ժամանակ վարել է Տրապիզոնի առաջնորդի պաշտոնը: 1922թ. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս: 1925թ. նշանակվել է Բաղդադի թեմի առաջնորդական տեղապահ, 1927թ.՝ Կենտրոնական վարչության կրոնական ժողովի ատենապետ: Հրատարակել է «Շողակաթումներ» (Կ.Պոլիս, 1925) և «Նարեկ» աղոթագրքի աշխարհաբար թարգմանությունը (Կ.Պոլիս, 1926): Ունի նաև անտիպ երկասիրություններ:
38. Եղիշե եպս. Զիլինկիրյան, Խարբերդցի (1863) եղել է Կեսարիայի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ և ուսուցիչ (1888-1889), թարգման (1891-1895), Բաղեշի առաջնորդ (1897-1901), Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ և դարձյալ թարգման (1902-1905): 1910թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: Եղել դարպասընկալ (1910-1914թթ.) և միաբանական ընդհանուր ժողովի ատենապետ (1910-1916թթ.): 1917թ. Սահակ Բ կաթողիկոսի հետ տարագրվել է Դամասկոս: Եղել է Դամասկոսի առաջնորդը (1917-1918թթ.) և Վարչական

Ժողովի նախագահը (1919-1921 թթ.): Եղիշե եպս. Չիլինկիրյանը 1920թ. դեկտեմբերի 5-ին օժել է Բեյրութի ս.Նշան եկեղեցին: Հրատարակել է՝ «Յուշեր եւ Նօթեր (1916-1920) (տպ. Ալեքսանդրիա, 1923), «Յիշատակներ Բաղեշի Առաջնորդութենես» (տպ. Երուսաղէմ, 1925), «Արձագանգ Զանազան Ազգ. Անցուդարձերու» (տպ. Երուսաղէմ, 1925), «Նկարագրութիւնք... (1914-1918)» (տպ. Երուսաղէմ, 1927), «Արձագանգ Բ. (1900-1918)» (տպ. Պէրուի, 1927), «Յուշք եւ Պատճենք, երկու հատոր» (տպ. Պէրուի, 1928), «Փնջիկ Բարոյական Առաճներու» (տպ. Երուսաղէմ, 1928) և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ 8

Կիլիկիո կաթողիկոսության 1909 և 1915թթ. նահատակված և տարագրված հայ եկեղեցականները

1. ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՓԱՓԱԳՅԱՆ (1867-1909) – Եղել է Մկրտիչ կաթողիկոսի գավազանակիրը և Ջիհանի կաթողիկոսի փոխանորդը: Հետագայում կարգազուրկ է եղել և սպանվել Ջիհանի 1909թ. կոտորածի ժամանակ:
2. ՀԱԿՈՐ -ԱՇՈՏ ԵՊՍԿ. (ՓԱՓԱՂՅԱՆ) - Ծնվել է 1847թ. Կ.Պոլսում: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1898թ.: Վարել է քարոզչական և առաջնորդական պաշտոններ՝ Կ. Պոլսում և գավառներում: Ձերբակալվել է 1915թ.՝ Կիլիկիայի աղետի մասին իր կազմած տեղեկագրի պատճեն իր թղթերի մեջից հայտնաբերվելու պատճառով: Վախճանվել է Իզմիրի զինվորական բանտում
3. ՆԵՐՍԵՍ ԵՊՍԿ. ԴԱՆԻԵԼՅԱՆ - Ծնվել է 1868թ. մայիսի 16-ին Յարփուղ գյուղում (Ջեյթուն): Աշխարհական անունը՝ Գևորգ: Աշակերտել է Սիսի Մայրավանքում և Սամաթիայի Սահակյան վարաժարանում, որոնք ավարտելուց հետո ուսուցչությամբ է զբաղվել Ադանայում: 1890թ. Մկրտիչ եպս. Վեհապետյանի կողմից ձեռնադրվել է վարդապետ: Մինչև 1895թ. առաջնորդական փոխանորդ է եղել Իսկենտերունում: Ջեյթունի 1895-1896թթ. ապստամբությունից հետո ամբաստանվել է և 1896թ. յոթ ամիս բանտարկվել Հալեպում: Ներման արժանալուց հետո Իսքենտերունից աքսորվել է Շամ: Մ. արք. Օրմանյանի բարեխոսությամբ տեղափոխվել է Կ. Պոլիս, ուր մնացել է 10 տարի՝ իբրև Սկյուտարի քարոզիչ՝ զերծ չմնալով լրտեսների հետապնդումներից: 1905թ. Աբդուլ-Համիդի դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո ձերբակալվել

է և բանտարկվել Ելդըզի պալատում: 1907թ. Կիլիկիո կաթողիկոսի երաշխավորությամբ տեղափոխվել է Սիս՝ նշանակվելով Մայրավանքի տեսուչ: Կիլիկյան 1909թ. ջարդերից ժամանակ եղել է Հաճընի ինքնապաշտպանության ղեկավարը, որի համար 3,5 ամիս բանտարկվել է: Մ.Խրիմյանը նրան շնորհել է «Սասկան վարդապետ» ծածկանունը և ականակոտ լանջախաչ: 1910թ. սեպտեմբերին տեղափոխվել է Ադանա, իսկ 1914թ. ստանձնել է Եոզղատի առաջնորդական պաշտոնը: 1911թ. մարտին ձեռնադրվել է եպիսկոպոս: Նա աշխատակցել է պոլսահայ թերթերին՝ «Մասիս»-ին, «Բիզանդիոն»-ին, «Սուրհանդակ»-ին, «Արևելյան մամուլ»-ին, «Հանրագիտակ»-ին, ««Ծաղիկ»-ին, «Լոյս»-ին, «Մանդումէ»-ին: Իր անձնավորությամբ, բազմարդյուն և վշտաչարչար կյանքով եղել է հայ եկեղեցական դասի մեծապատիվ սրբազաններից մեկը:

4. Ներսես եպս. Դանիելյան (1868-1915) – Եղել է Ալեքսանդրետի առաջնորդը: Զեյթունի 1895թ. ապստամբությունից հետո 7 ամիս բանտարկվել է Հալեպում և արքորվել Դամասկոս: Վերադառնալուց հետո դարձել է Մ.Օրմանյան պատրիարքի քարտուղարը: 1907թ. վերադարձել է Սիս, սակայն 1909թ. վերջին Մարաշի և Էրզինի պատերազմական դատարանի կողմից դատապարտվել է որպես Մուշեղ եպ. գործակից: 1910թ. դարձել է Ադանայի, իսկ 1914թ.՝ Եոզղատի առաջնորդը: Զոհվել է 1915թ. Եոզղատի սպանդի ժամանակ: Երկերը. «Կյանքն առանց հավատքի», Վիեննա, 1903, և «Կաթիլ մը ջուր այրած սրտերու», Կ. Պոլիս, 1909:
5. ԽՈՐԵՆ ԵՊՍԿ. ԴԻՄԱՔՍՅԱՆ.- Ծնվել է Կյուրինում 1864թ.: Վարդապետ է ձեռնադրվել Բեքմեզյան Սրբազանի կողմից 1892թ.: Լինելով Մեծի Տանն Կիլիկիո միաբաններից մեկը հոգևոր տարբեր պաշտոններ է վարել Կիլիկիայի քաղաքներում: Եղել է նաև Կյուրինի առաջնորդը:

6. Վաղարշակ վրդ. Պողոսյան (Արշակունի) (1877 - ?) – Ադանայի կոտորածների ժամանակ Ջեյթունի առաջնորդն էր: 1915թ. տարագրվեց և ի վերջո որպես կամավոր մտավ Հայկական լեգեոնի մեջ: 1918թ. կարգաթող է եղել:
7. Եղիշե արք. Կարոյան (1873-1943) – Եղել է Եոզղատի պատվիրակը, Հալեպի տեղապահը: Դասավանդել է Ժառանգավորացում և Ջանշյանի որբանոցում: Իբրև մյուռոնաբաշխ, ուղարկվել է Կյուրին, Տևրիկ և Յոզղատ: 1909թ. հովվական այցելություն է կատարել Ֆրնուզում և Ջեյթունում: Նշանակվել է Սսի կաթողիկոսական փոխանորդը և «Մեջլիսի իդարեի»: 1915թ. արքորվել է Հալեպ և 8 ամիս հետո Ա. Ա. Ջեմալի հրամանով հետ է վերադարձել և ստանձնել Սսի վանքի կալվածքները: 1921թ. տեղափոխվել է Կիպրոս: 1929թ. դարձել է կաթողիկոսական փոխանորդ, իսկ 1940թ. նշանակվել է կաթողիկոսական ընդհանուր տեղապահ:
8. Խորեն եպս. Դիմաքսյան (1864-1915) – Եղել է Մերսինի առաջնորդական փոխանորդը, Կյուրինի առաջնորդը: 1915թ. նահատակվել է Կյուրինի մոտ:
9. Բարդողիմեոս վրդ. Թագաճյան (1850-1942) – Եղել է Ֆոնուզի վանահայրը, սակայն Ջեյթունի 1862թ. ապստամբությունից հետո 1890-1891 թթ. բանատարկվել է Հալեպում: Նորից ստանձնել է վանահայրության պաշտոնը, սակայն 1891-95թթ. նորից բանատարկվել է: 1898թ. հաստատվել է Եգիպտոսում: 1916-1919թթ. զեյթունցիների հետ տարագրվել է Գոնիա, Հալեպ և Իտլիա: Հինադադարից հետո վերադարձել է Ֆոնուզ և Մարաշ, որտեղից արքորվել է Ջերմուկ: Ի վերջո տեղափոխվել է Հալեպ և Երուսաղեմ:
10. Սահակ վրդ. Չորակյան, Սսի միաբան:
11. Բարսեղ վրդ. Մանկրյան, Սսի միաբան:

ՀԱՎԵԼՎԱԾ 9

Կիլիկիայի Հայոց կաթողիկոս Սահակ Բ-ի նամակը Կոստանդնուպոլսի Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմին²⁸

Հալեպ, 30 հունիսի 1915

Շատ հարգելի պարոն դեսպան

Իմ կյանքի 66 տարիների ընթացքում առաջին անգամ է, որ գրում եմ դեսպանի՝ ոչ թե որպես օտարի, այլ որպես թուրքական կայրության հետ բարեկամացած ու դաշնակցող գերմանական կայսրության հարգելի ներկայացուցչի:

Իմ նամակը ոչ բողոք է, ոչ էլ խնդրանք, քանի որ պարտքն եմ համարում բողոքներն ու խնդրանքներն ուղղել միայն մեր բարի օսմանյան կառավարությանը, քանի որ որպես թուրքահպատակներ մեր դժվարությունների մասին կարող ենք դիմել միայն օսմանյան կառավարությանը:

Անձնական դժվարությունները չե որ ինձ ճնշում են: Ընդհակառակը՝ ես վայելում եմ կառավարության վստահությունը և իմ հավատարմությունը հաստատված է երկու գերագույն շքանշաններով՝ մեջիդիեով և օսամանիեով, նաև կրոնական իմ բարձր դիրքով որպես Կիլիկիայի կաթողիկոս: Այստեղ-այնտեղ տարածված թյուր դատողությունները թե իբր հայերը չեն ցանկանում գերմանական տերության հաջողությունը, հարուցում է իմ տխրությունն ու զարմանքը:

Ի՞նչ ազդեցություն պետք է ունենար այդ ցանկությունը, եթե նույնիսկ դա իսկապես լիներ գերմանացիների ուժեղ ու անպարտելի իշխանության վրա, որով հիանում են ամբողջ աշխարհում, նույնիսկ՝ թշնամիները:

²⁸ **Վոլֆգանգ Գ. (Հր.)**, Հայերի ցեղասպանությունը 1915-1916 թթ.. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, էջ 219-221:

Ի՞նչ արժեք կունենար գերմանացիների այնքան առաջադեմ կրթության ու գիտության վերաբերյալ հայերի գովասանքը:

Հայը, որ դարեր շարունակ ապրել է օսմանների բարձր հովանու ներքո, միայն նրան է պարտական ցայժմ գոյատևող իր կրոնի ու լեզվի համար: Նա օտարներից ոչ մի հույս չի ունեցել, որպեսզի դաշնակցեր նրանց հետ կամ հակառակ դեպքում՝ հակադրվեր: Դա յուրաքանչյուր քաղաքակիրթ հայի անկեղծ կարծիքն է:

Եթե կրոնը կապ է ազգությունների և ժողովուրդների միջև, ապա գերմանացիները նույնպիսի քրիստոնյաներ են, ինչպես և հայերը: Գերմանացիները հիմնականում գերազանցում են մյուս ժողովուրդներին, քանի որ գործում են ոչ թե մթության մեջ, այլ թողնում են ազատ սփռելու իրենց կրոնի լույսը:

Քանի որ մարդասիրությունը թույլ ժողովուրդներին միացնում է ուժեղների հետ, կարող եմ ասել, որ ինչպես Անատոլիայում, այնպես էլ Կիլիկիայում կան հայեր, ովքեր օգտվում են հիմնականում գերմանացիների բարեգործական ու դաստիարակչական հաստատություններից: Գերմանիայի համալսարանները նույնպես հաճույքով են ընդունում երիտասարդ հայերին, ովքեր ուսման ծախսով գնում են այնտեղ: Հայերն անմասն չեն Բաղդադի երկաթուղու օգուտին:

Երբ Նորին մեծություն Վիլհելմ 2-րդ կայսրը՝ Պրուսիայի թագավորը, այցելեց Պաղեստին, ես այնտեղ եխպիսկոպոս էի և պատիվ ունեցա մեր պատրիարքի շնորհիվ գերմանական հյուպատոսությունում ներկայացվելու Նորին մեծությանը: Եվս մեկ անգամ պատիվ ունեցա Նորին մեծությանը իր շքախմբի հետ մեր Սուրբ Հակոբ վանքը այցելելիս ցույց տալ այնտեղի հնագույն քրիստոնեական գրքերն ու անտիկ արվեստի նմուշները: Ամբողջ հայ ժողովուրդը երախտապարտ է Նորին մեծությանը՝ այդ այցելության համար: Ինչպես իմ հոգում է դրոշմվել այդ այցելությունը, այդպես էլ յուրաքանչյուր հայի սրտում: Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը հայերի համար ավելի սիրելի է, քան իր ծննդավայրը: Հայերը, ովքեր գերմանացիների հետ

կապված են գերմանական ժողովրդի մարդասիրությամբ, քաղաքակրթությամբ, դաստիարակությամբ, կրոնով ու բարեգործությամբ, այնքան ստոր չեն, որպեսզի լինեն երախտամոռ:

Ինչպես արդեն նշվեց վերևում, հայերի լավ ու վատ դատողությունները ոչ մի ազդեցություն չունեն հաղթանակներով պսակված գերմանական ժողովրդի հզորության ու փառահեղության վրա: Բայց լայնորեն տարածված կասկածը, որ ընկնում է մեր ժողովրդի վրա ամենամեծ ցավերից մեկն է պատճառում մեր դժբախտ ու մեռնող ժողովրդին:

Հուսալով, որ Ձերդ գերազանցությունը հավատ կընծայի իմ նամակի ճշմարտացիությանը, խնդրում եմ ձերդ գերազանցության ազդեցությամբ մեր վրայից հանել այդ կասկածը, որն ամենամեծ տառապանքն է մեր բազում ցավերի մեջ: Մենք խնդրում ենք Ձերդ գերազանցությանը, ինչպես մինչև հիմա, այնպես էլ այսուհետ շարունակել միջամտել մեր օգտին: Մենք աղոթում ենք Ձերդ գերազանցության և Ձեր տիկնոջ թանկ կյանքի համար, օսմանյան կառավարության և նրա դաշնակից հզոր կայզերական տերության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 10

ՎԻՃԱԿԱՑՈՒՅՑ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ					
Հ Հ	Շրջան	Կալված քների քանակը	Շինությունների տարածքը մ²	Դաշտերի տարածքը «դյոնյում»	Արժեքը՝ օսմ. ոսկեդրամով
Ա. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ					
1.	Սիս	60	1,315,500	10,361	167,520.000
2.	Ադանա	2	500	-	12,000.00
3.	Մարաշ	20	2,280	22	4,165.00
4.	Ջիհան	4	500	-	750.00
Ընդհանուր՝		86	1,318,780	10,383	184,435.00
Բ. ԱԴԱՆԱՅԻ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ					
1.	Եկեղեցի. Օներ, Քաղաք եւ գյուղ	8	6,000	-	46.400.00
2.	Շենքեր	66	8,528	-	43.785.00
3.	Դաշտեր	4	-	117	22.110.00
4.	Յենի Չարշը	82	36,650	-	105.300.00
5.	Օրոզտի Պաք	3	1,127	-	20.00.00
6.					
Ընդհանուր՝		163	52,305	117	237.595.00
Գ. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ					
<u>Տարսոն</u>					
1.	Քաղաք	23	14.110	27	93.980.00
2.	Գյուղեր	7	8.900	2	2.120.00
<u>Մալաթիա</u>					

1.	Շինություններ	76	788.025	-	53.570.00
2.	Դաշտեր	37	-	660	12.090.00
<u>Մերսին</u>					
1.	Շինություններ	23	14.410	-	21.050.00
2.	Դաշտեր	2	-	5	2.760.00
<u>Սիս</u>					
1.	Շինություններ	28	6.990	-	7.470.00
2.	Դաշտեր	7	-	68	3.755.00
3.	Չիլիֆկե	8	9.000	-	4.390
Ընդհանուր՝		211	841.435	762	201.185.00
Ընդամենը՝		460	2.2112.520	11.262	623.215.00 ²⁹

²⁹ «Ատանայի հայոց պատմություն», էջ 880:

ՎԱՀԱԳՆ ԱՎԵՏԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1902-1921 ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 22.75 տպ. մամուլ
:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 011-52.79.74

Էլ. փոստ lusakn@rambler.ru



ՎԱՀԱԳՆ ԱՎԵՏԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1996թ. հուլիսի 1-ին Երևան քաղաքում՝ մտավորականի ընտանիքում: Հայրական կողմից արմատներով Վանից և Գանձակից է, իսկ մայրական կողմից՝ Տաթևից, Շուշիից և Կարծախից: Հայրական պապը՝ հայ անվանի պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Համո Հարությունյանն է, որը եղել է Վանի 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի ականատես-վերապրողներից մեկը:

2002-2013թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Խ. Դաշտենցի անվ. թիվ 114 միջին և ավագ դպրոցը:

2013-2017թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետի Եկեղեցաբանության բաժնի բակալավրիատը: Ուսումնառության տարիներին մասնակցել է հանրապետական և միջազգային երիտասարդական գիտաժողովներին: 2016թ. Երևանի պետական համալսարանի կողմից ճանաչվել է «ԵՊՀ լավագույն ուսանող-2016» մրցույթի հաղթող և պարգևատրվել «ԵՊՀ մեդալ»-ով, իսկ 2017թ. մասնակցել է բակալավրիատի կրթական համակարգով «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին և արժանացել հումանիտար գիտությունների ոլորտում I կարգի մրցանակի:

2017-2019թթ. սովորվորել և գերազանցությամբ ավարտել է նույն ֆակուլտետի Աստվածաբանության բաժնի մագիստրատուրան՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի որակավորում:

2019-2022թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի ասպիրանտուրան:

2019-2021թթ. աշխատել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում:

2022 թ. ԵՊՀ-ում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Այժմ աշխատում է «Դիջիթեյն» տեխնոլոգիական ընկերությունում:

Համատեղության կարգով աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ-ի Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնում:

Ունի տպագրված 15 գիտական հոդված: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

ISBN 978-9939-0-4565-8



9 789939 045658